


**ՍԵԴԱ ՏԱՃԱՏ ՕՂԱՆԵԱՆ**

**ԻՐԱՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ  
20-ՐԴ ԴԱՐՈՒՆ**

**ԵՐԵՒԱՆ 2016**



Գործ՝ իրաքահայ գեղանկարիչ

*Անդրանիկ Օհանեսյանի*

3(47.925)  
0-45

հղ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ  
ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԵՂԱ ՏԱԾԱՏ ՕՐԱՆԵԱՆ

5695

ԻՐԱՔԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՆ

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԽԵԱՆ  
ՄԱՏԵՆԱԸԱՐ  
152



ARCH. MESROB ASHJIAN  
BOOK SERIES  
152

*Signature*

ԵՐԵՎԱՆ 2016



ՀՏԴ 93/94  
 ԳՄԴ 63.3  
 Օ-451

Խմբագիր՝ Բ.Գ.Ք. Արծուի Բախչինեան

Օհանեան Սեդա

Օ-451 Իրաքի հայ համայնքը 20-րդ դարուն/ Ս. Օհանեան. - Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016.- 293 էջ:

Աշխատութիւնը նուիրուած է Իրաքահայ բազմադարեայ պատմութեան նորագոյն պատմաշրջանի անցուդարձերուն, երբ 20-րդ դարու Առաջին աշխարհամարտի ընթացքին, գաղթածախը ընդունեց իր մէջ Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններէն, յատկապէս Վասպուրական աշխարհի գանազան գաւառներէն, գիւղերէն, նաեւ Ատրպատականի և Թուրքիայի հայաբնակ տարբեր բնակավայրերէն բռնագաղթուած բազմահազար հայ ժողովուրդը:

Ժամանակագրական առումով աշխատութիւնը կ'ընդգրկէ այս ժողովուրդին մէկ դարեայ (20-րդ դար) յոյժ կարեւոր պատմաշրջանի դէպքերն ու դէմքերը, գաղթականութեան հետ առընչուող բազմապիսի խնդիրներն ու լուծումները, առաջին և երկրորդ զանգուածային ներգաղթը, եկեղեցական, հասարակական-տնտեսական, կրթամշակութային և մարզական գործունէութիւնը:

Օգտագործուած են Գաղթականութեան Կոմիտէի և Միջագետքի Տարագրելոց Յանձնախումբի ցարդ չիրատարակուած փաստաթուղթերը, գաղթական ժողովուրդի վիճակագրութիւնը և այլեայլ նամակագրութիւնները՝ փոխանակուած Հայ Ազգային Պատուիրակութեան, Տարագրելոց Յանձնախումբի և Գաղթականութեան կոմիտէի միջեւ, որոնցմով հարուստ է Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւին պահադարանները, ինչպէս նաեւ Գաղթականութեան կոմիտէի ատենապետ՝ Լեւոն Շաղոյեանի անձնական արխիւը, մէկէ աւելի ականատեսներու յուշագրութիւնները, և բնականաբար հասարակական կազմակերպութիւններու յոբելինական յուշամատենները եւայլն:

Գիրքը նախատեսուած է սփիւռքագէտ-պատմաբաններուն և ընթերցող լայն հասարակայնութեան համար:

ՀՏԴ 93/ 94  
 ԳՄԴ 63.3

ISBN 978-9939-860-39-8

© ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2016

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԼԵՐԱԾՈՒԹԻՒՆ .....	4
<b>ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ - ԻՐԱՔԱՅԱՅՈՒԹԻՒՆԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՆ .....</b>	<b>25</b>
1- Գաղթականութեան Հոսքը Իրաք .....	25
2- Հայրենադարձութիւն .....	7
3- Եկեղեցին և իր Գործունէութիւնը .....	78
4- ա- Հայ Առաքելական Եկեղեցի .....	78
բ- Հայ Առաքել. Եկեղեցւոյ առաջնորդարանին առընթեր մարմիններ .....	104
գ- Հայ Կաթոլիկ Եկեղեցի .....	108
դ- Հայ Աւետարանական Եկեղեցի .....	113
<b>ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ - ՏՆՏԵՍԱԿԱՆ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ .....</b>	<b>116</b>
ա - Տնտեսական Գործունէութիւն .....	116
բ - Հասարակական Կեանք .....	129
<b>ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ - ԿՐԹԱՄՇԿԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ .....</b>	<b>157</b>
1- Դպրոց .....	157
ա - Հայ Առաքելական Համայնքի Դպրոցներ և Կիրակնօրեայ Հաւաք .....	178
բ - Պաղտատի Հայ Կաթոլիկ Համայնքի դպրոցներ .....	181
2- Թատրոն և Երաժշտութիւն .....	184
3- Գրական-Գեղարուեստական Կեանք և Կերպարուեստ .....	205
4- Տպարան և Մամուլ .....	211
<b>ԿԵՐՋԱԲԱՆ .....</b>	<b>215</b>
<b>ՅԱԻԵԼՈՒԱԾ .....</b>	<b>222</b>
الخلاصة .....	251
<b>SUMMARY .....</b>	<b>255</b>
<b>ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՍԿԶԲԱԴՐԻԻՐՆԵՐՈՒ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ .....</b>	<b>258</b>

## Ն Ե Ր Ա Ճ Ո Ւ Թ Ի Ւ Ն

Հայ ժողովուրդը, քաղաքական, տնտեսական, ընկերային գանազան պատճառներով, նաեւ իր երկրի՝ Արեւելքը Արեւմուտքին կապող աշխարհագրական դիրքին ազդեցութեամբ, դարերու ընթացքին, կիզակէտը եղած է ժամանակի հզօր տէրութիւններու շահերու բախման. Արեւելքէն՝ պարսիկները, արաբները, թրքական ծագում ունեցող ցեղերը, իսկ Արեւմուտքէն՝ ծաւալապաշտ հռոմէացիները, ապա՝ բիզանդացիները: Իբր հետեւանք, երկիրը բազմիցս աւերուած և իր բնիկ տարրը հարկադրուած՝ դեռեւս վաղնջական ժամանակներէն, գերեվարուած, ենթարկուած բռնազաղթերու, լքած է իր հայրենի օճախը և հաստատուած աւելի ապահով վայրեր, ուր ժամանակի ընթացքին կազմաւորուած են հայ գաղթօճախներ: Սակայն, օտար երկիրներու մէջ ձեւաւորուած գաղթօճախներու գործունէութիւնը սահմանափակուած չէր միայն իրենց ֆիզիքական գոյութիւնը պահելով, այլ՝ զիրենք հիւրընկալող տարբեր երկիրներու ժողովուրդներուն հետ փոխ-յարաբերութիւններու և անմիջական շփման միջոցաւ, ծանօթացնել զիրենք մեր ժողովուրդի բազմադարեայ անցեալին, ներկայի մշակութային և գիտական ոլորտներուն մէջ ձեռքբերումներուն և փոխադարձաբար՝ ծանօթանալ տուեալ երկրի ժողովուրդի մշակութային և պատմական դէմքերուն ու դէպքերուն և անոնց ազդեցութիւնը մեր ժողովուրդի կենսակերպին վրայ տուեալ երկրի մէջ:

Անտարակոյս, և արդէն փաստուած իրողութիւն է, որ առանց աշխարհի չորս ծագերուն տարտղնուած հայ գաղթավայրերու պատմութիւնը ուսումնասիրելու, լուսաբանելու և արժեւորելու, կարելի չէ ամբողջական պատկեր մը ունենալ հայ ժողովուրդի դարաւոր պատմութեան և իր անցած փոթորկալից, փշոտ և վերիվայրումներով լի ուղիի մասին:

Ահա այդ պատմական և հնադարեայ գաղթօճախներէն մէկը եղած է Միջագետք-Իրաքը, որ բնօրրանն է հնօրեայ մի քանի հրաշալի քաղաքակրթութեանց, և աշխարհագրականօրէն այնքան մօտ Հայաստանին, որ հնարաւոր չէր, որ սերտ կապեր չունենար, և հայեր գոյութիւն չունենային Իրաքի մէջ: «Վերջին 25 տարիներու հետախուզութիւններն ու պեղումները կատարեալ յեղաշրջութիւն մը յառաջ բերած են մեր գաղափարներուն մէջ՝ Միջագետքի (ու թերեւս համայն աշխարհի) քաղաքակրթութեան ծագման ու զարգացման վերաբերմամբ: Հիմա որոշ կը տեսնուի թէ Միջագետքի ամենահին քաղաքակրթութեան կեդրոնը ոչ թէ անոր ամենէն հարաւային ստորնագոյն մարզին մէջ էր, հապա հիւսիսային և աւելի բարձր մարզերուն մէջ. որով քաղաքակրթութեան օրօրանը մեր կարծածէն աւելի մօտ էր Հայաստանի»:<sup>1</sup> Հետեւաբար, անխուսափելի էր նաեւ, որ տարաբնոյթ և բազմաշերտ յարաբերութիւններ չմշակուէր երկու երկիրներուն միջեւ, ըլլայ այդ առեւտրական, մշակութային կամ քաղաքական բնոյթ ունեցող, յատկապէս երբ նկատի ունենանք այն պարագան, որ տուեալ ժամանակաշրջանին և նոյն տարածքին (իմա՝ Հայաստանին և Միջագետքին)<sup>2</sup> բնակող ժողովուրդներուն քաղաքակրթութեան մակարդակը համարեա՞ թէ հաւասար էր, որ աւելի պիտի դիւրացնէր միմեանց հետ հաղորդակցիլը: Դեռեւս հնագոյն ժամանակներուն, հայ ժողովուրդը իբրեւ առեւտրական կենսունակ ազգ, մշակութային և քաղաքական սերտ յարաբերութիւններ ունեցած է իր հարաւային դրացիներուն հետ:<sup>3</sup>

<sup>1</sup> Քասունի Եղիա., Նախահայկական Հայաստան, Պէյրութ, 1950, էջ 18:

<sup>2</sup> الدكتور الديباغ ت. العراق في التاريخ - دار الحرية للطباعة بغداد 1983 صفحة 132

Sopq. էլ-Դըբաղ Թակի., Իրաք պատմութեան մէջ, «էլ-Հուրիյա հրատարակչութիւն», Պաղատ, էջ 132:

<sup>3</sup> Արիկեան Յակոբ., Համառօտ Պատմութիւն Հայ Գաղթավայրերու, Անթիլիաս 1985, էջ 67:

Թեև հազարաւոր տարիներ առաջ Միջագետքի մէջ հայկական գաղթածախներու յառաջացման մասին փաստեր գոյութիւն ունին, սակայն այդ գաղթածախները շարունակական բնոյթ կրած չեն և դէպքերու բերումով տեղէ տեղ փոխադրուած, և երբեմն ալ ի սպառ անյայտացած:<sup>4</sup>

Հայերու գոյութեան մասին աւելի որոշակի և անառարկելի պատմական տուեալներ կան Սասանեան տիրապետութեան ժամանակաշրջանին: Այս արքայատոհմի մայրաքաղաքն էր Տիգրան, ուր հայկական մեծ գաղթածախ մը յառաջացած էր՝ բաղկացած գլխաւորապէս առեւտրականներէ, պետական պաշտօնեաներէ և պատանդներէ:<sup>5</sup> 387 թուականին Հայաստանի առաջին բաժանումի հետեւանքով, Հայաստանի արեւելեան մասը ինկաւ Սասանեաններու տիրապետութեան տակ, և հայ նախարարներ՝ ի պաշտօնէ ստիպուած էին երթելէկէլ Տիգրան՝ գերիշխանութեան պետերուն մօտ, որոնք մեծ թիւով հայեր գերեվարելով, զանոնք բռնի կերպով տեղափոխեցին պետութեան զանազան կողմերը, ներառեալ Միջագետքը:<sup>6</sup> Այնուհետեւ, Աբբասեան խալիֆայութեան ժամանակաշրջանին (8-13-րդ դարեր), դէպի Միջագետք, հայրենի երկրէն գաղթականական նոր հոսանքներ չեկան, հետեւաբար, աստիճանաբար նուազեցան:<sup>7</sup> Սակայն ի հակադրութիւն այս վարկածին, Իրաքցի պատմաբան՝ Ռուֆայէլ Բարու Ըսհագ կը գրէ թէ՛ խալիֆա Մահդիի որդին, տակաւին էմիր (իշխան) Հարուն Էլ-Ռաշիդը, 779 թ., Հայաստանի սահմանակից Իսթնդէրունի ծոցին (Հա-

յոց Ծովածոց) հիւսիս-արեւելեան կողմը գտնուող Սմալու քաղաքէն, մեծ թիւով հայեր գերեվարեց և զանոնք բերաւ ու բնակեցուց Պաղտատի<sup>8</sup> արեւելեան մասի՝ Ռըսաֆայի Շըմասիյէ կոչուող թաղամասին մէջ, որ ներկայիս Սլեխ կը կոչուի:<sup>9</sup> Ասոնք ի յիշատակ իրենց հայրենի երկրին, այստեղ հիմնեցին վանք մը, զոր կոչեցին Սմալու վանք (Սուրբ Մարի), որ նշանաւոր էր իր ընդարձակ բակով և գեղեցիկ զարդաքանդակներով: Կը յիշուի նաեւ, որ Աբա Եշու անունով, քրիստոնեայ հոգեւորական մը (մահացած 987 թ.), վանքի կառուցումէն մօտ երկու դար վերջ վերանորոգած է զայն: Բարու Ըսհագը կը շարունակէ որ «արաբ պատմագետ Իբն Աբդիլ Հագը (մահացած 1338 թ.), կը վկայէ, թէ 14-րդ դարու սկիզբը, այս վանքը քանդուած և հետքն իսկ չէր մնացած»:<sup>10</sup>

Աբբասեան խալիֆայութեան անկումէն ետք, (1258 թ.) երկիրը ենթարկուած է զանազան փորձութիւններու, դառնալով թատերաբեմը մոնկոլական, սելճուք-թաթարական, թուրքմաններու, ապա Օսմանեան Կայսրութեան և պարսիկներու բախումներուն: Հայ բնակչութիւնը բնական է, որ նոյնպէս պիտի տուժէր ոչ միայն

<sup>8</sup> «Պաղտատ» անուան բացատրութեան հետ կապուած քանի մը կարծիքներ կան: Նշենք մէկը միայն: Ջի. Լէ Սթրենջ կը նկատէ որ անուան հիմքը պարսկական է, «պղ» կը նշանակէ աստուած և «ղաղ»՝ հիմնող. այսինքն՝ քաղաք որ հիմնած է աստուած: Իսկ էմնանուէլ Էնաուիս վերոյիշեալ վարկածը այսպէս կը մեկնաբանէ. «Երոպացիները այս անունները առած են յոյներէն, վերջիններս հայերէն և ասոնք ալ պարսիկներէն... ուրեմն Պաղտատ անունը պարսկական ծագում ունի...»: Նոյն պատմագետը կը նշէ նաեւ, որ այժմու Պաղտատը կառուցուած է մի քանի նեստորական վանքերու արեւակներուն վրայ:

الاب انتستاس ماري الكرملی - لغة العرب - مجلة شهرية ادبية علمية تاريخية - المجلد الثاني - تموز 1912/حزيران 1913 - (دار الحرية للطباعة) بغداد - صفحة 550.

(Հայր Անասթաս Մառի Էլ-Քարմըլի, Արաբներու Լեզուն, «ԷլՅուրրիյէ Իրատարակչութիւն», Պաղտատ, 1975, էջ 550):

<sup>9</sup> Թովմա Արծրունի և Անանու, Պատմութիւն Արծրունեաց Տան, Երեւան 1978, էջ 154-155:

<sup>10</sup> روفائيل بابو اسحاق - تاريخ نصارى العراق (مطبعة المنصور) بغداد 1948 صفحة 128-129. (Ռուֆայէլ Բարու Ըսհակ, Իրաքի Քրիստոնէութեան Պատմութիւն, «Էլ Մանսուր Հրատարակչութիւն», Պաղտատ, 1948, էջ 128-129):

<sup>4</sup> Աբրահամեան Աշոտ., Համառօտ Ուրուագիծ Հայ Գաղթավայրերի Պատմութեան, Երեւան, 1967, էջ 34:

<sup>5</sup> Փարպեցի Ղազար., Պատմութիւն Հայոց, էջ 320-321, 351-352, Օրմանեան Մաղաբիա արք., Ազգապատում, Պէյրութ, 1958, պարբ. 357, նաեւ պարբ. 519:

<sup>6</sup> Պարսկահայ Տարեցոյց, Թեհրան 1930, էջ 77:

<sup>7</sup> Ալպոյաճեան Արշակ., Պատմութիւն Հայ Գաղթականութեան, «տպ. Նոր Աստղ», Գահիրէ, 1955, էջ 392-393:

ստեղծուած քաղաքական վերիվայրումներէն, այլեւ երկիրը բազմիցս հարուածող ժանտախտի համաճարակներէն:<sup>11</sup>

Պաղտատ առաջին անգամ նուաճուեցաւ Օսմանցի թուրքերու կողմէն 1534 թուականին: Այստեղ, հայեր երեսան կուգան Օսմանեան բանակներուն իրբել յետնորդ, հաւանաբար ոչ այնքան մեծ թիւով: Իսկ 1638 թուականին Օսմանցիներու վերջնական գրաւումէն և Շահ Աբբասի Արարատեան նահանգը ասպատակելէն և ամայացնելէն տարիներ առաջ, մասնաւորապէս Պաղտատի մէջ հայերու գոյութիւնը կը հաստատուի, ինչ որ հերքում մըն է թէ հայերը միայն վերոյիշեալ թուականէն վերջ հոն հաստատուած են:<sup>12</sup> Եթէ հոն հայեր չկային, ապա Օսմանեան բանակի մէջ գտնուող Կոկ Նազարի<sup>13</sup> (որ Սուլթան Մուրադի երախտապարտութեան արժանացած էր) խնդրանքը՝ հայոց համար հող և եկեղեցւոյ մը կառուցման համար հրաման առնելը անտեղի և անտրամաբանական պիտի ըլլար: Այսպիսով, Պաղտատի հիւսիսային կողմը, 1639 թուականին,<sup>14</sup> կը կառուցուի Ս. Աստուածածին եկեղեցին և Բաբ էլ-Մուա'աղղըմին կից հայկական գերեզմանատունը: Թաղը մինչեւ վերջերս կը կոչուէր «Մահալլաթ Կոկ Նազար» Գէորգ Նազարի թաղ: 1988 թուականին Իրաքի հայութիւնը մեծ շուքով տօնեց գաղութի վերակազմութեան 350-ամեակը:

<sup>11</sup> Չամչեան Ս., Պասրայի կաթոլիկ համայնքի հոգեւոր առաջնորդն էր 1769-1776 թթ., կը գրէ թէ ինք տեղեկութիւն ստացեր է, որ Պասրայի մէջ համաճարակէն մահացած են 55000 անձ, որմէ 4000 հայ: Իսկ 1772 թ. Վենետիկի Մխիթարեան միաբանութեան մէկ այլ անդամ Աթանաս եպիսկոպոսը հետեւեալը կը գրէ համաճարակի սաստկութեան մասին. «...Ի Նինուէ, Մուսուլ և ի Մերդին, և ի Դիարբէքիր և ի Ենկիւրի այնքան ուժգին և սաստիկ է մահը որ շիջեցայց զբազում տունս, մինչ չկարել միմեանս օգնել թաղումն» (Աբրահամյան Ա., նշ. աշխ. էջ 45-46):

<sup>12</sup> Melkonian Vartan, An Historical Glimpse of the Armenians in Iraq, Basra, 1957, p. 2.

<sup>13</sup> Գէորգ Նազարեթեանի աղաւաղուած անուանումն է:

<sup>14</sup> Այս թուականը կը համարուի Իրաքահայ գաղութի վերակազմութեան թուականը:

Իրաքի հայ համայնքները կը սկսին բազմանալ 17-րդ դարէն սկսեալ. այս մասին կան Եւրոպացի ուղեւորներու յիշատակութիւններ:<sup>15</sup> Սակայն ամենէն բարգաւաճ շրջանը 18-րդ դարու երկրորդ կէսն է, երբ Իրաքի հարաւային նաւահանգիստները կը դառնան տարանցիկ առեւտուրի կեդրոններ:<sup>16</sup> Ամենայն հայոց կաթողիկոսարանի վաւերագրերը ցոյց կու տան, որ Իրաքի թեմը համարուած է «տէրունի», այսինքն՝ Էջմիածնին անմիջապէս ենթակայ թեմ: Այդ թեմի մէջ մտնող կարեւոր կեդրոններէն կը յիշուին Պաղտատ, Ղարաչորան, Պասրա, Բանդար Բուշիր, Խարկ, Բանդար Աբբաս և ասոնց յարակից գիւղերն ու աւանները:

Հայերը հետզհետէ բազմանալով Պաղտատի մէջ, տարածուած են նաեւ քաղաքի հարաւային կողմերը, ուր 1852 թուականին, կը կառուցուի Ս. Երրորդութիւն եկեղեցին և նոյն տարին, թեմի առաջնորդ Մեսրոպ Ծ. վրդ.-ի ջանքերով եկեղեցւոյ գաւիթին մէջ դպրոց մըն ալ կը կառուցուի՝ Ս. Թարգմանչաց անունով և առաջին տնօրէնը կը նշանակուի Էջմիածին ուսած Մանուէլ Տիլանեանը:<sup>17</sup> Սակայն, 19-րդ դարու վերջերը, Իրաքի համայնքները կը սկսին խամրիլ, որ արդիւնք էր թրքական կառավարութեան կողմէն Իրաքի բնակչութեան նկատմամբ կիրարկած կեղեքիչ քաղաքականութեան: Այս իրավիճակը կը շարունակուի մինչեւ Առաջին Աշխարհամարտին աւարտը, և հայրենագրկուած արեւմտահայ գաղթականութեան հոսքը Իրաք:

Հայ համայնքներ ձեւաւորուած էին նաեւ Իրաքի միւս գլխաւոր քաղաքներուն մէջ՝ Պասրա, Մուսուլ, Քէրքուք, Սուլէյմանիյը,

<sup>15</sup> Manwaring G. The Travels and Adventures of Sir Anthony, Sir Robert and Sir Thomas, Wellstead J.R. Travels to the City of Caliph along the shores of the Mediterranean, volume I, pp. 274-275, G.Grattan, Narrative of a journey from Bombay to the Bosphores, London, 1878, pp. 222-224.

<sup>16</sup> Մելքոնեան Վարդան, 1930-1955 Քսանհինգամեակ Մարգիլի Հայ Ազգային Վարժարանի, «Տպարան Արամազդ», Պէյրուք, 1955, էջ 64:

<sup>17</sup> Գէորգեան Կարո., Ամենուն Տարեգիրք, Պէյրուք, 1957, էջ 406:

Ձախօ և այլուր: Պաղտատէն յետոյ, ըստ խոշորութեան, Իրաքի հայկական միւս համայնքը ձեւաւորուած է **Պասրայի** մէջ, որ դեռեւս հնագոյն ժամանակներէն, հայ բնակչութիւն ունեցած է, սակայն զանգուածային խոշոր գաղթականութիւն ընդունած է 18-րդ դարու առաջին քառորդին: Քաղաքական և տնտեսական այլեւայլ պատճառներով Նոր Ջուղայէն բաւական թիւով հայեր եկած և հաստատուած են Պասրայի մէջ, որոնք, սակայն, երկար չեն գոյատեւած այստեղ, անառողջ կլիմային, յաճախադէպ ժամատախտի համաճարակներուն և նաեւ աշխատանքի ասպարէզը սահմանափակ ըլլալուն պատճառով: Ասոնցմէ մաս մը կը տեղափոխուին Պաղտատ և այլուր: Հայերու թիւը Պասրայի մէջ երթալով աճած և ժամանակ մը եղած է, որ հայ համայնքը հասած է շուրջ 4000 անձերու 800 ընտանիքով: Այդ ժամանակաշրջանին, քաղաքի բովանդակ առեւտրական գործունէութիւնը հրեաներուն և հայերուն ձեռքը կեդրոնացած էր: Յատկապէս մարգարիտի մեծ առեւտուրը հայ վաճառականներու տիրապետութեան տակ կը գտնուէր:<sup>18</sup> Այսուհանդերձ, շահեկան է նշել, որ 1840ական թուականներուն, Պասրայի մէջ կային նաեւ հայ արհեստաւորներ, ժամագործներ, բժիշկներ, հացագործներ եւայլն:<sup>19</sup>

Հետագային, 1920 թուականէն ետք, Պասրայի հայերու թիւը կը ստուարանայ Նահր Օմարի գաղթականներէն և ուրիշ շրջաններէն եկող գաղթականներով, նոր կեանք, ազգային շունչ և ոգի ներշնչելով մինչ այդ նօսրացած հայ գաղութին:

Հայերը բնակութիւն հաստատած են նաեւ պատմական **Նի-ճուէի** շրջանը, որ հիւսիսային Իրաքի չորս նահանգներէն մէկն է: Նահանգի կեդրոնն է Մուսուլը, որ ըստ խոշորութեան, երկրի երկ-

րորդ քաղաքն է: Հայերու բնակութիւնը Մուսուլի մէջ նոր չէ: Ինչպէս կ'երեւի, հայերը հոն հաստատուած են միջին դարերուն, հաւանօրէն Անիի Բագրատունեաց թագաւորութեան և սելճուկ-մոնկոլ-թաթարական տիրապետութեան ժամանակաշրջանին: Ասոր գլխաւոր ապացոյցն է Սամուէլ Անեցիի վրդովումը, ուր ցոյց կուտայ այն վճիռին (հուքմ) մասին, որ տրուած է 1336 թուականին Մուսուլի եկեղեցիները փլցնելու համար, ինչպէս նաեւ 1352 թուականի ձեռագիր Քարոզգիրքը՝ «Գրեալ ի քաղաք Մուսուլի ի Մանուէլ քահանայէ»: Մինչեւ 19-րդ դարու առաջին կէսը այս համայնքը պահած է իր գոյութիւնը: Այս դարուն է, որ հայեր սկսած են հաստատուիլ Մուսուլ՝ գլխաւորապէս Սղերդէն և Տիգրանակերտէն փախուստ տալով: Այսուհանդերձ, Առաջին Աշխարհամարտէն առաջ, հայ ընտանիքներուն համրանքը քսանը չէր անցնիր: Հետագային, այն է՝ 1915-1918 թուականներու տարագրութեանց հետեւանքով է, որ 300ի չափ ընտանիքներ, հաստատուեցան Մուսուլի մէջ և բազմացուցին համայնքը:<sup>20</sup>

Իրաքի հայ համայնքներէն չորրորդ քաղաք **Քերքուկ**՝ պատմական քաղաք մըն է, որ միատարր բնակչութիւն չունի: 20-րդ դարուն սկիզբը հոն կ'ապրէին քիւրտեր, արաբներ, թիւրքոմաններ, քրիստոնէայ քաղղեացիներ, հրեաներ, ասորիներ և հայեր: Հին ժամանակներէ ի վեր, այս քաղաքին մէջ հայ համայնքի մը գոյութիւն ունեցած ըլլալը հաստատող աղբիւրներ կամ տուեալներ գրեթէ չկան, միայն թէ 1847 թուականին, Մուլթան Արդիւլ Մեճիտ, իր սենեկապետը Պաղտատ դրկած ատեն, վերջինիս կ'ընկերանայ հայ բժիշկ Բարունակ Բէ Ֆերուհիսան, որպէսզի ճամբու վրայի քաղաքներուն և գիւղերուն հիւանդները դարմանէ և պատուաստէ: Բարունակ այս առթիւ գրի առած է «Ճամբորդութիւն Ի Բաքելուն

<sup>18</sup> Abdullah Thabet. A.J., Merchants, Memlucs and Murder, The Political Economy of Trade in Eighteenth Century Basra, "State University of New York Press", 2001, p. 96.

<sup>19</sup> Իրաքահայ թեմի Համառօտ Պատմութիւն, Պաղտատ 2005, (անտիպ) էջ 353:

<sup>20</sup> Նոյն, էջ 80:

Ընդ Հայաստան» աշխատութիւն մը, հրատարակուած Մարտի, 1876 թուականին:

**Զախօն** նոյնպէս կը գտնուի Իրաքի հիւսիսային շրջանին մէջ, բրքական սահմանէն 10 քմ. հեռաւորութեան վրայ, Խաբուր գետի (Տիգրիսի մէկ ծիւղը) երկու ափերուն վրայ: Ըստ առկայ տեղեկութիւններուն, Զախոյի մէջ 1895-1896 թթ. կոտորածէն առաջ, 4-5 տուն հայեր կային: Կոտորածէն ետք, բնակչութեան թիւը կը բազմանայ մօտ 100 ընտանիքով, որոնք եկած էին մօտակայ շրջաններէն. քրտախօս հայեր՝ Տրիէ և Շարնախ գիւղաքաղաքներէն: Թէև Շարնախ Տիգրանակերտին ենթակայ գաւառ մըն է, սակայն Զախոյի հետ առեւտրական մշտատեւ յարաբերութիւն ունենալու հետեւանքով՝ երթելէ կը անընդհատ էր:<sup>21</sup> Այստեղ կուգան նաեւ Սղերդէն արաբախօս հայեր: Բոլորն ալ առաջին հերթին, կը հաւաքուին Քէսթա կոչուած վայրը, որ հետզհետէ կը դառնայ հայկական թաղամաս մը: Սղերդի արաբախօս հայերու մեծ մասը հետագային, կը տեղափոխուի Մուսուլ: «.....Հայութեան մեծ մասը նախորդ պատերազմէն (Ա. Համաշխարհային պատերազմ - Ս.Օ.) շատ առաջ եկած են Սղերդէն և շրջակայ քաղաքներէն: Կարելի չէ գանազանել հայերը տեղացի քիւրտերէն ո՛չ լեզուով, ո՛չ տարագով և ո՛չ սովորութիւնով: Հազուադէպ է գտնել ոեւէ հայ գաղութի մէջ, անոնց բարի և հին սովորութեանց յարգանքը»:<sup>22</sup>

Իրաքի հիւսիսային չորս նահանգներէն մէկն է **Սիւլէյմանիյէ**, լեռնաշղթաներու միջեւ քաղաք մը, շրջապատուած անտառներով և պտղատու ծառերով: Ամառը՝ կանաչազարդ իսկ ձմեռը ձիւնապատ, կը գտնուի Քէրքուկէն 110 քմ. դէպի հիւսիս-արեւելք: Հիմնուած է Պաղտատի օսմանցի կառավարիչ (վալի) Մեծն Սիւլէյման

փաշայի օրօք 1780 թուականին: Ժամանակի ընթացքին քաղաքը ընդարձակուած և զարգացած է: Այստեղ, 1800ական թուականներուն փոքր հայ համայնք մը գոյութիւն ունէր: Քաղաքի բնակչութեան մեծամասնութիւնը քիւրտեր եղած են, բացառութեամբ 12 հայ, 15 նեստորական և 8 հրեայ ընտանիքներու:<sup>23</sup> Ա. Աշխարհամարտի աւարտին, գաղթականութեան փոքրաքանակ խումբ մը քանի մը ընտանիքներով, կը հաստատուին Սիւլէյմանիյէ, առեւտրական կապեր հաստատելով տեղացի քիւրտերուն հետ: Հետագային, 1930ականներուն, ասոնց կը միանան ուրիշներ: Այս համայնքը, ի մի գալով, հոգաբարձութիւն մը կ'ընտրեն և իրենց սեփական ջանքերով փոքր դպրոց մը կը բացուի, որ բաւական տարիներ կը գոյատեւէ:<sup>24</sup> Քէրքուկի հոգեւոր հովիւը տօնական օրերուն կ'այցելէ և կը սլատարագէ:

Իրաքի երբեմնի հայաբնակ վայրեր էին **Ամատիա և Սուզ Էլ Շիյուխ** գիւղաքաղաքները: 1847 թուականին, այսինքն՝ աւելի քան հարիւր վաթսու մ տարի առաջ, տակաւին իրենց գոյութիւնը կը պահպանէին հայ համայնքը և եկեղեցին: Յայտնի չէ այս համայնքներուն և եկեղեցիներուն անշքացման պատմութիւնը և հետեւաբար վախճանը:<sup>25</sup>

Ահա այս ժողովրդագրական պատկերը կը ներկայացնէր Իրաքի դարաւոր գաղթօճախը, երբ վրայ հասաւ Առաջին Համաշխարհային պատերազմը, և իսկ ժողովուրդի արեւմտահայ հատուածի բեկորները, թուրքական եւսթաղանէն մազապուրծ, կը ժամանեն Իրաք, հայուն բնատուր տաղանդով կը յաղթահարեն օտար միջավայրի մէջ առկայ բոլոր խոչընդոտները, և օգտուելով Իրաքի պե-

<sup>23</sup> Կարնեցի Սերովբէ, Ուղեգրութիւն Բաղդադից Էջմիածին, Երեւան 1968, էջ 97:

<sup>24</sup> Աբէշեան Համբարձում, Հայ Կեդրոն Տարեցոյց – Իրաք և Հայերը, Պոյնտ Սորես, 1956, էջ 202:

<sup>25</sup> Ամմատիան կը գտնուի Իրաքի հիւսիսային սահմանին, իսկ Սուզ Էլ Շիյուխ Պասրայի հիւսիսը:

<sup>21</sup> Տօքթ. Ասքարճեան Գրիգոր, Յետադարձ Ալմարկ Կեանքի մը Պայքարի Իննսուն Տարիներուն, Պէյրուք 1975 էջ 36:

<sup>22</sup> Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը, Երեւան 2003, էջ 132:

տութեան կողմէն ընձեռած բարեացական վերաբերմունքէն՝ կը վերագտնեն իրենց բարոյական և ֆիզիքական ուժերը, և կը լծուին խաղաղ ու շինարար աշխատանքի, միեւնոյն ժամանակ զարկ տալով հայապահպանման աշխատանքներուն, որոնց գլխաւոր օճախները պիտի հանդիսանային եկեղեցին, ազգային դպրոցները և ազգային-մշակութային, հասարակական-մարզական ակումբները և կազմակերպութիւնները:

Ուրեմն, 20-րդ դարու Առաջին Պատերազմի ընթացքին և ետքը, Իրաքի հնադարեայ գաղթօճախը<sup>26</sup> ընդունեց իր մէջ Արեւմտեան Հայաստանի տարբեր շրջաններէն և յատկապէս Վասպուրական աշխարհի զանազան գաւառներէն, գիւղերէն բռնագաղթուած բազմահազար հայ և ասորի ժողովուրդ, որ նահանջի ճանապարհին անընդհատ կռուելով տարբեր հրոսակային խմբաւորումներու դէմ (թուրք, քիւրտ և նոյնիսկ պարսիկ) Պարսկաստանի ճամբով, բազմաթիւ անգամ կոտորակուած և ճաշակած ամէն ձեւի դառնութիւններ, վերջապէս կը հանգրուանէ այս երկրի հիւրընկալ երկնականարին ներքոյ, անգլիական կառավարութեան կողմէն նախապէս պատրաստուած 3000 վրաններուն տակ:<sup>27</sup>

<sup>26</sup> Ըստ Իրաքի Առաջնորդարանի արխիւներուն, 1840 թ. Պասրայի հայ բնակչութեան թիւն էր 33 ընտանիք, իսկ 1900 թ. Պաղտատ՝ 174 ընտանիք (Իրաքահայ թեմի Համառօտ Պատմ. 2005 թ. Պաղտատ, անտիպ): Իսկ ըստ պատմ. գիտ. քննարկումի Օ.Թոփուզեանի հաղորդած տեղեկութեանց, Պաղտատի մէջ կ'ապրէր 3300 հոգի, Պասրայի մէջ՝ 1525 իսկ Մուսուլի մէջ՝ 230 հոգի (Աբրահամեան Ա., նշ. աշխ. էջ 47): Մենք հակուած ենք համաձայնելու Իրաքի Առաջնորդարանի հաղորդած տուեալներուն:

<sup>27</sup> Մարտ 21-ին սկսաւ Վանի 1918 թ. վերջին նահանջը: Վանի զինուորական Մարմինը Կոստի Համբարձումեանի, Լեւոն Շաղոյեանի ղեկավարութեամբ և աւելի քան հազար կամաւոր զինուորներով, բազմահազար ժողովուրդի հետ ուղղուած էին դէպի Բերկրի՝ մտադրութիւն ունենալով համանուն կիրճէն անցնելով հասնիլ Կովկաս: Ճանիկէն հազիւ դուրս ելած, Բերկրիի կողմէն թնդանօթի ուժեղ պայթիւններու ծայներ կը լսուին և սխալ տեղեկութիւն ստանալով վերոյիշեալ կիրճը թուրքերու կողմէն զրաւուած ըլլալու մասին, ղեկավարութիւնը և ժողովուրդը հարկադրուած՝ ուղղութիւնը կը փոխէ և կ'անցնի Սարա, Կօտուլ և

Խնդրոյ առարկայ թեման, Իրաք պալատանած վերոյիշեալ գաղթականներուն և յետագայ սերունդներուն եկեղեցական, հասարակական, տնտեսական և կրթամշակութային գործունեութեան մասին է, որ այլեայլ պատճառներով, համարեա՛ անծանօթ մնացեր է հայ ընթերցողին, յատկապէս հայրենիքի մէջ գտնուող հայ գաղթօճախները ուսումնասիրողներուն: Հայութեան այս հատուածը, անարդարօրէն պոկուած իր արմատներէն և հանգրուանած օտար ափերուն, կլիմային անսովոր, միջավայրին անծանօթ, սակայն և այնպէս երբեք չընկրկեցաւ, չխամրեցաւ օտար խորշակներէն, այլ իր ցեղին յատուկ կենսունակութեամբ, կրկին ոտքի կանգնեցաւ, մէկդի նետեց գաղթականի ցուպը և աստիճանաբար յաղթահարելով ամէն տեսակի խոչընդոտներ, լծուեցաւ շինարար աշխատանքի, ի բարօրութիւն իր ազգի զաւակներուն և զինք հիւրընկալող արաբ ազնիւ պետութեան և ժողովուրդին:

Իրաքահայ գաղութի պատմութեան համառօտ կերպով անդրադարձեր է հայրենի պատմաբան Աշոտ Աբրահամեանը,<sup>28</sup> որ

---

ապա Սալմաստ՝ Պարսկաստան, ուրկէ և՛ Իրաք: Աւելի ուշ, երբ ժողովուրդը արդէն երկար ճանապարհ կտրած էր, պիտի ստուգուէր և ճշգրիտ կերպով հաստատուէր որ Բերկրիի կիրճը տուեալ պահուն, ազատ եղած է իսկ Բերկրի գիւղաքաղաքը՝ հայերուն ձեռքը: Թնդանօթի ահռելի որոտումները Վանի լիճին վրայ աշխատող հայկական նաւի մէջ եղած ռազմամթերքի պայթիւններն էին, զոր նաւատիկները նաւը լքելէն առաջ, կրակի կուտան. որպէսզի թշնամիին ձեռքը չանցնի: 1- Վարդանեան Գեղամ., Տոմար Ազգային – Վասպուրականէն մինչև Իրաք, Լոս Անճելըս, 1992, էջ 81): 2- Յարութիւնեան Աւետիս, Վան-Վասպուրականի բնակչութեան վերջին՝ 1918 թ. Մարտեան գաղթը և Վանի նահանգի դատարկումը, «Բանբեր Հայաստանի Արխիւների» N 122, 2014: 3- Գեորգեան Մխիթար, Վասպուրականէն Պաղտատ և Պասրայի Անապատները, «Հայրենիք ամսագիր» 1965, 2, 3, և 4 թիւերուն մէջ և Սահակեան Ռուբէն, Հայկական Հարուածային հրաձգային 5-րդ զունդի պորուչիկ Տիգրան ժամհարեանի զեկուցագիրը Վանի վերջին նահանջի և անգլիական հրամանատարութեան՝ հայերու նկատմամբ ունեցած վերաբերմունքի մասին, 21 Յուլիս 1919 Թիֆլիս, «Լրաբեր» Հասարակական Գիտութիւնների 1-2(630), Յունուար-Օգոստոս երևան 2011, էջ 340-382:

<sup>28</sup> Աբրահամեան Ա., նշ. աշխ. էջ 34-53:

հիմնականին մեջ գաղութի ընդհանուր տեսութիւնն է: Իրաքի մասին նմանապէս փոքրածաւալ մեմագրութիւն ունի արեւելագէտ Սեդա Սուրադեանը «Իրաքի Հայ Համայնքը» վերնագրով:<sup>29</sup> Իրաքի գաղթածախի պատմութեան անդրադարձեր է նաեւ Կառլեն Ղալլաքեանը՝ ի շարս աշխարհասփիւռ հայ գաղութներու:<sup>30</sup> Արեւելագէտ Նիկոլայ Յովհաննիսեանը<sup>31</sup> շատ հակիրճ կերպով եւս ներկայացուցած է այս գաղութի վերածնաւորումը առաջին համաշխարհային պատերազմէն ետքը: «Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան պատմութիւնը» մեմագրութեան հեղինակ Էդուարդ Մելքոնեանը եւս անդրադարձ կատարած է դարասկիզբին Միջագետք հանգրուանած գաղթականութեան և իրենց հանդէպ Բարեգործականի ցուցաբերած ազգանպաստ գործունէութեան մասին:<sup>32</sup>

Իսկ սփիւռքահայ պատմաբան Արշակ Ալպոյաճեանի «Իրաքի Հայերը»<sup>33</sup> մեմագրութիւնը, հրատարակուած Երեւան 2003 թ.,

<sup>29</sup> Սուրադեան Սեդա., Իրաքի Հայ Համայնքը, Երեւան 1997:

<sup>30</sup> Ղալլաքեան Կառլեն, Հայ Սփիւռքի Պատմութիւն, Երեւան 1999:

<sup>31</sup> Յովհաննիսեան Ն., Արաբական Երկրների Պատմութիւն, Երեւան, էջ 448-450:

<sup>32</sup> Մելքոնյան Էդուարդ., Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Պատմություն, «Մուղնի» հրատարակչութիւն, Երեւան, 2005, էջ 118-127:

<sup>33</sup> Այս գիրքի հրատարակութեան առթիւ կը մէջբերենք Իրաքի Առաջնորդարանի «Սրտի Խօսք»էն հատուած մը. «Իրաքի Ազգային Առաջնորդարանը «Իրաքի Հայերը» անտիպ գրութեան մասին տեղեկացած էր Պաղտատ հրատարակուող «Գոյամարտ» շաբաթաթերթի Ա.տարի թիւ 31 և 9 Յուլիս 1949 թիւին մէջ լոյս տեսած Իրաքահայ պատմագէտ Վարդան Մելքոնեանի մէկ յօդուածէն: Ապա Երեւան լոյս տեսնող «Հայրենիքի Չայն» շաբաթաթերթի 15 Օգոստոս 1979 թիւին մէջ Սուրէն Քոլանճեանի ստորագրութեամբ յօդուած մը, կ'անդրադառնար պատմագէտ հանգուցեալ Արշակ Ալպոյաճեանի գրական վաստակի մասին, և ի միջի այլոց ըսուած էր թէ հանգուցեալի անտիպ աշխատութիւններուն մէջ կը գտնուի նաեւ «Հայերը Իրաքի մէջ» գրութիւն մը: Սոյն գրութիւնը կը գտնուէր Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի արխիւային բաժնին մէջ, իր նախնական սեւագրութեան վիճակի մէջ և դժուար ընթեռնելի ձեռագրով: Հետեւաբար այն կը կարօտէր մասնագիտական մօտեցումի: Երկար թղթակցութիւններէ ետք Առաջնորդարան-Մատենադարանի միջեւ, վերջապէս 1999 թ.

կ'ընդգրկէ գաղութի ծագումէն մինչեւ անցեալ դարու 40-ական թուականները միայն: Նոյն հեղինակին կը պատկանի նաեւ «Պատմութիւն Հայ Գաղթականութեան - Հարաւային Կողմն Աշխարհի», հսկայածաւալ աշխատութիւնը, որով ընդհանուր գիծերով կ'անդրադառնայ Իրաքահայ գաղութի կազմաւորման և գոյատեւման միջին դարերուն: Լիբանանահայ պատմաբան Յակոբ Աթիկեանը նմանապէս շատ հակիրճ կերպով կը յիշատակէ գաղութի պատմութիւնը, ի շարս աշխարհի մէջ տարածուած միւս գաղթավայրերուն:<sup>34</sup> Նոյն ուղղութեամբ բազմաթիւ յօդուածներ հրատարակուած են ինչպէս սփիւռքահայ մամուլի և տարեցոյցներու էջերուն, նմանապէս օտարալեզու հեղինակներու աշխատութիւններուն մէջ, որոնք հետաքրքրուած են հայ ժողովուրդի անցեալով և մանաւանդ ներկայով: Իրաքահայ երիտասարդ հրապարակագիր (մասնագիտութեամբ՝ ճարտարագէտ, բնակութիւն հաստատած Հայաստան) Արա Ս. Աճեանը, եռալեզու (հայերէն, արաբերէն և անգլերէն) համացանցային բազմաթիւ հրապարակագրութիւններով, մշտապէս իր ուշադրութեան կիզակէտին կը պահէ հայ ժողովուրդին ընդհանրապէս և Իրաքահայ գաղութին մասնաւորապէս յուզող բոլոր հարցերը:<sup>35</sup>

Երախտարժան է Պէյրութի մէջ լոյս տեսնող «Ամէնուն Տարեգիրք»ի խմբագիր Կարօ Գեորգեանի 1957-ին լոյս տեսած աշխատութիւնը Իրաքի Հայ Գաղութի մասին, հնագոյն ժամանակներէն մինչեւ անցեալ դարու կէսերը, որ իբր հաւաստի սկզբնաղբիւր, կ'օգտագործուի բազմաթիւ ուսումնասիրողներուն կողմէ:<sup>36</sup>

կնքուած պայմանագրութեամբ, սեւագրութեան վերծանումը և գիրքին հրատարակութեան պատրաստութիւնը յանձնուեցաւ Մատենադարանին տնօրէնութեան»: Վերջինս գիրքը լոյս ընծայեց 2003 թուականին:

<sup>34</sup> Աթիկեան Յ., Նշ. աշխ., էջ 67-72:

<sup>35</sup> <http://ara-ashjian.blogspot.com>

<sup>36</sup> Գեորգեան Կ., Նշ. աշխ., էջ 403-461:



2011 թ. լոյս տեսած ֆրանսահայ պատմաբան Ռայմոն Գեորգեանի Հայոց Տեղասպանութիւնը (ֆրանսերէն՝ թարգմանուած անգլերէնի, թրքերէնի, ռուսերէնի և վերջերս նաեւ արաբերէնի) աշխատութեան մէջ հանգամանօրէն կը ներկայացուի 1895-1915 թթ. արեւմտահայ ժողովուրդի նկատմամբ ծրագրուած ջարդը, բռնագաղթը իր բնօրրանէն, աքսորի ուղիները և վերջնական հանգրուանը Մերձաւոր Արեւելքի տարբեր աքսորավայրերուն մէջ ներառեալ Միջագետք-Իրաքի անապատներուն յայտնուած հայութեան բեկորները: Այս համապարփակ աշխատութենէն բնականաբար օգտուած ենք լիաձեռնօրէն յատկապէս Մուսուլ ապաստանած մեր ժողովուրդի (Էրզրումէն, Սղերդէն, և Տէր Զօրի և Ռաս ուլ-Այնի սպանահանոցներէն խոյս տուած) մնացորդացի մասին յայտնած թուաքանակի և իրենց անցած ուղիի մասին:<sup>37</sup>

Իրաքի մէջ տեղի ունեցած վերջին դէպքերէն ետք, թեմայի շուրջ առանձին հարցերուն անդրադարձեր են սփիւռքահայ տարբեր հեղինակներ: Բոլորովին վերջերս, Իրաքի Կեդրոնական Վարչութեան նախկին ատենադպիր Տօթթ. Վեհունի Մինասեան, 17 Նոյեմբեր 2012-ին, հրատարակեց «Իրաքահայ Գաղութը» լայնածաւալ յօդուածը իբր ներդիր, Լոս Անջելըսի մէջ լոյս տեսնող «Ասպարէզ» օրաթերթին մէջ:

Յարգելով և արժեւորելով Իրաքի հայ համայնքի մասին ցարդ լոյս տեսած հրատարակութիւնները՝ նշենք թէ անոնք մասնակի անդրադարձած են գաղութին վերաբերող համայնքային, հասարակական-մշակութային հարցերուն: Ներկայ ուսումնասիրութիւնը, յատկապէս գաղթականութեան Իրաք ժամանելուն և իրենց ամենօրեայ կեանքին հետ առնչուող գրականութիւնը, գլխաւորապէս հիմնուած է ցարդ չհրատարակուած Գաղթականութեան Կոմիտէի և Միջագետքի Տարագրելոց Յանձնախումբի փաստաթուղ-

<sup>37</sup> Kevorkian Raymond., The Armenian Genocide, I.B.Tauris, London 2011, pp. 647-654.

թերուն, վիճակագրութեանց և այլեւայլ նամակագրութեանց (փոխանակուած տարբեր պետական կամ հասարակական կազմակերպութիւններուն հետ, յատկապէս Հայ Ազգային Պատուիրակութեան նախագահ՝ Պօղոս Նուպար փաշային հետ): Այս կապակցութեամբ Միջագետքի Հայ Գաղթականութեան Կոմիտէի<sup>38</sup> նախագահ՝ Լեւոն Շաղոյեանի անձնական արխիւը, բազմաթիւ արժէքաւոր փաստաթուղթեր կը պարունակէ: Սոյն արխիւին մէջ գտնուող տասնեակ հարիւրաւոր նամակներ, տեղեկագրութիւններ՝ հայրենիքի մէջ ապրող, ինչպէս նաեւ սփիւռքի տարածքին հարկադրաբար բնակութիւն հաստատած ականաւոր մտաւորական-քաղաքական-գործիչներուն հետ, հաւաստի աղբիւրներ են մեր գաղթական ժողովուրդի ճամբարային ամէնօրեայ կեանքի պայմաններուն ծանօթանալու և ըստ արժանւոյն գնահատելու այն գերմարդկային ճիգերը, որոնք ի գործ դրուած են յաղթահարելու բնական կամ արհեստական արգելքները ժողովուրդը հայրենիք վերադարձնելու, որ շնորհիւ գաղութի ղեկավարութեան աննկուն կամքին և հետեւողականութեան, մասամբ պիտի իրագործուէր 1921–1929 թթ.:

Անցնող տասնեակ տարիներու ընթացքին, քաղաքական յաճախակի վերիվայրումներուն և հետեւաբար երկրին մէջ տիրող շարունակական անկայուն վիճակին պատճառով վերոյիշեալ արխիւը (Լեւոն Շաղոյեանի արխիւ - Ս. Օ.) խնամքով պահուած և մնացած էր անձեռնմխելի: Այս յոյժ կարեւոր արխիւը պրպտելու և ուսումնասիրելու առիթը ընծայուեցաւ մեզի Պաղտատի մէջ, զոր բնականաբար, օգտագործած ենք լիարժէք կերպով:

Թանկագին սկզբնաղբիւրներ են Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւին մէջ գտնուող Իրաքի Առաջնորդարանէն

<sup>38</sup> Գաղթականութեան կոմիտէի նամակագրութիւնէն մի քանին լոյս տեսած է Գ. Վարդանեանի (սոյն կոմիտէի ատենադպիր) «Ազգային տոմար» աշխատութեան մէջ:

գրուած զեկոյցները, տեղեկագրութիւնները և ժողովուրդին վերաբերեալ վիճակագրութիւնը՝ ուղղուած Ս. Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդին և Ազգային Պատուիրակութեան Ի Փարիզ: Նահր Օմար մնացած ժողովուրդին ներգաղթը կազմակերպելու և իր երջանիկ աւարտին հասցնելու նպատակով բազմաթիւ նամակներէն և հեռագիրներէն՝ մի քանին ուղղուած վերոյիշեալ ազգային և հոգեւոր մարմիններուն, կցուած են այս ուսումնասիրութեան:

Գաղթականութեան անցած ուղիի մասին հաշուի առնուած են մէկէ աւելի ականատեսներու և դէպքերուն մասնակիցներուն յուշագրութիւնները,<sup>39</sup> որոնք ի մի բերելով և համեմատելով Պաքուբայի մէջ ճամբարած ժողովուրդի վիճակագրական տուեալներուն

<sup>39</sup> - Վարդանեան Գ., Տոմար Ազգային, Վասպուրականէն մինչեւ Իրաք, Լոս Անճելըս, 1992:

- Վարդանեան Եղիշէ, Անապատ Անապատ, Վենետիկ, 1923:
- Ազիզեան Մելիք, Յուշապատում, Լոս Անճելըս, 1982:
- Ղազարեան Ղուկաս Տէր, Շատախի Երէջը, Երեւան, 2011:
- Ազատեան Լիպարիտ, Տիգրիսեան Յիշատակներ, Լոս Անճելըս, 1990:
- Պօղոսեան Համբարձում, Վասպուրականցի Գերդաստանի մը Պատմութիւնը, Երեւան 2014:
- Մեսրոպեան Հմայեակ, Վասպուրականի վերջին նահանջը, «Վարագ» Յուլիս, 1966:
- Յարութիւնեան Աւետիս, Վան-Վասպուրականի բնակչութեան վերջին՝ 1918 թ. Սարտեան գաղթը և Վանի նահանգի դատարկումը, «Բանբեր Հայաստանի Արխիւների» N 122, 2014:
- Գեորգեան Մ., Վասպուրականէն Պաղտատ և Պասրայի Անապատները, «Հայրենիք ամսագիր» 1965, 2, 3, և 4 թիւերուն մէջ:
- Սարտիրոսեան Ազգին, Յաղթական Նահանջ, «Հայրենիք ամսագիր» (1961 թ.) և բազմաթիւ յօդուածներ տարբեր պարբերաթերթերու, ամսագրերու և թերթերու էջերուն:
- Ընդգծելի է մանաւանդ Անթիլիասի Կաթողիկոսարանի «Հասկ» պաշտօնաթերթի մէջ հրատարակուած (11 Նոյ. 2004 թ. այնուհետեւ շարունակուած քանի մը թիւերուն մէջ), դէպքերուն ականատես և մասնակից Տէր Յովհաննէս քինյ. Սիմոնեանի յուշերը վերնագրուած՝ «Օժիտ Վասպուրականի», որ 1922 թ. պիտի ընկերամար 800է աւելի որբ-որբուհիներուն վերջիններուս դէպի Երուսաղէմ տեղափոխման:

հետ, յանգած ենք վերջնական եզրակացութեան՝ ճշգրիտ թուաքանակի և անցած ճանապարհի մասին:

Արժեքաւոր արխիւային տուեալներով հարուստ է Կ.Պոլսոյ պատրիարք երջանկայիշատակ Զաւէն արք. Տէր Եղիայեանի «Պատրիարքական Յուշերս» աշխատութիւնը,<sup>40</sup> յատկապէս մեր թեմային հետ անմիջականօրէն առնչուող, իր Մուսուլի մէջ արքութեան տարիներու (1916-1919 թթ.) ընթացքին պատահած դէպքերու և դէմքերու մասին:

Մեծապէս օգտուած ենք Իրաքի մէջ գործող հասարակական կազմակերպութիւններուն կազմած յուշամատեաններէն, որոնք ճշգրիտ կերպով տեղեկութիւններ կը հայթայթեն իրենց անցած ճանապարհին ընդմէջէն արտացոլուած գաղութի անցած ուղիի մասին, որոնցմէ նշենք Պաղտատի<sup>41</sup> և Պասրայի<sup>42</sup> Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւններուն, Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան<sup>43</sup> և Հայ Օգնութեան Միութեան<sup>44</sup> յորեւիցական յուշամատեանները:

Թէեւ տակաւին անտիպ, այնուամենայնիւ, Առաջնորդարանի պաշտօնական և այլ արխիւային նիւթեր պարունակող «Իրաքի Թեմի Համառօտ Պատմութիւն» հսկայածաւալ աշխատութիւնը, բուն սկզբնաղբիւրներէն (իմա՝ Առաջնորդարանէն) առնուած, տե-

<sup>40</sup> Եղիայեան Զաւէն. արք., Պատրիարքական Յուշերս, Գահիրէ 1947:

<sup>41</sup> Յուշամատեան Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան 1926-1976, Պէյրութ 1976:

<sup>42</sup> Մինասեան Վեհունի., Յուշամատեան Պասրայի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան, Պասրա 1997:

<sup>43</sup> Դար մը Պատմութիւն Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան, Գահիրէ Նիւ Եորք – Փարիզ 2006:

<sup>44</sup> Հայ Օգնութեան Միութեան Հարիւրամեայ Յուշամատեան, Պոսթրն, 2010:

ղեկութիւններով հարուստ շտեմարան է ուսումնասիրողներուն համար, որմէ բնականաբար օգտուած ենք նաեւ մենք:<sup>45</sup>

Թեմայի շուրջ արաբալեզու բազմաթիւ յօդուածներ և հրապարակումներ գոյութիւն ունին համացանցային կայքերու էջերուն, մասնաւորապէս «Իլաֆ»ի մէջ հրատարակուած Իրաքի հայերուն մասին, գրող-հրապարակախօս Սըեար Էլ-Ջամիլի՝ երեք մասերէ բաղկացած յօդուածը:<sup>46</sup>

Բոլորովին վերջերս, Իրաքցի սոցիոլոգ տօքթ. Զամիդ Էլ-Յաշըմի (ներկայիս դասախօս Եւրոպայի շարք մը յայտնի համալսարաններուն մէջ), 2016 թ. լոյս ընծայեց «Իրաքի հայերը՝ պատմութիւն, մշակոյթ և ինքնութիւն» արաբերէն աշխատութիւնը:<sup>47</sup>

Այս դարաշրջանը (20-րդ դարը – Ս.Օ.) Իրաքի նորագոյն պատմութեան մէջ փորձութիւններով լի թերեւս ամենահարուստ ժամանակաշրջանն է, որը բնականաբար պիտի անդրադառնար նաեւ Իրաքի մէջ բնակութիւն հաստատած «բնիկ» կամ «եկուոր» հայ հասարակութեան կեանքի բոլոր ոլորտներուն վրայ: 1958 թ. զինուորական յեղաշրջումէն ետք, միապետական համակարգէն անցում դէպի հանրապետական կարգեր, 1963 թ. Փետրուար 8-ին Բաաս կուսակցութեան կողմէն առաջին յեղաշրջումը, որ այնուամենայնիւ, երկար կեանք չունեցաւ՝ ընդամենը 9 ամիս: Այնուհետեւ, 1967 թ. Յուլիսին ամուր, հաստատուն, կտրուկ քայլերով, և որ

<sup>45</sup> Այս դժուարին գործը իրականացնելու նպատակով և անմիջապէս գործի լծուելու համար Առաջնորդարանը յանձնախումբ մը մշակակեց յանձինս՝ տիարք Պարոյր Օրջանեանի, Աբրահամ Սեդրակ Օհանեանի, Տօքթ. Վեհունի Սինասեանի, Պարոյր Յակոբեանի և Տօքթ. Զօհրապ Նախշբերեանի: Այս աշխատութիւնը որ կը գտնուի Իրաքի Առաջնորդարանին մէջ, ցարդ կը մնայ անտիպ:

<sup>46</sup> الجميل س. – ايلاف – الارمن العراقيون- الجنور والاصغان – الخصوصية والحادية والاسرار الحيوية، 17 و 2010/10/26

(Սըեար Էլ-Ջամիլ, Իրաքի Կայերը՝ արմատներն ու ճիւղերը, առանձնայատկութիւնները, հմայքը և կենսունակութեան գաղտնիքները): Սոյն յօդուածը թարգմանուած է անգլերէնի Քաթիա Փելթեկեանի կողմէն:

<sup>47</sup> الدكتور الهاشمي ح. – الارمن العراقيون – التاريخ ، الثقافة ، الهوية – دار روزنامه سويسرا 2016.

ամենակարեւորն է, համարեա անարիւն յեղաշրջումով՝ երկրի ղեկը դարձեալ իր ձեռքն ամենելով (իմա՝ Բաաս կուսակցութիւնը) շարունակեց երկիրը կառավարել ընդհուպ մինչեւ 2003 թ. դաշնակից զօրքերու ներխուժումը Իրաք: Այս ժամանակաշրջանը կարելի է բնութագրել որպէս Իրաքի նորագոյն պատմութեան դրական և բացասական փորձութիւններով լի շրջան: 1972 թ. նաւթի պետականացում և հետեւաբար, եկամուտներու եռապատկում, 1975 թ. Իրանի հետ համաձայնագիրի կնքում, որ պիտի խախտուէր 1980 թ.՝ սոյն երկրի հետ ութամեայ, լայնածաւալ, դաժան պատերազմով և պիտի խլէր միլիոնաւոր մարդկանց կեանքեր և պատճառէր երկու երկիրներուն միութեան ահռելի վնասներ: 1980-1988 թթ. Իրանա-Իրաքեան պատերազմի աւարտէն հազիւ երկու տարւայ խաղաղութենէ ետք, դարձեալ պիտի լսուէին պատերազմական փողերու ձայները, երբ 1990 թ. Օգոստոս 2-ին Իրաքեան զօրքերը կը ներխուժեն Քուէյթ և կը գրաւեն զայն: Այնուհետեւ, դարձեալ պատերազմ, նոր զոհեր, տնտեսական շրջափակում, կրթական, գիտական առողջապահական ոլորտներու ահաւոր անկում և առ ի հետեւանք բնակչութեան արտահոսք դէպի աւելի խաղաղ երկիրներ, որը կը շարունակուի ցայսօր:

Պատերազմական գործողութիւններէն անմասն չմնաց նաեւ հայ համայնքը: Հաւատարիմ իրեն ապաստան տուող երկրին և պետականութեան բոլոր օրէնքներուն, Իրաքահայը՝ երկրի վերելքին նպաստող շինարար գործունէութեան զուգահեռ, եղած է նաեւ օրինակելի և քաջարի զինուոր: Երկրին վտանգ սպառնացող պահին, մասնակցած է անոր պաշտպանութեան և պարգեւատրուած «պատերազմի հերոս»ի, ինչպէս նաեւ «նախագահի ընկեր» շքանշաններով: 1980-1988 թթ. Իրան-Իրաք պատերազմին, Իրաքահայութիւնը ունեցաւ 105 զոհ, ինչպէս նաեւ ռազմական գերիներ: Իսկ Ծոցի երկրորդ պատերազմին զոհուած հայորդիներու թիւը 12 էր:

Ներկայիս, երբ Մերձավոր Արևելքի մեջ գտնուող բոլոր քրիստոնեայ փոքրամասնությունները, ներառեալ հայերը, կանգնած են լուրջ մարտահրավերներու առջեւ, երբ ի շարս միւս գաղութներու, Իրաքահայ գաղութի շարքերն ալ անընդհատ կը նօսրանան, երբ ազգային դպրոցներու աշակերտութեան թիւը հետզհետէ կը կոտորակուի, կը ցանցառի և երբ բնակչութեան արտահոսքը, 20-րդ դարուն սկիզբը, զիրենք գրկաբաց ընդունող երկիրէն ահագնացող թիւերու կը հասնի, աւելի քան հրամայական պահանջ կը զգանք ներկայացնելու այս գաղութին անցեալ հարիւր տարուան հասարակական, տնտեսական և մշակութային բեղուն գործունէութիւնը, հակառակ տուեալ ժամանակաշրջանին երկիրը ալեկոծող, բազմաթիւ քաղաքական վերիվայրումներու և իրարայջօրոյ վարչակարգերուն փոփոխական քաղաքականութեանց:

Ուսումնասիրութիւնը կը բաղկանայ ներածութենէ, երեք գլուխներէ, որոնցմէ իւրաքանչիւրը, իր կարգին ունի համապատասխան ենթագլուխներ՝ հոգեւոր, ազգային, հասարակական-տնտեսական և կրթամշակութային կեանքի մասին: Յաւելուածներու բաժինը կ'ընդգրկէ Իրաքի քարտէզը, Գաղթականութեան Կոմիտէի և Տարագրելոց Յանձնախումբի քանի մը նամակներ, Շէրիֆ Ալիի նամակ-հրահանգը՝ ուղղուած իր որդիներուն՝ համառօտ քարգմանութեամբ, նմանապէս Ղազի թագաւորին նամակը՝ ուղղուած Ամենայն հայոց Հայրապետ Խորէն Մուրատբէկեանին, ի պատասխան վերջինիս՝ թագաւորին հասցեագրած ցաւակցութեան՝ հօր մահուան առթիւ, և խնդակցութիւնը Ղազիի Իրաքի գահը բարձրանալուն եւ այլն: Նմանապէս ՀՀ Ազգային արխիւէն առնուած վիճակագրութիւն՝ Պաքուբա հանգրուանած գաղթականութեան տուեալներով և այլ փաստաթուղթեր ու պատկերներ:

## ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

### ԻՐԱՔԱՅԱՅԵՐԸ 20-ՐԴ ԴԱՐՈՒՆ

#### 1- Գաղթականութեան հոսքը Իրաք

Իրաքի հայ գաղութի պատմութեան նորագոյն շրջանը կը սկսի Առաջին Աշխարհամարտէն ետք, երբ Արեւմտեան Հայաստանի և Թուրքիոյ հայաբնակ տարբեր շրջաններէն տեղահանուած, նաեւ Ատրպատականի<sup>48</sup> բազմահազար ժողովուրդը (հայ և ասորի), ճաշակելով ամէն տեսակի զրկանք, բազմիցս կոտորակուած, վերջապէս ոտք կը դնէ Իրաքի հիւրընկալ հողին վրայ:<sup>49</sup>

Այս տարիներուն, Իրաքի մէջ գոյութիւն ունեցող փոքրաթիւ, սակայն առաւելապէս բարեկեցիկ գաղութը,<sup>50</sup> հայրենիքի մէջ ապրող իրենց ազգակիցներուն պէս, կ'ապրէր ահ ու սարսափի օրեր: Անոնք եւս ենթարկուեցան ձերբակալութիւններու և աքսորի: Ձերբակալուածներէն էին Պաղտատի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անդամներէն Գառնիկ Գույումճեան, Յովհաննէս Թադէոսեան, Բարսեղ Կիւլպէնկեան, Յակոբ Ներսէսեան, նաեւ բազմավաստակ ուսուցիչ և մանկավարժ Միհրան Սվաճեանը, որ վարակուելով փոխանցիկ հիւանդութենէ, իր մահկանացուն կ'ընքեց Ռաս ուլ-Այնի աքսորավայրին մէջ:<sup>51</sup>

<sup>48</sup> Վազգէն, Ատրպատականի Գոյամարտը, «Հայրենիք ամսագիր», Հոկտեմբեր, Ղեկտեմբեր 1930, Յունուար և Յունիս 1931:

<sup>49</sup> Մարտիրոսեան Ա., Նշ. աշխ., էջ 55-65:

<sup>50</sup> Longrigg Stephen H., Iraq 1900 to 1950, London 1953, p 11.

<sup>51</sup> Միհրան Հրաչեայ Սվաճեանը, ծնած է Պոլիս՝ Պէշիկթաշի մէջ 1847 թուականին: Տեղւոյն և Սամաթիոյ ազգային վարժարաններուն աշակերտելէ ետք, յաճախած է Պոլսոյ Նուպար-Շահնազարեան վարժարանը՝ Մինաս Չերազ և Եղիա Տէմիրճիպաշեանի խումբին հետ: Սվաճեանը պատրաստուած հայկաբան էր, ֆրանսագէտ, գրաբարի, աշխարհաբարի, թուրքերէնի և աշխարհագրութեան մէջ հմուտ, որ այնքան թանկագին ծառայութիւններ մատոյց Պաղտատի կրթական կեանքին մէջ (Գեորգեան Կ., Նշ. աշխ., էջ 410):

Մինչ այդ, բրիտանական զորամիավորում մը, յառաջանալով Պարսից Ծոցի ուղղութեամբ, 1914 թ. Նոյեմբեր 5-ին, գրաւած էր աշխարհագրական յոյժ կարեւոր դիրք ունեցող Պասրա քաղաք-նաւահանգիստը՝ սկիզբը դնելով Միջագետքի մէջ պատերազմական քառամեայ գործողութիւններուն ընդդէմ արդէն իր մայրամուտը ապրող Օսմանեան կայսրութեան մնացորդներուն: Այնուհետեւ, բրիտանացիները իրենց յաղթարշաւը շարունակելով Յունիս 5, 1915 թ. գրաւեցին Տիգրիս գետի հովիտին մէջ գտնուող Ամարա քաղաքը, և սոյն թուականի Յունիս 25-ին՝ Իրաքի հարաւ-արեւմուտքը, Եփրատ գետի ափին գտնուող Նասըրիա քաղաքը: Այսպիսով, վերջիններս իրենց հսկողութեան տակ վերցուցին Պասրա-Ամարա-Նասըրիա տնտեսաքաղաքական կարեւորագոյն եռանկիւնը, որը կը նշանակէր իրենց բացարձակ տիրապետութիւնը տարածել ամբողջ Պարսից Ծոցի երկիրներուն վրայ, ներառեալ Աբադան նաւթավերամշակման շինութիւններով յագեցած՝ նաւահանգիստ-քաղաքը:<sup>52</sup> Այնուամենայնիւ, Քուք քաղաքը (160 քմ. Պաղտատէն հարաւ-արեւելք) գրաւելու համար, բրիտանական զորքերը չունեցան նոյն ռազմական սրընթաց յաջողութիւնները: Զինգ ամիս շարունակ շրջափակման մէջ գտնուելով Օսմանցի զորքին և տեղացի արաբ գրոհայիմներու կողմէն, բրիտանացիները ունեցան 13309 զոհ և ահռելի քանակութեամբ զինամթերքի կորուստ:<sup>53</sup> Ընդհանուր առմամբ, բրիտանացիները Միջագետքին տիրանալու համար ունեցան 92000էն<sup>54</sup> աւելի մարդկային զոհ (որոնցմէ 27000 տարատեսակ հիւանդութիւններու պատճառով) և

<sup>52</sup> Երրիմեան Լեւոն, Զայ Զինական Ուժը Առաջին Աշխարհամարտի վերջին փուլում, Երեւան 2010, էջ 45:

<sup>53</sup> الدكتور النجار م., العراق في التاريخ، العراق المعاصر، عهد الانتداب، بغداد 1983، صفحة 663.

<sup>54</sup> Bark, Jr A.J., The Mesopotamian Campaign 1914-1918, Dial Press, New York 2009. (Data from Statistics of the Military Effort of the British Empire, London HMSO, 1920).

նիւթական լուրջ վնասներ՝ մինչեւ երկու հարիւր միլիոն անգլիական ֆունտ ստերլինգ:<sup>55</sup> Այնուհետեւ, յառաջանալով դէպի Միջագետքի սիրտը հանդիսացող Պաղտատ քաղաքը, գրաւեցին այն Մարտ 11, 1917 թ.: Իսկ Նոյեմբեր 1918 թ., Մուսուլի և յարակից շրջաններու գրաւմամբ, ամբողջացաւ Իրաքի գրաւումն ու գաղութացումը ընդհուպ մինչեւ 1958 թ. Յուլիսեան զինուորական յեղաշրջումը: Ուշագրաւ է այն փաստը, որ երբ անգլիացիները գրաւեցին Պաղտատ քաղաքը, իրենց հրամանատար գեներալ Սօդը, կոչով մը դիմեց Իրաքի ժողովուրդին յայտարարելով, որ «...իրենք մտած են Պար աս-Սալամ (Խաղաղութեան Տուն՝ Պաղտատ), ոչ որպէս նուաճողներ, այլ ազատարարներ օսմանեան դարաւոր լուծէն, և Անգլիան ու իր դաշնակիցները պիտի ապահովէն արաբական ազգի վերածնունդը... եւայլն»:<sup>56</sup> Մինչդեռ, ըստ 1916 թ. կնքուած Սայքս-Փիքոյի համաձայնագրի, Անգլիային իրաւունք էր վերապահուած Իրաքի մէջ հաստատել իր ազդեցութեան ենթակա կառավարման այնպիսի համակարգ որը ամբողջովին կը համապատասխանէր բրիտանական շահերուն առանց՝ հաշուի առնելու իրաքցիներու ազգային շահերը: Այս դաժան գաւառային քաղաքականութիւնը բրիտանացիներու կողմէն անհետեւանք չմնաց, և շուտով ընդամենը մի քանի տարի ետք, տեղի պիտի տար տեղացի արաբ ժողովուրդի տարբեր խաւերուն արդարացի ընդվզման և յանգէր 1920 թ. Իրաքեան Մեծ Յեղափոխութեան:<sup>57</sup>

<sup>55</sup> Նոյն տեղը:

<sup>56</sup> الدكتور النجار م., عبد القادر - نفس المصدر، صفحة 664 (Sopp. էլ-Նջջառ Մ. Աբդը-Կադըռ, Իրաք Պատմութեան մէջ, Պաղտատ, 1983, էջ 663-664): Տես նաեւ՝ Յովհաննիսեան Ն., Արաբական երկրների պատմութիւն, Խատոր Երրորդ, Երեւան, էջ 430-431:

<sup>57</sup> الحسني عبد الرزاق - الثورة العراقية الكبرى - بيروت 1978 الطبعة الرابعة - صفحة 110-114. էլ-Զասանի Ա. Ռազզակ, Իրաքի 1920 թ. Մեծ Յեղափոխութիւնը, Պէրոս 1978, 4-րդ հրատարակ. էջ 110-114: Ըստ Իրաքի պատմաբան էլ-Նջջառի՝ 1917 թ. վերջերը և 1918 թ. սկիզբները Նաջաֆի մէջ բրիտանացիներու կողմէն 11

Ահա՛ այսպիսի ռազմաքաղաքական անկայուն և վտանգալից իրադրություն էր ստեղծուած Միջագետքի մէջ, երբ արեւմտահայ բազմահազար ժողովուրդը, ղեկավարութեամբ Փետան Դաշտի<sup>58</sup> ճակատամարտի ղեկավար Լեւոն Շաղոյեանի<sup>59</sup> և Կոստի Զամբարծումեանի,<sup>60</sup> թրքական դժոխքի կրակներուն մէջէն անցնելով, Պարսկաստանի ճամբով, 1918 թուականի Օգոստոսին, ապաստանեցան այստեղ: Բրիտանական իշխանութիւնները պատսպարեցին զանոնք մայրաքաղաքէն հիւսիս-արեւելք 45 քիլոմէթր հեռավորութեան վրայ գտնուող Պաքուբա գիւղաքաղաքին առջեւ տարածուող ընդարձակ անապատին մէջ, նախապէս պատրաստուած անծայրածիր սպիտակ վրաններուն տակ, Տիալա գետի ափին, ուր մնացին մինչեւ 1920 թուականը:

---

ազատականներ կախաղան կը հանուին և 170 անձ կ'աքսորուին իրենց քաղաքէն (իմա Նաճաֆ քաղաքը), որը շրջափակման մէջ կը գտնուէր 40 օր:

<sup>58</sup> Դաշտ Դայկական Լեւոնաշխարհի մէջ, Արեւելեան Տիգրիսի հովիտի, Վանի գաւառի Շատախ գաւառակին մէջ, Շատախ-Վան ճամբայէն արեւմուտք:

<sup>59</sup> Լեւոն Շաղոյեան ծնած է 1887 թ. Գայոց Ձորի խարականց գիւղը: Ուսանած է Աղթամարի դպրոցին մէջ, մուտք գործելով յեղափոխական կեանք (ԴՅՊ), աչքի ինկած է իր խիզախութեամբ և պատասխանատուութեան գիտակցութեամբ օժտուած մտաւորականի: 1914 թ. նշանակուած է Գեաւաշի ինքնապաշտպանական ուժերու հրամանատար, ապա Փետանդաշտի գինուորական հրամանատար: Իր շնորհիւ փրկուած է տեղի (Փետանդաշտի) 6000-ի հասնող հայութիւնը: 1918 թ. Վանի հայութեան հետ կ'անցնի Միջագետք և երկար տարիներ բնակութիւն կը հաստատէ Իրաքի հիւսիսային կողմը գտնուող իր խկ կառուցած գուտ հայաբնակ Գաւրեթ գիւղին մէջ: Իր մահականացուն կը կնքէ 1974 թ. Պաղտատի մէջ: Թաղուած է Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ բակին մէջ՝ Ապրիլեան Սուրբ նահատակաց յիշատակին կառուցուած խաչքար-կոթողի պատուանդանին աջ կողմը: (Գայոց Ցեղասպանութիւնը Օսմանեան Թուրքիայում, Վերապրածների վկայութիւններ, փաստաթղթերի ժողովածու, Վանի Նահանգ), Գայաստանի Ազգային Արխիւ, Երեւան 2012, էջ 474, նաեւ: Իրաքահայ Թեմի համառօտ պատմութիւն, էջ 275:

<sup>60</sup> Ազգային գործիչ Կոստի Զամբարծումեանը Սային Կալայի մէջ, դաւադրութեամբ կը սպաննուի թուրքերու կողմէն, որոնք ծպտուած էին անգլիացի սպաներու համագգեստով:

«...1918-ի Օգոստոսի սարսափելի տաք օրերուն էր, որ մեր ժողովուրդը ուռք դրաւ Պաքուբայի անապատին մէջ: Անսովոր կլիմային, գրեթէ շնչահեղձ կ'ըլլայինք և որուն որոշ ժամերուն շատերը Դիալա գետի ջուրերուն մէջ կ'անցնէին, ուրիշներ՝ վրաններու կողքին՝ մէկ երկու խորանարդ մէթր փոսեր բանալով մէջը կը մտնէին տաքէն ազատելու համար, սակայն օգուտ չէր ըներ»:<sup>61</sup> Թեւ անգլիացիները իրենց կարելին կ'ընէին՝ մեղմելու համար ժողովուրդին տառապանքը, այնուամենայնիւ, անզօր էին զանազան հիւանդութիւններուն առաջքը առնել, հակառակ առողջապահական դարմանատուներուն և հիւանդանոցի խնամքներուն: Այս պատճառով մարդկային մեծ կորուստներ կ'ունենան հիւանդութեան և կլիմայական աննպաստ պայմաններու հետեւանքով: Աքսորի ճանապարհին՝ բազմատեսակ տառապանքները, յոգնածութիւնը և մահաւանդ հոգեկան ցնցումները իրենց աւերը գործած էին.....

Այս կապակցութեամբ պատմական արժէք ներկայացնող վաւերաբույժ մըն է այն ուղերձը, գրուած 29 Ապրիլ 1918 թուականին, մերձ-արեւելեան արաբական երկիրներու թագաւոր և Սեբքէի մեծաւոր հռչակուած Շէրիֆ Զիւսէյնի կողմէն,<sup>62</sup> որ ի տես և ի լուր պատերազմի ընթացքին, Օսմանեան կառավարութեան հրամանով՝ բնաջնջման դատապարտուած տեղահանեալ հայերուն անսահման թշուառութիւնը, նամակով մը ուղղուած իր զաւակներուն և անոնց միջոցաւ, բոլոր արաբ ցեղապետներուն, կը յանձնարարէ իրենց պաշտպանութեան տակ առնել հայերը: Շէրիֆ Զիւսէյնի գրիչին տակ, հայերը կոչուած են «Յակորեան», անկասկած երու-

---

<sup>61</sup> Վարդանեան Գ., Նշ. աշխ., էջ 105:

<sup>62</sup> Իրաքի վերջին թագաւոր Ֆէյսալ Բ.ի և Յորդանանի Զիւսէյն թագաւորներուն մեծ հայրը:

սաղեմի Ս. Յակոբեանց վանքին կրօնապէս ենթակայ նկատելով զանոնք:<sup>63</sup>

Յետագային, 20 Դեկտեմբեր 1933 թ., Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն Հայրապետական Կոնդակ կ'ուղղուի Ղազի Ա. թագաւորին՝ յայտնելու հայ ժողովուրդի ցաւակցութիւնը իր հօր՝ Ֆէյսալ Ա. թագաւորի մահուան և խնդակցութիւն իր՝ Ղազիի Իրաքի գահին բազմելու առթիւ, որուն առ ի պատասխան, թագաւորը շատ սիրալիք նամակով մը, իր գնահատանքը և շնորհակալութիւնը կը յայտնէ Հայրապետին և իր միջոցաւ՝ ողջ հայ ժողովուրդին:<sup>64</sup>

Գաղթականութեան Պաքուբա ժամանելէն անմիջապէս ետք, Բրիտանական իշխանութիւնները, հայերը և ասորիները առանձնացուցին իրարմէ և այդ հսկայ վրանաքաղաքը, բաժնեցին երեք գլխաւոր բաժանմունքներու: Առաջինը՝ հայկական բաժանմունք, որ կոչուեցաւ Ա (A) շրջան, Բ և Գ (B և C) ասորական շրջաններ:<sup>65</sup> Հայկական վրանաքաղաքը բաժնուած էր 12 «քէմփերու», 2-13, իսկ ասորիներուն՝ 14-32, վասնզի ասորի գաղթականներու թիւը կ'անցնէր 50.000ը: Երկաթուղիի մօտ գտնուող թիւ 1 հատուածը յատկացուած էր նորեկ գաղթականներու ժամանակաւոր կեցութեան, որոնց ժամանումէն անմիջապէս ետք, բժիշկները հոն կը փութային և ամբողջ գաղթականները մանրակրկիտ կերպով զննելէ ետք, հիւանդները հիւանդանոց, իսկ առողջները՝ թիւ 1 բաժանմունքը կ'առաջնորդուէին, ուր կը մնային երեք օր, ամբողջապէս կողմացած վիճակի մէջ, և կատարելապէս հականեխուելէ ետք միայն կ'առաջնորդուէին իրենց յատկացուած վրանները:<sup>66</sup> Իւրաքանչիւր բաժին կը գլխաւորէր անգլիացի սպայ մը՝ հետն

<sup>63</sup> Melkonian V., Նշ. աշխ., էջ 15:

<sup>64</sup> ՀԱԱ Ֆ.409, Ց.1, Գ. 4417:

<sup>65</sup> Brig.Gen. Austin H.H., The Baqubah Refugee Camp – An account of work on behalf of the persecuted Assyrian Christians, Chapter II, "The Faith Press", Manchester April 1920. [www.org/books/brc.htm](http://www.org/books/brc.htm) Գեներալ Օսթըն, Պաքուբայի Փախստականներու ճամբար, Մանչեսթըր, 1920.

<sup>66</sup> Վարդանեան Ե., Նշ. աշխ., էջ 110-111:

ունենալով որոշ թիւով զինուորներ, որոնք ենթակայ էին իրենցմէ աւելի բարձրաստիճան զինուորականներու՝ օգնական սպաներով և զրագիրներով: Այս կեդրոնն էր, որ հրահանգներ կու տար նպաստի վերաբերեալ բաշխումներու, ինչպէս և ժողովուրդի կարգապահութեան խնդիրներուն:<sup>67</sup>

Հայրենիքէն բռնագաղթուելէն ետք, որ տեղի ունեցաւ 1918 թ. Մարտ ամսուն, հայ փախստականներու վիճակագրութեան եզրակացութիւնը հետեւեալ պատկերը կը ներկայացնէ, պատրաստուած 1919 թ. Ապրիլ ամսուն Գաղթականութեան Կոմիտէի կողմէն:

Պաքուբայի Հայ Փախստ. Վիճակագրութեան Եզրակացութիւնը  
1918 Մարտ – 1919 Ապրիլ

	<u>Ներկայ թիւ</u>
Արական	7891
Իգական	<u>6562</u>
14453 Որմէ դպրոցական տարիք ունեցողներուն թիւն է՝	
Արական	2461
Իգական	<u>1393</u>
	3854

Իսկ ճանապարհին մեռածներու և կորածներու ընդհանուր պատկերը հետեւեալն է:

Մեռածներ արական	3232
իգական	3743
Կորածներ	6975
արական	1953
իգական	<u>1802</u>
	3755

<sup>67</sup> Վարդանեան Գ., Նշ. աշխ., էջ 103-104:

Ուրեմն, գաղթականներու թիւը հայրենիքը ձգած ժամանակ 26183 անձերէ կը բաղկանար: (Ներկայ թիւ 14453+ 6975 մեռածներ + 3755 կորածներ = 26183 անձ):

Իսկ հիւսիսային Իրաքի սահմանին, գաղթականութեան աւելի փոքր հոսանքներ, Տէր Ջօրի և Ռաս Ուլ Այնի սպանդանոցէն ու արհաւիրքներէն ազատած հայ բեկորներու խումբեր, Արեւմտեան Հաստանի և Թուրքիայի հայաբնակ վայրերէն հասած էին Մուսուլ:

1915 թուականի Հոկտեմբերին, 3000 անձերէ բաղկացած Կարնեցիներու կարաւան մը հասած էր Իրաքի հիւսիսային կողմը գտնուող Սինջար և Ջախօ քաղաքները, ուրկէ Տօթ Գրիգոր Ասթարճեանի<sup>68</sup> ջանքերով, ապահով փոխադրուեցան Մուսուլ: Այստեղ, յարմար կայանատեղիի չգոյութեան պատճառով՝ առաջնորդարանը ասոնցմէ մաս մը տարբեր վայրեր տեղափոխելու կը ստիպուի: Ուստի, աւելի քան 2000 հայ գաղթականներ, Տիգրիսի վրայով կը փոխադրուին Պաղտատ, ապա երկաթուղիով՝ Պաքուբա ուր կեանքի պայմանները համեմատաբար աւելի նպաստաւոր էին քիչ թէ շատ մարդավայել ապրելու համար: Յիշատակութեան արժանի է, որ Իրաքահայ թեմի հոգեւոր առաջնորդներէն՝ Ասողիկ արք. Ղազարեան եւս մաս կազմած է այս աքսորեալներու խումբին:<sup>69</sup>

<sup>68</sup> Ասթարճեան Գ., նշ. աշխ., էջ 34 «...Շրջագայութեան պահուն ինձմէ մօտաւորապէս 500 մեթր հեռաւորութեան վրայ գտնուող տափարակ արտի մը մէջ, մրջինի նման վիտացող զանգուածի մը գոյութիւնը նշմարեցի: Որոշեցի մինչեւ հոն երթալ և հասկնալ յարածուն շարժումով ուշադրութիւն գրաւող այդ զանգուածը: Ի գարմանս ինձի ի՛նչ տեսնեմ, այդ զանգուածը մերկ, բոպիկ, երկար քալելէն, շաբաթներով բոյսերով ու արմատներով սնանած, ոտքերնին ու դէմքերնին ուռած, հիւծած, մաշած, դալկացած կին ու երախաներէ, պառանդներէ, վիժում ունեցած հարսերէ, չառեւանգուելու յոյսով այտերնին սեւցուցած, մագերնին զգզուած պարմանուիկներէ բաղկացած հայերէն խօսող զանգուած մըն է, որ իր մէջ կը հաշուէր 3000 հոգի...»:

<sup>69</sup> Ասողիկ արք. Ղազարեանը ծնած է 1909 թ. Մալաթիոյ Պեհեսնի գիւղը: 1915 թ. տարագրութեան ընթացքին կորսնցնելով իր հարազատներէն շատերը՝ կը հասնի Սիջազետք: Կ'ընդունուի Տարագրելոցի որբանոցը Պաքուբա: 1921 թ. բախտակից որբերուն հետ, Կարմիր Ծովու ճամբով կը փոխադրուի Երուսաղէմ, ուր

Տօթ. Ասթարճեան, պետական բժիշկի իր պարտականութիւնները կատարելու ընթացքին, 1917 թ. Հոկտեմբեր ամսուն, Ջախօյի մէջ կը հանդիպի 300 հոգիէ բաղկացած բանուորական խումբի մը, «...որոնց մէջն էին Ատանայի յայտնի գերդաստաններէն՝ Ջաքարիա Պզտիկեան, Մարաշէն՝ Յակոբ Շամլեան և Վանի առեւտրականներէն՝ Սմբատ Ճիտեճեան...»: Ասոնց եւս, Ասթարճեան իր կապերուն շնորհիւ, օգտակար կ'ըլլայ վրաններ հայթայթելով, ապահովելով սնունդով և հանդերձանքով:<sup>70</sup>

կ'ըստանայ իր նախնական ուսումը «Արարատեան» որբանոցին մէջ: 1924 թ. Թորգոմ Գուշակեան պատրիարքի կարգադրութեամբ հոգեւորականներ պատրաստելու նպատակով՝ ընտրուած քսան որբերէն մէկն է եղած և դրկուած Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանը, ուր ստացած և կատարելագործած է իր հոգեւոր դաստիարակութիւնը, 1928 թ. ձեռնադրուած է սարկաւազ ձեռամբ Տ. Եղիշէ պատրիարք Դուրեանի՝ որպէս Երուսաղէմի Ա.Յակոբայ վանքի միաբան, 1932 թ. կուսակոծ քահանայ Տ. Թորգոմ պատրիարք Գուշակեանի կողմէն, օծակից ունենալով՝ Տ.Եղիշէ վրդ. Տէրտէրեանը, Տ.Հայրիկ վրդ. Ասլանեանը և Տ.Տիրայր վրդ. Տէրվիշեանը, 1932-1937 թթ. Ա.Աթոռի մէջ վանական-վարչական պատասխանատու աշխատանքներ վարող, շրջ համաշխարհային պատերազմէն առաջ 1937 թ.էն զանազան պաշտօններ Հնդկաստանի, Հոնգ-Քոնգի և Չինաստանի շիջելու դատապարտուած Հեռաւոր Արեւելքի մէջ գտնուող փոքր գաղութները վերակենդանացնելու յոյսով, քարոզած և այցելած է ամայացած եկեղեցիներն ու հիմնարկները ազգօգուտ գործունէութեամբ, կեդրոն ունենալով հարպին քաղաքը: Այս միջոցին 1941-1945 թթ. ծանր տարիները անցուցած է ճաւոնական համակեդրոնացման ճամբարներու մէջ որպէս պատերազմական գերի՝ հարպին: 1950 թ. վերադառնալով Ա.Էջմիածին կը նշանակուի հոգեւոր հովիւ մինչեւ 1955 թ., երբ հայրապետական պատուիրակ կը նշանակուի Հնդկաստանի, Ինտոնզիայի, Մալայայի, Պուրմայի և առաջնորդ Աստրալիայի, 1963-1965 թթ. Ա.Էջմիածին՝ որպէս դասախօս հոգեւոր ճեմարանի և ժամ օրհնող Մայր Տաճարի, ձեռնադրուած եպիսկոպոս՝ 1957 թ. և արքութեան պատիւ ստացած Վազգէն Ա. կաթողիկոսի կողմէն: 1965 թ. Յորդանանահպատակ Տ.Ասողիկ կը նշանակուի կաթողիկոսական պատուիրակ Իրաքահայ Թեմին, այնուհետեւ առաջնորդ 1966 թ. մինչեւ իր վախճանը 1978 թ.: Ա. Էջմիածին:

<sup>70</sup> Ասթարճեան Գ., նշ. աշխ., էջ 41-42 (1915 թուականին, Մուսուլի կուսակալ հրամանատարը՝ ալբանացի Հայրար Պէյն էր, որ կը պատականէր Ի'իթիլաֆ կուսակցութեան և կատաղի հակառակորդ Իթթիհադականներուն: Մէջբերում մը իր արտայայտած խօսքերէն ուղղուած Տօթ. Ասթարճեանին. «...Տօթթր, կը հասկնամ յուզմանդ ալեկոծութիւնը, վշտիդ խորութեան և զգացած մտատանջութեանդ որ աստիճան իրաւացի ըլլալը, և սակայն ինչ կրնամք ընել: Այս

Ուշագրաւ են Տէր Զաւէն արք. Եղիայեանի գրառումները Մուսուլի շրջանին մէջ գտնուող գաղթական ժողովուրդի իրավիճակին վերաբերեալ: Այս քաղաքին մէջ և շրջակայքը մոլեգնող սովի ճիւղաններուն մէջ կը գտնուէին ոչ միայն հայ, այլ նաեւ քիւրտ գաղթականներ,<sup>71</sup> որոնք եկած էին Վանի և Բաղէշի շրջաններէն՝ փախուստ տալով Ռուս բանակէն և հայ կամաւորներէն:<sup>72</sup> «1917-1918 թթ. ծմրան, թշուառ ժողովուրդը ուտելու բան չէր գտներ: Սակայն իբրեւ երեւոյթ նկատելի էր, որ հայոց կորուստը համեմատաբար քիչ էր» կը նշէ երջանկայիշատակ պատրիարքը՝ աւելցնելով, որ հայերը քաղաքակիրթ տարր ըլլալով՝ Մուսուլ հասած Կարնեցի և ուրիշ քաղաքացի այրի կիներ մեծ մասամբ ծառայութեան մտած էին չնչին վարձով, Մուսուլի բոլոր հարուստներուն՝ զինուորական և քաղաքային պաշտօնեաներուն տուններն. ու թէ՛ ինքզինքնին և թէ՛ իրենց ազգականները և ծանօթները կ'ապրեցնէին:<sup>73</sup> Այս պատճառով, սովամահ եղած հայերու թիւը օրական տասէն աւելի չէր անցնիր: Դժբախտաբար, հայերու կորուստը շատ աւելի եղած էր տարի մը առաջ, երբ անոնք, նոր հասած Մուսուլ, երկրին անծանօթ և առանց նեցուկի էին: Այն ատեն Ռուս Ուլ-Այնէն Մուսուլ երկարող ճամբան հայոց դիակներով լեցուած էր, իսկ իրենց Մուսուլ հասնելէն ետք, ճամբու յոգնութենէն և թիֆուսէն մեծ կորուստ ունեցած են:<sup>74</sup>

Իբրիհաղականները չտանջուած տարր մը չձգեցին: Չե՞ս յիշեր 1912ին Ալպանացիներու դէմ զսպողական զինուորական արշաւանքին ինչ խժոժութիւններով կատարուած ըլլալը: Եթէ ես ծանօթ ըլլայի իրենց ներքին ճենկիզեան քաղաքականութեան գաղտնիքներուն, վստահ եղիր որ՝ վալլահ ես որեւէ պաշտօն չէի ստանձներ, սակայն այս պաշտօնէն դուրս ալ որեւէ ապրուստի միջոց չունիմ...»):

<sup>71</sup> Ա-Դօ, Ռուսական Ցարերը և Հայկական Հարցը, Երեւան 2013, էջ 146:

<sup>72</sup> Եղիայեան Զ. Տէր, Պատրիարքական Յուշերս, «Տպարան Լոր Աստղ», Գահիրէ 1947, էջ 236.

<sup>73</sup> Լոյն:

<sup>74</sup> Լոյն

Ինչպէս վերը նշեցինք, Տէր Զօրի սպանդանոցէն ճողոպրած, Ռուս Ուլ-Այնէն, Տիարպէքիրէն և Սղերդէն այս քաղաքը ապաստանած հայու բեկորներէն մաս մը կը դրկուին Պաղտատ, այնուհետեւ՝ Պաքուբա:

Այսպէս, Պաքուբայի վրանաւանը կը մեծնայ ու կը «չեննայ» իր դպրոցով, եկեղեցիով և երկու տարի շարունակ բնակավայրը կը դառնայ այս հոծ գաղթականութեան: Կանխելու համար բազմատեսակ կենցաղային, կրօնական և այլ տեսակ խնդիրներու ծագման հաւանականութիւնը, որ անխուսափելի էր այսպիսի հոծ բազմութեան հաւաքական կեանքի ընթացքին, Մուշեղ եպս. Սերոբեանը, Վահան քինյ. Թաջիրեանի ներկայութեամբ՝ գաղթականներու մէջ գտնուող 18 կղերականներ, կ'ընտրեն Կրօնական ժողովի անդամներ՝ չորս անձերէ բաղկացած: Վահրամ Ծ. Վրդ. Կանաչեանը՝ Նախագահ, Տ.Յովհաննէս քինյ. Սիմոնեանը՝ քարտուղար, Մարտիրոս քին. Եղիազարեանը և Ստեփան քինյ. Ստեփանեանը՝ որպէս խորհրդատու անդամներ: Այս ժողովին կը յանձնուի ժողովրդեան հոգեւոր-կրօնական գործերը վարելու հոգը:<sup>75</sup>

Ըստ Գաղթականական Կոմիտէի վիճակագրական տուեալներուն (պատրաստուած արդէն տեղափոխուած երկրորդ գաղթականայան՝ Նահր Օմարի մէջ)՝ Միջագետք հասնող գաղթականութեան սկզբնական պատկերը հետեւեալն էր, զոր քաղած ենք սոյն Կոմիտէի ատենապետ Լեւոն Շաղոյեանի անձնական արխիւէն:

«1) 1918 թուականի Օգոստոս 25 - 1918 թուականի Սեպտ. 15՝ Վանէն, Սալմաստէն, Ուրմիայէն նահանջող գաղթականութիւնը տեղաւորուեցաւ Միջագետքի մէջ:

2) Միջագետք հասնող հայ գաղթականութեան ընդհանուր թիւն էր **18219**, որմէ՝ Վանեցիներ՝ **15000**, Սալմաստցիներ՝ **719**, Ուրմիայէն և Սուլտուզէն **2500**:

<sup>75</sup> Վարդանեան Ե., Նշ. աշխ., էջ 114: Տես նաեւ՝ Յովհաննէս քին. Սիմոնեանի յուշերը՝ վերնագրուած՝ Օժիտ Վասպուրականի, «Հասկ»՝ Մեծի Տանն Կիլիկիոյ պաշտօնաթերթ, Անթիլիաս, 11, 2004-2005:

3) Գաղթականութիւնը տեղաւորուեցաւ Պաքուբա - Պիալա գետի ափին, Անգլ. կառավարութեան կողմէ վրաններէ պատրաստուած քէմփին մէջ:

Գաղթականներէն մասնաւորներ միայն, որոնք շատ չնչին թիւը կը կազմէին, հաստատուեցան Պաղտատի մէջ:

4) Ըստ 1919 թուականի Նոյեմբեր 20-ին կազմուած ստոյգ վիճակագրութեան, Վանէն մինչեւ Պաքուբա հանգրուանելը, ճանապարհներուն ունեցած կորուստները՝ գերի, անհետ կորած, սպանուած և մահացածներու թիւն էր՝

**10730** շունչ (**5185** արական և **5545** իգական սեռին պատկանող):

Իսկ սոյն 1918 թ.ի Օգոստոս 25-էն մինչեւ 1919 թ.ի Նոյեմբեր 20-ը, Պաքուբայի մէջ մահացած են **2677** անձ:

1920 թ. Յունուար 1-ին Պաքուբայի մէջ տեղակայուած գաղթականութեան ընդհանուր թիւը (որու մէջ ներառուած են Մուսուլէն եկող **2200** տարագիրներ, որոնցմէ նոյն տարուայ Նոյեմբերին, **երկիր** մեկնեցան **350** անձ, իսկ **376** անձ ալ Պաղտատ-Մուսուլ ցրուեցան, ոմանք գաղտագողի, ոմանք ալ կառավարութեան թոյլտուութեամբ), **15697** անձ (**4868** այր, **5724** կին, **5105** մինչեւ **10** տարեկան երեխաներ): 1921 թ.ի Յունուար 1-ին (արդէն տեղափոխուած Նահր Օմարի գաղթակայան) գաղթականներու ընդհանուր թիւն էր **12384** անձ (3712 այր, 4140 կին, 3275 պատանի 12 տարեկանէն վեր, և 1257 երեխաներ 12 տարեկանէն վար):

Ներկայիս (12-07-1921) այս գաղթականական քէմփին մէջ (Նահր Օմար - Ս.Օ) կան **11936** անձ (**3015** այր, **4660** կին, **3045** պատանի 12 տարեկանէն վեր և 1216 երեխայ 12 տարեկանէն վար) որմէ **9536** վանեցիներ, **1100** Ուրմի-Մուլտուզ, **500** Սալմաստի, և **800** Պուլսոյ և Կիլիկիոյ շրջանի ժողովուրդներ:

Վերոյիշեալ թիւէն դուրս են այս թուականներուն Պասրայի մէջ գտնուող **600** անձեր որոնք ծառայութեան մտած են հայ և արա-

բական զործարաններուն մէջ<sup>76</sup>, և մաս մըն ալ կառավարութեան գործին մէջ (երկաթուղագիծի շինութեան), նաեւ Պաղտատի մէջ գտնուող **2000**-է աւելի գաղթականներ:

Ծանօթ: 1920 թուականի Մարտ ամսուն, Պաքուբայի գաղթականներէն **2274** անձ փոխադրուեցան Մուսուլ ճանապարհի շինութեան վրայ աշխատելու, յետագային՝ 1921 թուականի Սեպտեմբերին միացան այս գաղթակայանին, տեղափոխուած Նահր Օմարի վրանաւան:»<sup>77</sup>

Սիջագետքի Գայ Տարագրելոց Յանձնախումբի ատենապետ Մարտիրոս Գույումճեան, իր հերթին, գաղթականութեանց հետեւեալ վիճակագրական ցուցակ մը պատրաստած էր անգլերէնով և հասցեագրած Ազգային Պատուիրակութեան Փարիզ:<sup>78</sup>

Պիթլիս Նահանգ

<u>Գաւառ</u>	<u>Գիւղ</u>	<u>Բնակչութիւն</u>
1- Սպարկերտ	20	384
2- Կառկառ	10	147
3- Պիթլիս	14	200
4- Խիզան	16	209
5- Կարճկան	13	209
6- Սղերդ	6	81
	79	1230

140 մահացած  
12 հեռացած

<sup>76</sup> Ազգային մեծ բարերար Սիմոն Ղարիպեանի արմաւի «չարդախ»ներու մէջ, ուր աշնան սկիզբը արմաւի բերքը կը հաւաքուի, և տարբեր մշակումներէ ետք, կը փաթեթաւորուի՝ ներքին շուկայի և արտահանման նպատակով:

<sup>77</sup> Վիճակագրական Ցուցակ, 21 Յուլիս 1921 – Լեւոն Շարդեանի անձնական արխիւ Պաղտատ (անտիպ):

<sup>78</sup> ՀԱԱ, Գայ Ազգային Պատուիրակութեան Ֆոնդ - Ֆ.430, Ց.1, Գործ 769:

Վասպուրական նահանգ

1- Աղբակ	22	1267
2- Արճակ	10	529
3- Թիմար	35	2753
4- Շատախ	26	970
5- Հայոց Ձոր	33	870
6- Մոկս	24	456
7- Սարա	1	79
8- Քաւաշ	12	214
9- Վան	24	2166
10- Նորդուզ	9	295
11- Քաւառ	5	166
12- Ջուլամերկ	4	96
13- Խօշար	3	135
14- Սադմանց	1	190
	209	10186

786 մահացած  
90 հեռացած

Ատրպատական

1-Սալմաստ	14	1002
2- Ուրմիա	29	1657
	43	2659

90 մահացած  
3 հեռացած

Ամփոփում

Գաւառ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջիկ
Պիքլիս	79	510	463	205	203
Վասպուրական	200	3449	3559	214	1940
Ատրպատական	43	690	760	795	504
	331	4684	4782	1214	2647

Ներկայ պահուն (1919 թ.) Պաքուբայի մէջ՝ 14109 անձ  
Մահացած Օգոստոս 1918էն ի վեր՝ 1036 անձ  
ճամբարէն հեռացած զանազան պատճառներով՝ 105 անձ

Արաբական և քրտական աշիրէթներու մօտ՝ հայ որբեր, կիներ և աղջիկներ գերի կը մնային մօտաւորապէս հետեւեալ հաշուով<sup>79</sup>

- 1- Ջիբար և ուրիշ երկու աշիրէթներ (անընթեռնելի) 500
- 2- Ճիբուռ աշիրէթին քով 600
- 4- Շամըռ աշիրէթին քով 700
- 5- Անգէ 2000
- 6- Չէչէն աշիրէթներուն քով Րաս ուլ-Այնի մէջ 2000

Այս կապակցութեամբ, ըստ Միջագետքի առաջնորդ Մուշեղ Արք. Սերոբեանի 11-09-1918 թուակիր տեղեկագիրին՝ ուղղուած Հայ Ազգային Պատուիրակութեան, Միջագետքի մէջ արաբ աշիրէթներու մէջ կը գտնուէին մօտաւորապէս 1000 որբեր, աղջիկներ, կիներ և տղաք:<sup>80</sup> Հետագային՝ մասնաւոր որբախտոյ յանձնախումբ մը

<sup>79</sup> Տեղեկագիրը պատրաստուած է Մերձաւոր Արեւելքի Նպաստամատոյցին կողմէ, որով ցոյց կը տրուի հայութեան թուաքանակը Հայոց մեծ եղեռնէն և տարագրութենէն ետք թիւրքիոյ մէջ մնացած, և ինչ համեմատութեամբ ցրուած են զանազան նահանգներուն մէջ: Սենք նշած ենք միայն Իրաքի մէջ գտնուող արաբ և քիւրտ աշիրէթներու մօտ գտնուող հայերուն թիւը:

<sup>80</sup> ՀԱԱ, ֆ.430, Զ.1, Գ. 768:

պիտի կազմուէր, որու գլխաւոր պարտականութիւնն էր, արաբ և քիւրտ ցեղերէն ազատագրել վերոյիշեալներուն:<sup>81</sup>

Այս կապակցութեամբ հարկ է նշել, որ բրիտանական մամուլի թերթերէն մէկուն մէջ կը կարդանք, որ Միջագետք հասնող ժողովուրդը, մեծամասնութեամբ նեստորականներ, կը հաշուէր 47000՝ առանց անդրադառնալու հայ գաղթականներու թուաքանակին:<sup>82</sup>

Այսպիսով Առաջին աշխարհամարտի ընթացքին, գաղթականական տարբեր խումբեր Միջագետք հասնելուն, օրուան Քաղաքական ժողովը, տարագիրներուն օգնելու նպատակով՝ յանձնախումբ մը նշանակած էր «Տարագրելոց Պաշտպան Մարմին» անունով: Սակայն, նշանակուած յանձնախումբի անդամներէն ոմանք երկրէն բացակայելուն, ոմանք ալ՝ ինքնակամ հրաժարելուն պատճառով, նոր յանձնախումբ մը կը հիմնուի «Միջագետքի Հայ Տարագրելոց Յանձնախումբ» անունով՝ ի պաշտօնէ Մուշեղ արք. Սերոբեանի նախագահութեամբ: Հայ Կաթոլիկ համայնքէն նաեւ կը հրաւիրուի Տիկ. Սրբուհի Գասպարեան՝ մասնակցելու վերոյիշեալ յանձնախումբի գործունէութեան:<sup>83</sup>

Յանձնախումբի առաջնահերթ գործերէն մէկը եղաւ Մուսուլի գաղթականներուն օգնութեան հասնիլ Տ.Ջաւէն Արք. եղիայեանի միջոցաւ, որ այդ ատեն իբր արքորեալ կը գտնուէր Մուսուլ:<sup>84</sup> Իր

<sup>81</sup> Guyumjian M. (Album) "Souvenir of the Independence of Armenia in Aid of Armenian Orphans", Mesopotamia, 28<sup>th</sup> May 1920, Baghdad.

<sup>82</sup> The Times of The Armenian Genocide – Reports in the British Press Volume 1 1914-1919 – Compiled and edited by Katia M. Peltekian, Beirut, 2013, p. 263.

<sup>83</sup> Իրաքահայ թեմի.....նշ. աշխ., էջ 191:

<sup>84</sup> Երբ Անգլիացիները Մուսուլը կը զրաւեն, այնտեղ արքորուած Տ.Ջաւէն Պատրիարքի առաջին գործերէն մէկը կ'ըլլայ, տարագիրները խնամել և փողոցներէն ու իսլամներու տուններէն հաւաքել հայ որբուկները: Իր ջանքերով և կարգադրութեամբ անմիջապէս հայ երիտասարդներ գործի լծուեցան և քանի մը օրուան մէջ, իր բնակած տունը բնակավայրը կը դառնայ նաեւ այս դժբախտներուն: Այնուհետեւ, տուն մը կը վարձուի սոյն նպատակի համար, որով հիմը կը դրուի որբանոցի մը նաեւ Մուսուլի մէջ (Ջաւէն Արք. նշ. աշխ., էջ 288):

աշխարհագրական բացառիկ դիրքին շնորհիւ, գտնուելով Միջագետքի անապատի եզրին՝ այս վիլայէթը կանխատեսուած էր իբր արքորավայր Պիթիսէն, Տիարպէթիւրէն, Վանի վիլայէթի հարաւային կողմը գտնուող տարածքներէն և վերջապէս Էրզրումէն տարագրուած առաջին երկու կարաւաններէն ետ մնացողներուն: Ըստ Մուսուլի մէջ գտնուող գերմանացի հիւպատոս Դօլըշթայնի, 1915 Պեկտեմբեր ամսուն, 15000 տարագիր հայեր հասած էին այս շրջանը: Աւելի ուշ, Տէր Զօրի դժոխքէն ճողոպրած եւս 2500 հայեր 22 Մայիս 1916 թ. ապաստանած էին Մուսուլ:<sup>85</sup> Այստեղ տարագրուածներէն շատ քիչերն են կենդանի մնացեր: 1916 թ. Փետրուար ամսուն, քաղաքի մէջ կը գտնուէին 1600 և շրջակայքը 2200 տարագիրներ:<sup>86</sup>

Զինադադարէն ետք, երբ Մուսուլ անգլիական բանակի կողմէն զրաւուեցաւ, տարագիրներու հոսանք մը սկսած էր հասնիլ Պաղտատ, որոնք կը դիմեն Առաջնորդարան, ապրուստի նպաստ խնդրելով: Վերոյիշեալ յանձնախումբը, այս գաղթականները կը փոխադրէ Պաքուբայի գաղթակայանը և անոնց սննդեղէնի, հագուստի և բնակարանի կարգադրութիւններ կ'ընէ տեղւոյն բրիտանական հրամանատարութեան օժանդակութեամբ: Նիւթական օժանդակութիւն կը ցուցաբերուի նաեւ Տէր Զօրի մէջ գտնուող գաղթականներուն ի պատասխան՝ սոյն շրջանի մէջ կազմուած «Հոգատար Մարմին»էն ստացած խնդրանքին:

Վերոյիշեալ յանձնախումբին ջանքերով, 1918 թուականի Նոյեմբերին, որբանոց մը կը բացուի Պաղտատի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ կից շէնքի մը մէջ, ինչպէս նաեւ որբանոց մը՝ Պաքուբայի վրանաւանին մէջ: Իսկ երկսեռ որբանոց մը հիմնուած է նաեւ Մու-

<sup>85</sup> Kevorkian R., The Armenian Genocide, I.B.Tauris & Co.Ltd., New York, 2011, pp. 652-653.

<sup>86</sup> Սոյն:

սուլի մէջ, 28 Պեկտ. 1918 թ., Ջաւեն Պատրիարքի և առաջնորդ Մուշեղ եպիսկոպոսի ջանքերով: Որբանոցը ունեցաւ 400է աւելի ծընողազուրկ երեխաներ, որոնց մեծ մասը, 1919 թ. Յունիս 24-ին իրենց ուսուցչուհի-մայրիկ Խոսրովիդուխտի հետ, կը տեղափոխուին Պաքուբայի վրանաւանի որբանոցը, ուրկէ բախտակից որբերուն հետ կը փոխադրուին Երուսաղէմ: Այստեղ հարկ է նշել, որ Տէր Ջաւեն արք. Տէր Եղիայեանի ջանքերով, և Սահակ Խապայեան կաթողիկոսի կողմէն առաքուած նիւթական օժանդակութեամբ, նաեւ Մուսուլի հայոց մուխթար (համայնքապետ) Սարգիս Չագմագճեանի,<sup>87</sup> Սասունցի Մովսէս Ստեփանեանի և ուրիշ քահանայ հայրերու գործակցութեամբ հնարաւոր եղաւ բազմաթիւ որբերու հաւաքումն ու մէկտեղումը վերոյիշեալ որբանոցին մէջ: Իսկ առեւանգուած հայ աղջիկներու և կանանց ու երեխաներու ազատագրման գործողութիւններուն մէջ թերեւս ամենամեծ ներդրում ունեցողներէն եղած է Ռուբէն Չերեան անունով հայորդին, որ ծպտուած արաբական հագուստով, անվկանդ կամքով և վտանգելով իր իսկ կեանքը, յաջողած է բազմաթիւ կանանց և աղջիկներուն փրկել իրենց առեւանգիչներէն:<sup>88</sup> Չետագային, նոյն ազգանուէր գործով

<sup>87</sup> Սարգիս Չագմագճեան՝ Տարագրելոց Մարմնի Մուսուլի ներկայացուցիչն էր և Մուսուլի Յայ Բարեգործական Ընդհանուր Միութեան Վարչութեան անդամ: Եղած է գլխաւոր մատակարարը և հսկիչը Մուսուլի որբանոցին: Ալպոյաճեան Ա., Իրաքի Յայերը, էջ 122:

<sup>88</sup> ՅԱԱ Ֆ. 420, Յ. 65, Գ. 51: Ռուբէն Չերեան ծնած էր 1869 թ. Թոգատ. տեղւոյն ազգային սեմինարիատը աւարտելէն ետքը կ'անցնի Կոստանդնուպոլիս, անկէ Նիւ Եորք, ուր կ'ունենայ իր անձնական աշխատանքը: Աշխուժօրէն կը մասնակցի ազգային հասարակական կեանքին, ընկերներուն հետ կը հիմնադրէ Նիւ Եորքի Կրթասիրաց Միութիւնը: Յայոց Ցեղասպանութեան մասին տեղեկանալէն ետքը, կը ձգէ ամէն ինչ և ամերիկահայ կամաւորներուն հետ կը մեկնի Մերձաւոր Արեւելք ուր կը միանայ Յայ Լեզոնականներուն: Իսկ երբ 1918 թ. վերջիններս կը փոխադրուին Պաղեստինի ճակատը, Չերեանի մասնակցութիւնը կը բացառուի իր տարիքի պատճառով: Սակայն առանց յուսահատելու կը շարունակէ իր գործունէութիւնը՝ Գահիրէի մէջ խնամելով վիրաւոր հայ կամաւորները և ֆրանսացի զինուորները: Այնուհետեւ Չերեանը կ'անդամակցի Միջա-

պիտի զբաղուէին Տօքթ. Գրիգոր Ասթարճեանն<sup>89</sup> ու Տէր Գրիգոր քինյ. Տէր Յակոբեանը:<sup>90</sup>

1915 թ. Մուսուլ գտնուած են 200 հայեր, մեծամասնութեամբ գաղթած Սղերդէն: Ցեղասպանութեան շրջանին, ինչպէս նշեցինք, Մուսուլը եղած է հայ աքսորականներու համակեդրոնացման կարեւոր վայր մը, ուր հաւաքուած են մօտ 30 հազար գաղթականներ, որոնցմէ պատերազմի աւարտին մնացած են մօտաւորապէս 4 հազար միայն և աւելի քան հազար որբեր: Ասոնցմէ շատեր աւելի

գետքի Յայ Նպաստամոյց Կոմիտէին, որու նախագահն էր ի պաշտօնէ Միջագետքի առաջնորդ Մուշեղ արք. Սերոբեանը: Վերջինս կը լիազօրէ Չերեանը ազատագրուած որբերն ու աղջիկները փոխադրել Յալէպ: Միւս անշահախնդիր հայորդին էր նաեւ Մարտիրոս Գոյունճեանը, որը նոյնպէս անխոնջ կերպով մասնակցած է Միջագետքի մէջ որբահաւաքի ազգանուէր աշխատանքներուն:

<sup>89</sup> Տօքթ. Գրիգոր Ասթարճեան, բնիկ Մարաշցի, ծնած է 1886 թուականին: Յազիւ Պոլիս մեկնած 1905 թուականին, համալսարանի բժշկական ճիւղը մտնելու, Ելտրդի ռուսի դէպքին հետեւանքով, աքսորուած է Յալէպ: Յաճախած է 1907-1908 թուականներուն Դամասկոսի բժշկական վարժարանը և ապա 1910 թուականին փոխադրուած է Պոլսոյ պետական համալսարանը: Պալքանեան պատերազմին (1912 թ.) իբրեւ բժիշկ-սպայ մասնակցելէ ետք, իր բժշկական վկայականը ստացած է 1913 թուականին և իբրեւ պետական բժիշկ, նոյն տարին, գործուղուած է Մուսուլ: Տեղւոյն կուսակալի անձնական բժիշկ ըլլալու հանգամանքը զինքը փրկած է տեղահանութենէն: Մուսուլի մէջ ամբողջ երեսուն տարի զբաղած է բժշկութեամբ և հանրօգուտ գործունէութեամբ: Սերտ կապեր պահած է արաբ մտաւորական շրջանակներուն հետ և լաւապէս տիրացած ըլլալով արաբերէն լեզուին՝ արաբական թերթերուն մէջ սկսած է հրատարակել թարգմանութիւններ հայ գրականութենէն: Ու փոխադարձաբար արաբ գրականութենէն էջեր թարգմանած է հայերէնի և հրատարակած «Գոյամարտ»ի մէջ: Իր կարեւորագոյն աշխատասիրութիւններէն են արաբերէնով հրատարակուած իր երկու ստուար հատորները՝ 1951 թուականին լոյս տեսած «Յայոց Պատմութիւն»ը և 1954 թուականին «Յայոց Գրական և Մշակութային Պատմութիւն»ը, որոնք արժանացան արաբական մամուլի և արաբ գրագէտներու ջերմ գնահատանքին:

<sup>90</sup> Տէր Գրիգոր քինյ. Տէր Յակոբեան՝ ծնած է Պիթլիս, 1884 թուականին, քահանայ ձեռնադրուած 1912 թուականին Մշոյ Ս. Կարապետ վանքին մէջ, ծեռամբ Ներսէս Եպս. Խարանեանին: Նոյն տարին կը իրաւիորուի Մուսուլի հոգեւոր հովութեան 1912-1939, 1939 - 1955 թ. Իրաքի Առաջնորդական Տեղապահ Պաղտատ: Չեղինակն է «Իրաքահայ Կեանքէն, Մուսուլ Յասնող Գաղթականութիւնը 1915-1918» գիրքին «Տպ. Սեւան», Պէյրութ, 1981 զոր գրի առած է իր որդին Մովսէս Տէր Գրիգորեանը:

վերջը հեռացած են քաղաքէն: Ջինադադարին, տեղւոյն որբանոց-այրիանոցին մէջ (զոր հիմնուած էր Ջաւէն պատրիարքի ջանքերով) ապաստան գտած են 5-600 անօգնականներ, իսկ 1928 թ. հոն մնացած են հազիւ 200 ընտանիքներ 155 երկսեռ աշակերտութեամբ ազգային դպրոց մը:<sup>91</sup>

Աւելի ուշ, Պաղտատի որբանոցի խնամատարութիւնը կը յանձնուի Ամերիկեան Նպաստամատոյցին, իսկ Պաքուբայի որբանոցը կը մնայ Տարագրելոցի հովանաւորութեան ներքոյ:

Պաքուբայի վրանաւանի մէջ կեանքը հետզհետէ իր «բնականոն» հունին մէջ կը մտնէ: Կրթութեան հանդէպ մեր ժողովուրդին յատուկ նախանձախնդրութեամբ «դպրոցներ» կը բացուին հայկական տասներկու «քէմիներուն» մէջ, ուր կը յաճախէին 2500է աւելի երկսեռ աշակերտներ: Այս դպրոցները կը գտնուէին Գաղթականական Կոմիտէի անմիջական հսկողութեան տակ, հովանաւորութեամբ դարձեալ անգլիական իշխանութեան: Կարճատեւ, դպրոցները կը միացուին ընդարձակ գետնի մը վրայ բարձրացուած վրաններուն տակ, ուր աշակերտները կը դասաւորուին ըստ կարողութեան, և դասաւանդութիւնը կը դրուի միաձեւ և շիտակ ճամբու վրայ: 2500 աշակերտութեան կը դասաւանդէին երեսուն երկսեռ ուսուցիչներ:<sup>92</sup>

Դեռեւս 1918 թ. անգլիացիները Համադանի մէջ վանեցի և ասորի զինուորներէն կազմած էին յատուկ ստորաբաժանումներ. հայերու վաշտը կը կոչուէր «Վան-Ռայֆլ» կամ «Վանի հրաձիգներ», իսկ ասորիներունը «ասորական լեւիներ»: Ըստ անգլիացիներու հաւաստիացումներուն, հայերը ռազմականօրէն մարզելէ ետք, պիտի ծառայէին գլխաւորաբար հայկական հողերը ազատագրելու համար, որը բնականաբար իւրաքանչիւր վանեցի զինուորի

<sup>91</sup> «Եփրատ», Բ. տարի, թիւ 126, 29 Սեպտեմբեր 1928, Հալէպ:

<sup>92</sup> Վարդանեան Գ. Եջ. աշխ., էջ 115:

բարձրագոյն նպատակն էր:<sup>93</sup> Ստեղծուած էր նաեւ հեծելավաշտ քաղկացած 300 վանեցիներէ, որոնք նմանապէս զինուած էին անգլիական զէնքերով: Ահա այս վաշտի ժամանումն էր, որ Պաքուբայի գաղթականայնի բնականոն և խաղաղ կեանքը պիտի ընդհատէր, երբ ամիսներէ ի վեր Սինա-Սաքըզի շրջաններուն (Իրանի Քիւրտիստան) մէջ ծառայելէ ետք եկաւ և բանակեց որբանոցին կից տարածքին: Անգլիացիները հայ զինուորներուն կը պարտադրէին ստորագրել թուղթ մը մօտաւորապէս հետեւեալ բովանդակութեամբ. «...համաձայն եմ ծառայել ասորիներու վաշտին մէջ մինչեւ իմ զինուորութենէ արձակուիլս, նոյնպէս (կ'ընդունիմ) հնազանդիլ օրինական հրամանին անոնց որոնք ինծմէ բարձր աստիճան ունին, և հպատակիլ ցամաքային ուժերուն հնդկական բանակին մէջ: Կ'ընդունիմ դրկուիլ իմ երկիրս, ուր ասորական գունդը կրնայ դրկուիլ: Ջինուորները «...համաձայն չէին ստորագրելու այս թուղթը, և ասիկա մեծ խնդրոյ առարկայ եղած էր...»:<sup>94</sup> Այս նպատակով, անգլիացի հրամանատարը դիմած էր Տէր Ջաւէնին, որ Պոլիս վերադառնալու ճամբուն, այցելած էր Պաքուբայի գաղթականութեան խնդրելով համոզել հայկական զօրքին կատարելու անգլիացիներուն պահանջը:

Հակառակ անգլիացիներու բերած փաստարկներուն, որ իրենց նպատակը միայն հայ զօրքերը աւելի լաւ կազմակերպել և հնազանդութեան վարժեցնելն է, այնուամենայնիւ, վասպուրականցիներէ կազմուած այս զօրքը, հրամանատարութեամբ Լեւոն Շաղոյեանի և թիւով 1000-1500 զինուորի, (բացի պարսկահայ զօրամիաւորումներէն, որոնք խառնուած էին ասորական վաշտերու մէջ), մնացին անյողդողդ և չ'անսացին ոչ մէկ սպառնալիքի: Անգ-

<sup>93</sup> Գեորգեան Մ., Վասպուրականէն Պաղտատ և Պասրայի անապատները, «Հայրենիք անսագիր», Մարտ 1965, էջ 67-70:

<sup>94</sup> Եղիայեան Զ. Տէր. Եջ. աշխ., էջ 262-263, տես նաեւ Գեներալ Օսթրնի գեկուցագիր-հաշուետուութիւնը Ապրիլ 1920 թ., մշ. աշխ., Գլուխ III (անգլերէն):

լիացի սպաները նոյնիսկ առաջարկած են զանազան փոփոխութիւններ մտցնել ստորագրուելիք թուղթին մէջ, մինչեւ անգամ իրենց (հայերուն - Ս.Օ.) առաջարկած են բանաձեւ մը խմբագրել, բայց անոնք կտրականապէս միանգամ ընդմիշտ մերժած են որեւէ թուղթ ստորագրել: Հարկադրուած և յուսահատուած՝ անգլիացիները հրապարակաւ կը զինաթափեն հայ զինուորականութիւնը, որոնք կը վերադառնան գաղթակայանի մէջ տեղակայուած իրենց ընտանիքներուն քով:<sup>95</sup>

Հետագային, Տէր Ջաւեն նոյնպէս կը յայտնէր իր կասկածները. «...այսպիսի թուղթ ստորագրելը բնաւ նպաստաւոր չեմ գտներ ո՛չ մեր ազգին ո՛չ մեր զօրաց , զի ասոր տակ պահուած բան մը կը տեսնեմ, որ բնաւ օգտակար չէ»:<sup>96</sup>

Իրաքին լիարժէք քաղաքական անկախութիւն տալու բրիտանական իշխանութիւններու տուած իրենց խոստումն իրաժարուելուն հետեւանքով 1920 թուականին ծայր կու տայ Պաքուբայի և շրջաններու արաբ ազատականներու ըմբոստութիւնը ընդդէմ վերոյիշեալ իշխանութիւններուն: Ապստամբութիւնը բռնկուեցաւ Յուլիս 2, 1920 թ., կեդրոնական Եփրատի հովիտին մէջ գտնուող Ռումէյթա գիւղաքաղաքին մէջ, ուր խումբ մը արաբ ազատականներ յարձակում գործելով յիշեալ գիւղաքաղաքին մէջ տեղակայուած բրիտանական կայազօրին վրայ, ազատ արձակեցին այնտեղ բանտարկուած և իրաքցիներուն մէջ մեծ հեղինակութիւն վայելող՝ Շալվան Աբու էլ-Ջուն անունով ցեղապետի մը:<sup>97</sup> Այս յամարձակ և աննախադէպ դէպքի լուրը, կայծակի արագութեամբ տարածուե-

<sup>95</sup> Գեներալ Օսթըն, մշ. աշխ., Գլուխ III: Տես նաեւ ՀԱԱ, ֆ. 1191, Ց. 3, Գ. 1656, նաեւ Ա. Խոսրոնեա, Ասորիների ցեղասպանութիւնն Օսմանյան Թուրքիայում և յարակից թուրքաբնակ վայրերում (XIX դարի վերջ – XX դարի առաջին քառորդ), Երևան, 2004, էջ 88: Նոյնպէս՝ Ազիզեան Մ., Նշ. աշխ., էջ 79-83:

<sup>96</sup> Եղիայեան Ջ. Տէր, մշ. աշխ., էջ 265:

<sup>97</sup> الدكتور التجار م. عبد القادر - نفس المصدر - صفحة 666

(Տօթք էլ-Նաջջառ Աբդուլ Կադըռ, մշ. աշխ., էջ 666):

ցաւ Եփրատի հովիտին մէջ գտնուող համարեա բոլոր բնակավայրերուն մէջ՝ Պաղտատ, Քերբալա, Բաբելոն, Նաջըֆ, Դիեսլա եւ այլն, ուր նմանատիպ արարքներ և խռովութիւնները շարունակուեցան հինգ ամիս շարունակ՝ մարդկային լուրջ կորուստներ և նիւթական վնասներ պատճառելով բրիտանական զօրքին:<sup>98</sup> Ապստամբութիւնը շարունակուեցաւ մինչեւ նոյն թուականի Հոկտեմբեր ամիսը, որու ընթացքին բրիտանացիները ունեցան 312 զոհ և 1228 վիրաւոր՝ անգլիացի և հնդիկ:<sup>99</sup> Յարձակումներ կը կատարուին նաեւ հայկական-ասորական գաղթակայանին վրայ՝ որպէս անգլիացիներու հովանաւորութեան տակ գտնուող կառոյց: Արաբներու արձակած զնդակներէն հայերն ունեցան 30 սպանեալ և 70 վիրաւոր: Արաբ ապստամբներէն պաշտպանուելու համար, զէնքեր կը բաժնուին հայ ոստիկան-պահակներուն և ասորիներուն:<sup>100</sup> Ասորիները զէնքերը օգտագործեցին ոչ միայն ինքնապաշտպանութեան համար այլ վրանաւանի սահմանները հատելով, յարձակումներ գործեցին մօտակայ արաբական գիւղերուն վրայ, և աւերի ու աւարի մատնեցին զանոնք, որոնք հետեւանքով, ըստ արաբ պատմաբանի, 45 ասորիներ զոհուեցան: Անգլիական օդուժը կը ռմբակոծէ Պաքուբա գիւղաքաղաքը՝ ահ ու սարսափ պատճառելով տարագիր ժողովուրդին: Այս և այլեւայլ պատճառներով բրիտանացիները հարկադրուած՝ կ'որոշեն այս ընդարձակ վրանաւանը դատարկել և հայերը փոխադրել Իրաքի հարաւային կողմը, Նահր Օմար կոչուած խոնար և անառողջ վայրը՝ Պասրա քաղաքէն

<sup>98</sup> էլ-Նաջջառ Ա. Կադըռ, մշ. աշխ. էջ 666, ըստ որուն՝ բրիտանացիները ունեցան 2500 սպանուած և վիրաւոր: Իսկ Բրիտանական աղբիւրները կը նշեն 312 սպանուած և 1228 վիրաւորի մասին միայն:

<sup>99</sup> Ulrichsen K. Coates, The British Occupation of Mesopotamia, 1914-1922, The Journal of Strategic Studies, Pembroke College, Cambridge University, UK, Vol.30 April 2007, P. 352.

<sup>100</sup> السيد عبد الرزاق الحسنى - نفس المصدر صفحة 239

(էլ-Սէյիդ Աբդուլ Րազզակ էլ-Հասանի, Նշ. աշխ. էջ 239):

40 քիլոմետր դեպի հիւսիս, իսկ ասորիները՝ Իրաքի հիւսիսային կողմը գտնուող քանի մը գիւղերուն մէջ:<sup>101</sup> Նահր Օմարի մէջ ալ գաղթական բազմութեանց խնամատարութիւնը ստանձնեցին անգլիացիները:

1920 թ. արաբ ազատականներու ապստամբութիւնը ստիպեց բրիտանացիներուն փոխել իրենց վարած քաղաքականութիւնը և հարկադրուած առաջարկել իշխան Ֆէյսալ իբն-Յուսէյնին (որն արդէն ֆրանսացիներու կողմէն վտարուած էր Սուրիայէն), ստանձնել Իրաքի գահը, որուն Ֆէյսալը իր համաձայնութիւնը տուաւ յաջորդ տարի Մարտ ամսուն, և յետ հանրաքուէի մը, Իրաքի ժողովուրդին հաւանութեանն արժանացաւ, որմէ ետք, 23 Օգոստոս 1921 թ. էմիր Ֆէյսալ գահ բարձրացաւ՝ սկիզբը դնելով Իրաքի Յաշըմիական թագաւորութեան ընդհուպ, մինչեւ 1958 թ.ի Յուլիսեան զինուորական յեղաշրջումը՝ թագաւորական ընտանիքի բոլոր անդամներուն սպանութեամբ: Այսպիսով, վերջ կը դրուէր 37 տարուայ միապետական կարգերուն իր դրական և բացասական կողմերով՝ տեղի տալով հանրապետական համակարգի, որը նոյնպէս փորձութիւններով լի շրջան մը պիտի ըլլար Իրաքի մէջ բնակուող բոլոր ժողովուրդներուն համար:

Գաղթականութեան և մանաւանդ, բազմաթիւ որբերուն գոյատեւումը պահպանելու համար, գէթ մինչեւ այնքան սպասուած ներգաղթը, Միջագետքի Հայ Տարագրելոց Յանձնախումբի գործունէութեանց թերեւս ամենակենսականը՝ իր որոշումն էր ատենապետ Մարտիրոս Գոյումձեանը առաքել Հնդկաստան, հանգանակութեան միջոցաւ դրամահաւաք կազմակերպելու: Այս կա-

պակցութեամբ արժէ յիշել որ Եգիպտոսի Որբախնամը,<sup>102</sup> տասը ամիսներու ընթացքին, Պաքուբայի որբանոցի պատասխանատուութիւնը ստանձնելէ ետք՝ նիւթական պայմաններու սղութեան պատճառով, կը հրաժարի սոյն որբանոցը հովանաւորելէն, և որովհետեւ, Տարագրելոցը նմանապէս ի վիճակի չէր նիւթական այդ բեռը վերցնել, ուստի վերջինս ձեռնարկեց վերոյիշեալ առաքելութեան՝ նախապէս ունենալով թոյլտուութիւնը Միջագետքի անգլիացի քաղաքացիական կոմիսար՝ Ա.Թ. Վիլսընին, որ ճշմարիտ հայասլրի համբաւ ուներ գաղթականաց մէջ: Վերջինս նամակով մը, ուղղուած Հնդկաստանի՝ Բոմբէյի, Քալքաթայի և Մադրասի համապատասխան ղեկավար պաշտօնեաներուն, կը յանձնարարէ ամեն դիւրութիւն ընծայել Մարտիրոս Գոյումձեանին և իրեն ընկերացող Պրն. Տէրվիշեանին (Միջագետքի մէջ Պելճիքայի պատուոյ հիւպատոս)՝ իրենց առաքելութիւնը յաջողութեամբ գլուխ բերելու:<sup>103</sup>

Ի պատիւ հնդկահայ գաղութին, նաեւ Հեռաւոր Արեւելքի մէջ բնակող օտար, սակայն բարեսէր մարդոց առատածեռն նուիրատուութեանց, առաքելութիւնը յաջողութեամբ կը պսակուի, և վերոյիշեալ երկու ազգայինները՝ 18 ամսուան բացակայութենէ մը ետք, կը վերադառնան Իրաք, և Մարտիրոս Գոյումձեանը, ընկերակցութեամբ ուրիշ ազգայիններու, իր անդրանիկ այցելութիւնը կուտայ Նահր Օմարի գաղթակայանին և կ'արժանանայ ժողովուրդին, և մանաւանդ որբանոցի սան-սանուհիներու անվերապահ և անկեղծ

<sup>102</sup> Պար մը Պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Կեդրոնական Վարչութիւն, Հատոր Առաջին, 1906-1940, Գահիրէ-Փարիզ - Նիւ Եորք, 2006, էջ 91, նոյնպէս՝ Մելքոնեան Է., Նշ. աշխ. էջ 118-127:

<sup>103</sup> A Recommendation letter No.303/119/47 dated 4<sup>th</sup> January 1920 from Acting Civil Commissioner in Mesopotamia, addressed to the Secretary of Government, Bombay, Calcutta and Madras with its enclosure (a letter written by Mardiross Kouyoumdjian to his fellow Armenian benefactors in India), Լեւոն Շաղոյեանի անձնական արխիւ, Պաղտատ (անտիպ):

<sup>101</sup> Գեորգեան Մ., Նշ. աշխ., «Հայրենիք ամսագիր» 1965, թիւ 4, էջ 41-49:

ողջոյնին: Յեռաւոր Արեւելքի երկիրներէն հաւաքուած նուիրատուութիւններէն կը գոյանայ բաւական կոկիկ գումար մը, զոր պիտի նպաստէր 800-1200 որբերէ բաղկացեալ որբանոցի և պաշտօնութեան բազմապիսի ծախսերը հոգալ, մինչեւ իրենց փոխադրուիլը երուսաղէմ, որ տեղի ունեցաւ Յունուար 22, 1922- թ.ին:<sup>104</sup>

Նահր Օմարի վրանաւանը իր գոյութեան 9-10 տարիներուն ընթացքին (1920-1929), ունեցեր է իր եկեղեցին, դպրոցը և նոյնիսկ քատրոնը: Դպրոցը հաստատուած է 1920 թուականին, սկզբնական շրջանին ունէր 800 երկսեռ աշակերտներ և 30 ուսուցիչ-ուսուցչուհիներ, որոնք կը դասաւանդէին հայերէն, կրօն, Յայոց պատմութիւն, բնագիտութիւն, բնապատմութիւն, բարոյավէպ, ընդհանուր ազգային պատմութիւն, աշխարհագրութիւն, երգ և մարզանք, և այս բոլոր առարկաները կ'ուսուցանուէր հայերէնով:<sup>105</sup>

Այս վրանաւանը այդպէս ալ մնաց մինչեւ 1921 թուականի Յունիս ամիսը, երբ սոյն ամսու 23-ին, Բրիտանական իշխանութիւնները իրամայեցին գաղթականացի ցրուումը: Երկու ամսուան ընթացքին, 1200 պարսկահայեր անցան Պարսկաստան, մնացածներէն մաս մըն ալ ներգաղթեց Յայաստան: Իսկ երբ ներգաղթի շարունակութեան յոյսերը բոլորովին ցնդեցան, տապալուած գաղթականացի մէջ մնացած գաղթականներէն 500 անձ, 1922-1923 թուականներուն, անցան Աբադան, Անգլեւիրանեան նաւթային ընկերութեան մօտ աշխատելու: Ուրիշ հազարաւորներ ալ հարկադրուած ցրուեցան Իրաքի զանազան կողմերը՝ Պասրա, Յայկանիա, Քերքուկ, Մուսուլ և մանաւանդ Պաղտատ: Այստեղ, հարկ կը համարենք շեշտել, որ գաղթականութիւնը երբեք չէր շահագրգռուած

<sup>104</sup> Վարդանեան Ե., Եշ. աշխ. էջ 486, Նաեւ ՀԱԱ - Հայ Ազգային Պատուիրակութեան Ֆոնդ, Ֆ. 430, Ց. 1, Գ. 770:

<sup>105</sup> Լեւոն Շաղոյեանի արխիւէն (Դպրոցի տնօրէն Գեղամ Վարդանեանի 31 Յունուար 1928 թուակիր նամակը՝ գրուած Նահր Օմարի վրանաւանէն, ուղղուած Պասրայի Շրջանի Կրթական Վերատեսուչին:

ցրուիլ Միջագետքի քաղաքներուն մէջ, այլ միակ նպատակն էր մնալ միատեղ և վերադառնալ հայրենիք:<sup>106</sup>

29 Յուլիս 1924 թուականին Ս. Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդին ուղղուած նամակի մը մէջ, Տէր Գարեգին եպս. Տրապիզոնցի հետեւեալ տեղեկութիւնները կը նշէ Պասրայի հայութեան վերաբերեալ՝

Պասրայի տեղացի բնակչութեան թիւը	242 անձ
Քաղաք հաստատուած տարագիրներ	427 անձ
Նահր Օմար գաղթականացի բնակչութիւն	<u>2000</u> անձ
Ընդհանուր թիւ	2669 անձ

Վերոյիշեալ նամակի տուեալներուն համաձայն, տարագիրներուն 82 տոկոսը վասպուրականցիներ են, 5 տոկոսը՝ Պիթլիսէն և Կարիսէն, իսկ մնացածը Արեւմտեան Հայաստանի և Թիւրքիոյ հայրենակ զանազան վայրերէ:

Երբ վերջապէս նօսրացաւ Նահր Օմարի գաղթականացի և հակառակ հայրենիք վերադառնալու բազմաթիւ դիմումներուն, Գաղթականութեան Կոմիտէի անդամները, հարկադրուած հաւաքելով մնացած բոլոր գաղթականները, որոնց մեծամասնութիւնը վասպուրականցի երկրագործներ էին, Հոկտ. 15, 1929 թ. փոխադրեցին զանոնք, Մուսուլէն 40 մղոն դէպի հիւսիս, Հաւրեզքի և մի քանի շրջակայ գիւղերու հողագործական շրջաններ՝ նախապէս թոյլտրութիւն ստանալով Իրաքի կառավարութենէն:

<sup>106</sup> ՀԱԱ Ֆ. 430, Ց. 1, Գ. 774 հեռագիրներ (19, 20, 21. 23-07-1921) Միջագետքի Հայ Փախստականներու Կոմիտէի Նախագահ Լեւոն Շաղոյեանէն ուղղուած Ազգային Պատուիրակութեան Նախագահ Պօղոս Նուպար Փաշային՝ Նահր Օմարի գաղթականները Կիլիկիա կամ Բաթում տեղափոխելու: Նմանապէս Ձաւէն Պատրիարքի նամակը Ազգային Պատուիրակութեան փոխ-Նախագահ Գարիկ Լորատունկեանին՝ Պոլիս 15-09-1921 Նահր Օմարի գաղթականութեան Սուլթանաբադ և որբերը երուսաղէմ փոխադրելու գործով:

Այս ցրուումով է, որ Իրաքի նոր գաղութը ստացաւ իր վերջնական դիմագիծն ու կերպարանքը և անկախ իր կամքէն, տեղաւորուեցաւ ու զարգացաւ տարիներու ընթացքին:

Որոշ աղբիւրներու համաձայն, Իրաք ժամանած գաղթականութեան թուաքանակը կը ներկայացուի որպէս 90-100 հազար միաւոր՝ առանց նշելու որեւէ փաստական տուեալներ: Հետեւաբար, այս ենթազուխը աւարտելէն առաջ, անհրաժեշտ կը համարենք յաջորդ էջերուն ներկայացնել Սիջագետք հանգրուանած (ժամանակաւոր կամ ընդմիշտ) Բիթլիսի, Վասպուրականի, Ատրպատականի և այլ նահանգներու գաղթականութեան ընդհանուր պատկերը, զոր քաղած ենք Հայ Ազգային Պատուիրակութեան արխիւէն՝ պատրաստուած Սիջագետքի Հայ Գաղթականութեան Կոմիտէի կողմէն:

## Սիջագետքի Հայ Գաղթականական Կոմիտէի տեղեկագրերը

### Պիթլիս նահանգ

Գաւառ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջիկ	Մեռած	Գաղթած	ընդ. գումար
Աւարկթառ	Կմել	5	5	1	3	3	-	11
	Մատ	12	9	3	2	5	-	21
	Պաղեց	5	5	2	4	-	-	16
	Պաղրանց	4	7	5	1	-	-	17
	Տվազուս	10	9	12	4	9	-	26
	Աողանց	7	8	9	1	7	-	18
	Խոյիղ	4	4	2	1	5	-	6
	Ուտին	3	4	-	1	1	-	7
	Հողանց	15	17	16	5	7	-	46
	Պատականց	17	18	12	3	5	-	45
	Ազեղոզ	1	2	7	4	6	-	8
	Ներբան	5	4	-	-	3	-	6
	Կոսու	7	12	11	7	9	-	28
	Տանձուտ	-	2	1	-	-	-	3
	Ամբիկ	3	2	-	-	-	-	5
	Տալարս	7	10	7	5	6	-	23
	Հիւրոզ (Վեչին)	29	19	6	12	6	-	60
	Պատրանց	5	9	-	3	3	-	8
	Կեղիս	3	7	9	-	-	-	19
	Մութ	2	4	2	3	-	-	11

Ընդհ. գումար Սպարկերտի		136	151	105	59	75		384
Կառված	Հուլիս	11	5	2	2	10	-	20
	Հալս	3	5	5	1		-	14
	Խոցոցեց	-	1	-	1	-	-	2
	Թացու	4	5	4	-	-	-	13
	Մանտան	26	26	14	9	1	-	75
	Խճողուտ	3	2	1	3			9
	Օկոր	5	4	1	1	1	-	11
	Ծախսոտ	3	2	1	-	-	-	6
	Որից	4	3	1	-	-	-	8
	Ծուլու	1	2	-	-	1	-	3
<b>Ընդհանուր գումար Կառվածի</b>		<b>60</b>	<b>55</b>	<b>29</b>	<b>17</b>	<b>13</b>	<b>-</b>	<b>161</b>

	Խան	3	2	2	1	-	-	8
	Շեն	9	5	5	9	6	-	22
	Խալիլ	3	2	-	1	-	-	6
	Պախուր	1	-	1	-	-	-	2
	Սարկեղ	1	4	-	1	-	-	6
	Խալիլան	14	14	8	7	1	-	42
	Տարեց	5	8	3	1	1	-	16
<b>Ընդ. գումար Խիզանի</b>		<b>71</b>	<b>71</b>	<b>41</b>	<b>43</b>	<b>13</b>	<b>-</b>	<b>213</b>
Կարձկան	Սորբ	9	10	3	1	-	1	22
	Հեցկանց	7	9	5	4	-	-	26
	Կանչառս	19	22	6	3	-	-	48
	Սմբոն	4	3	2	2	3	-	8
	Հացկենց	13	9	10	2	2	-	32
	Հնձան	2	2	1	1	1	-	5
	Միսկանց	5	3	1	3	-	-	12
	Եղեզիս	7	9	5	4	-	-	25
	Հաղուն Վերին	14	22	13	8	14	-	43
	Հաղուն(Վարի)	3	4	-	-	1	-	6
	Քառավ	1	2	2	1	-	-	6
	Պասց	5	3	2	1	-	-	11
<b>Ընդհ. գումար կարձկանի</b>		<b>90</b>	<b>100</b>	<b>50</b>	<b>14</b>	<b>22</b>	<b>1</b>	<b>246</b>

Գառտ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջ.	Մեռծ	Ներգթծ.	ընդ. Գումար
Պիթլիս	Թախտալու	2	1	1	1	-	-	5
	Աւին	2	1	-	-	-	-	3
	Ած.Տիրամեր	8	7	7	5	2	2	23
	Ղերիկ	16	17	16	8	2	-	57
	Սիծ	2	2	4	1	-	-	9
	Սմկու Բերդ	20	2	1	1	-	11	13
	Խասխեր	2	-	-	-	-	-	2
	Մուշ	4	3	-	1	-	-	8
	Փրխուս(վեր.)	6	10	6	7	-	-	29
	Տաշտոս	10	-	-	-	-	-	10
	Փրխուս(վար.)	11	9	5	4	10	10	29
	Խախուել	9	4	1	1	-	-	15
	Բիթլիս	2	2	1	-	-	-	5
	Սղերդ	1	1	4	-	-	-	6
<b>Ընդ.գումար Պիթլիսի</b>		<b>94</b>	<b>59</b>	<b>46</b>	<b>29</b>	<b>14</b>	<b>23</b>	<b>186</b>
Խիզան	Խակել	5	5	7	1	-	-	18
	Պոռչեց	4	6	-	2	5	-	7
	Մանղեց	4	5	5	6	-	-	20
	Պրոնց	4	1	-	-	-	-	5
	Մանղան	8	10	6	9	-	-	33
	Խարխոց	4	2	1	2	-	-	9
	Նորչեն	1	1	1	1	-	-	4
	Եղունս	3	3	2	1	-	-	9
	Ս.Խաչ	2	3	1	-	-	-	6

**Վասպուրական Նահանգ**

Գառտ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջ.	Մեռծ.	Գաղթ.	ընդ. Գումար
Աղրակ	Բժնկերտ	16	19	20	12	6	-	61
	Սալթաւ	17	28	17	18	1	-	79
	Հասիստան	73	64	47	40	6	1	213
	Սղկերց	14	19	14	9	1	-	55
	Չուկս	15	9	11	6	1	-	40
	Ալայան	8	4	5	1	-	-	18
	Խառատուն	14	13	5	11	4	-	42
	Ալաս	5	5	7	5	-	-	22
	Փայս	2	1	-	-	-	-	3
	Կարաբուլի	7	6	7	5	-	-	25
	Վանք	55	38	49	37	1	-	178
	Բաշկալա	18	23	25	13	3	-	76
	Էրենկանի	46	46	50	21	-	-	163
	Բաղ	13	13	16	8	18	-	62

	Ծիս	11	7	11	7	6	-	29
	Առակ	-	4	7	-	1	-	10
	Քերեսան(Կեր)	62	40	19	11	26	1	105
	Քերեսան(Կար)	25	26	8	10	6	-	103
	Սորատեր	11	8	18	3	1	-	39
	Խօր	1	-	-	2	-	-	3
<b>Ընդհ. գումար Աղբակի</b>		<b>413</b>	<b>363</b>	<b>339</b>	<b>219</b>	<b>81</b>	<b>2</b>	<b>2130</b>
<b>Սղերդ</b>	Գուտինան	6	2	1	-	-	-	9
	Ղեհ	5	-	-	-	-	-	5
	Թաղ	17	13	12	7	2	12	35
<b>Ընդ. գումար Սղերդի</b>		<b>28</b>	<b>15</b>	<b>13</b>	<b>7</b>	<b>2</b>	<b>12</b>	<b>49</b>
<b>Էրուն</b>	Սերմետ	2	3	4	-	-	-	9
<b>Ալբառազ</b>	Արճեշ	1	1	2	-	-	-	9
<b>Մուշ</b>	Զուխտուր	4	3	-	1	-	-	8
	Ղզլճա	4	2	-	-	-	1	5
<b>Արճակ</b>	Չօբան Օղլի	7	5	2	5	2	-	17
	Սեւան	46	43	31	19	11	-	28
	Խառակունիս	39	38	41	23	24	3	13
	Օբախեքիկ	5	4	-	-	-	-	9
	Սիկմեր	14	12	6	7	5	-	34
	Փոչաղբասան	14	10	7	4	-	-	35
	Տաղվերան	26	31	29	27	3	-	110
	Չարանց	15	13	5	6	-	-	39
	Լիմ	14	16	5	6	2	-	39
<b>Ընդհ.գումար Արճակի</b>		<b>184</b>	<b>174</b>	<b>126</b>	<b>97</b>	<b>51</b>	<b>4</b>	<b>529</b>

Գաւառ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջ.	մեռծ.	գաղթ.	ընդհ. գումար
Գինար	Նորաւանց	3	2	2	1	2	-	6
	Չարնշատ	48	-	-	-	-	-	48
	Նորշեն	14	24	18	11	13	-	43
	Չասպշատ	9	12	2	9	2	1	30
	Սօսրաթ	13	16	16	8	2	-	49
	Սօսլաշեն	46	60	27	24	19	-	132
	Ղարնան Գեղ	54	55	36	33	25	6	151

	Ղարաքէլ	11	22	14	7	4	2	50
	Չարնշատ	72	113	40	50	7	-	298
	Ասնականց	3	3	3	2	-	-	11
	Լրերին	7	-	-	-	-	-	7
	Խաւանց	23	40	19	18	10	-	90
	Գիւլլի	3	4	4	4	2	-	13
	Սոջա Կերան	13	12	15	4	5	3	38
	Կլիւր	36	108	44	29	9	-	207
	Աւերակի	97	99	74	62	12	-	320
	Ստիգուգալ	29	22	25	16	14	-	78
	Քօչանիս	62	50	30	21	9	-	154
	Արճակ	22	5	1	-	5	14	9
	Ատեր	24	12	10	5	5	-	46
	Փողանց	34	34	20	17	14	2	89
	Գոմս	53	44	36	22	16	-	139
	Կոճ	9	10	9	7	-	2	33
	ճանիկ	33	46	38	34	6	-	145
	Ճիզրաշեն	13	6	1	4	-	1	24
	Մարմետ	45	51	34	25	-	-	155
	Սելլանջուղ	5	5	1	3	3	-	11
	Մարտանց	3	8	9	1	3	-	18
	Կաղանս	13	12	16	5	2	-	44
	Աննականց	23	30	14	16	3	-	80
	Ստնականց	31	36	23	24	4	-	110
	Եկմալ	12	3	5	2	-	5	17
	Ծակտար	11	12	15	5	-	-	43
	Բալլաթ	11	19	12	14	6	-	50
	Ամենաշատ	2	3	5	-	-	-	10
<b>ընդհ.գումար Թիմարի</b>		<b>837</b>	<b>978</b>	<b>648</b>	<b>483</b>	<b>202</b>	<b>36</b>	<b>2742</b>

Գաւառ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջ.	մեռ.	գաղթ.	ընդհ. գումար
Շատախ	Բոլս	10	3	7	5	5	-	25
	Ծիտանց	3	1	1	-	-	-	5
	Գօրանդաշտ	5	2	-	1	-	-	8
	Խումար	1	1	1	-	-	-	40
	Կաղազիզ	5	5	6	4	1	-	40
	Ոգմի	6	8	5	2	1	-	20
	Չինենց	8	8	1	5	-	-	22
	Թաղ	4	5	-	2	2	-	9
	Սեւտկին	64	61	25	10	7	-	153
	Ծիծանց	27	30	9	3	12	-	57
	Կվէրս	15	12	9	8	6	-	38

	Գալաղիյ	21	23	13	10	7	-	61
	Կորովանք	10	14	13	10	-	-	47
	Գոմեր	14	8	13	6	-	-	41
	Կաճետ	37	36	16	11	7	-	33
	Կաղբի	31	32	7	16	3	-	77
	Ազինա	3	-	-	1	-	-	4
	Ճնուկ	48	39	29	6	4	-	115
	Շամանց	3	2	3	-	-	-	8
	Պաղկ	2	2	1	-	-	-	5
	Մառակի	15	9	4	5	-	-	33
	Փեսանդաշտ	4	4	2	-	-	-	10
	Նառ	4	9	3	3	5	-	14
	Տղասպար	13	27	23	6	5	-	64
	Քրօենց	6	5	3	2	-	-	16
	Հարզոմ	7	6	2	2	-	-	17
<b>Ընդհ. գումար Հատախի</b>		<b>363</b>	<b>355</b>	<b>196</b>	<b>118</b>	<b>66</b>	<b>-</b>	<b>966</b>

	Կինոց	75	62	43	32	32	7	173
	Աստուածաշեն	12	9	10	9	5	-	34
	Առատենց	10	15	5	7	7	-	30
	Արտաւեզ	9	11	8	9	10	-	26
	Անկշտանց	7	7	3	1	5	-	13
	Խեթ	5	6	-	3	4	1	9
	Մաշտակ	8	3	3	1	-	2	13
	Հնդստան	11	5	3	-	-	3	16
	Առեռ	12	17	11	3	11	-	32
<b>Ընդ. գումար Հայրց Չորի</b>		<b>362</b>	<b>304</b>	<b>193</b>	<b>142</b>	<b>118</b>	<b>21</b>	<b>862</b>

Գառառ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղբ	Մեծ.	Գաղթ.	ընդ. Գումար
Սոկես	Սմիտոր	2	4	1	-	-	-	7
	Սոգա	8	8	6	-	-	-	22
	Հալկանց	15	12	7	5	-	-	40
	Ճափանց	29	20	11	8	3	-	63
	Մակնի	3	4	1	2	1	-	10
	Սագ	5	2	2	2	1	-	10
	Չճաւ	13	13	11	8	-	-	45
	Աբրահամայ թաղ	10	10	2	-	3	-	19
	Սոկունք	1	1	-	-	-	-	2
	Հացկանց	2	2	-	-	-	-	4
	Սոգա	8	8	6	-	-	-	22
	Հալկանց	15	12	7	5	-	-	40
	Ճափանց	29	20	11	8	3	-	63
	Մակնի	3	4	1	2	1	-	10
	Սագ	5	2	2	2	1	-	10
	Չճաւ	13	13	11	8	-	-	45
	Աբրահամայ թաղ	10	10	2	-	3	-	19
	Սոկունք	1	1	-	-	-	-	2
	Հացկանց	2	2	-	-	-	-	4
	Սիյա	1	2	-	-	-	-	3
	Մշկանց	9	8	3	6	2	-	24
	Խաթր	23	20	12	3	10	-	48
	Հալկանց	19	15	7	5	1	-	46
	Կաճկանց	9	11	5	1	2	-	26
	Սոկես	-	2	1	1	-	-	4
	Դձնկառ	2	3	-	-	-	-	5
	Գումանիս Քննկանց	5	11	3	3	1	-	21
	Քննկանց	3	4	4	-	-	1	10
	Դմիս	1	1	1	-	-	-	3
	Առինջ	10	10	5	2	-	-	27
	Տնից	1	2	5	-	-	-	3
	Մուշականց	1	2	-	-	-	-	3
<b>Ընդ. գումար Սոկեսի</b>		<b>178</b>	<b>173</b>	<b>90</b>	<b>50</b>	<b>23</b>	<b>1</b>	<b>466</b>

Սարա	Կուսուլ	28	27	17	10	3	-	62
	Սացմանց	54	56	39	48	7	-	187
<b>Ընդ. գումար Սարայի</b>		<b>82</b>	<b>83</b>	<b>56</b>	<b>58</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>269</b>

Գառառ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղբ.	Մեծ.	Գաղթ.	ընդ. Գումար
Հայրց Չոր	Աթանանց	12	-	-	-	-	6	6
	Հիւրթուկ	3	4	2	-	-	-	9
	Հառուլիկ	2	4	2	-	-	-	8
	Սողվանց	10	7	5	6	-	-	28
	Գարթբլ	10	20	24	8	3	-	59
	Ատեր	3	3	1	-	-	-	7
	Բրբենց	2	4	2	7	1	-	15
	Քեռչկ	16	11	8	5	4	-	36
	Քերծ	6	6	5	1	-	-	18
	Անգր	3	2	-	-	-	-	5
	Նոր Գիւղ	2	1	-	-	-	-	3
	Նարաթ	19	18	14	11	2	-	60
	Ս.Վարդան	5	4	3	3	-	1	14
	Սեւակյան	2	3	1	-	-	-	6
	Էրեզու	12	13	5	5	4	-	37
	Թրքաշեն	1	1	1	-	-	-	3
	Էշխանիզոմ	13	10	1	6	1	1	40
	Խորզոմ	6	4	2	2	1	-	13
	Խառակոնիս	3	2	-	-	-	-	5
	Խոսթ	9	12	5	7	5	-	28
	Խոժիչկ	15	2	1	-	-	-	18
	Կենդանանց	17	17	12	5	10	-	41
	Կեն	11	8	7	4	1	-	29

Գառաշ	Նարեկ	11	11	5	2	-	-	29
	Ղափանք	14	8	7		3	-	29
	Վառնոց	2	2	1	1	-	-	6
	Յիրիճ	4	3	-	1	2	-	6
	Ճիրճ	5	3	1	1	-	-	9
	Գեօրյան Տաղիկ	13	14	10	10	-	-	47
	Սեւտակ Վանք	4	2	-	-	-	-	6
	Ընծակ	13	8	5	5	9	-	22
	Յարրերդ	8	5	4	1	-	-	13
	Պողոնիս	1	2	-	1	-	-	4
	Փայլուներ	12	8	6	2	-	-	23
	Բելու	13	2	2	-	1	-	6
<b>Ընդհ. գումար Գառաշի Վան</b>		<b>102</b>	<b>69</b>	<b>41</b>	<b>27</b>	<b>11</b>	<b>-</b>	<b>226</b>
	Կառկառ	14	-	-	-	-	-	14
	Արարուց	2	4	2	2	-	-	10
	Շենգորբիւր	3	4	3	1	-	-	11
	Աղամուս	1	2	1	1	-	-	5
	Ապարանց	22	22	18	6	2	-	63
	Անապատ	11	11	9	5	-	-	36
	Շահբաղի	74	49	35	23	21	7	153
	Շուշանց	57	46	45	41	14	2	153
	Ոսկեբատ	20	17	12	7	4	-	54
	Աղզայ	14	36	31	32	20	2	115
	Տօնի	14	15	14	11	10	-	44
	Լամզկերտ	14	15	18	10	-	-	57
	Լճակ-Լեսկ	133	177	157	117	26	-	558
	Ծուտան	39	46	34	24	18	-	125
	Կողպանց	21	21	18	6	16	1	49
	Վան	164	102	62	52	20	20	340
	Արտամետ	27	14	11	6	2	9	47
	Աւանց	19	10	5	1	1	-	34
	Բերդակ	18	19	24	9	9	-	61
	Կուռուբաշ	27	26	24	21	10	-	83

	Չորավանք	6	8	3	2	3	-	16
	Կղզի	5	5	1	1	-	-	12
	Սարա	5	7	5	7	-	-	24
	Ճառուխ	14	21	26	4	2	-	63
<b>Ընդհ. գումար Վանի</b>		<b>763</b>	<b>677</b>	<b>498</b>	<b>389</b>	<b>179</b>	<b>41</b>	<b>2127</b>
<b>Գառաշ</b>	<b>Գիւղ</b>	<b>Այր</b>	<b>Կին</b>	<b>Մանչ</b>	<b>Աղջ.</b>	<b>Մեծ.</b>	<b>գաղթ.</b>	<b>ընդհ. գումար</b>
Նորդուզ	Աղսին	13	11	15	12	9	-	42
	Շամոն սգրեն	2	6	6	1	-	-	16
	Առուակ	2	5	1	1	-	-	9
	Չախանախլու	-	-	2	-	-	-	2
	Փիրբեռեղեն	28	30	29	17	14	-	90
	Փիրկարիկ	32	34	37	-	10	-	93
	Կայնամիրան	10	6	4	1	1	1	20
	Ղէճ	9	4	2	1	-	-	16
	Նորաբէկ	-	-	1	1	-	-	2
<b>Ընդհ. գումար Նորդուզի</b>		<b>96</b>	<b>96</b>	<b>97</b>	<b>34</b>	<b>34</b>	<b>1</b>	<b>188</b>
<b>Գառաշ</b>	<b>Բահավանց</b>	<b>6</b>	<b>6</b>	<b>5</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>17</b>
	Ղիզա	4	8	4	12	1	-	27
	Յիլու	12	12	6	8	2	1	35
	Սալախանա	16	24	23	15	1	-	77
	Գառաշ	3	4	1	2	-	-	10
<b>Ընդ.գումար Գառաշի</b>		<b>41</b>	<b>54</b>	<b>39</b>	<b>37</b>	<b>4</b>	<b>1</b>	<b>176</b>
<b>Ջուլամերիկ</b>	<b>Փաքան</b>	<b>27</b>	<b>31</b>	<b>12</b>	<b>10</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>80</b>
	Աուրման	4	3	-	4	-	-	11
	Խանանիս	1	1	1	-	-	-	3
	Փիրան	1	2	1	2	-	-	6
<b>Ընդհ. գումար Ջուլամերիկի</b>		<b>33</b>	<b>37</b>	<b>14</b>	<b>16</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>100</b>

## Ատրպատական նահանգ

Գառաշ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջ.	Մեծ.	Նեղոթ.	ընդհ. գումար
Սալմաստ	Գզլճա	38	39	24	24	29	-	94
	Սառնայ	21	17	16	17	-	-	71

	Դրիշկ	3	3	3	1	-	-	10
	Սանամբրիկ	13	12	10	10	-	-	45
	Հինքաղաք	6	4	5	5	-	-	20
	Հաճախան	81	115	110	47	4	-	358
	Հախքիսանա	7	9	10	2	-	1	28
	Շլյտանա	5	6	4	4	2	-	17
	Ղալասար	14	12	12	10	3	-	35
	Քնայաշան	5	4	3	1	-	-	13
	Սաւրայ	16	14	16	7	3	-	50
	Փայաջուկ	29	25	21	23	5	-	91
	Քօղաճիշ	1	1	1	4	-	-	7
<b>Ընդ.գումար Սայմաստի</b>		<b>288</b>	<b>331</b>	<b>263</b>	<b>213</b>	<b>53</b>	<b>1</b>	<b>1041</b>
Խոշաք	Կասր	12	15	17	11	-	-	55
	Քոկ	1	3	4	2	-	-	10
	Ձէյնիս	25	26	21	19	9	-	82
<b>Ընդհ. գումար Խոշաքի</b>		<b>38</b>	<b>44</b>	<b>42</b>	<b>32</b>	<b>9</b>	<b>-</b>	<b>147</b>

Գաւառ	Գիւղ	Այր	Կին	Մանչ	Աղջ.	Մեծ.	Գաղթ	ընդհ. գումար
Ուրմիա	Ուրմիա	18	13	4	9	-	-	44
	Ուրմիա	18	13	4	9	-	-	44
	Շումբուկաբաղ	3	3	3	4	-	-	13
	Գզտաղ	9	3	1	1	-	-	14
	Գարագոլ	16	18	13	13	7	-	54
	Աղջազալէ	5	8	7	6	-	-	26
	Շիրաբաղ	11	19	11	18	1	-	59
	Բաղլբոլ	28	26	17	32	5	-	98
	Բաբաղու	43	62	44	33	3	-	182
	Դառառու	31	35	96	25	2	-	185
	Գարաղալու	10	15	18	12	-	-	55
	Դիգայա	4	4	5	10	-	-	23
	Դիգաթաբեա	4	4	8	-	-	-	16
	Սայրաթ	13	17	11	9	-	-	50
	Խանքաբախան	21	5	9	8	-	-	43
	Չարրախ	5	3	5	4	-	-	17
	Շոտակա	47	42	29	33	7	-	151
	Նախկանքալիա	23	19	14	20	3	-	75
	Չիլաբու	12	3	8	6	1	-	28
	Բալանիշ	11	9	10	7	-	-	37
	Թաբալու	16	12	19	16	-	-	63
	Գզաղաճ	9	9	8	7	-	-	35
	Իսալու	6	5	4	7	-	-	22
	Աղճակա	3	5	-	-	-	-	8
	Իրի Աղճ	21	34	20	12	3	-	84
	Քնարիմաբաղ	2	4	3	3	-	-	12
	Գաեռ իրաղ	62	64	58	61	4	-	241
	Ս.Սարգիս	4	2	-	-	-	-	6

	Մահմադիյա	7	4	4	6	-	-	21
	Ծօնալան	-	-	1	1	-	-	2
<b>Ընդհ. գումար Ուրմիայի</b>		<b>444</b>	<b>418</b>	<b>350</b>	<b>362</b>	<b>35</b>	<b>-</b>	<b>1531</b>
<b>Խովկասախայեր</b>		<b>35</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>35</b>

## Ամփոփում

Նահանգ	Գիւղ	ազատ.	մեռած	Ներգթ.	Այր	Կին	մանուկ	որբ	Գատր. գումար
Ատանա	14	704	7	238	136	188	80	4	459
Սիրաստիա	33	305	-	59	69	134	28	21	246
Խալսբերդ	23	177	-	43	23	69	32	12	134
Սոնսար	15	251	1	60	65	89	22	14	190
Գոմիա	8	230	2	58	70	43	36	4	170
Կալէ	31	1457	15	302	320	427	224	127	1140
Պրուա	29	607	6	169	161	168	81	9	432
Կարին	30	397	-	35	82	196	29	58	362
Իգմիք	7	76	-	20	21	23	10	2	56
Իգմիք	18	304	2	104	86	60	31	21	203
Ցիգրանակերտ	7	122	1	17	48	23	22	11	104
Սրասիզուն	3	20	-	9	4	1	1	5	11
Պիրիս	1	172	-	49	13	17	20	68	123
Կ Պոլիս	3	23	-	8	8	4	2	1	15
Լտիրճ	2	87	-	67	11	19	7	3	40
Նանա	1	2	-	-	-	2	-	-	2
Կասրեմունի	1	1	-	-	1	-	-	-	1
<b>216</b>		<b>4772</b>	<b>34</b>	<b>1140</b>	<b>990</b>	<b>1614</b>	<b>653</b>	<b>347</b>	<b>3598</b>

## Ատանա

Գաւառ	Գիւղ	ազոգ.	մեռած	ներգաղթած	Այր	Կին	մանուկ	որբ	ընդհ. գումար
Ատանա	Ատանա	141	-	37	39	45	12	7	103
	Գեաւուրդաղ	13	-	10	1	1	1	-	3
	Սիս	60	-	9	12	14	22	3	51
	Ֆեքրէ	45	-	26	4	10	5	-	19
	Հասանլէյլի	28	-	22	3	2	6	-	6
	Երաբաբան	46	-	15	11	13	4	3	31
	Հաճուն	282	6	93	47	79	19	38	183
	Մերսին	8	-	4	3	-	1	-	4
	Թարսուս	6	-	2	-	2	2	-	4
	Ուրումլի	30	-	13	7	7	-	3	17
	Խաւնը	10	-	4	3	-	3	-	6
	Արատօղլի	1	-	-	-	1	-	-	1
	Գարսազար	7	-	2	2	2	-	-	6
	Պեօթբօլ	26	-	2	4	12	8	-	24
<b>Ընդ.գումար Ատանայի</b>		<b>703</b>	<b>7</b>	<b>239</b>	<b>136</b>	<b>188</b>	<b>83</b>	<b>54</b>	<b>458</b>

## Սերաստիա

Գաւառ	Գիւղ	ազոգ.	մեռած	ներգթ.	Այր	Կին	մանուկ	որբ	ընդհ. գումար
Սվազ	Սվազ	38	-	15	8	13	-	2	23
	Թոքրիլէ	1	-	-	-	1	-	-	1
	Գուրոքիւն	27	-	9	10	4	1	1	19

Անտրաս	2	-	-	2	-	-	-	2
Ամախա	30	-	10	4	12	4	-	20
Կիւրիմ	12	-	9	2	1	-	-	3
Չրագ	4	-	-	2	2	-	-	4
Ղուրղուզայա	1	-	-	1	-	-	-	1
Արտավիս	1	-	-	-	1	-	-	1
Քրտանուշ	2	-	-	-	2	-	-	2
Գայարօղազ	2	-	-	-	-	-	2	2
Ղանտարլու	8	-	-	5	2	1	-	8
Աղրիբեր	7	-	-	-	5	-	2	7
Ղոման	2	-	-	-	2	-	-	2
Ղազանգայա	7	-	-	4	3	-	-	7
Խարան	5	-	-	1	3	-	-	5
Կովտուն	5	-	2	-	3	-	-	3
Ղազմիղարայ	34	-	3	5	18	8	-	31
Մանճրզ	14	-	-	1	10	3	-	14
Մարզան	12	-	-	1	1	7	3	12
Թօզատ	15	-	5	1	8	1	-	10
Միս	9	-	2	-	-	-	7	7
Շապին Գարահիսար	7	-	-	3	7	-	-	7
Բուրզ	3	-	-	1	2	-	-	3
Վերի Աղբուտը	5	-	-	3	2	-	-	3
Ալաքիլիս	13	-	-	5	4	4	-	13
Ուզունփունար	2	-	-	1	1	-	-	2
Զարա	13	-	1	1	7	3	1	12
Ենիխան	6	-	-	3	1	-	2	6
Իսան	4	-	-	4	-	-	-	4
Խոզնայ	12	-	-	1	11	-	-	12
Բաճրա	1	-	-	1	-	-	-	1
Այրուվազ	3	-	-	-	3	-	-	3
<b>Ընդ.գումար Սեբաստիայի</b>	<b>305</b>	<b>-</b>	<b>56</b>	<b>69</b>	<b>134</b>	<b>28</b>	<b>21</b>	<b>249</b>

**Խարբերող նահանգ**

Գաւառ	Գիւղ	ընդ. ազտգծ.	մեռ ած	ներգրծ ծ.	Այր	կին	մանուկ	որբ	ընդ. գումար
Խարբերող	Խարբերող	63	-	32	5	12	8	6	31
	Ատիեանան	6	-	-	2	3	1	-	6
	Սուշովկա	5	-	-	1	2	2	-	5
	Դամլը	3	-	-	-	2	1	-	3
	Պեսնի	18	-	-	-	13	2	3	18
	Ծագ	1	-	-	1	-	-	-	1
	Չնքուզ	1	-	-	-	1	-	-	1

Չիսեյնիկ	25	-	5	-	10	8	2	20
Էնտոնկայ	1	-	-	-	1	-	-	1
Կոնք	3	-	-	2	-	-	-	1
Ղուրղու	1	-	-	1	-	-	-	1
Չագարի	1	-	-	-	1	-	-	1
Բզմշեն	1	-	-	1	-	-	-	1
Ղատոն	12	-	-	-	7	6	-	13
Աղտեցի	4	-	-	1	2	1	-	4
Չմշլազաք	7	-	-	-	5	-	2	7
Մալաքիա	11	-	3	3	3	2	-	8
Քէարիկ	3	-	1	2	-	-	-	2
Քարիկ	2	-	-	-	2	-	-	2
Բիւեսնի	2	-	-	2	-	-	-	2
Էկին (Ալն)	2	-	1	-	1	-	-	1
Արաքիթ	3	-	-	1	1	-	-	2
Գոչիսար	2	-	-	1	-	-	-	2
<b>ընդ.գումար Խարբերողի</b>	<b>176</b>	<b>-</b>	<b>43</b>	<b>23</b>	<b>69</b>	<b>32</b>	<b>12</b>	<b>135</b>

**Էնկիւրի նահանգ**

Գաւառ	Գիւղ	ընդ. ազտգծ.	մեռած	ներ- գաղթած	Այր	կին	մանուկ	որբ	ընդ. գումար
Անգարա	Անգարա	45	-	8	9	12	10	6	37
	Քեռիմա	8	-	1	4	3	-	-	7
	Աղբիլիս	4	-	2	-	1	1	-	2
	Սիվոհիսար	13	-	2	1	8	2	-	11
	Սունկորլու	9	-	-	3	3	3	-	9
	Պօղազգլիան	3	-	-	3	-	-	-	3
	Նազլը Խան	5	-	-	2	2	1	-	5
	Չօրուն	17	-	2	3	10	2	-	15
	Ուսցիկ	1	-	-	-	1	-	-	1
	Միթիլէ	3	-	-	-	3	-	-	3
	Եօզլաք	30	-	7	5	13	2	3	23
	Գայսերի	85	1	26	27	26	-	5	58
	Կենքք	3	-	-	3	-	-	-	3
	Էվերթ	21	-	10	5	5	1	-	11
	Էվերթ	4	-	2	-	2	-	-	2
<b>Ընդ.գումար Էնկիւրիի</b>		<b>251</b>	<b>1</b>	<b>60</b>	<b>65</b>	<b>89</b>	<b>22</b>	<b>14</b>	<b>190</b>

**Գոնիայ Նահանգ**

Նահանգ	Գիւղ	ընդ. ազատ.	մեռծ.	ներգրծ.	Այր	Կին	մանուկ	որբ	ընդ. գումար
Գոնիայ	Ինճեսու	5	-	-	2	1	2	-	5
	Պոյտուր	12	-	-	5	2	3	2	12
	Ազշեհիր	78	1	16	26	24	8	-	61
	Ազգերայ	10	-	-	4	4	2	-	10
	Գարահասան	82	-	24	25	10	17	-	58
	Գոնիայ	32	1	15	5	-	3	2	16
	Սպարրայ	5	-	3	1	-	1	-	2
	Նելշեհիր	4	-	-	2	2	-	-	4
<b>ընդ.գումար Գոնիայի</b>		<b>228</b>	<b>2</b>	<b>58</b>	<b>70</b>	<b>43</b>	<b>36</b>	<b>4</b>	<b>168</b>

**Բերիոյ Նահանգ**

Նահանգ	Գիւղ	ընդ. ազատագծ	մեռծ.	ներգադրած	Այր	Կին	մանուկ	որբ	ընդ. գումար
Դալեայ	Բեսապ	5	-	2	-	3	-	-	3
	Բյաֆիր Բիհն	-	-	2	2	-	-	-	2
	Այնքապ	169	1	26	46	56	26	3	133
	Այրիարան	17	-	8	3	6	-	-	9
	Հաքի Տերտ	11	-	9	-	-	-	2	2
	Չէյրուն	292	4	156	49	45	15	21	132
	Կարուն	344	4	12	70	110	95	53	328
	Մարաշ	117	-	70	10	18	6	9	47
	Պէլան	10	-	-	6	1	-	3	10
	Ֆուռնուզ	64	-	18	16	13	10	3	46
	Եարբուզ	2	-	-	1	-	1	-	2
	Գզլըզ	11	1	-	6	4	-	-	10
	Ղաշուլուք	8	-	-	1	6	1	-	8
	Անտրուն	10	-	1	1	2	5	1	9
	Տաղթոյ	6	-	-	3	3	-	-	6
	Անքաքիայ	4	-	-	1	-	-	3	4
	Տօնկէ	1	-	-	-	1	-	-	1
	Էնիշ	1	-	-	1	-	-	-	1
	Թուրուզոյ	3	-	-	2	1	-	-	3
	Պօնուք	41	-	-	14	20	6	2	41
	Պայալանըր	30	-	-	11	11	8	-	30
	Թաուրլու	38	-	-	8	21	9	-	38
	Անանըզ	4	-	-	-	4	-	-	4
	Ս.Փոլիշ	10	-	-	4	3	2	1	10
	Մխայ	6	-	4	-	1	1	-	2
	Քիլիս	8	1	3	1	2	1	-	4
	Գաղջուղլու	25	-	10	7	3	5	-	15
	Չէրնբեայ	8	-	-	6	1	1	-	8
	Կապան	3	-	-	3	-	-	-	3
	Շիվիկի	99	-	2	35	40	20	2	97
	Ուրֆա	97	4	41	8	15	12	17	52
<b>ընդ.գումար Բերիոյ Նահանգի</b>		<b>1457</b>	<b>15</b>	<b>302</b>	<b>320</b>	<b>427</b>	<b>224</b>	<b>187</b>	<b>1140</b>

**Պրուսա Նահանգ**

Նահանգ	Գիւղ	ազատագծ.	մեռծ.	ներգադր.	Այր	Կին	մանուկ	որբ	ընդ. գումար
Պրուսա	Մուրաշայ	8	-	-	6	-	2	-	8
	Տուրք	38	-	4	12	16	6	-	34
	Քերմաս	7	-	3	1	1	2	-	4
	Օրթաքիլ	5	-	-	1	4	-	-	5
	Պէլեհի	54	1	31	12	8	2	-	22
	Քեմէլիկ	5	-	3	2	-	-	-	2
	Գօլտաղ	10	-	3	2	5	-	-	7
	Կոյուն	11	-	6	2	1	2	-	5
	Չորուրտըր	6	-	-	1	3	2	-	6
	Խարախի	10	-	-	-	3	5	2	10
	Եարմաղա	1	-	-	1	-	-	-	1
	Հիսարլուզ	17	-	7	5	3	2	-	10
	Գուրծի	19	-	-	6	5	8	-	19
	Քէրնէք	13	-	3	5	5	-	-	10
	Մարմաղուզ	5	-	-	2	2	1	-	5
	Աֆիոն								
	Գարահիսար	44	2	7	11	19	5	-	35
	Այնճայ	22	-	5	11	4	2	-	17
	Ենիճայ	55	2	3	21	23	6	-	50
	Եսքիշեհիր	21	-	10	3	6	2	-	11
	Գիլլէ	29	-	8	5	7	2	4	21
	Մեծ								
	Նուր Գիւղ	45	-	11	12	14	4	4	34
	Չալղարա	97	1	26	18	29	23	-	70
	Թիւրքմեն	3	-	1	-	2	-	-	2
	Բալթեւըր	18	-	7	3	3	5	-	11
	Բանըմայ	19	-	11	3	4	1	-	8
	Քարաք	3	-	1	2	-	-	-	2
	Ճերահ	14	-	3	6	4	-	-	11
	Չէնկէլըր	17	-	9	3	3	2	-	8
	Պէնճի	12	-	-	4	6	2	-	12
<b>ընդ.գումար Պրուսայի</b>		<b>607</b>	<b>6</b>	<b>169</b>	<b>161</b>	<b>168</b>	<b>81</b>	<b>9</b>	<b>432</b>

**Կարնոյ Նահանգ**

Նահանգ	Գիւղ	ազատագծ.	մեռծ.	ներգադրած	Այր	Կին	մանուկ	որբ	ընդ. գումար
Կարին	Կարին	261	-	11	44	147	20	39	250
	Էրզնկա	6	-	1	1	4	-	-	5
	Շամի	1	-	-	-	1	-	-	1
	Իլիճայ	1	-	-	-	1	-	-	1
	Խնուսբերդ	3	-	-	1	2	-	-	3
	Գարաշեհիր	1	-	-	-	1	-	-	1
	Սօլասայ	1	-	-	-	1	-	-	1
	Արմտան	2	-	-	-	1	1	-	2
	Ղերթան	1	-	-	-	1	-	-	1
	Հերթմեան	4	-	-	2	1	1	-	4
	Մարգանայ	1	-	-	-	1	-	-	1
	Քէլկէրըր	1	-	-	1	-	-	-	1
	Հասանգալա	17	-	-	1	-	-	16	17
	Բարտիկ	3	-	-	2	1	-	-	3
	Մորար	3	-	1	2	-	-	-	2
	Կան	5	-	-	2	3	-	-	5
	Ումուտ	4	-	-	-	4	-	-	4
	Չիքոլ	12	-	-	3	9	-	-	12
	Քեսա	2	-	-	1	1	-	-	2

	Եարսախ	4	-	-	1	3	-	-	4
	Ղեբի	1	-	-	1	-	-	-	1
	Թխտուկ	3	-	-	2	1	-	-	3
	ճրպրո	12	-	-	2	7	3	-	12
	Կալատրո	3	-	-	1	1	1	-	3
	Շելխոյ	5	-	-	-	2	3	-	5
	Էլխիսն	1	-	-	-	-	-	1	1
	Շղտանոր	3	-	-	1	1	1	-	3
	Էյն	11	-	8	1	1	1	-	3
	Քղի	10	-	5	3	-	-	2	5
	Շահար	15	-	7	6	2	-	-	8
<b>Ընդհ. գումար Կարնոյ</b>		<b>397</b>	<b>-</b>	<b>35</b>	<b>82</b>	<b>196</b>	<b>29</b>	<b>58</b>	<b>362</b>

### Իզմիթ նահանգ

Նահանգ	Գիւղ	ազատ.	մեռ.	ներգաղթ	Այր	Կին	մանուկ	Որբ	ընդհ. գումար
Իզմիթ	Իզմիթ	48	-	28	6	6	7	1	20
	Օվանոզ	16	-	1	8	3	4	-	15
	Ֆելիլի	-	1	1	2	1	1	-	4
	Կելզ	9	-	4	3	1	-	1	5
	Ատաբազար	61	2	18	16	16	3	6	41
	Արնաշ	9	-	2	5	1	1	-	7
	Այանբէլ	15	-	2	6	4	1	2	13
	Հայոց Գիւղ	10	-	5	3	1	1	-	5
	Գրլոն Գիւղ	5	-	-	2	-	-	3	5
	Կարսի այատրե	9	-	1	3	3	1	1	8
	Պարտիզակ	20	-	12	2	-	6	-	8
	Ասարնը	4	-	-	-	-	-	4	4
	Գարասու	4	-	2	1	1	-	-	2
	Ուլբէլ	2	-	-	2	-	-	-	2
	Եայազտրե	48	-	11	16	15	6	-	37
	Օրթագիւղ	4	-	-	2	2	-	-	4
	Մերտգետլ	20	-	6	7	4	-	3	14
	Եայսլայ	15	-	11	3	1	-	-	4
<b>Ընդհ. գումար Իզմիթի</b>		<b>304</b>	<b>2</b>	<b>104</b>	<b>86</b>	<b>60</b>	<b>31</b>	<b>21</b>	<b>203</b>

### Իզմիր նահանգ

Նահանգ	գիւղ	ազատ.	մեռ.	ներգաղթ.	Այր	Կին	մանուկ	Որբ	ընդհ. գումար
Իզմիր	Իզմիր	2	-	1	-	-	-	1	1
	Քեանտակ	13	-	7	1	2	3	-	6
	Թուրուրբոյ	1	-	-	1	-	-	-	1
	Հագշար	3	-	-	-	2	1	-	3
	Չիլ	7	-	1	1	3	2	-	6
	Անարլոզ	33	-	8	5	12	5	-	25
	Գրնճար	17	-	3	8	5	-	1	14
<b>Ընդհ. գումար Իզմիրի</b>		<b>76</b>	<b>-</b>	<b>20</b>	<b>21</b>	<b>23</b>	<b>11</b>	<b>2</b>	<b>56</b>

### Տիգրանակերտ նահանգ

Նահանգ	Գիւղ	ազատ.	մեռ.	ներգաղթ.	Այր	Կին	մանուկ	Որբ	ընդհ. գումար
Տիգրանակերտ	Սեւերակ	30	-	14	7	4	5	-	16
	Սերտին	61	-	1	35	9	14	2	60
	Հոշ	3	-	-	1	2	-	-	3
	Էվլէ	2	-	-	-	1	1	-	2
	Հայնի	16	-	-	-	5	2	9	16
	Արդրն	1	-	-	1	-	-	-	1
	Եգիլ	9	1	2	4	2	-	-	6
<b>Ընդհ. գումար Տիգրանակերտի</b>		<b>122</b>	<b>1</b>	<b>17</b>	<b>48</b>	<b>23</b>	<b>22</b>	<b>11</b>	<b>104</b>

### Տրապիզոն նահանգ

Նահանգ	Գիւղ	ընդ. ազատ.	մեռ.	ներգաղթ.	Այր	Կին	մանուկ	Որբ	ընդհ. գումար
Տրապիզոն	Սամսոն	18	-	9	3	1	1	4	9
	Կիրասոն	1	-	-	-	-	-	1	1
	Ունիայ	1	-	-	1	-	-	-	1
<b>Ընդ. գումար Տրապիզոնի</b>		<b>20</b>	<b>-</b>	<b>9</b>	<b>4</b>	<b>1</b>	<b>1</b>	<b>5</b>	<b>11</b>

### Պիրլիս, Կ.Պոլիս, Էտիրնէ, Եանեայ և Գասթնունի

Նահանգ	Գիւղ	ընդ. ազատ.	մեռ.	ներգաղթ.	Այր	Կին	մանուկ	Որբ	ընդհ. գումար
Պիրլիս	Սղերդ	172	-	49	13	17	20	68	123
Կ.Պոլիս	Կ.Պոլիս	15	-	8	6	1	-	-	7
	Չանաբքայէ	1	-	-	-	-	-	1	1
	Հեղին	7	-	-	2	3	2	-	7
Էտիրնէ	Թեքիրտագ	81	-	47	9	19	3	3	34
	Չարլու	6	-	-	2	-	4	-	6
Եանեայ	Եանեայ	2	-	-	2	-	-	-	2
Գասթնունի	Ուրուճա	1	-	-	-	1	-	-	1
<b>Ընդհ. գումար</b>		<b>285</b>	<b>-</b>	<b>104</b>	<b>34</b>	<b>40</b>	<b>29</b>	<b>72</b>	<b>181</b>

## 2.- ՀԱՅՐԵՆԱԴԱՐՉՈՒԹԻՒՆ

Մեծ եղած է հայրենիք վերադառնալու ձգտումը Միջագետք ապաստանած ժողովուրդին մէջ, որ ոչ վաղ անցեալին կորսնցուցած հայրենիքի տեսլականը՝ տակաւին թարմ իր յիշողութեան մէջ, անվերջ դիմումներ կը յղէր պատկան մարմիններուն՝ հայրենիք վերադառնալու խնդրանքով: Երկարատեւ բանակցութիւններէն ետք, վերջապէս 1921 թ. Հոկտեմբերէն սկսեալ 8000 գաղթականներ, երեք շոգեմաւերով պարբերաբար, ներգաղթեցին Հայաստան: Առաջին կարաւանը բաղկացած՝ 3000 անձերէ, «Պարա» կոչուած նաւով 1921 թ. Հոկտեմբեր ամսուն վերջերը, կը մեկնի Բաթում, անկէ՝ Հայաստան: «...Այս խմբի ներգաղթը նշանաւորուեց հայ ժողովրդի արդի պատմութեան իւրայատուկ էջերից մէկի՝ հայրենադարձութեան սկիզբը, որը կարճ եւ երկար ընդմիջումներով, իր մութ եւ լուսաւոր կողմերով շարունակուեց հետագայ շուրջ վեց տասնամեակների ընթացքում»:<sup>107</sup> Երկրորդ նաւը՝ «Աքբար» անունով, կը ժամանէ Պասրա, և նոյն թուականի Պեկտեմբերին նոյնպէս վերցնելով 3000 անձեր կը մեկնի: Իսկ երրորդ նաւը՝ «Շուճա»-ն, 1922 թ. Յունուարին, մասնաւոր կարգադրութեամբ մը կը յատկացուի մօտաւորապէս 850 որբերուն, իրենց ուսուցիչ-խնամակալ մայրերուն և որբանոցի պաշտօնէութեան հետ Երուսաղէմ տեղափոխելու:<sup>108</sup> Այս նաւի ուղեւորներուն թիւը լրացնելու համար մօտ 2000 անձ ալ ժողովուրդէն կը վերցուի Հայրենիք տեղափոխելու համար: Այնուհետեւ, 1924 թուականին և հետագայ տարիներուն, մօտաւորապէս 1000 անձ<sup>109</sup> Պարսկաստանի ճամբով պարբերա-

<sup>107</sup> Մելքոնյան Է., նշ. աշխ., էջ 118:

<sup>108</sup> Որբերու փոխադրութեան և Երուսաղէմի Ս.Յակոբեանց վանքին մէջ տեղաւորելուն բոլոր ծախսերը հոգացած են ՀԲԸՄը և Մերձաւոր Արեւելքի Նաաստանատոյցը: Այս կարգադրութիւնը իրագործելուն մէջ մեծ դեր ունեցած է այն ատենուայ Եգիպտոսահայոց առաջնորդ Թորգոմ եպս. Գուշակեանը: (Տես Վարդանեան Ե., Անապատ անապատ, էջ 477-478):

<sup>109</sup> Այս կարաւաններէն մէկուն մէջ կը գտնուէր նաեւ հետագային հայրենիքի մէջ յայտնի ֆիզիկոս-աստղագետ դարձած, ՀՀ Գիտութիւններու Ազգային Ակադեմի-

բար ներգաղթեցին Հայրենիք:<sup>110</sup> Անցագիր կը տրուէր իւրաքանչիւր ընտանիքի՝ փոխան 5 ռուփիի:<sup>111</sup> Լեւոն Շաղոյեանի արխիւին մէջ գտնուող անցագիրներու պատճէններէն մին կցուած է այս աշխատութեան յաւելածներու բաժինին մէջ:

Ստորեւ կը ներկայացնենք Իրաքի հայ ժողովուրդի վիճակագրութիւնը առաջին կազմակերպուած զանգուածային ներգաղթէն ետք, տեղացի և տարագիր ժողովուրդը ներառեալ:<sup>112</sup>

### Միջագետքի հայերու ժողովրդագրական պատկերը 1924 թ. Յուլիս 24-ին:

Տեղացի հայ բնակչութիւն	Անձ
Պաղտատ	706
Պասրա	242
Մուսուլ	173
	1121
Տարագիր Հայ Բնակչութիւն	
Պաղտատ քաղաքին մէջ	600
Պաղտատ քաղաքին մօտ (Կէյլանի Քէմփ)	2200
Պաղտատ քաղաքին մօտ (Հընէյտի)	300
Պասրա քաղաքին մէջ	427
Նահր Օմար վրանաւանին մէջ	2000

այի ակադեմիկոս Գրիգոր Գիւրգաղեանը, ծնած՝ Իրաք, 1922 թ., մահացած՝ Երեւան, 2014 թ. Փետրուարին:

<sup>110</sup> Թեհրանի մէջ Հ.Ա.Խ.Հ. Լիազօր Ներկայացուցիչի No. 386, 07.09.1922 թուակիր նամակը ուղղուած Նահր Օմարի Գաղթականութեան Կոմիտէին որով վերոյիշեալ ներկայացուցիչը կը տեղեկացնէ Պարսից կառավարութեան թոյլտուութեան մասին, Միջագետքի հայ գաղթականութեան իր հողով անցնիլը Հայաստան: (Լ.Շաղոյեանի անձնական արխիւ, Պաղտատ):

<sup>111</sup> Իրաքի ազգային դրամանիշ դիմարը՝ առաջին անգամ շրջանառութեան մէջ դրուեցաւ 1932 թ., փոխարինելով հնդկական ռուփիին:

<sup>112</sup> Իրաքահայ Թեմի Համառօտ Պատմութիւն, էջ 393, հիմնուած Սուրիահայ Տարեցոյցի տուեալներուն, 1925 Բ. Տարի, Հալէպ: Տես նաեւ Ս.Փրկչեան 1925 թ. տարեցոյց, էջ 165-166, Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը Երեւան 2003, էջ 41:

Մուսուլ քաղաքին մէջ	640
Զախօ և շրջակայք (Մուսուլի շրջան)	600
Սինջար	250
Զանազան տեղեր ցրիւ եկած	<u>300</u>
Ընդամենը	<u>7317</u>
Տեղացի հայ բնակչ.	<u>1121</u>
Ընդհ. գումար	<u>8438</u>
Տարագիր ժողովուրդին՝	
Լահր Օմարի մէջ	89% Վանեցիներ
	5% Պիթլիսցի և Կարնեցի
	6% Զանազան վայրերէ
Կէլլանի Քէմփ	15% Միջագետքի մէջ ծնած
	21% Կիլիկիայէն
	20% Պարսկաստանէն (Ուրմիա, Սալ մաստ ելլել)
	14% Վան-Գաւառ և Զուլամերիկէն
	14% Արեւմտեան Անատոլիայէն
	16% Զանազան վայրերէ
Մուսուլ	25% Սղերդէն
	17% Կարինէն
	12% Վանէն
	12% Տիգրանակերտէն
	17% Արեւմ. Անատոլիայէն և
	17% զանազան վայրերէ

Բացի տեղացիներէն, որոնք մեծ մասամբ կալուածատեր, առետորական և պետական պաշտօնեաներ էին<sup>113</sup> և հետեւաբար՝

մեծահարուստ և բարեկեցիկ, տարագիր հայութեան զբաղումներն էին արհեստը, բանուորութիւնը, ջուլիակութիւնը եւայլն, որ պայմանաւորուած էր սկզբնական շրջանին, լեզուին բոլորովին անծանօթ և միջավայրին անհաղորդ ըլլալէ:

Իրաքէն երկրորդ զանգուածային ներգաղթը տեղի ունեցաւ 1947 թուականին: Մինչ այդ, այս երկար տարիներու ընթացքին Միջագետքի մէջ հարկադրաբար ապաստան գտած ժողովուրդի յոյսը երբեք չմարեցաւ հայրենիք վերադառնալու երազը փայփայելէն: Համաշխարհային 2-րդ պատերազմի աւարտին, ԽՍՀՄ-ի տարած յաղթանակը զգալիօրէն բարձրացուցած էր իր հեղինակութիւնը սփիւռքահայ բոլոր շրջանակներուն մէջ, յատկապէս, երբ 1945 թ. Պոտսդամի կոնֆերանսի մէջ՝ դաշնակից երկիրներու ղեկավարներուն հետ զրոյցներու ընթացքին, Խորհրդային ղեկավարութիւնը հարց էր բարձրացուցած թուրքիայի կողմէն ապօրինաբար զաւթուած հայկական տարածքներու մասնաւորապէս Կարսի և Արտահանի վերադարձը և միացումը Խորհրդային Հայաստանին, որու դրական ընթացքը հնարաւորութիւն պիտի ստեղծէր աշխարհով մէկ սփռուած տարագիր հայութեան վերադարձը և վերաբնակեցումը իր պատմական հայրենիքին մէջ: Սփիւռքահայ շրջանները եւս բազմաթիւ դիմումներ յղեցին մեծ տէրութիւններուն և Միացեալ Ազգերու Կազմակերպութեան նոյնանման պահանջով: «...Անուրանալի է, որ հայերու յոյսը՝ Կարսը և Արտահանը և նոյնիսկ Թուրքիոյ կողմէ գրաւուած այլ շրջաններու Խորհրդային Հայաստանին կցումին, այդ օրերուն տիրական էր հայկական հասարակութեան մէջ և սփիւռքահայ ղեկավարներուն մէջ ծնած էր հզօր զինուորագրում մը՝ ի նպաստ ներգաղթին»:<sup>114</sup> Ֆրանսայի արտաքին գործոց նախարարին ուղղուած նամակով մը հայ Գաղ-

<sup>113</sup> احمد رفيق البرقاوي - العلاقات السياسية بين العراق وبريطانيا 1922-1932 بغداد 1980 صفحة 22 (Ահմեդ Ռաֆիկ ալ-Բրոկաուի, Իրաքի և Բրիտանիայի քաղաքական յարաբերութիւնները 1922-1932 թթ. Պաղատատ 1980, էջ 22):

<sup>114</sup> Դար մը Պատմութիւն՝ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, հատոր առաջին, 1906-1940, էջ 303:

թականներու Վարչութեան և հայ Գաղթականներու խորհուրդի նախագահները՝ Արշակ Չօպանեանը (Ռամկավար) և Գրանդ Սամուէլեանը (Ռաշնակցական), կը շեշտէին. «...Հայ Գաղթականներու Կեդրոնական վարչութիւնը և խորհուրդը, որոնք կը պաշտպանեն հայ գաղթականներու շահերը աւելի քան քսան տարիէ ի վեր, համոզուած են, որ այս շահերը պաշտպանելու ամենէն արդիւնաւետ և ամենէն արմատական ձեւը այս գաղթականներուն խորհրդային Հայաստան ներգաղթը դիւրացնելն է: Մենք գիտենք անշուշտ, որ այս շարժումը անհրաժեշտ ծաւալը պիտի չունենայ այնքան ատեն որ Հայաստանի խորհրդային հանրապետութեան նեղ տարածքը ընդարձակուած չըլլայ՝ թրքահայաստանի նահանգներու մէկ մասի կցումով առնուազն նախագահ Ռիլսընի սահմանագծած ամբողջ տարածքով: Մենք ձեզի երախտապարտ պիտի ըլլայինք, Ձերդ Վսեմութիւն, որ բարի ըլլայիք Սան Ֆրանսիսքոյի վեհաժողովին և անոր հետեւող խաղաղութեան վեհաժողովներու օրակարգերուն վրայ դնելու թրքահայաստանի ազատագրումի հարցը՝ յանգելու համար արդար լուծումի մը, ի վերջոյ արդար վերաբերում ունենալու համար հայ ժողովուրդին հանդէպ, որուն դատը անցեալին վայելած է և այսօր ալ կը շարունակէ վայելել ջերմեռանդ զօրակցութիւնը Եւրոպայի և Ամերիկայի ազնուագոյն հոգիներուն...»:<sup>115</sup> Վերոյիշեալ գրառումէն ակնյայտ է արդէն, որ 1945-1946-ին հայ ազգային ճակատը կը համախմբէր սփիւռքի մէջ գործող բոլոր աւանդական կուսակցութիւնները՝ Ռաշնակցական, Ռամկավար և Գնչակեան: Միասնական այս գործունէութիւնը սակայն, երկար չտևեց: Շուտով բացայայտ կը դառնայ, որ խորհրդային ղեկավարութեան պահանջը Ռաշնակցութիւնը բացառելն էր Ազգային ճակատէն: Այնուամենայնիւ, նկատի ունենալով շարժման կարեւորութիւնը, Ռաշնակցական պատասխանատուները

<sup>115</sup> Նոյն:

արտօնեցին իրենց անդամներուն «առաջնորդուիլ անհատական որոշումով՝ թեկնածու արձանագրուիլ ներգաղթին»:<sup>116</sup>

Ահա այս յուսալի պայմաններու մէջ զարգացաւ աշխարհասփիւռ հայութեան տուն դարձի շարժումն ու կազմակերպումը: Այսպիսով՝ ընդառաջելով Հայաստանի կառավարութեան առաջարկին ԽՍՀՄ կառավարութիւնը 1945 թ. Նոյեմբերին որոշում ընդունեց հայերու ներգաղթ կազմակերպելու մասին, մասնաւոր եթէ նկատի ունենանք այն պարագան որ խորհրդային Միութիւնը շատ քանկ էր վճարած պատերազմի մէջ յաղթանակ արձանագրելու համար՝ միլիոնաւոր մարդկային զոհեր և նիւթական ահռելի վնասներ, որոնց հատուցման համար կենսական պահանջ էր ունենալ նոր մարդուժ և երկիրի տնտեսութիւնը վերակառուցելու նիւթական միջոցներ:

Այս կապակցութեամբ Հայաստանի կառավարութեանը առընթեր ստեղծուեցաւ Արտասահմանէն ներգաղթող հայերու ընդունման և տեղաւորման կոմիտէ: Սփիւռքի ամբողջ տարածքին նոյնպէս կազմակերպուեցան մանօրինակ յանձնաժողովներ: Իրաքի մէջ եւս, ներգաղթի մեկնարկի լուրը ստանալուն պէս, նոյն նպատակով կեդրոնական կոմիտէ մը կը ստեղծուի Պաղտատի մէջ, որու կազմին մէջ կը մտնեն՝ Իսրայէլ Չոքեան՝ նախագահ, Յակոբ Վարդապետեան՝ ատենադպիր, Սեդրակ Տէր Եղիայեան՝ գանձապետ, Թորոս Բարաղամեան՝ փոխ-գանձապետ, Սարգիս Զիւլեմեանը, Յովհաննէս Իսպիրեան, Յովհաննէս Զիւլեմեան, Համբարձում Աթէշեան և Կոստան Չարխըտեան: Իսկ Մուսուլի մէջ կազմուած է տեղական յանձնաժողով մը, որուն գանձապահը Իսրայէլ Փիլիկեան 100 անգլիական ոսկի և տիկին մը 280 ոսկի նուիրած են ի նպաստ ներգաղթի գործին: Պաղտատի մէջ ալ Գնաճեան եղբայրները 100 անգլիական ոսկի նուիրաբերած են նոյն գործին:

<sup>116</sup> Նոյն էջ 302:

Վերոյիշեալ կոմիտէն դիմելով Պաղտատի մէջ ԽՍՀՄ մեսիայի ղեկավար Գ.Չայցելին կը գրէր. «ուսումնասիրելով դիմողներու տնտեսական վիճակը, կոմիտէն ասոնցմէ առնուազն 4000 հոգի մեկնելու խիստ անհրաժեշտութիւն կը գտնէ»:<sup>117</sup> Այնուամենայնիւ, արձանագրուած անձերէն 1947 թ. 177 ընտանիք (857 շունջ)<sup>118</sup> միայն «Պոքետա» նաւով կը յաջողին ներգաղթել Հայրենիք:<sup>119</sup>

1949 թ. աստիճանաբար կը կրճատուին Ներգաղթի կոմիտէի հաստիքները, լուծարքի կ'ենթարկուի և իր գործունէութիւնը վերջնականապէս կը դադրի: Այնուամենայնիւ, 1962 թուականէն սկսեալ կը վերսկսուի սփիւռքահայերու հայրենադարձութիւնը և Իրաքէն անհատական անցագրերով (վիզա) 1962-1980 թթ. Հաստատան կը ներգաղթեն 75 ընտանիք (291 շունջ):<sup>120</sup>

Ուշադրութեան արժանի է որ Հայրենիք ներգաղթած սփիւռքահայերը գործօն մասնակցութիւն ունեցած են Սովետական Հայաստանի տնտեսութեան, գիտութեան և մշակոյթի զարգացմանը:<sup>121</sup>

Եզրակացնելով այս ենթագլուխը, ակնյայտ է որ Իրաքի մէջ հայրենադարձութեան շարժումը (2-րդ զանգուածային ներգաղթը – Ս.Օ.) չունեցաւ այն յաջողութիւնը զոր ունեցած էր ուրիշ համայնքներու պարագային: Այս իրավիճակը կարելի է բացատրել այն իրողութեամբ, որ Իրաքի (նաեւ Թուրքիայի, Լիբանանի և այլ երկիրներու) կառավարութիւնը սփիւռքահայերու հայրենադարձութեանը կը վերաբերէր բացասական և խիստ անբարեացակամ կերպով, որն անշուշտ իր պատճառներն ունէր: Իրաքի միապետական համակարգի իրարայաջորդ համարեա բոլոր իշխանութիւնները հասկնալի պատճառներով (տնտեսական-քաղաքա-

կան), վարած են երբեմն հարկադրուած բայց յաճախ թրջամէտ քաղաքականութիւն:<sup>122</sup> Հետեւաբար, շատ տրամաբանական է, որ Իրաքի կառավարութիւնը հաշտ աչքով պիտի չվերաբերէր իր «բարեկամ» Թուրքիայի մէջ գտնուող տարածքներու (իմա՝ Կարսի և Արտահանի) «գրաւման» և հայերով վերաբնակեցման գաղափարին, որը ինչպէս վերը նշեցինք, արժարձուած էր ԽՍՀՄ ղեկավարութեան կողմէն Պոտսդամի կոնֆերանսի շրջանակներու ծիրէն ներս: Այս կապակցութեամբ յիշատակութեան արժանի է որ «...1947 թ. Հոկտեմբերին Նիւ Եորք արտասանուած ճառի մը մէջ ԱՄտրէյ Վիշինսկին՝ ՄԱԿ-ի մէջ Խորհրդային Միութեան ներկայացուցիչը այդ օրերուն, պահանջեց Կարսի և Արտահանի շրջաններու կցումը (ոչ թէ Խորհրդային Հայաստանին – Ս.Օ.) այլ՝ Խորհրդային Վրաստանին...»:<sup>123</sup> Դժուար չէ եզրակացնել որ սփիւռքահայերու ընդվզումը և հիասթափութիւնը մեծ էր և այս պահանջը ԽՍՀՄ-ի կողմէն, հայրենադարձութեան գործողութիւններուն վրայ բացասական ազդեցութիւն պիտի ունենար, իսկ իրաքահայերու պարագային առաւել շեշտուած՝ քանի որ դաշնակցական հատուածը, որ մեծագոյնն էր տունեալ երկրի մէջ, բացառուած էր մաս կազմելու հայրենադարձներու կարաւաններուն:<sup>124</sup>

Այնուամենայնիւ, հակառակ յարուցուած բազմակողմանի խոչընդոտներուն սփիւռքահայերու որոշ հատուածի նկատմամբ, նաեւ ներգաղթի տեղական կոմիտէներու կարգ մը անդամներու չարաշահումներուն, հայրենադարձութիւնը ազգահաւաքման և ազգապահպանման առումով ունեցաւ պատմական մեծ նշանակութիւն, որը խոշոր դեր ունեցաւ դեռեւս օտարութեան մէջ մնացողներու հայապահպանման ամենօրեայ պայքարի հետագայ յաջողութեան համար:

<sup>117</sup> ՀԱԱ., ֆ.362, Յ.1, Գ.198, Թ.28:

<sup>118</sup> Մելիքսեթեան Յ., Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները և հայրենադարձութիւնը (1920-1980) Երեւան, 1985, էջ 226, (ՀՀ ԱԱ., ֆ.1, Յ.38, Գ.85, Թիւ 78-81):

<sup>119</sup> ՀԱԱ ֆ. 362, Յ. 16 և 44:

<sup>120</sup> Նոյն տեղը:

<sup>121</sup> Հայկական Սովետական Հանրագիտարան, Երեւան, Հատոր 6, 1980, էջ 207-209:

<sup>122</sup> ՀԱԱ ֆ. 326, Յ.1, Գ. 399, նաեւ Յակոբեան Գ. Տէր, նշ. աշխ., էջ 137-138:

<sup>123</sup> Դար մը Պատմութիւն Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան, Հատոր երկրորդ, 1941-2006, Գահիրէ, Փարիզ, Նիւ Եորք 2006, էջ 310:

<sup>124</sup> Նոյն: Նաեւ Mandalian J., The 151 Repatriates from America, The Armenian Review, Spring/Autumn 1951, IV/1, (13), p.90-99.

## ԵԿԵՂԵՑԻՆ ԵՒ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

### ա- Հայ Առաքելական Եկեղեցի

Հակառակ դարերու ընթացքին իր կրած բազմապիսի հալածանքներուն, դիմակայելով արեւմուտքէն ներթափանցած օտարամուտ դաւանանքներու գայթակղութեանց, հայոց եկեղեցին՝ զօտեակնդուած իր զաւակներու բարոյական և մանաւանդ հայու անխախտ հաւատքով, գաղթօճախներու իրականութեան մէջ մնաց հոգեւոր և ազգային կեանքին մաս կազմող, առանցքային նշանակութիւն ունեցող ոգեղէն կառոյց, քանզի «...Եկեղեցի կառուցանել, այլ մշակութային օճախներու կողքին, կը նշանակէ ուրեմն, զինուիլ ինքնապաշտպանութեան և գոյատեւման ամուր գէնքերով, որով և հայապահպանման նուիրական գործին նպաստել գործնական կերպով, որովհետեւ Եկեղեցին Հայկական է, որ յաւերժութեան և հոգեւոր ճշմարտութիւններու գիտակցութեան ուղին կը պարզէ մեր աչքերուն առջեւ...»:<sup>125</sup> և իրաւացիօրէն «...Ո՛չ միայն Հայաստանի Եկեղեցին կենդանի օրինակ մըն է իր սեփական պատմական գիծերուն վրայ զարգացող եկեղեցիի մը, այլեւ անկախութիւնն ապացուցած է իր անցեալ և ներկայ պատմութեան բազմաթիւ երեւոյթներով»:<sup>126</sup>

Այսպէս եղած է նաեւ Իրաքի հայ համայնքի պարագային: Այս երկրին մէջ ապաստանած հայրենազրկուած հայութեան համար, եկեղեցին հանդիսացեր է իր ինքնութեան և ինքնահաստատման միակ փրկօղակը, որ կը զօդէ իր բոլոր զաւակները անխտիր և քրիստոնէական սիրով ու ազգային ոգիով կը զօրացնէ զանոնք՝ դիմագրաւելու և հակազդելու օտար միջավայրին մէջ առկայ գայ-

<sup>125</sup> Տ.Սեպուհ վրդ. Սարգիսեան (այժմ՝ Արքեպիսկոպոս), 19-07-1973ին՝ Պարսի Ս.Յովհաննէս Կարապետ Մատուռի բացման առթիւ արտասանած քարոզէն հատուած մը, «Սփիւռք» շաբաթաթերթ, Պէյրութ, 26-08-1973:

<sup>126</sup> Օրմանեան Մ. արք., Հայոց եկեղեցին, Անթիլիաս-Լիբանան, 1952, էջ (Լ):

բակղիչ երեւոյթները:<sup>127</sup> Իրաքահայ թեմը հինէն ի վեր եղած է «սուրունի»՝ Էջմիածնի թեմ, Նոր Ջուղայի Ամենափրկչեան վանքի իրաւասութեան ներքոյ, ինչպէս էր Հնդկաստանի թեմը: Իբրեւ հոգեւոր հովիւներ կը պաշտօնավարէին պարսկահայ եկեղեցականներ: Սակայն, Իրաքի հայերը, նկատի ունենալով որ իրենց բնակավայրը մաս կը կազմէ Օսմանեան Կայսրութեան, և մանաւանդ Պարսկաստանի մէջ տիրող քաղաքական վերիվայրումներուն, աւելի նպատակայարմար նկատեցին ենթարկուիլ Պոլսոյ Պատրիարքարանին: Եւ այսպէս, 1848 թուականին, Պաղտատ կը ժամանէ նորընտիր առաջնորդ պոլսեցի Մեսրոպ Ծ. վարդապետը, որ իր 17 տարուան ազգապահպան բեղուն ծառայութեան ընթացքին մեծ ներդրում ունեցաւ Իրաքահայ հոգեւոր, մշակութային և տնտեսական կեանքի վերելքին մէջ:

Ինչպէս վերը նշեցինք, Պաղտատի **Ս.Աստուածածին**<sup>128</sup> եկեղեցւոյ կառուցումը (1639-1640 թթ.) կը համարուի նաեւ, Իրաքի Հայ Գաղութի վերակազմութեան թուականը: Այս եկեղեցին «շատ անգամ կռուի առարկայ եղած է հայոց և օտար քրիստոնէայ ազգերուն միջեւ: Ի սկզբանէ, միւս քրիստոնէայ ազգեր՝ եկեղեցի չունենալով, արտօնուած էին հայոց կողմէն հոն պաշտամունք կատարելու, որոնց ոտնձգութիւնը այնքան յառաջացած էր, որ հաւակնութիւնը ունեցած էին այս եկեղեցին իբր իրենց պատկան հռչակելու, և ստիպած էին հայերուն՝ կառավարութեան դիմել և Սուլթան Մուրադի տուած ֆէրմանով, իրաւունքնին հաստատել»:<sup>129</sup> Թեւ նեստորականները մէկէ աւելի անգամներ դիմեցին դատարան՝ վիճարկելով եկեղեցւոյ պատկանելիութիւնը, սակայն չունե-

<sup>127</sup> Օհանեան Ս.Տ., Հայ-Արաբական Յարաբերութիւնները Իրաքի մէջ XX դարուն, Հայաստանը Եւ Արաբական Աշխարհը՝ պատմութիւն եւ արդի խնդիրներ, Երեւան, 2014, էջ 139-151:

<sup>128</sup> Նկարը տես յաւելումներու բաժին:

<sup>129</sup> Թաղեոսեան Դ., Անձնական յուշեր՝ Իրաքահայ Թեմի .....նշ. աշխ., էջ 54:

նալով օրինական սեփականության փաստաթուղթեր, կը մերժուին, և եկեղեցին կը մնայ հայերուն սեփականութիւնը:

Հետագային՝ 1922 թ., Իրաքեան կառավարութեան կազմուելէն մէկ տարի ետք, այս դարաւոր եկեղեցւոյ կալուածին «Թափուի Սէնտ» (կալուածագիր – Ս.Օ) մը տրուելու նպատակով՝ նաեւ նեստորականներու և այլ յարանուանութեանց ոտնձգութիւններուն վերջակէտ մը դնելու մտօք, Առաջնորդարանի դիմումին ընդառաջելով, Իրաքեան թափուի տնօրէնութեան պետական պատկան գրասենեակը, տեղւոյն վրայ քննութիւն մը կատարելէ ետք, կը հաստատէ թէ կալուածը արձանագրուած է՝ Թափուի տոմարներուն մէջ իբրեւ «Վակըֆ» հայոց ազգին՝ Առաջնորդի «Թաւլիէ»ի (հովանաւորութեան – Ս.Օ.) տակ: Առաւել եւս հաստատելու համար եկեղեցւոյ և անոր կից խանութներու պատկանելիութիւնը, յայտարարութիւններ կը հրատարակէ հետեւեալ պաշտօնական թերթերուն մէջ:

1- Պետական պաշտօնաթերթ «Էլ-Վակա'ա Էլ-Իրակիյը»ի 17 և 27 Մարտ և 3 Ապրիլ 1923 40, 44 և 48 թիւերով համապատասխանաբար:<sup>130</sup>

2- Նոյն յայտարարութիւնը հրատարակուած է նաեւ «Ալ Ասիմա» թերթի 114, 123 և 132 թիւերով՝ 16, 27 Մարտ և 6 Ապրիլ 1923 թուականներով համապատասխանաբար:<sup>131</sup>

Վերոյիշեալ եկեղեցին հիմնովին նորոգութեան կ'ենթարկուի 1965-1971 թուականներուն: Բացման և Օծման արարողութեան ընթացքին (27 Նոյեմբեր 1971) օրուան Առաջնորդ Գերշ. Տ. Ասողիկ եպս. Ղազարեանը կը նշէ՝

«...Ողորմութեամբ Աստուծոյ և Իրաքի մեր սիրելի կառավարութեան բարեհաճ արտօնութեամբ, ինչպէս նաեւ ազնուագարմ, բարեկրօն Արամ Արթին Ղարիպեանի նիւթական ու բարոյական բոլորանուր ծախսով, վերակառուցուեցաւ հիմէն, Մէյտանի հայոց Ս. Աստուածածին եկեղեցին: Քաղաքիս պատմական այս յուշարձանը, իբրեւ քրիստոնէական սրբավայր ու աղօթատեղի, քաղաքին ամենէն հին եկեղեցին է:

1965 թ., երբ վար առնուեցան եկեղեցիին հին ու խոնաւ պատերը, Քառասուն Մանկանց նուիրեալ անոր սրբարանին մէջ, զընկուեցաւ ալապաստրէ ութանկիւն գեղակերտ սրբատուփ մը, որուն կափարիչին վրայ հետեւեալ հայերէն գրութիւնն էր փորագրուած՝

ՔԱՐԵՆՍՕՍՈՒԹԵԱՄԲ ՍԲ. ՅՈՎԻԿԻՄՍԻ

ՍԲ. ԱԹԱՆԱԳԻՆԷ ՍԲ. ԳԵՈՐԳ ՍԲ. ԿԻՐԱՎՈՍ

Թուականին Հայոց ՌՃԺԲ 1112

Թուականի Փրկչին ՌՁԵԼԹ 1639

Սրբարանը ծածկող մարմարեայ քարին երկու կողմերն ալ, կային հայերէն արձանագրութիւններ, բայց մարմարը մաշած ըլլալով և գիրերը թափած, անկարելի եղաւ ընթեռնել գրութիւնը.....»:<sup>132</sup>

Թէեւ սկզբնական շրջանին բուն եկեղեցւոյ տարածութիւնը կը կազմէր 445.71 քմ.մէթր, սակայն, յետագային, պարբերաբար նոր հողամասեր գնուած և միացուած են եկեղեցւոյ տարածքին: Այսպէս ժամանակի ընթացքին, եկեղեցւոյ կից հողամաս մը կը գնուի, յետագային վրան կը կառուցուին սենեակներ և ուխտաւորներու բնակարան: Այժմ, Ս.Աստուածածին եկեղեցւոյ հողամասի տարածութիւնն է 2118.42 քմ.մէթր:

1991 թուականի Յունուար-Փետրուար ամիսներուն, Իրաքի դէմ դաշնակից ուժերու կողմէն կատարած յարձակումներու ըն-

<sup>130</sup> جريدة الوقائع العراقية القرار رقم 40 في 17 اذار وقرار رقم 44 في 27 اذار ورقم 48 في 3 نيسان 1923

<sup>131</sup> جريدة العاصمة المرقمة 114 123 و 132 والمؤرخة في 16 و 27 اذار و 6

<sup>132</sup> Իրաքահայ Թեմի....., նշ. աշխ., էջ 62:

Ազգային Սվաճեան վարժարանի շէնքը, որ ընտիր հունձք մը տուած էր ազգին:<sup>136</sup>

Հետագային, Ա.Համաշխարհային պատերազմէն ետք, այստեղ կը հասնին հայոց Ցեղասպանութենէն վերապրողներ, գլխաւորապէս Վասպուրականցիներէ բաղկացած հազարաւոր գաղթականներ, որոնցմէ քանի մը ընտանիքներ ժամանակաւորապէս բնակութիւն կը հաստատեն մայրաքաղաքին մէջ գոյութիւն ունեցող հայ առաքելական երկու եկեղեցիներուն մէջ և շրջակայքը:<sup>137</sup>

Յիշատակութեան արժանի է, որ Իրաքի անկախ պետութեան հիմնուելէն անմիջապէս ետք՝ Օգոստոս 1921 թ., Ֆէյսալ Ա. թագաւորը այցելած է Ս. Երրորդութիւն եկեղեցին, ուր ի պատիւ իրեն համայնքին կողմէ կազմակերպուած հաւաքոյթի մը ընթացքին շնորհակալութիւն կը յայտնէ՝ հայ ժողովուրդին, միաձայն զինքը թագաւոր ընտրելուն, և Իրաքի անկախ պետութիւնը գլխաւորելու համար, շեշտելով «.....այս երկիրը ապաստան գտած հայ գաղթականներու ներկայացուցիչ խօսքին ի պատասխան, սիրով կ'ընդառաջեմ և կ'արտօնեմ անոնց բնակիլ ուր որ փափաքին այս երկրի հողին վրայ, և վստահ եմ, որ ողջ Իրաքը մասնակից է այս զգացումներու և սիրով կ'ընդունի գաղթականներուն, ոչ որպէս գաղթական, այլ որպէս այս երկրի զաւակներ, որոնք կ'աշխատին անոր յառաջդիմութեան և բարեշինման համար. այդ հիւրը պատուելն ու յարգելը, մեր երկրի առանձնայատկութիւններէն մէկն է: Այս պատճառաւ, սիրտիս խորքէն կ'ըսեմ, որ՝ հայ գաղթականները պիտի

<sup>136</sup> Ազգային եկեղեցական կեանքը Պաղտատի մէջ, Հայ Կեդրոն, Պաշտօնաթերթ Հայ Առաքելական եկեղեցւոյ Հոգաբարձութեան, Պոյնըս Այրլոս, Ապրիլ 1965, էջ 98-100:

<sup>137</sup> Վարդանեան Ե., Եջ. աշխ., էջ 99:

գտնեն ամէն աջակցութիւն Իրաքի բոլոր ժողովուրդներուն կողմէ»:<sup>138</sup>

Այս եկեղեցին կը գործէր մինչեւ 1957 թուականը, երբ ստորերկրեայ ջուրերու մակերեսի բարձրացման հետեւանքով բակը կ'որոգուի ջուրով: Հարկ կ'ըլլայ բակը և եկեղեցւոյ յատակը բարձրացնել, որ կը կրկնուի քանի մը անգամ յաջորդական տարիներուն: Բակին մէջ եղած ննջեցեալներու գերեզմաններէն մաս մը կ'անցնին ջուրերուն տակ: Խոնաւութիւնը պատճառ կը դառնայ կամարներուն մէջ ճեղքեր գոյանալուն, որ կը սպառնայ եկեղեցւոյ շէնքի անվտանգութեան: Հետեւաբար, պետութիւնը կը հրահանգէ այս կառոյցին մէջ ամէն տեսակի գործունէութիւն դադարեցնել: 1957 թուականին Ս. Ծննդեան պաշտամունքը կատարելէն ետք, եկեղեցին կը գոցուի և շէնքը կը խոնարհի: Այնուհետեւ ժամերգութիւնները կը կատարուին Ս. Աստուածածին եկեղեցւոյ մէջ, մինչեւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ կառուցումը:

Պաղտատի քաղաքապետարանը կալուածի մէկ մասը կը սեփականացնէ՝ ճանապարհ բանալու համար՝ յետ յարմար հատուցման: Իսկ Ազգային Կեդրոնական Իշխանութիւնը եկեղեցւոյ կից կալուածին վրայ ազգապատկան հասութաբեր շէնք մը կը կառուցէ, որ գտնուելով մայրաքաղաքի ամենաբանուկ առեւտրական շրջաններէն մէկուն մէջ, կը հանդիսանայ ազգային հասոյթի կարեւոր աղբիւրներէն մէկը:

Շուրջ մէկ դար տեւող ժամանակաշրջանին, Ս.Երրորդութիւն եկեղեցին հանդիսացած է հոգեկան մխիթարութիւն պարգեւող Պաղտատի հայութեան, որ միշտ եկեղեցասէր և ջերմեռանդ քրիստոնեայ ըլլալով, բազմաթիւ կալուածներ նուիրած է եկեղեցիին:

<sup>138</sup> 257 – 256 ص بغداد 1945 اصدار مديرية الرعاية العامة ( فيصل بن الحسين في خطبه واقواله ) كتاب (فصل بن الحسين في خطبه واقواله) اصدار مديرية الرعاية العامة 1945 بغداد ص 256-257):

Իսկ համաշխարհային առաջին պատերազմի ընթացքին Պաղտատ ժամանող գաղթականութեան հետ նաեւ արաբական աշիրէթներէն ազատագրուած որբերուն պատսպարան-որբանոց մը կը յատկացուի եկեղեցիին յարակից բաժանմունքի մը մէջ:

Գաղթականութեան ժամանումէն ետք եկեղեցին և ազգային իշխանութիւնները անգնահատելի ծառայութիւններ մատուցած են գաղթական ժողովուրդին: Անգլիացիներու՝ Պաղտատ գրաւելէն անմիջապէս ետք ազգային առաջնորդարանը իր անձուկ միջոցներով կարելի եղածին չափով օգնութեան ձեռք կը մեկնէր՝ ամոքելու համար այս հայրենագուրկ, բայց քաջարի ժողովուրդին, որոնք ամբողջ հինգ ամիսներ շարունակ ինքնապաշտպանական կռիւներ մղելով և բազմաթիւ զոհեր տալով, վերջապէս հանգրուանած էին Միջագետքի խաղաղ երկնակամարին ներքոյ: Այս առթիւ Մուշեղ եպիս. Սերոբեանը, Ամերիկայէն Միջագետք գալով, երբ առաջին անգամ ոտքը եկեղեցիէն ներս կը դնէր, խօսքը Պաղտատի հայ գաղութին ուղղելով կ'ըսէր. «Պաղտատի հայ հասարակութիւն, ես չեմ եկած ձեզի համար, ես եկած եմ տառապած ու չարչարուած գաղթականութեան համար, որուն ցաւերը սփոփելու պիտի աշխատիմ այնքան որքան կը ներեն իմ համեստ ուժերս»:<sup>139</sup>

Գաղթականութեան Պաքուբա հանգրուանելէն ետք Մուշեղ Սրբազանի առաջին հոգը կ'ըլլայ որբերու մէկտեղումը և խնամքը: Ան, անմիջապէս կը գրէ Եգիպտոսի Որբախնամին և Պաքուբայի մէջ որբանոց մը հիմնելու առաջարկը կ'ընէ: Պաղտատի մէջ հաւաքուած որբերը, բաւական լաւ պայմաններու մէջ կը գտնուէին արդէն, կը մնար Պաքուբայի որբերուն հարցը, որուն վրայ եկեղեցին կեդրոնացուց իր ամբողջ ուշադրութիւնը և ան չթերացաւ իր այդ ազգապահպան պարտականութեան մէջ: Առանց սպասելու Եգիպտոսէն գալիք պատասխանին, 1918 թ. Դոկտ. 15-ին, Մուշեղ Սրբա-

<sup>139</sup> Վարդանեան Ե., նշ., աշխ., էջ 112:

զանը, Պաղտատի Տ.Վահան քին. Թաջիրեանը մասնաւոր իրահանգներով կ'առաքէ Պաքուբա՝ պատուիրելով միաժամանակ որբերը ցուցակագրել և շարունակաբար այցելել ժողովուրդին: Դրահանգին համաձայն կը ձեռնարկուի այս գործին, նաեւ 40ի չափ միջին տարիքի միայնակ կանայք կը ցուցակագրուին, որպէս կազմուելիք որբանոցին մայրապետներ:

Առաջնորդի և ազգային իշխանութիւններու նախաձեռնութեամբ և անգլիական բանակի օժանդակութեամբ՝ առժամեայ եկեղեցի մը կը կառուցուի: Իսկ դպրոցի համար վրանաւանի մէջ գտնուող տարագիր 11 ուսուցիչներ յանձն կ'առնեն զբաղիլ փոքրիկներուն հետ: Այսպիսով, հիմը կը դրուի Պաքուբայի դպրոցին, ուր երկսեռ աշակերտութեան թիւը, ժամանակի ընթացքին, հասաւ մինչեւ 2500ի:

20-րդ դարուն Իրաքի հայութեան թիւը աստիճանաբար ստուարանալով, և վերոյիշեալ պատճառներով, Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ խոնարհումով, կենսական պահանջ էր այլեւս աւելի ընդարձակ և յարմարաւետ եկեղեցի մը ունենալ: Զետեւաբար կը ձեռնարկուի **Ս.Գրիգոր Լուսաւորիչ**<sup>140</sup> առաջնորդանիստ եկեղեցիի կառուցման, որ մայրաքաղաքին կեդրոնը, դէպի երկինք խոյացաւ 1957 թ. ազգային բարերարներու առատաձեռն նուիրատուութիւններով: Պանրածանօթ բարերար՝ Իրաքահայ Սիմոն Ղարիպեան՝ իր սովորական լայն աջակցութիւնը ընծայեց այս գործին եւս: Եկեղեցւոյ գլխաւոր շէնքի կառուցման կողքին, ծրագրուած էր կառուցել նաեւ հասութաբեր կալուած մը: Վերջինս առաջարկեց հանգանակութիւն կատարել և խոստացաւ հաւաքուելիք գումարին չափ ալ ինք նուիրել: Զետագային, բարեփոխուած որոշումով մը կարգադրուեցաւ, որ հանգանակուելիք գումարով կառուցուի եկեղեցին, իսկ բարերարի նուիրատուութիւնը յատկացուի կալուածի շինու-

<sup>140</sup> Պատկերը տես յաւելուածներու բաժին:

թեան: ժողովրդական հանգանակութեամբ և նուիրեալ ազգասէր-եկեղեցասէր հայ մեծահարուստ անհատներու նիւթական և բարոյական օժանդակութեամբ կարելի եղաւ շինարարութիւնը աւարտին հասցնել: Իսկ նորակառոյց եկեղեցւոյ կողքին, դարձեալ նուիրատուութեամբ, կը կառուցուի Առաջնորդարանի նոր շէնքը: Այս և Իրաքի բոլոր եկեղեցիները, անցեալին և ներկայիս, օտարութեան մէջ հանդիսացեր են հայ ժողովուրդին համար ոչ միայն հոգեւոր, այլեւ ազգային ինքնագիտակցութեան զարգացման խթանիչ ուժը և տարաբնոյթ ազգանպաստ գործունէութեանց կեդրոններ:

Ազգային գերեզմանատան յատկացուած հողամասի վրան, ուր կառուցուեցաւ Ս.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին, և ուր շինուած է Ս.Թարգմանչաց և Սվաճեան Միացեալ Վարժարանի շէնքը, ունի 22.000 ք.մ. տարածութիւն, որմէ 18.000ը յատկացուած է գերեզմանոցին համար:<sup>141</sup>

Յաւարտ կառուցման, սուրբ և անմահ պատարագ մատուցուեցաւ 21 Ապրիլ՝ 1957 թուականին՝ Ս. Ջատկուան տօնին առթիւ: Ս. Սեղանի օծումը կատարեց Ցեղասպանութիւնը վերապրած Դոգեշնորի Տ.Զօգոն Ծ. վրդ. Յակոբեանը:<sup>142</sup> Իսկ եկեղեցւոյ օծումը կատարուեցաւ 1978 թուականին ձեռամբ հայրենիքէն ժամանած Տ.Յուսիկ Արք. Սանթուրեանի, լուսարարապետ Ս. Էջմիածնի, եր-

<sup>141</sup> Գերեզմանատունը, լեցուած և մանաւանդ քաղաքին կեդրոնը ըլլալով և, քանի մը նախարարութիւններու շէնքերուն կից գտնուելով, Իրաքի պատկան իշխանութիւնները, ի շարս միւս քրիստոնէայ յարանուանութեանց՝ հողամաս մը կը տրամադրէ հայ ժողովուրդին, որ կը գտնուի Պաքուպա քաղաքի ճանապարհին, 100.000 ք.մ. տարածքով:

<sup>142</sup> Տ.Զօգոն Ծ.վրդ. Յակոբեան ծնած է Քեօջանի, Վան, 1904 թուականին, աւագանի անունով՝ Ներսէս: Ա.Գամաշխարհային պատերազմին, Վանէն գաղթելու ճամբուն կը կորսնցնէ ծնողքը և կը դրուի Պաքուպա որբանոցը: 1922-ին Երուսաղէմ փոխադրուող աշակերտներէն մէկն էր: Երուսաղէմի ժառանգաւորացի և Ընծայարանի մէջ կը ստանայ իր ուսումը՝ աշակերտելով Եղիշէ արք. Դուրեանին և Բաբկէն արք. Կիլիսերեանին:

ջանկայիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսի Իրաքի թեմին տուած հայրապետական շնորհաբեր այցելութեան առթիւ:

Այս Էջմիածնատիպ եկեղեցւոյ կառուցումէն քսանհինգ տարիներ անց, նորոգութիւններու և բարեփոխումներու համար եկեղեցական բոլոր տեսակի արարարողութիւնները ժամանակաւորապէս կը դադրին 1984 թ. Յունիս-Դեկտեմբեր ամիսներուն: Այս ծախսալից աշխատանքներուն սիրայօժար կերպով իր հերթական մասնակցութիւնը բերաւ ողջ հաւատացեալ Իրաքահայութիւնը: 1985 թուականին եկեղեցին արդէն պատրաստ էր ընդունելու իր զաւակները: Ս.Ծնունդի տօնակատարութիւնը կատարելէն ետք Ամենայն Հայոց Հայրապետի՝ վերոյիշեալ թուականին թեմին տուած պատմական այցելութեան առթիւ նուիրած Ս.Սեղանի Աստուածամօր, Աւետման և Համբարձման սրբանկարներն ալ մասնաւոր հանդիսութեամբ դրուեցան նշանակուած տեղերը:<sup>143</sup>

Առաջնորդարանին մէջ կը գտնուի երջանկայիշատակ Յ.Մեսրոպ Ծ.վրդ. Կոստանդնուպոլսեցիի անուան թանգարանը, որ կը պարփակէ եկեղեցական սրբազան սպասք, զգեստներ, նուիրատուներու ձեռագործ ծածկոցներ, իւղանկարներ, զանազան թուականներու սուրբ կոնդակներ, ձեռագիրներ եւայլն:

Այս եկեղեցին, որ կառուցուած էր Ցեղասպանութիւնը վերապրողներու ժառանգներուն կողմէն, հարկ էր օժտել նահատակաց յիշատակը յաւերժացնող, ազգային շունչ և ոգի ներշնչող յուշակոթողով մը: Ուստի Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, բազմամեայ և արդիւնաշատ առաջնորդ՝ Աւագ արք. Ասատուրեանի միջնորդութեամբ, 1988 թ. կը դիմէ Վազգէն Ա. Շինարար՝ Ամենայն հայոց կաթողիկոսին, Իրաքահայ թեմը խաչքարով մը օժտելու՝ նուիրուած մեր միլիոնաւոր անմեղ հայորդիներու անմար յիշատակին:

<sup>143</sup> Իրաքահայ թեմի..... նշ. աշխ., էջ 77:

Վեհափառի թոյլտուութենէն ետք կը ձեռնարկուի խաչքարի պատրաստման: Սակայն այլեւայլ պատճառներով առաքումը կ'ուշանայ, և վերջապէ՛ս Պաղտատ կը հասնի 10 Յունիս 1999 թուականին: Խաչքար յուշակոթող-համալիրը կառուցուած է Ս.Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ բակին աջակողմը: Խաչքարը քանդակուած է հայկական տուֆ քարի վրայ՝ հայ վարպետի մը ձեռքով, որ հայկական քանդակագործութեան գեղեցիկ ստեղծագործութիւններէն մէկն է: Բացումը կատարուեցաւ Հայոց Մեծ եղեռնի 85-րդ տարելիցին՝ 24 Ապրիլ 2000 թուականին: Համալիրին վրայ գրուած է հետեւեալ յիշատակարանը՝ քանդակուած մարմարի վրայ՝

**Յոյսովն Ամմահին Աստուծոյ Ի Հայրապետութեան**

**S.S.Վազգէնի Ա. S.S.Գարեգինի Ա. և S.S. Գարեգինի Բ. Կաթողիկոսաց Ամենայն**

**Հայոց և Յառաջնորդութեան S.Աւագի Արքեպիսկոպոսի Ասատուրեան**

**Նուիրուեցաւ և Առաքեցաւ Խաչքարս Կառուցաւ և Կանգնեցաւ**

**Արդեամբ Ժողովրդեանն Հայոց որ Յիրաք**

**Ի Յիշատակ 1915 Թուի Ապրիլեան Եղեռնի Հայ Նահատակաց**

**Ի.Թ.Յ. Ռ.Խ.Թ. Եւ Յամի Տեառն 2000 Ապրիլ 24, Պաղտատ Յիշատակն Արդարոց Օրինութեամբ Եղիցի**

Համալիրին մէջ ամփոփուած են ազգային հերոս Լեւոն (փաշա) Շաղոյեանի և Վասպուրականի հերոսներէն Ազատ (Պաղտիկ) Սիմոնեանի աճիւնները: Յուշակոթողի երկու կողմերու պատերուն մէջ գետեղուած արոյրի վրայ, գնկագրուած են Իրաքահայ նահատակներուն անունները՝ թիւով 117 (105 նահատակ՝ 1980-1988 թթ. Իրաք-Իրան պատերազմի ընթացքին, 12 նահատակ՝ 1991 թուականի Պարսից Օոցի երկրորդ պատերազմին):

Հարկ է նշել, որ այս եկեղեցւոյ կառոյցը քաղաքապետարանի կողմէն դասուած է Իրաքի նշանաւոր, տեսարժան և վեհաշուք շէնքերու շարքին, որ հայկական ճարտարապետութեան հոյակապ նմոյշ մըն է:

Իրաքահայ գաղութի դարաւոր պատմութեան մէջ ազնիւ և անշահախնդիր գործ կատարողներ եղած են անցեալին և կան ներկայիս, ու անտարակոյս պիտի ըլլան նաեւ հետագային, որքան որ գաղութը դեռ կը շնչէ: Այս նուիրեալներուն ազնիւ ջանքերով և զոհաբերութիւններով միշտ ալ կանգուն մնացած են ազգային դպրոցները, շարունակաբար բարեգարդուած են եկեղեցիները և մշակոյթի տարաբնոյթ հաստատութիւնները: Այս անսակարկ նուիրումի արգասիքն է նաեւ **Ս.Կարապետ վանքը**, (1973 թ.) որ կառուցուած է արդիական և բոլոր յարմարութիւններով օժտուած Ազգային Օերանոցի շրջափակէն ներս, Պաղտատի Նորաշէն հայաշատ քաղամասին մէջ՝ նպատակ ունենալով գոհացնել Օերանոցի բնակիչներուն և շրջանի համայնքի զաւակներուն հոգեւոր պահանջները: Այս վանքին մէջ տեղի կ'ունենան քահանայից պատրաստութեան, ինչպէս նաեւ Հայ եկեղեցասիրաց Կազմի (ՀԵԿ) Ս. Գրոց և Հայ եկեղեցւոյ պատմութեան դասընթացներ: Քահանայից քառամեայ դասընթացները աւարտողներ կրօնական ասպարէզ կը մտնեն:

Պաղտատի Հայ Առաքելական չորրորդ եկեղեցին՝ **Սրբոց Նահատակացը**, կը գտնուի ազգային նոր գերեզմանատան հողաշերտին վրայ, Շաուարա Վէ Ռւմ ճրտըրի շրջանին մէջ: Այս հողաշերտը, 100.000 քմ.մէթր տարածքով, Իրաքի պետութիւնը ձրիաբար տրամադրեր է հայ ազգին, ի շարս Պաղտատի բոլոր քրիստոնեայ 13 համայնքներուն, և կը գտնուի պատմական Պաքուբա քաղաքի ճամբուն, Պաղտատի Ս.Գրիգոր Առաջնորդանիստ եկեղեցիէն 35 քիլոմէթր հեռաւորութեան վրայ: Հիմնարկէքը և օծումը կատարուեցաւ Իրաքահայ թեմի առաջնորդ Աւագ արք.Ասատուրեանի

կողմեն: Օծման արարողութեան (1990 թ.) մասնակցեցաւ նաեւ Շիրակի առաջնորդ Տէր Նարէկ եպս. Շաքարեանը, որ հիւրաբար Պաղտատ կը գտնուէր:

Օծումէն հազիւ եօթ-ութ ամիս անց, 1991 թուականի Յունուար ամսուն, Ամերիկեան և դաշնակից ուժերու թշնամական ռմբակոծումներէն պաշտպանուելու նպատակով Պաղտատի հայութեան ստուար հատուած մը, պատսպարուեցաւ այս եկեղեցւոյ սուրբ յարկին տակ:

Ինչպէս վերը նշեցինք, Պաղտատի հայոց առաջին գերեզմանատունը կը գտնուէր Պապ Էլ Մուա'ազըմ թաղի պարիսպէն դուրս՝ հիմնադրուած՝ 1638-1639 թթ., Սուլթան Մուրադի կողմէն հայերուն յատկացուած հողաշերտին վրայ: Գերեզմանատունը կը գործածուէր մինչեւ 1890-ական թուականները: Պաղտատի պատրիարքական փոխանորդ Արիստակէս եպս. Դերձակեան 14 Յունիս 1899 թուակիր նամակին մէջ՝ ուղղուած հայոց պատրիարք Մաղաքիա Օրմանեանին, կը նշէ. «...1890ական թուականներուն այլեւս այս գերեզմանատան վայրը քրիստոնէական թաղէն հեռու կը գտնուի, հոն երթալու համար տեղւոյն մեծ շուկայէն անցնիլ հարկ ըլլալով մնջեցելոց թաղման համար անպատեհութիւնք կ'երեւէին, մանաւանդ գերեզմանատան կից զօրանոցը, Տիգրիս գետը բարձրանալէն ազատ պահելու համար անոր կիսոյն վրայ թունբեր շինեց զինուորականութիւնը, որոյ վասն անվայել տեսարաններ կը պարզէր յուղարկաւորաց աչաց առջեւ»:<sup>144</sup>

Վերոյիշեալ պատճառներով և այս գերեզմանատունը գրեթէ լեցուն ըլլալուն, 1890-ական թուականներէն կը դադրի գործելէն, և ժամանակ մը մնջեցեալները կը թաղուին Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ բակին մէջ:

Իրաքի երկրորդ հայաշատ կեդրոնը Պասրան է: Այս վաճառահան քաղաքը, հիմնադրուած 638 թ., գտնուելով Իրաքի հարաւը, և Պարսից Օճցի հիւսիսը, կը հանդիսանայ Իրաքի միակ նաւահանգիստը և հանգուցակետն է Հնդկաց Ովկիանոսի նաւային բեռնաթափման և փոխանցման դէպի կարաւանային-ցամաքային ճանապարհները՝ Պաղտատ, Մուսուլ, Հալէպ եւայլն: Իր աշխարհագրական դիրքին շնորհիւ, այստեղ կեդրոնացած է առեւտրային աշխոյժ գործունէութիւն և բնականաբար, ուշադրութիւնը պիտի գրաւէր նաեւ հայ առեւտրականներուն: Այսպիսով, Պասրայի համայնքը կ'աշխուժանայ 17-րդ դարու երկրորդ կէտէն սկսեալ, երբ Նոր Ջուղայէն բաւական թիւով հայ ընտանիքներ հարկադրաբար կը հաստատուին Պասրայի մէջ: «Մեծ մասն գնաց ի Բասրա: Անդ ծաղկեցաւ առ ժամանակ մի վաճառականութիւն Ջուղայեցւոց, որք կալան ընդ Հնդկաստանի զհաղորդակցութիւն տուրեւառութեան»:<sup>145</sup> «Պասրայի հայերուն հնագոյն յիշատակարանը կը կազմէ խաչքար մը՝ 1691 թուականով, որը դժբախտաբար կորսուած է այսօր և կը հանդիսանայ այս քաղաքի հայոց հին պատմութեան քանկագին և պատուական փշրանք մը»:<sup>146</sup>

Նոր Ջուղայէն այստեղ հանգրուանած հայ վաճառականները կամ իրենց գործակալները, որոնք ժամանակի ընթացքին Պասրայի մէջ կը կազմեն 800 տունէ բաղկացած բարգաւաճ գաղութ մը, իրենց նախնիներու սովորութեան համաձայն, ձգտած են ունենալ իրենց գոյութեան հիմնաքարը հանդիսացող՝ ազգային ուրոյն եկեղեցին ոչ միայն գոհացում տալու իրենց հոգեւոր պահանջներուն, այլ դիմակայելու սոյն քաղաքին մէջ Կարմեղեան հայրերու ժրջան գործունէութեան: Ժամանակի ընթացքին այստեղ հայերը ունեցած են երեք եկեղեցի: Ս.Աստուածածին, Ս.Ստեփանոս և

<sup>144</sup> Իրաքահայ թեմի..., նշ. աշխ. էջ 200:

<sup>145</sup> Յէր Յովհաննէանց Յ., Պատմութիւն Նոր Ջուղայու, Ա. Հատոր, էջ 186:

<sup>146</sup> Մելրոնեան Վ., նշ. աշխ., էջ 63:

երրորդը՝ եկեղեցի մը, որուն անունը անյայտ է: Երկրորդ և երրորդ եկեղեցիները չկան և ոչ ալ իրենց տեղը յայտնի է այսօր: **Ա.Աստուածածին**<sup>147</sup> եկեղեցին կառուցուած է 1736 թուականին՝ առատածեռն ծախքով Աղա Պետրոս Սեթաղայեանի, որ մեծահարուստ և ականաւոր առետրական էր: 1832 թ. եկեղեցիին կտակուած են մեծ տարածութեամբ արմաւենիներու պարտէզներ և տուներ: 1910 թ. եկեղեցւոյ գաւիթը, օգտագործուած է որպէս մանկապուրակ մը՝ Վարդանանց վարժարան անունով, քսաներկու երկսեռ աշակերտներով, որ կը գոյատեւէ մինչեւ 1912 թ.:

1904 թ. հնադարեայ այս եկեղեցին հիմնայատակ կ'ըլլայ, և տեղւոյն թաղական խորհուրդը կը ձեռնարկէ անոր վերաշինման, Կ.Պոլսոյ պատրիարքութենէն թոյլտուութիւն ստանալէն ետք, քանի որ թեմը, 1848 թ.էն ի վեր, կը գտնուէր սոյն Պատրիարքարանի հովանաւորութեան ներքոյ: Եկեղեցին կը վերակառուցուի Աղա Բարսեղ Օհաննէս Գասպարեանի կողմէ: Այդ առթիւ, 1905 թ. Մարտ ամսուն, Երուսաղէմցի Տ. Սերովբէ վրդ. Սամուէլեան Պաղտատէն Պասրա կուգայ և օծումը կը կատարէ 12 խաչքարերու, որոնք խորհրդանշանն են 12 առաքեալներուն: Վերակառուցումը լրանալէն ետք Սերովբէ վարդապետը կ'օծէ զայն 1907 թ.: Այնուհետեւ քանիցս նորոգութիւններ կատարուած են, մանաւանդ 1931 թուականին, երբ գաղութի մեծ բարերար և յայտնի առետրական-գործարար Սիմոն Ղարիբեան՝ հանրածանօթ իր առատածեռնութեամբ, գնեց եկեղեցւոյ կից քանի մը շէնքեր և նուիրեց ազգին: Նաեւ իր ծախսով, կառուցեց առաջնորդարանի շէնք մը՝ գրասենեակներով, և ընդարձակեց եկեղեցւոյ գաւիթը բարձրադիր պատերով: Ձեւափոխեց նաեւ դպրոցի հին շէնքը, արդիական բնակա-

րանի մը բոլոր յարմարութիւններով՝ քահանայի բնակարան գործածելու համար:<sup>148</sup>

2003 թուականի դէպքերէն ետք, եկեղեցին շատ լուրջ կերպով կը վնասուի: Սակայն Իրաքի Ինքնավար Քիւրտիստանի Ֆինանսներու նախարար Սարգիս Աղաջանի նիւթական օժանդակութեամբ, կարելի կ'ըլլայ վերանորոգել զայն:

Պասրայի այս հնադարեայ եկեղեցին 1905 թ. ունէր եօթը ձեռագիրներ, Փոքր Մաշտոց՝ գրութեան տեղը և թուականը անծանօթ, Յայսմաւուրք՝ կենթադրուի, որ գրուած է 15-րդ դարուն, Գանձարան՝ 1472 թ., Յայսմաւուրք՝ գրուած էսիզան, 1602 թ., Աւետարան՝ գրուած Սուրաթի մէջ 1662 թ., Աւետարան՝ գրուած նոյնպէս Սուրաթի մէջ 1662 թ., Շարական՝ 1693 թ., Գիրք Պատարագաց Կարգաւ Ըստ Ցուցման Տօնացոյցի Յայոց, Սկսեալի Յաւագ Տօնից գրուած 19-րդ դարուն:<sup>149</sup> Եկեղեցւոյ շրջափակին մէջ կը գտնուէր նաեւ նախապատրաստական վարժարանը, որ կը մատակարարուէր եկեղեցապատկան անշարժ կալուածներու, արմաւի պարտէզներու և այլ հասոյթներով, մանապէս ազգային բարերարներու նուիրատուութիւններով:

Ինչպէս վերը նշեցինք, թէ Իրաքի թեմը համարուած է «տէրունի» այնուամենայնիւ, 1969-1970 թթ. Անթիլիասի միաբանութենէն Պասրա կ'առաքուի երիտասարդ, ձեռներեց, խանդավառ հոգեւորական մը, յանձին Տ.Սեպուհ վրդ. Սարգիսեանի<sup>150</sup> վարելու հա-

<sup>148</sup> Իրաքահայ Թեմի..., նշ. աշխ., էջ 121:

<sup>149</sup> Սամուէլեան Սերովբէ, Պասրայի Ա.Աստուածածին եկեղեցւոյ ձեռագրերը, «Լոյս» շաբաթաթերթ, (Կրօնական, Գրական, Բանասիրական, Քաղաքական) Նոր Շրջան, ժող տարի, թիւ 26, 25 Յունիս, 1905:

<sup>150</sup> Տ. Սեպուհ արք. Սարգիսեան (այն ժամանակ՝ դեռեւս վարդապետ), իր քառամեայ գործունէութեան շրջանին հանդիսացաւ Պասրահայ համայնքի ազգային, կրօնական և հասարակական կեանքին աշխուժութիւն և նոր կեանք պարգեւող խթանիչ ուժը: Ան, Ամենայն Յայոց Յայրապետ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի յատուկ թոյլտուութեամբ, Անթիլիասի միաբանութենէն Պասրա եկաւ, և հա-

<sup>147</sup> Պատկերը տես Յանելուածներու բաժին:

մար համայնքի կրօնական, եկեղեցական և կրթական գործերը: Իր հոգեւոր հովուութեան շրջանին և Իրաքահայ ժողովուրդի սրտաբուխ նուիրատուութեամբ, Պասրայի հայոց գերեզմանատան մէջ, 1973 թ. կառուցուեցաւ **Ս. Յովհաննէս Կարապետ**<sup>151</sup> մատուռը: Իսկ մատուռ կամ եկեղեցի ունենալը, յատկապէս օտարութեան մէջ, կը նշանակէ ունենալ անառիկ բերդ մը եւս ազգակործան հողմերուն դէմ, քանզի դարեր շարունակ մեր եկեղեցիները եղած են ոչ միայն մեր ժողովուրդի համար աղօթատեղիներ, այլեւ դարձած են ազգապահպանման հրաշագործ ազդակներ և հոգեկան գանձերու շտեմարաններ: Հայ առաքելական եկեղեցին, իր ստեղծման օրէն մշտապէս զրահած է հայ ոգին հաւատքով և վաղուան հանդէպ լաւատեսութեամբ:

Յիշատակութեան արժանի է, որ երբ Ս.Աստուածածին եկեղեցւոյ նորոգութիւնները կ'ընթանային, այս մատրան մէջ կը կատարուէր տօնական պաշտամունքի արարողութիւնները:

Մուսուլի **Ս.Էջմիածին** եկեղեցին կառուցուած է 1857 թուականին, իրաքահայ թեմի առաջնորդ Տ.Մեսրոպ ծ.վրդ. Կոստանդնուպոլսեցիի ջանքերով, Պաղտատի Ա. Երրորդութիւն եկեղեցւոյ շինարարութեան համար հանգանակուած գումարի մնացածով և Մուսուլի բարեսէր ազգայիններու նուիրատուութիւններով: Կանգուն մնացած է մէկ դար. սակայն 1960-ական թուականներուն այլևս ներկայանալի ըլլալէ դադարած էր: Ուստի, Պաղտատի Ազգա-

---

կառակ իր շատ երիտասարդ տարիքին, մեծ ձեռնհասութեամբ վարեց համայնքի ոչ միայն եկեղեցական, այլ կրթական ու մշակութային կեանքը: Անենակարելորդ, մեր կարծիքով, իր անսահման սէրն ու նուիրածութիւնն էր դէպի իր ժողովուրդը: Այդ իսկ պատճառով սիրուեցաւ և յարգուեցաւ բոլորէն անխտիր, հայ թէ օտար: Փնտռուած և սիրուած էր տեղւոյն արաբ մտաւորականներէն: Իր բոլորանուէր անկեղծ գործունէութեան և անմիջականութեան շնորհիւ, կարողացաւ երիտասարդ սերունդին ներարկել ազգային ինքնագիտակցութեան հպարտութիւն և զօրացնել հոգեկան կապը իր Մայր եկեղեցիին: Սրբազանը այժմ Թեհրանի առաջնորդն է:

<sup>151</sup> «Ափիւռք» շաբաթաթերթ, Պէյրութ, 26-08-1973, էջ 7-8:

յին Կեդրոնական իշխանութեան օժանդակութեամբ և տեղական ժողովուրդի հանգանակութեամբ, նոյն տեղը աւելի ընդարձակ եկեղեցի մը կը կառուցուի 1968 թուականին և դարձեալ կ'անուանակոչուի Ս.Էջմիածին: Կը մնայ կանգուն մինչեւ 2002 թուական: Այնուամենայնիւ, քաղաքը աստիճանաբար ընդարձակուելով, երբեմնի այս հայաշատ թաղամասը, ուր կառուցուած էր Ս.Էջմիածին եկեղեցին, հայ բնակչութեան թիւը կը նօսրանայ և անհրաժեշտ կ'ըլլայ աւելի հայաշատ վայրի մը մէջ նոր եկեղեցի կառուցել: Այս ուղղութեամբ 1993 թուականին Ազգային Կեդրոնական Իշխանութեան կողմէ կատարուած դիմումին պետութիւնը կ'ընդառաջէ և 3022 ք.մ տարածութեամբ հողամաս մը ձեռք կը բերուի Տիգրիսի ձախակողմեան՝ արեւելեան ափին, որուն փոխարժէքը կը վճարուի Մուսուլահայ ազգայինի մը կողմէն: Հայկական ճարտարապետական ոճով յատակագիծը կը պատրաստուի, և հիմնարկէքը կը կատարուի 26 Ապրիլ 2001 թուականին, ձեռամբ Իրաքահայ թեմի առաջնորդ՝ Սրբազան հօր և մասնակցութեամբ Ազգ. Կեդրոնական վարչութեան ներկայացուցիչներու, դաւանակից Օրթոդոքս համայնքապետի և հաւատացեալ ժողովուրդի խումներամ բազմութեան: Շինարարութիւնը բարեյաջող կերպով կ'աւարտուի, սակայն, վրայ կը հասնին 2003 թուականի չարաբաստիկ դէպքերը: Օծումէն և անուանակոչումէն առաջ, եկեղեցին կ'ակնանապատուի և կը պայթեցուի ծայրայեղականներու կողմէն:<sup>152</sup>

**Քերթուկի** մէջ մինչեւ 1932 թուականը եկեղեցիի շէնք մը գոյութիւն չուներ: Առաջին հողակերտ աղօթատեղին՝ կառուցուած է 1932 թուականին: Այնուհետեւ նոր եկեղեցիի մը հիմնարկէքը կը կատարուի 1952 թուականին և կ'անուանակոչուի Ս.Աստուածածին: Հիմնական նորոգութիւններ կը կատարուին 1997-1998 թթ.: Թէև հայ բնակչութեան թիւը զգալի կերպով նուազած է, այնուա-

---

<sup>152</sup> Իրաքահայ Թեմի....., մշ. աշխ., էջ 105-107:

մենայնիւ, Քերքուկի թաղական խորհուրդի դիմումին Գալուստ Կիւլայէնկեանի գրասենեակը կ'ընդառաջէ և հողամաս մը ձեռք կը բերուի 1962 թուականին, որուն վրայ կը կառուցուի դպրոց, քահանայի բնակարան, նաեւ համայնքի համար սրահ մը՝ բեմով ու մարզական ակումբով: Հողաշերտ մըն ալ՝ ապագային կառուցուելիք եկեղեցւոյ համար:<sup>153</sup>

Ներկայիս, ինքնավար Քիրտիստանի հիւսիսային կողմը գտնուող **Ջախօ**ի մէջ **Ս. Աստուածածին** եկեղեցին կառուցուած է 1932 թուականին, այնուհետեւ կը վերաշինուի աւելի ընդարձակ և հիմնական կառոյցով: Վերաշինութեան կ'օժանդակեն Պաղտատի Ազգային Կեդր. Վարչութիւնը և Գալուստ Կիւլայէնկեան հաստատութիւնը: Օծումը կը կատարուի 1969 թուականին:

Առաջնորդարանի 1970 թուականի Հաղորդագրութեան մէջ կը կարդանք. «...Թէեւ պարագաներու բերմամբ, անոնցմէ շատերը կորսնցուցած են մեր ոսկեղինիկ լեզուն, բայց և այնպէս, տակաւին թարմ և ամուր կը մնայ հայ ժողովուրդի հաւատքը՝ հանդէպ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցւոյ, իրենց հոգիներէն ներս: Խուռներամ բազմութեան մը ներկայութեան, տեղի ունեցաւ հոգեպարար օծման արարողութիւնը: Պահը չափազանց յուզիչ էր ի տես հայ մամիկներուն և պապիկներուն յորդառատ արցունքներուն: Արդեօ՞ք այդ սրբազան պահուն, անոնք հոգեպէս չհաղորդուեցան Մշոյ Սուրբ Կարապետի հետ...»:

Այժմու Ջախօս ունի 183 ընտանիք բնակչութիւն:

**Աւզրուկ**՝ Ջախոյէն 35 քմ հեռաւորութեան գիւղ մըն է, Ջախօ-Մուսուլ ճամբուն վրայ: Այս գիւղը նոր է, հիմնադրուած՝ 1915 թուականէն ետք, ունի իր եկեղեցին՝ **Ս. Վարդանանցը**: Լեւոն Շահոյեան Աւզրուկ հայաբնակ գիւղին, 1969 թուականին տուած այցելութեան մասին, ունի հետեւեալ գրառումը. «...Ջախոյէն դէպի Մուսուլ դարձի

<sup>153</sup> Նոյն էջ 81-82:

ճանապարհին, ահա նաեւ մի անշուք գիւղակ՝ **Աւզրուկ**, զուտ հայաբնակ, մաքուր... բոլորն ալ քրտախօս: Կաւէ խղճուկ խրճիթներ, ցրուած տափարակ բլուրներու կողքին, շրջապատուած հացահատիկի ընդարձակ դաշտերով: 30 հայ ընտանիքներ, երկրագործ և խաշնարած, նահապետական բարքերով...»:<sup>154</sup>

Այս գիւղի հոգեւոր պահանջները բաւարարելու համար, Առաջնորդարանը իր միջնորդութեամբ, կարողացաւ բարեսէր հաստատութեան մը յանձնառութիւնը ապահովել գիւղին մէջ եկեղեցի և քահանայի բնակարանի մը կառուցման:

2000 թուականին եկեղեցւոյ հիմնարկէքը կը կատարուի և մէկ տարի անց՝ Ապրիլ 29-ին, օծումը և անուանակոչումը ձեռամբ Իրաքի Թեմի առաջնորդ Գերշ. Տ.Աւագ արք. Ասատուրեանի:

Ներկայիս Աւզրուկ գիւղը ունի 80 տուն՝ զուտ հայ բնակչութեամբ:

Նահր Օմարի վրանաւանի ժողովուրդի ցրուումէն ետք, վասպուրականցի գաղթականները, մեծաւ մասամբ երկրագործներ, ինչպէս վերը նշեցինք, կը փոխադրուին Իրաքի հիւսիսային շրջանը, և 1929 թ. կը հիմնադրեն **Հաւրեգ**<sup>155</sup> և մի քանի յարակից գիւղեր՝ Վարի Պասիտքէ, Սմայէլ Ավա և Քլէպնա՝ զուտ հայ բնակչութեամբ, ուր կլիման աւելի բարենպաստ էր հողագործութեան համար: Տարին հազիւ բոլորած՝ այս գիւղը արդէն ունէր եկեղեցի, իր մնայուն քահանայով, դպրոց և գրադարան և երբեմնի բազմաշարձար, տարագիր ժողովուրդը, գոյատեւելու իր անսահման ցանկութեամբ, կը հասնի բաւական բարեկեցիկ վիճակի մը, որմէ խրախուսուելով՝ երկրի միւս հայաշատ շրջաններէն, նոր ընտանիքներ կու գան և կը հաստատուին այստեղ՝ ստանալով բնակարան կառուցե-

<sup>154</sup> Շահոյեան Լ., Երբ Հրաշքները Կային, Պէյրութ, 1973, էջ 138:

<sup>155</sup> Հաւրեգ գիւղը հայ ժողովուրդի նորագոյն պատմութեան մէջ, հայրենիքէն դուրս առաջին զուտ հայաբնակ գիւղն է: Նորած եկեղեցւոյ նկարը յաւելուածներու բաժին:

լու համար տարածք և մշակելի հողեր:<sup>156</sup> Ժամանակի ընթացքին վերոնշեալ գիւղերու բնակչութեան թիւը կը բազմապատկուի՝ հասնելով մինչեւ 450-500 տունի 2450 անձերով:<sup>157</sup> Գիւղապետն էր Լեւոն Շաղոյեանը, որ կը վայելէր և՛ ժողովուրդի և՛ կառավարութեան, համակրանքն ու յարգանքը:

Այնուամենայնիւ, այս հանգիստ կեանքը վիճակուած չէր շարունակական բնոյթ ունենալու, քանզի 1930-ականներուն վերջերը կը սկսի վերոնշեալ գիւղերու անկման շրջանը, որուն գլխաւոր պատճառն էր զանազան միջատներուն՝ բերքին հասցուցած անդառնալի վնասները: Բնակիչները հարկադրուած կը հեռանան գիւղերէն՝ քաղաքներուն մէջ իրենց ապրուստը հոգալու: 1943 թուականին եկեղեցին և դպրոցը փլած էին և անոնց ատաղձը գործածուած այլ նպատակներու:

Հարեգը զուտ հայաբնակ գիւղը, որ 1974 թուականին տարբեր պատճառներով, բոլորովին դատարկուած էր իր բնակիչներէն, 2003 թուականի իրադարձութիւններէն ետք, կրկին կը վերակենդանանայ՝ այնտեղ տեղափոխուած իր նախկին բնակիչներուն ժառանգներով: Այժմ գիւղը ունի նորակառոյց յարմարաւետ բնակարաններ, եկեղեցի և հարիւրէ աւելի ընտանիքէ բաղկացած բնակչութիւն: Եկեղեցւոյ օծումն ու անուանակոչումը տեղի ունեցաւ 2015 թ. ամբարը և կոչուեցաւ Ս.Սարգիս:

Իրաքի երբեմնի հայաբնակ վայրերէն մշենք հետեւեալները: **Քէյ-Թրի (K3)** բարձրավանդակի վրայ, փշալարերով ցանկապատուած, նաւթամուղ կայարան մըն է, ուր նոյն ցանկապատն մերս որոշ հեռաւորութեան վրայ, նաւթային պատասխանատու ընկերութեան պաշտօնեայ-գործաւորներու բնակավայր կայ:

Երկրորդ Համաշխարհային պատերազմի ընթացքին ու անկէ վերջ, կայարանի բնակչութեան ընդհանուր թիւն էր 400 ընտանիք, որոնցմէ սկզբնական շրջանին՝ 30ը, իսկ ամենաշատ եղած ատենը՝ 70-80ը, հայ ընտանիքներ էին: Որպէսզի հայ մանուկները չզրկուին մայրենիի դասաւանդումէն, երկու հայ պաշտօնեաներ՝ անձնուիրաբար և առանց վճարումի ակնկալիքով, ամառնային արձակուրդի ժամանակ, յանձն առած էին այդ պարտականութիւնը: Կայարանը ուներ Հայ Կարօտելոց Խնամակալութեան մասնաճիւղ, որուն անդամակցած էին տեղւոյն երկսեռ հայութեան մեծագոյն տոկոսը: Ս.Օնուդի և Ս. Զատկուան տօներու առթիւ Քէրքուկի կամ Սուսուլի հոգեւոր հովիւը կ'այցելէր՝ կատարելու եկեղեցական պարտականութիւնները:

Յետ նաւթի պետականացման 1972 թ. կայարանի հայ աշխատաւորներու թիւը աստիճանաբար նուազեցաւ: 2000 թուականին ռել հայ գոյութիւն չուներ այստեղ:<sup>158</sup>

**Խանակին**՝ որ քրտական գիւղաքաղաք մըն է, Պաղտատն 160 քմ. հիւսիս արեւելք, պարսկական սահմանին մօտ, ուր «KOC» նաւթային ընկերութիւնը կը հաստատուի 1926 թուականին, 30 տուն հայեր՝ մօտաւորապէս 160 անձ, կը փոխադրուին որպէս պաշտօնեաներ և որակաւոր արհեստաւորներ: Այս շրջանի հայերը ժամանակի ընթացքին՝ կը կազմակերպուին, կ'ունենան դպրոց մը, և շուրջ 15 փոքրիկներ հայերէն գրել-կարդալ կը սորվին: Իսկ հոգեւոր կարիքներուն համար, տօնական առիթներուն Պաղտատն քահանայ մը կ'այցելէր:

Իբրեւ համայնքային կազմակերպութիւն, Հայ Կարօտելոց Խնամակալութիւնը մասնաճիւղ մը կ'ունենայ 40 անդամուհիներով և սովորական եռանդուն գործունէութեամբ:

<sup>156</sup> Հայ Կեանքը Հարեգի մէջ՝ Տեղեկագիր 13 Մարտ 1934, Լեւոն Շաղոյեանի արխիւ:

<sup>157</sup> Վարդանեան Գ., մշ. աշխ., էջ 162-163:

<sup>158</sup> «Կանթեղ», Առաջնորդարան Իրաքի Հայոց Պաշտօնաթերթ, Պաղտատ, թիւ 3, 2006, էջ 49:

Այստեղ դարձեալ՝ նաւթի ընկերութեան ազգայնացումով 1972 թուականին, աստիճանաբար կը նուազի հայ պաշտօնէութեան քիւլը, և 35 տարիներ ետք, Խանակինը բոլորվին կը պարպուի հայութենէ:<sup>159</sup>

Տարբեր էր **Հապպանիյէ** կոչուած բնակավայրի բնոյթը: Այստեղ (Պաղտատէն 80 քմ. հիւսիս արեւմուտք), Եփրատ գետի եզերքին, անգլիացիներու կողմէն 1937 թուականին կառուցուած օդակայան և զօրանոցներու կեդրոն մըն էր: Ժամանակի ընթացքին, միշտ փնտռուած հայ որակաւոր արհեստաւորներու և պաշտօնէաներու մեծ թիւ մը կը հաստատուի այստեղ, որուն առաւելագոյնը կը հասնի մօտաւորապէս 1000-ի: Ապա, աստիճանաբար, քանի մը տարիէ նուազելով, այս թիւին կէսը միայն կը մնայ Հապպանիյէ քանի մը տասնամեակներ:

Հապպանիյէի համայնքը, մեծ մասով Սուլտուզէն և Վասպուրականէն գաղթած հայեր էին, չնչին տոկոս մըն ալ՝ Կիլիկիայէն: Իր ծաղկուն ժամանակաշրջանին, կառուցած են դպրոց մը (1949 թ.) և յանձնած պետութեան: Այս դպրոցին մէջ 80 հայ աշակերտներ կը ստանային հայեցի դաստիարակութիւն՝ հայոց լեզու և կրօն: Այստեղ դասաւանդած է իրաքցի բազմավաստակ ուսուցիչ, Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանի ընթացաւարտ, Վասպուրականէն գաղթած Պրն. Պաղտասար Յարութիւնեանը:

Հապպանիյէի եկեղեցին կը պատկանէր հայոց և ասորիներուն հաւասարապէս, որոնք տասնամեակներ շարունակ համերաշխօրէն կ'ապրէին կողք-կողքի: Մնայուն հոգեւոր հովիւ չունենալուն պատճառով Պաղտատէն քահանայ մը կ'այցելէր տօնական օրերուն և ուրիշ մասնաւոր ծիսակատարութիւններ կատարելու: 1990-ական թուականներուն Հապպանիյէի մօտ, Խաւըղիէ կոչուած գիւղին մէջ, միայն չորս հայ ընտանիքներ կ'ապրէին:

<sup>159</sup> Նոյն, էջ 51

2003 թուականի դէպքերէն ետք, Իրաքի Ինքնավար Քիւրտիստանի մէջ տիրող յարաբերական ապահովութեան հետեւանքով, նոր հայ համայնքներ կազմաւորուած են Էրբիլ՝ 100 տուն, Պիօք և Սումէյլ՝ 56 տուն բնակչութեամբ: 2008 թուականին ամբողջացաւ Պիօքի եկեղեցւոյ կառուցումը, օծումը կատարուեցաւ նոյն տարուայ Սեպտ. 5-ին և նորած եկեղեցին անուանակոչուեցաւ «**Ս.Ներսէս Շնորհալի**»:<sup>160</sup>

Յիշատակութեան արժանի է, որ 2006 թուականի Յունիսի 30-ին, Պաղտատի մէջ հիմնուեցաւ կազմակերպութիւն մը՝ «Պաղտատի Քրիստոնեայ Համայնքապետերու Խորհուրդ» անուան տակ, որ կը բաղկանայ պետութեան կողմէ պաշտօնապէս ճանչցուած 14 քրիստոնեայ համայնքներու կրօնապետերէն: Խորհուրդին նպատակն է ուսումնասիրել սոյն եկեղեցիներու և հաւատացեալներու հետ կապուած բոլոր հարցերը, անոնց բարգաւաճութեան և բարելաւման համար միջոցներ հայթայթել, ինչպէս նաեւ զօրացնել հաւատքը քրիստոնեայ հաւատացեալներուն հոգիներէն ներս, յատկապէս երկրի մէջ տիրող անապահով և դժմոյս պայմաններու գերակայութեան հետեւանքով ստեղծուած անկանխատեսելի իրադարձութիւններուն և առիթէն օգտուող բազմապիսի աղանդաւորականներու ժրաջան գործունէութիւններէն պաշտպանուելու նպատակով: Նոյն օրը միաձայնութեամբ ընտրուեցաւ Իրաքահայ Թեմի առաջնորդ՝ Գեր. Տ.Աւագ արք. Ասատուրեանը, որպէս վերոյիշեալ Խորհուրդի քարտուղար, որ կը վայելէ և՛ պետական շրջանակներու և՛ քրիստոնէական բոլոր յարանուանութեանց անվերապահ վստահութիւնը և համակրանքը:<sup>161</sup>

<sup>160</sup> Պատկերը Յաւելուածներու բաժին:

<sup>161</sup> Իրաքի բազմամեայ և արդիւնաշատ առաջնորդ Գեր. Տ.Աւագ արք. Ասատուրեանը ծնած է Պաղտատ, 1942 թ., աւագանի անունով՝ Վազգէն: Նախնական կրթութիւնը ստացած է Պաղտատի Թաղմանչաց Ազգային Միացեալ վարժարանին մէջ, երկրորդականը՝ Ամերիկեան ճիզուիթ՝ հայրերու մօտ: Հետեւած է Ալ-Հիքմէ

### բ- Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդարանին առընթեր մարմիններ

Հայ Առաքելական Եկեղեցւոյ առաջնորդարանի բազմապիսի գործունէութիւնները լիարժէք կատարելու նպատակով Ազգային Կեդրոնական Վարչութիւնը կեանքի կոչած է զանազան բնոյթի մարմիններ, որոնք կը գործեն Առաջնորդարանի հովանաւորութեան ներքոյ:

1- Հայ Ազգային Աղքատախնամ Մարմին	1922-1926
Տիկնանց Աղքատախնամ Մարմին	1926-1990
Չքաւորաց Օժանդակ Մարմին	1990-ցայսօր

Վերոյիշեալները նոյն Մարմնին տրուած զանազան անուններն են, ներկայիս կը կոչուի՝ **Չքաւորաց Օժանդակ Մարմին (ՉՕՄ)**, որ կը գործէ մինչեւ այսօր:

Առաջնորդարանի արխիւներուն մէջ, Հայ Ազգային Աղքատախնամ Մարմնի մը գոյութեան մասին կը կարդանք օրուայ Քաղաքական ժողովի նիստին մէջ հետեւեալ արձանագրութիւնը. «...Կար-

ամերիկեան համալսարանի ճարտարագիտութեան ճիւղին: 1970 թ. վկայուած է պսակաւոր արուեստից տիտղոսով Իլինոյի Քենեդիքթըն քոլեճէն: 1972 թ. փիլիսոփայութեան մագիստրոս տիտղոսը Նիւ Օրլինզի Թուլէյն համալսարանէն, 1976 թ. Աստուածաբանութեան մագիստրոս Նիւ Եորքի Ս. Վլադիմիր ճեմարանէն որպէս Ս.Ներսէս ճեմարանի ուսանող, 1998 թ. Իմաստասիրութեան տօքթորայի աստիճան Չռովմի Ա.Խսաջ հայրապետական համալսարանէն, 1975 թ. ձեռնադրուած է սարկաւազ Նիւ Եորքի Ս.Վարդան մայր տաճարի մէջ ձեռամբ գեր. Տ.Թորգոմ արք. Մանուկեանի, 1977 թ. քահանայական ձեռնադրութիւն և օծում Ա.Էջմիածնի մէջ ձեռամբ՝ գեր. Տր Յուսիկ արք. Սանթրութեանի: 1977 թ.՝ հոգեւոր հովիւ Նիւ ճըրզիի Էլպրոն քաղաքի Ա. Աստուածածին եկեղեցւոյ, 1978 թ.՝ վարդապետական աստիճան Ն.Ա.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. կաթողիկոսի Պաղտատ այցելութեան ընթացքին ձեռամբ գեր. Տ.Պսակ արք. Թումայեանի, 1979 թ. կը նշանակուի առաջնորդական տեղապահ Իրաքի հայոց, 1980 թ. Օշականի Ա.Մեսրոպ եկեղեցիի մէջ կը ստանայ ծայրագոյն վարդապետութեան աստիճան՝ պաշտպանելով «Փրկագործութեան պատմութեան ընթացքը» թեմայով թեզը, 1982 թ. Մայր Աթոռ Ս.Էջմիածնի մէջ օծուած է եպիսկոպոս ձեռամբ երջանկայիշատակ Ն.Ա.Օ.Տ. Վազգէն Ա. կաթողիկոսի: 1980 թ. կ'ընտրուի Իրաքի հայոց Թեմի առաջնորդ չորս տարուայ շրջանի համար, 2012 թ. 9րդ անգամ ըլլալով կը վերընտրուի և կը շարունակէ ցայսօր:

ղացուեցաւ տեղւոյս Հայ Ազգային Աղքատախնամ Մարմնի թիւ Ա.Ս.3.1 և Փետրուար 1922 թուակիր նամակը և միաձայնութեամբ որոշուեցաւ հաստատել նախորդ Քաղաքական ժողովոյ կողմէ ընտրուած Աղքատախնամ Մարմինը իր պաշտօնին մէջ, և հաղորդել իրենց՝ Աղքատախնամի պաշտօնավարութեան շրջանն է մէկ տարի և անդամները վերընտրելի են...»<sup>162</sup>: Ակնյայտ է արդէն, որ սոյն Մարմինը գոյութիւն ուներ վերոյիշեալ թուականէն դեռեւս մէկ տարի առաջ, և իր բարեսիրական գործունէութիւնը կը շարունակէր ի բարօրութիւն Միջագետքի գաղթականներուն մէջ գտնուող տարագիր ժողովուրդին: Այնուհետեւ, նոյն ազգանուէր գործունէութիւնը կը շարունակուի, թէև արդէն «Տիկնանց Աղքատախնամ Մարմին» (1926-էն մինչեւ 1990), և 1990 թուականէն ցայսօր «Չքաւորաց Օժանդակ Մարմին» անուան տակ: ՉՕՄ-ի անդամուհիները մեծագոյն անձնուիրութեամբ կը շարունակեն տասնամեակներ առաջ սկսուած և ջանասիրաբար իրենց փոխանցուած ազգային գործունէութիւնները: Նպաստընկալներու վիճակին աւելի մօտէն ծանօթանալու համար այս Մարմնի անդամուհիները առանձնայատուկ հոգատարութեամբ, պարբերաբար կ'այցելեն միւթապէս անապահով ընտանիքներուն, ի մասնաւորի՝ բազմազաւակ այրի կանանց, հիւանդներուն և բոլոր անօգնական հայերուն, տեղւոյն վրայ ծանօթանալու իրենց ապրելակերպին, կարիքներուն և ըստ այնմ օգնութիւն ցուցաբերելու մտօք: ՉՕՄ ի գործունէութիւնը ալ աւելի շեշտուեցաւ 1990-էն ի վեր, երկիրը շրջափակման մէջ գտնուելուն պատճառաւ, որու հետեւանքով ժողովուրդի տնտեսական պայմանները շեշտակիօրէն վատթարացան:

Եկամուտի գլխաւոր աղբիւրը կը հանդիսանայ, ինչպէս միշտ, նուիրատուութիւններէ և բազմապիսի ձեռնարկներէ գոյացող գումարները: 1957 թուականէն մինչեւ 1980 թուականը նշանակալի

<sup>162</sup> Իրաքահայ Թեմի....., նշ. աշխ., էջ 192:

նիթական օժանդակութիւն ցուցաբերած է Գալուստ Կիւլպէնկեան հաստատութիւնը: Նման օժանդակութիւն առաքած է նաեւ ճինիշեան Յիշատակի Ձեռնարկը 1969-1984 թուականներուն:

Չքաւորացը, իր անդամուհիներու անշահախնդիր գործունէութեամբ, յատկապէս Իրաքի ներկայ քաղաքական-տնտեսական դժուարին պայմաններուն տակ, արժանացած է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Գիր Օրհնութեան և Գնահատանքին: Կոնդակի թուականն է 01 Օգոստոս 2003-ի տոմարական թուին Հայոց ՌՆԾԳ և համար 364: Ս.Կոնդակի յանձնումը տեղի ունեցաւ Կիրակի 23 Նոյեմբեր 2003-ին, Ազգային Ծերանոցի սրահին մէջ: Ներկայ էին քահանայից դասը, դպրաց և սարկաւազաց դասերու, միութեանական վարչութեանց, առաջնորդարանին առընթեր յանձնախումբերու, եկեղեցապան մարմնի, առաջնորդարանի պաշտօնեաներու ներկայացուցիչներ: Ս.Կոնդակի յոտնկայս ընթերցումէն ետք, Առաջնորդ Սրբազան Հայրը տուաւ օրուան պատշաճ իր պատգամը և Կոնդակը յանձնուեցաւ Չքաւորաց Օժանդակ Մարմնի ատենապետ՝ Տիկ. Կլատիս Պողոսեանին:<sup>163</sup>

- |                                    |                 |
|------------------------------------|-----------------|
| 2- Եկեղեցապան Մարմին               | 1935էն - ցայսօր |
| 3- Եկեղեցւոյ Բարեգարդման Մարմին    | 1960 - 1979     |
| 4- Եկեղեցւոյ Կարգապահութեան Մարմին | 1960 - 1962     |

Եկեղեցապան Մարմնի աշխատանքը կ'ընդգրկէ Հայ Առաքելական համայնքին պատկանող Պաղտատի եկեղեցիներու պայծառացումն ու բարեգարդումը: Մասնաւոր յիշատակութեան արժանի է Մէլդանի Ս. Աստուածածին եկեղեցին այցելող հաւատացեալներու սրտաբուխ նուիրատուութիւններէն գոյացող զանձանակի պարունակութեան խղճնտօրէն արձանագրումը և տնօրինումը ըստ հրահանգի: Այս Մարմնի անդամները, իրենց բազմամեայ և անձնուէր գործունէութեանց առ ի գնահատանք, Առաջնորդ Սրբա-

զան Հօր առաջարկով, նոյնպէս արժանացան Ամենայն Հայոց Հայրապետի Օրհնութեան Գիրին, որու յանձնումը տեղի ունեցաւ Նոյեմբեր 21, 2004 թուականին:

5- **Հայ Եկեղեցասիրաց Կազմ (ՅԵԿ)**, հաստատուած է Փետրորուար 11, 1986 թուականին, հիմնական նպատակ ունենալով՝ նոր սերունդին մէջ զարգացնել հոգեւոր և ազգային դաստիարակութիւնը, Մայրենի եկեղեցւոյ դաւանանքը, ծանօթացնել հայոց պատմութիւնը, ինչպէս նաեւ քննարկել մեր ժողովուրդն ու հայրենիքը յուզող շատ մը ընթացիկ հարցեր դասախօսութիւններու միջոցաւ, որոնք տեղի կ'ունենան Ս.Կարապետ վանք-եկեղեցւոյ մէջ: ՅԵԿ-ը կը պայքարի նաեւ տարատեսակ գայթակղութեանց դէմ, ի մասնաւորի հոգեւորութեամբ և մարդորութեամբ զբաղուող աղանդաւորներուն դէմ, որոնց առերեւոյթ նպատակն է «քրիստոնեան կրկին քրիստոնեայ դարձնելու» հակաքրիստոնէական դատապարտելի գործը՝ շահագործելով երկիրի մէջ տիրող տնտեսական դժուար պայմանները:

ՅԵԿ-ի դասատուներէն էին Տէր Վահան արեղայ Յովհաննէսեանը (այժմ՝ եպիսկոպոս ֆրանսահայոց առաջնորդ), Հայր Մակար Յովհաննէսեանը, ինչպէս նաեւ Հրաչ արեղայ Յակոբեանը (այժմ՝ Տէր Տաթև եպս. Յակոբեան, Ռումիմիայի թեմի առաջնորդ):<sup>164</sup>

Պարսից Ծոցի երկրորդ պատերազմի շրջանը (Յունուար 16 - Փետրուար 28, 1991) փորձութեամբ լի շրջան մըն էր Իրաքի ժողովուրդի պատմութեան մէջ: Երկիրը կ'ենթարկուէր ամենադաժան ռմբակոծութեան դաշնակից պետութիւններուն կողմէ: Հակառակ այս պայմաններուն (ելեքտրականութեան և վառելանիւթի չգոյութիւն), ՅԵԿ-ի դասերը շարունակուեցան, դասաւանդութեան ժամերը յառաջացնելով ցերեկուայ ժամերուն:

<sup>163</sup> Իրաքահայ թեմի....., նշ. աշխ., էջ 192:

<sup>164</sup> «Կոչնակ», ՅԵԿ-ի լրատու-գրքոյկ, 18 Յունիս 1993:

Առաջնորդարանի 16 Յունիս 1993 թուակիր գրութեամբ, Ազգային Կեդրոնական Վարչութիւնը որոշեց ՅԵԿ-ը ներառել առաջնորդարանին առընթեր մարմիններէն մին: ՅԵԿ-ը կ'ունենայ իր նշանակովի գործավար մարմինը:

Յունիս 1994 թ.էն սկսեալ նոր դասարաններ բացուեցան փոքրիկներուն, պատանիներուն և երիտասարդներուն համար: 1996 թ. ՅԵԿ-ի Սուրբ Գրոց դասընթացներուն կը հետեւէին շուրջ (110) աշակերտ-աշակերտուհիներ և 70 փոքրիկներ ու պատանիներ, բաժնուած (12) դասարաններու, շաբաթուան տարբեր օրերու ընթացքին: Դասարանները կը կրեն Հայ եկեղեցւոյ սուրբերուն և արժանայիշատակ կաթողիկոսներու անուններ:<sup>165</sup>

Առաջնորդարանին առընթեր միւս մարմիններն են՝

- 6- Կալուածոց Յանձնախումբ
- 7- Բժշկական Յանձնախումբ
- 8- Շինարարական Յանձնախումբ
- 9- Ուսումնական Խորհուրդ
- 10- Կրթական Յանձնախումբ
- 11- Աշակերտներու երթելեկութեան Յանձնախումբ

#### գ.- Իրաքի Հայ Կաթողիկ եկեղեցի<sup>166</sup>

Տարբեր տեղեկութեանց համաձայն՝ ներկայիս աշխարհի մէջ հայ կաթողիկ եկեղեցիի հետեւորդներու թիւը 500-600 հազարի կը հասնի: Ասոնց հոգեւոր պահանջները բաւարարելու համար, տար-

<sup>165</sup> Աշեան Ա. Ս., (ՅԵԿ-ի հիմնադիր երիտասարդներէն), «Կոչնակ», 1997, էջ 25-27:

<sup>166</sup> Հայ Կաթողիկ համայնքի մասին տեղեկութիւնները քաղած ենք մեծաւ մասամբ Տ.Ներսէս վրդ. Սայեղեանի «Իրաքի Հայ Կաթողիկ Համայնքի Պատմութիւն» արաբերէն և Կարօ Գեորգեանի «Ամենուն Տարեգիրք» (Պէյրուք, 1957, էջ 436-441) աշխատութիւններէն: Նաեւ Իրաքի Հայ Կաթողիկ համայնքի երբեմնի առաջնորդ Հայր Անտոն Ադամեանի հետ փոխանակուած ելեքտրոնային նամակագրութեան միջոցաւ:

բեր ժամանակներուն ստեղծուած են համապատասխան թեմեր, որոնցմէ մէկն էր Պաղտատի արքեպիսկոպոսութիւնը:<sup>167</sup>

Իրաքի ոչ մեծ կաթողիկ համայնքը ձեւաւորուած է 17-18րդ դարերուն, երբ կաթողիկ միսիոներները, առաքելական եկեղեցւոյ հայերը դաւանափոխելու մեծ աշխատանք ծաւալած են:<sup>168</sup> Միջագետքի մէջ, Հայ կաթողիկ համայնքի մը գոյութեան մասին, տեղեկութիւն կը ստանանք Փորթուկալացի ճանապարհորդ Բեդրօ Թաքսիերայէն, երբ կը գրէ, թէ 1604 թուականին Պաղտատի մէջ կը գտնուէր տասը տուն հայեր և 80 տուն նեստորականներ, որոնք փախուստ տալով Ջալալիներու սարսափներէն, 16-րդ դարու վերջերը, եկած և ապաստան գտած էին Միջագետքի մէջ:<sup>169</sup> Սակայն կաթողիկ քարոզչական գործունեութիւնը Միջագետքի մէջ կը սկսի Պասրայէն, ուր Եւրոպացի վաճառականներ գաղութ մը ունէին, և 1623 թուականին Կարմեղեան լատին վարդապետներ հաստատուած էին: Վերջիններս, ֆրանսական պաշտպանութեամբ սկսած էին իրենց քարոզչական աշխատանքը և տեղացի քրիստոնեաներէն մաս մը իրենց կողմը շահած էին:<sup>170</sup> Այս ժամանակներէն Իրաքի հայ համայնքներուն մէջ կը սկսին միջդաւանական վէճեր, որոնք, ցաւօք, կը վարկաբեկէին հայերը օտարներուն առջեւ:<sup>171</sup>

Հայ Կաթողիկ համայնքը դժուարին օրեր կ'ունենայ, երբ իրենց կալուածները կը գրաւուին Պաղտատի կուսակալի կողմէն ու տեղը մզկիթ մը կը կառուցուի: Այնուհետեւ, պայմաններու բերումով, կուսակալը կ'արտօնէ քաբուչիներու եկեղեցիին մօտ առաջինէն աւելի

<sup>167</sup> Սիմաւորեան Ա., Նորավանք Գիտակրթական Հայագիտական Կեդրոն, Երեւան, 1.4.2009:

<sup>168</sup> Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը, Երեւան, 2003, էջ 109-111:

<sup>169</sup> صالغيان دير نرسيس البيغادي - تاريخ الارمن الكاثوليك في العراق - بمناسبة مرور مئة عام علي نشوب كنيسة الارمن الكاثوليك في بغداد 1844 - 1944 - بيروت - المطبعة الكاثوليكية 1944 صفحة 4

<sup>170</sup> Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը, էջ 43:

<sup>171</sup> Աթիկեան Յ., Նշ. աշխ., էջ 71-72:

ընդարձակ տուն մը կառուցանել և թոյլ կուտայ շարունակել իրենց քարոզչութիւնը:

Որոշ տուեալներու համաձայն, 18-րդ դարու կեսերուն Պաղտատի մէջ գտնուած են 60-65 կաթոլիկ հայեր: Չունենալով իրենց սեփական եկեղեցին՝ անոնք իրենց հոգեւոր մխիթարութիւնը կը գտնէին՝ յաճախելով Կարմեղեաններու եկեղեցին: Իրենց գոյութիւնը պաշտօնապէս հաստատուեցաւ Կ.Պոլսոյ Բ.Դրան 3 Փետր. 1832 թուականի հրովարտակով: Այդ թուականներուն էր, որ Պաղտատ ժամանեց Տ. Սահակ վրդ. Ստեփանեանը և կազմակերպեց կաթողիկէ համայնքը: Այդ թուականներուն Պաղտատի կաթոլիկ հայերու թիւը հազիւ 140 միաւոր էր: Ունէին համեստ վարժարան մը: Եօթ-ութ տասնամեակներ ետքն էր, որ պիտի ունենային շատ ներկայանալի վարժարան մը: Առաջին աշխարհամարտէն առաջ Իրաք բնակութիւն հաստատած կաթոլիկ հայերու պապերը, այստեղ հաստատուած էին՝ գաղթելով Պոլսէն, Էնկիւրիէն, Սվազէն, Էրզրումէն, Ախալցխայէն, Հալէպէն, Տիարապէրիէն, Մարտինէն, Մարաշէն, Համատանէն եւ այլն: Մեծ եղեռնէն ետք Միջագետք հանգրուանած հայ կաթողիկէ գաղթականներն ալ կուգան ընդհանրապէս նոյն շրջաններէն: Մաս մըն ալ Միջագետք հաստատուելէն ետք ընդունած են կաթողիկէ դաւանանքը:<sup>172</sup>

Առաջին Համաշխարհային Պատերազմին, Տէր Ջօրի արհաւիրքներէն մազապուրծ՝ Սինջար հասած են բազմաթիւ կաթոլիկ հայ գաղթականներ, որոնց մեծամասնութիւնը Մէրտիմէն էին:<sup>173</sup>

<sup>172</sup> Սայեղեան Ն. Տէր, նշ. աշխ., էջ 48:

<sup>173</sup> Աւետիք, (Պաշտօնաթերթ Հայ Կաթողիկէ Պատրիարքութեան), բ. տարի, Մարտ թիւ 1 (13), Պէյրութ 1933, էջ 91: Սինջար – լեռ՝ Մուսուլ նահանգին մէջ, Մուսուլ քաղաքէն 80 քմ. արեւմուտք այժմու Սուրիա-Իրաք սահմանագծին մօտակայքը: Համանուն պարսպապատ քաղաքը կը գտնուի լեռան հարաւային ստորոտը: Բնակիչները մեծ մասամբ եգիպտի են: Սինջարը գլխաւոր կեդրոնն է անոնց, ուր կը մնար նաեւ իրենց հոգեւոր առաջնորդը: Շրջանին մէջ կ'ապրէին նաեւ փոքրաթիւ ասորիներ և արաբներ:

Յեղացի եգիպտիները ապաստան տուած և պատսպարած են զանոնք: Յետ Ջինադադարի 1918 թ. Սինջարի մէջ կային շուրջ 100 ընտանիք, մեծամասնութեամբ հայ կաթոլիկներ և մի քանի հայ առաքելական եկեղեցւոյ պատկանողներ: Իսկ 1933 թ. հայ կաթոլիկներուն թիւը եղած է 70-80 ընտանիք:<sup>174</sup>

Սինջարի Հայ կաթոլիկ համայնքի խնդրանքին ընդառաջելով՝ Նեսիմեան Գերապայծառը եկեղեցւոյ մը շինութեան ծախսը հոգացած է և կառուցուը աւարտած՝ 30 Մարտ 1930 թ., զոր կոչած է Ս. Գևորգ Նահատակ (Մառ Ջրջիս) եկեղեցի:<sup>175</sup> Առաջին ժողովրդապետը եղած է Մելքոն Կարդապետ Թասպագեան: Եկեղեցին կանգուն կը մնար մինչեւ 2000ական թուականները:

Սինջարահայեր 1947 թուականին մեծ փափաք յայտնած են ներգաղթելու Հայրենիք, սակայն այլեւայլ պատճառներով հնարաւոր եղած չէ կեանքի կոչելու այս փափաքը:

1950-ական թուականներուն Իրաքի Հայ Կաթոլիկ համայնքը կը բաղկանար մօտաւորապէս 2000 անձերէ, Պաղտատ՝ 1100, Սինջար՝ 252, Մուսուլ՝ 200, Պասրա՝ 200 և Քէրքուկ՝ 90 անձեր, իսկ մնացեալ 150 հոգին ցրուած են այլեւայլ վայրերու մէջ:<sup>176</sup>

Ժամանակի ընթացքին, Սինջարի հայ բնակչութիւնը տեղափոխուած է Մուսուլ, Իրաքի այլ քաղաքներ և Սուրիա (Կամիշլի): 2000 թ. հազիւ քանի մը տուն հայեր մնացած էին Սինջարի մէջ:

Հիներուն մեծ մասը, կորսնցուցած են մայրենի լեզուն՝ տեղացիներուն հետ միջամուսնութիւններու հետեւանքով, թէեւ կը գիտակցին, թէ իրենց նախահայրերը հայեր եղած են: Առհասարակ բարեկեցիկ են այս համայնքի զաւակները՝ մեծ ու փոքր կալուածատէրեր, առեւտրականներ, դրամատոնային և օտար ընկերութիւն-

<sup>174</sup> Նոյն:

<sup>175</sup> 2016 թ. այս եկեղեցին ականապատուեցաւ և փլատակներու վերածուեցաւ Բլլամական Պետութեան ժայռայեղականներու կողմէն:

<sup>176</sup> Սայեղեան Ն. Տէր, նշ. աշխ., էջ 43:

ներու պաշտօնեաներ, բժիշկներ, ատամնաբոյժներ, արհեստաւորներ և այլն:

Պաղտատի հայ կաթողիկէ համայնքը ունի երեք եկեղեցիներ: **Մայր Վերափոխման** եկեղեցին ամենահինն է՝ Ռաս էլ Կարիա կեդրոնական թաղին մէջ: Կառուցուած է 1844 թուականին - հարիւրամեայ յորելեանը տօնուեցաւ 1944 թուականին և այն տօնակատարութեան է նուիրուած Տ.Ներսէս Սայեղեան վարդապետի արաբերէն աշխատութիւնը՝ «Իրաքի Հայ Կաթոլիկ Համայնքի Պատմութիւնը»: Եկեղեցւոյ կից կը գտնուէր կաթողիկէ արքեպիսկոպոսարանը: Ռաս էլ Կարիա թաղամասի հայ բնակչութեան թուաքանակը նուազելուն, նաեւ եկեղեցին կիսափուլ վիճակի մէջ գտնուելուն, արքեպիսկոպոսարանը Քարրադա թաղ կը փոխադրուի, և եկեղեցին կը խոնարհի: Իբրեւ հայ կաթոլիկ համայնքի «վաքըֆ», տեղւոյն վրայ այժմ կառուցուած են վաճառականական հասութաբեր խանութներ: **Յիսուսի Սուրբ Սիրտ** եկեղեցին կառուցուած է 1937 թուականին և օծումը կատարուած՝ 3 Ապրիլ 1938 թուականին, որ կը գտնուի վերոյիշեալ թաղամասին մէջ: Այս եկեղեցիին հողը գնուած և կառուցումն ու կահաւորումը կատարուած է ազգային բարերարուհի երեք քոյրերու՝ Մինա, Թերեզա և Ռեճինա Անտոնի Գասպարխաններու նուիրատուութեամբ, ի յիշատակ իրենց հանգուցեալ եղբոր՝ Ռափայէլ Գասպարխանի (ծնած՝ Պաղտատ 6 Նոյեմբեր 1862-ին և մեռած 26 Նոյեմբեր 1937-ին): Այս երկու յիշատակութիւնները արծանագրուած են եկեղեցւոյ ճակատին և արտաքին պատին վրայ: Վերանորոգուած է 2000-2002 թուականներուն: Նոյն Քարրադա թաղամասին մէջ Հայ կաթոլիկները ունին երրորդ եկեղեցին, **Նարեկի Տիրամայր** անունով, որ կառուցուած է 2000-2001 թթ.:

Վերոյիշեալ Գասպարխան երեք քոյրերը, իրենց եկեղեցաշինութեան և դպրոցաշինութեան ազգանուէր գործունէութեամբ, կը դասուին Իրաքահայ գաղութի բարերարներուն շարքին: Մեծ

ղած է իրենց աջակցութիւնը հայ կաթողիկէ համայնքի եկեղեցական և կրթական կեանքի վերելքին մէջ: Իրենց առատածեռն նուիրատուութեամբ կառուցուած է Յիսուսի Սուրբ Սիրտ եկեղեցին և Անարատ Յղութեան Քոյրերու աղջկանց վարժարանը Պաղտատի մէջ:

Իրաքահայ կաթոլիկ թեմի հանրայայտ դէմքերէն է Տ.Ներսէս արք. Թայրոյեանը, որ նշանակալի ծառայութիւններ մատուցած է իր թեմին: Ծնած է Մարտին, 1895 թուականին: Քահանայական կոչումը ստացած է 1919 թուականին: Արքեպիսկոպոսական փոխանորդի պաշտօնով հաստատուած է Պաղտատ 1938 թ.: Եպիսկոպոս ձեռնադրուած է 1940 թ. Պէյրութ, Քափուչիներու եկեղեցիին մէջ, կաթողիկոս-պատրիարք՝ Տ. Գրիգոր Պետրոս Կարտինալ Աղաճանեանի կողմէն: Այնուհետեւ, նշանակուած է վիճակաւորատաջնորդ Իրաքի հայ կաթողիկէ համայնքին: Իր հոգեւոր պաշտօնը անձնուիրութեամբ տանելով լաւագոյնս սատարած է իր թեմի յառաջադիմութեան և բարգաւաճման: Իր նախածեռնութեամբ, 1943 թուականին Պաղտատի մէջ կազմակերպուեցաւ Ս. Վարդարանի եղբայրութիւնը, որ գործեց երկար տարիներ իր հովանաւորութեան ներքոյ:<sup>177</sup>

#### դ- Իրաքի Հայ Աւետարանական Եկեղեցի

Թէեւ Իրաքի հայ աւետարանական համայնքը ձեւաւորուած է Պայոց Ցեղասպանութեան հետեւանքով՝ Օսմանեան կայսրութեան այլ վայրերէն աւետարանական հայերուն՝ Իրաք ապաստան գրտնելով, այնուամենայնիւ, Իրաքի մէջ հայ աւետարանականները մեծ թիւ չեն կազմած: Անոնք քանակական առումով զիջած են և կը զիջին և՛ հայ առաքելական, և՛ հայ կաթոլիկ համայնքներուն, յատկապէս տուեալ ժամանակաշրջանին ( 1915-2003 թթ.), և այս այն պատճառով, որ շատ փոքր էր հայ բողոքականներուն քանակը: Պաղտատի մէջ այդ թիւը 6-7 ընտանիք էր միայն: Չկար հե-

<sup>177</sup> دير نرسيس صائغيان نفس المصدر صفحة 42

տելաբար, հայ աւետարանական ժողովարան կամ վարժարան:<sup>178</sup> Պաղտատի Հայոց Գէլլանի քենփին մէջ գոյութիւն ունէր Հայ Աւետարանական եղբայրութիւնը իր մասնաւոր աղօթավայրով, ուր հայոց լեզուով պաշտամունք կը կատարուէր 1921 թ. ի վեր: Քարոզիչն էր բնիկ Շիվիլիկցի (Մարաշ) եղբայր Սարգիս Մուրսալեան: Եղբայրութեան մնայուն անդամներուն թիւը 20ը չէր անցնիր: Ամէն տարի Պէյրութէն, Գահիրէէն, Հալէպէն այցելու քարոզիչներ կ'երթային հոն, քարոզութեան և պաշտամունքի համար: Այցելու քարոզիչներէն էին պատուելի Տիմոթէոս Չօրպաճեան, եղբայրներ՝ Կարապետ Ծիզմէճեան, Հալէպլեան եւ այլն:

Ասոնցմէ զատ, Պաղտատի մէջ կային նաեւ 15-20 շաբաթապահ հայեր, որոնք կապուած էին արաբ շաբաթապահներուն:

Պաղտատի բողոքականները, իրենց հոգեւոր պահանջմունքները բաւարարելու համար կը դիմէին Հայաստանեայց Առաքելական Եկեղեցիին և իրենք զիրենք կապուած կը զգային առաքելական համայնքին՝ յաճախելով վերջինիս հասարակական կազմակերպութիւններու կառոյցները:<sup>179</sup> Խօսքը, անշուշտ, մինչ 2003 թ. դէպքերու ժամանակաշրջանի մասին է: Այժմ բոլորովին այլ է պատկերը: Իրաքի մէջ հայ աւետարանական միակ եկեղեցին հիմնադրուած է 2003 թ. Պաղտատի մէջ՝ պատերազմի թոհուրոհին և ամերիկեան զօրքերու ներխուժումէն ետք: Համայնքը կեդրոնացած է այստեղ, որու թուաքանակի մասին ճշգրիտ տուեալներ չկան: Բարդ պայմաններու մէջ յայտնուած համայնքի գոյատեւման մէջ, վճռորոշ դեր ունի հայ աւետարանական կազմակերպութիւններու ցուցաբերած օգնութիւնը, առանց որուն համայնքը դժուար թէ կրնար լուծել իր առջեւ ծառայած գոյութեան և կենսագործունէութեան խնդիրները: Համայնքը կը գործակցէ նաեւ Իրաքի մէջ գոյութիւն ունեցող այլ բողոքական համայնքներուն հետ: 2008 թ.

Փետրուար ամսուն հիմնուած է Հայ Աւետարանական Եկեղեցւոյ հոգեւոր ռադիոժրագիր՝ օրական 30 վարկեան հայերէնով եթեր կը հեռարձակէ տեղւոյն արաբալեզու մկրտական ռադիոկայանով, որն աննախադէպ երեւոյթ է Իրաքահայութեան համար, քանի որ այն հայերէնով առաջին ռադիոհաղորդումն է: Եկեղեցին ունի երկյարկանի շէնք մը՝ վարձակալութեամբ տրուած հայ աւետարանական համայնքին:

<sup>178</sup> Գէորգեան Կ., նշ. աշխ., էջ 441-442:

<sup>179</sup> Նոյն:

## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

### ՏՆՏԵՍԱԿԱՆ – ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

#### 1- Տնտեսական Գործունեություն

Իր աշխարհագրական դիրքին շնորհիւ, Միջագետքը՝ անցելիւն և ներկայիս, մշտապէս եղած է մեծ տէրութիւններուն ուշադրութեան կեդրոնը: Արեւելքը արեւմուտքին կապող աշխարհի այս երկրամասը, Պարսից Ծոցի հիւսիսը գտնուող իր Պասրա նաւահանգիստով, ինչպէս անտիք աշխարհի, նմանապէս միջնադարեան և արդի առեւտրատնտեսական պատմութեան մէջ իր ուրոյն տեղն ունի:

Իրաքի գլխաւոր հաղորդակցութեան ուղիները եղած են Հայկական լեռնաշխարհէն բխող երկու գետերը՝ Եփրատն ու Տիգրիսը, որոնց միացումով, երկրի հարաւը կազմուած է Շաք էլ-Արաբ գետը, որ նաւարկելի էր: Համաձայն պատմահայր Հերոդոտի, Քրիստոսէն առաջ, հայեր առեւտրական կապեր մշակած էին ամենուրեք՝ արտաշխարհ: Ըստ որում, անոնք կը ճամբորդէին Հայաստանէն մինչեւ Նինուէ ու Բաբելոն՝ Եփրատ ու Տիգրիս գետերու վրայէն, լաստերով ու ցամաքային ուղիով՝ ներածելով ընտիր ու պատուական Հայաստանի գինի, ընկուզեղէն, փայտեղէն, ցորեն, ձի եւայլն: Հետեւաբար, Միջագետքը դեռ վաղ ժամանակաշրջանին, անկոխ երկիր մը չէր հայ առեւտրականներուն համար:

Միջնադարեան ժամանակաշրջանին, Կիլիկեան Հայաստանի տնտեսական կեանքին մէջ, մեծ դեր ունեցան Միջագետքի նաւահանգիստները և գլխաւոր քաղաքները: Հրանտ Պաստրմաճեան, մատնանշելով Լեւոն 2-րդ Մեծագործի՝ մեծ զինուորականի և հմուտ քաղաքագետի յատկութիւնները, կը միացնէ նաեւ տնտեսական կարիքներու և կարելիութիւններու խոր հասկացութիւն մը՝ հիմը դնելով Կիլիկիոյ թագաւորութեան տնտեսական զարգաց-

ման և ճեպընթաց վերելքին: Վաստակաշատ պատմաբանը շարունակելով կը գրէ. «...այս մեծ խորիմաստ գահակալը և իր հետետորդները, կը խորհէին թէ՛ կուգայ ժամանակը, երբ առեւտրական գործառնութիւնները պահպանելու կարիքը պիտի մղէ արեւմտան պետութիւնները, մանաւանդ ծովային տէրութիւնները՝ գործօն կերպով հետաքրքրուելու Հայաստանի պաշտպանութեամբ»: Նոյն աշխատութեան յաջորդ էջին հեղինակը կը նշէ նաեւ, որ Կիլիկիոյ խելամիտ թագաւորները, խորհած էին, որ Կեդրոնական Ասիան Միջերկրականին կապող ուրիշ ճամբայ մը նմանապէս Կիլիկիա կը յանգէր՝ Մալաթիա և Մարաշի ուղղութեամբ: Վերջապէս կարելոր միացման գիծ մըն էր նաեւ հիւսիսային Սիւրիոյ, Պաղտատի և Պասրայի վրայով Կիլիկիան Պարսից Ծոցին կապող ճամբան:<sup>160</sup> Հետեւաբար տրամաբանական է, որ Կիլիկիոյ հայ վաճառականները, իրենց կարավանները անվտանգ տեղ հասցնելու համար, անպայման պիտի նախընտրէին գործարքներ կնքել իրենց ցեղակից և կրօնակից գործակալներուն կամ ներկայացուցիչներուն հետ վերոյիշեալ քաղաքներուն մէջ: Ըստ պատրահայ պատմաբան-արեւելագետ Վարդան Մելքոնեանի՝ Պասրայի մէջ դեռեւս 1222 թուականին արդէն հայկական գաղութ մը գոյութիւն ունէր՝ թեմակալ ունենալով Հայաստանցի Սողոմոն անունով եպիսկոպոս մը: Դիտելի է նաեւ այն փաստը, որ Սուէզի ջրանցքի (1869 թուականին) շահագործումէն առաջ՝ քաջառապէս Պարսից Ծոցի նաւահանգիստները կը ծառայէին որպէս Արեւելք-Արեւմուտք տարանցիկ կեդրոններ:

1605 թուականի Շահ Աբբասի կողմէն, հազարաւոր հայերու Արարատեան դաշտի քաղաքներէն, զիւղերէն բռնագաղթուած ժողովուրդէն մաս մը Պարսկաստանէն անցաւ Պասրա, Պաղտատ,

<sup>160</sup> Պաստրմաճեան Հ., Հայոց Պատմութիւն, հատոր Ա, (Տպ.Համազգային ԸՆԿ.), Պէյրութ, 1954, էջ 278-280:

Մուսուլ և փաստօրէն եղան հիմնադիրները Իրաքի վերակազմը-  
լած նոր գաղութին: Այս թուականէն հայերը գաղթած են Իրանէն և  
հետզհետէ կազմած բարգաւաճ գաղութ մը: Մասնաւորապէս 1722  
թուականին, երբ աֆղանները գրաւեցին Սպահանը, Նոր Ջուղան  
բոլորովին դատարկուեցաւ, և այս առթիւ ալ հեռացողներէն կարելոր  
հատուած մը Պասրա անցաւ, և հակառակ Պարսկաստանի նոր  
տիրակալ Քէրիմ խանի յորդորներուն և սպառնալիքներուն՝ Ջու-  
ղայեցիները անյողողոյ մնացին իրենց որոշումին մէջ և շարունա-  
կեցին ապրիլ իրենց նոր ձեռք բերած բնակավայրին մէջ՝ սատա-  
րելով երկրի առեւտրատնտեսական վերելքին:<sup>181</sup>

Միջագետքի մէջ հաստատուած հայ վաճառականները, շատ  
կարճ ժամանակուան ընթացքին, ընտելանալով նոր միջավայրին,  
աշխուժօրէն կը շարունակեն իրենց գործունէութիւնը և կը սկսին  
մրցիլ և թերեւս գերազանցել իրենց տեղը արդէն վերագտած տե-  
ղացի իրեայ վաճառականներուն:<sup>182</sup> Վերջինները կը հովանաւո-  
րուէին թուրք «մութասալլըմ»ի կողմէն, իսկ հայ վաճառականնե-  
րուն, զօրաւոր կերպով կը պաշտպանէր Արեւելա-Յնդկական ըն-  
կերութեան<sup>183</sup> անգլիացի ներկայացուցիչ Մանէսթին:

18-րդ դարու սկիզբը, հայ վաճառականական համայնքը, բո-  
լոր տուեալներով անհամեմատ աւելի հարուստ և ազդեցիկ էր,  
քան Միջագետքի մէջ գտնուող մնացեալ «ահլ ըլղիմը»<sup>184</sup> հա-  
մայնքները: Օտար ճանապարհորդներէն Նիբուրը՝ իր ուղեւորա-

<sup>181</sup> Տէր Յովհաննէանց 3. Եջ. աշխ. էջ 317:

<sup>182</sup> Օհաննէան U.S., Հայ վաճառականութիւնը Իրաքի մէջ 17-19րդ դարերուն, Հայոց Պատմութեան Հարցեր (14), Երեւան 2013, էջ 90-105:

<sup>183</sup> القهواتي حسن محمد - (دور البصرة التجاري في الخليج العربي 1869 - 1914) جامعة البصرة - مطبعة 1980 - صفحة 40  
Արաբական Օոցին մէջ 1869-1914, Էլ-Իրշադ Հրատարակչութիւն Պաղատ, 1980, էջ 40):

<sup>184</sup> «ըղի ըլ-Պիմը» համայնքներ կը կոչուին այն փոքրամասնութիւնները, որոնք  
ըստ իսլամական օրէնքին (շարիյէթ) կը գտնուին պետութեան հովանաւորու-  
թեան տակ:

կան յուշերուն մէջ, հազուադէպօրէն կը յիշէ իրեայ համայնքը, բայց  
բազմիցս կ'ընդգծէ հայերու ունեցած դերի կարեւորութիւնը Պաս-  
րայի վաճառականական կեանքին մէջ:<sup>185</sup>

Յայտնի է արդէն, որ 17-րդ և 18-րդ դարերուն Միջագետքի և  
Յնդկաստանի հայ վաճառականները փոխադարձ վաճառականու-  
թեանը կը զբաղէին, որոնց սեփական նաւերը, ինչպէս՝ «Փաղրոնի»,  
«Սանթա Քրոչէ», «Սանթա Քրուզ», «Հովուել», «Սէնթ Մայքլ»,  
«Արշակ» եւ այլն, կը գործէին Պասրայի և Յնդկաստանի ջուրերուն  
վրայ Պարսից Օոցի ուղիով: Այս նաւերը կը խարսխէին ի Մէննավի,  
Շաք Էլ Արաբ գետը, ուրիշ օտարազգի նաւերու կողքին:<sup>186</sup> Այնու-  
ամենայնիւ, 18րդ դարու կէսին, հայ վաճառականները, իրենց թան-  
կարժէք բեռները փոխադրելու համար, առաւելապէս կ'օգտագոր-  
ծէին անգլիական նաւերը: Օրինակի համար, անգլիական «Ղըրեք»  
նաւի մարգարիտի վեց բեռներէն հինգը, կը պատկանէր հայ վա-  
ճառականներուն:<sup>187</sup>

Հայ վաճառականներու առեւտրական կապերը, չէին սահմա-  
նափակուիր միայն Յնդկաստանի հետ: Անոնք ամուր տնտեսա-  
կան կապեր ունէին նաեւ Հալէպի մէջ գտնուող իրենց ազգակից-  
հաւատակիցներուն հետ, որոնց եկամուտի գլխաւոր աղբիւրն էր  
մետաքսի շահութաբեր առեւտուրը Պարսկաստանի հետ: 1768  
թուականի ֆրանսական տեղեկագրի մը համաձայն՝ հայեր գերա-  
կշռող դեր ունէին Հալէպ-Պասրա կարաւանային առեւտուրի շրջա-  
նակներու մէջ:<sup>188</sup>

Բաղաքական զանազան վերիվայրումները և ժամտախտի յա-  
ճախակի հարուածները Միջագետքի կարգ մը քաղաքներուն,

<sup>185</sup> Abdullah A.J. Th., "Merchants, Mamluks and Murder, The Political Economy of Trade  
in Eighteenth Century Basra" State University of New York Press 2001, p. 88.

<sup>186</sup> Սելրոնեան Վ., 1930-1955 Եջ. աշխ., էջ 64:

<sup>187</sup> Abdullah Th. A.J., Եջ. աշխ., էջ 96:

<sup>188</sup> Նոյն տեղը:

մասնաւորապէս Պասրայի մէջ (քանի որ այս քաղաքը նաւահանգիստ ըլլալով և շատ բանուկ ու աշխոյժ առեւտրական գործունէութիւն ծաւալող արտասահմանի հետ, շատ աւելի խոցելի էր համաճարակներու ժամանակ) կը տկարացնէ հայ վաճառականներուն առեւտրական գործունէութիւնը, որը յաջորդող տարիներուն մեծապէս կը տուժէ և կ'անշքանայ:<sup>189</sup>

Հայերը, բնականաբար, ոչ միայն առեւտուրի մէջ մեծ բարձունքներու հասած էին, այլ նաեւ դիւանագիտական ասպարէզի մէջ կարելոր դիրքերու տիրացած: 1768 թուականին Պասրայի անգլիական հիւպատոսի գործակալն էր հայ մը՝ Մարգար անունով, և իր առաջնակարգ թարգմանիչը դարձեալ հայ մը՝ Շէյխ Պօղոս անունով: Իսկ 1902 թուականէն առաջ անգլիական հիւպատոսարանի աւագ թարգմանն ու կցորդը Մատթէոս Մարկոսեանն էր:<sup>190</sup>

Անգլիացի ճանապարհորդ՝ Գրաթան Գիրի, Պաղտատ այցելած և իր տպաւորութիւնները հայերու մասին այսպէս կը բնութագրէ՝ «...հայերը մեծ համայնք մըն էին, ինչքի տէր՝ ազդեցիկ անձնաւորութիւններով: Սովորական հայու փափաքն էր գրագիր կամ

<sup>189</sup> Օհանեան Ա., Հայ Վաճառական.... Աշ. աշխ., էջ 90-105:

<sup>190</sup> Մելքոնեան Վ., Աշ. աշխ. էջ 65: Արեւելագէտ Վարդան Մելքոնեանը ծնած է Պասրա 1892 թ.: Ուսումը ստացած է տեղւոյն անգլիական դպրոցին մէջ: Կարելոր պաշտօններ վարած է Պաղտատ և Պասրա օտար ընկերութիւններու մէջ: Հմուտ էր հայերէն, անգլերէն և պարսկերէն լեզուներուն մէջ: Աշխատակցած է Պաղտատի, Պասրայի, Լոնտոնի և Պոմպէյի անգլիատառ թերթերուն Vox Mundi - Աշխարհի Չայն գրչանունին տակ: Աշխատակցած է նաեւ Պաղտատի Գոյամարտ, Լիւ եորքի Հայաստանի Կոչնակ և Պօսթոնի Հայրենիք պարբերականներուն և այլ թերթերուն: Հեղինակն է An Historical Glimpse of the Armenians in Iraq աշխատութեան, որը պիտի ներկայացուէր Անգլիոյ Քէյմբրիջ քաղաքի Քուինս քոլէճի մէջ գումարուելիք 21-28 Օգոստոս 1954-ին՝ Արեւելագէտներու 23-րդ միջազգային համագումարին, Սակայն կամքէ անկախ պատճառներով չէ յաջողած մասնակցիլ: Յետագային, Գերմանիոյ Միունիխ քաղաքի համալսարանի իրաւերին ընդատաջելով 20 Օգոստոս 04 Սեպտեմբեր 1957-ին մասնակցած է Արեւելագէտներու միջազգային 24-րդ համագումարին ուր կարդացած է վերոյիշեալ աշխատութեան ամփոփուած տարբերակը՝ մեծ հետաքրքրութիւն յառաջացնելով արեւելագէտներու շրջանակին մէջ:

կրող ըլլալ: Պաղտատաբնակ հայերու մէջ կային երկրաչափներ, որոնք կ'աշխատէին Տիգրիսի վրայ նաւարկող շոգենաւերու մեքենաներու նորոգութեան գործարանին մէջ և կամ մնան աշխատանքներուն մէջ: Կ'ըսուի թէ հայ վաճառականները հարուստ և նախածեռնութիւն ունեցողներ էին, բայց առաւելապէս՝ մտաւորականներ: Կառավարական բոլոր գրասենեակներուն մէջ կային հայ գրագիրներ, ազդեցիկ դիրքերու տէր, որոնք մեծ ազդեցութիւն ունէին պետական բաժանմունքներու մէջ»:<sup>191</sup>

1918-1919 թթ. Պաղտատի մէջ Պելճիքայի պատուոյ հիւպատոսը՝ Ե. Տերվիշեանն էր, որ, ինչպէս վերը նշեցինք, ընկերացաւ Միջագետքի Հայ Տարագրելոց Յանձնախումբի ատենապետ Մարտիրոս Գոյունձեանին՝ Հնդկաստան և Հեռաւոր Արեւելք կատարած առաքելութեան, Պաքուբայի որբանոցի համար հանգանակութիւն կատարելու:

Երբ 1915 թուականի հայկական Ցեղասպանութենէն վերապրող հայորդիները, 1918 թուականի Օգոստոս ամսուն ժամանեցին Իրաք, «անտուն, անպատսպար ու տարագիր, կայք հաստատեցին Իրաքի և Արաբական աշխարհի տարածքին, բոյն ու ընտանիք կազմելով, արհեստային թե գիտական ասպարեզներու մէջ հմտացած, փիմտացած, իրենց բնատուր տաղանդը համեստութեամբ նուիրաբերեցին Իրաքի շէնութեան ու զարթօնքին ի նպաստ...»<sup>192</sup>

Ակզբնական շրջանին բնականաբար, ծանր էր գաղթականներուն վիճակը, սակայն շատ կարճ ժամանակուան մէջ, յաղթահարելով բոլոր դժուարութիւններ, յատկապէս լեզուի չիմացութիւնը,

<sup>191</sup> Geary G., Narrative of a Journey from Bombay to the Bosphorus, London, 1878, p. 222-224.

<sup>192</sup> Ասատուրեան Ա. Տէր., Առաջնորդ Իրաքահայոց «Օրհնութեան Գիրք» Ա.Աստուանին եկեղեցւոյ հիմնադրման 350ամեակին առթիւ 1988, «Իրաքահայ Թեմի համաժողով պատմութիւն», Աշ. աշխ., էջ 248-253:

անբարենպաստ կլիման, կը կարողանան «ոտքի կանգնել և կազմակերպել իրենց տնտեսական և հոգեւոր-մշակութային կեանքը»:<sup>193</sup>

Հայերու հիմնական զբաղմունքը արհեստն էր իր բազմազան ճիւղերով՝ մեքենաներու նորոգութիւն, պահեստամասերու պատրաստում, ոսկերչութիւն, արծաթագործութիւն և, ի հարկէ, արդիւնաբերութիւն: Յայտնի դէմքեր են Ոսկան Մարտիրոսեան, որ Փոստի և Հեռագրային կապերու նախարար էր Օսմանեան պետութեան մէջ, և 1920-ական թուականներուն, հրաւիրուելով նորակախ Իրաք, ստանձնեց ֆինանսներու մասնագետի պաշտօնը: Նաեւ Վահէ Սէֆեանը, որ 1950-ական թուականներուն Պաղտատի ագրարային տնօրէնութեան ընդհանուր տեսուչն էր: Իր ջանքերով և հմտութեամբ էր, որ մայրաքաղաք Պաղտատ փրկուեցաւ ստոյգ յորդումի վտանգէն: Ծաղիկի մահաբեր հիւանդութեան դէմ պատուաստը բժիշկ Օհաննէս Մուրատեան հայորդին առաջին անգամ կիրարկեց Իրաքի մէջ, և այս իրողութիւնը երախտագիտութեամբ կը յիշուի իրաքցիներու կողմէն:

19-րդ դարու վերջին քառորդին և 20-րդ դարու առաջին կեսին, հայ յայտնի վաճառականներէն, որոնք մեծ ներդրում ունեցած են գաղութի զարգացման, եկեղեցաշինութեան, դպրոցաշինութեան և առհասարակ ազգային բարեսիրական գործունէութեան, արժէ յիշել հետեւեալները.

**Սիմոն Մկրտիչ Ղարիպեան** - Ծնած է Պաղտատ, 17 Փետրուար, 1878 թուականին: Պասրայի մէջ առեւտրական տուն ունեցող և Պելճիքայի պատուոյ հիւպատոս Երուանդ Տէրվիշեանի հետ կը գործակցի: Վերջինս Ռուսիայի Օստես նաւահանգիստէն Պասրա տախտակ, քարիւղ և ուրիշ ապրանքներ կը ներմուծէր Իրաք: Տէրվիշեանի՝ Եւրոպա վերադառնալէն ետք, անոր առեւտուրի գործը և պելճիքական հիւպատոսութիւնը կը փոխանցուի Սիմոն

Ղարիպեանին: Վերջինս առեւտրական տուն մը կը հիմնէ Պասրայի մէջ, 1896 թուականին՝ մասնաճիւղեր ունենալով Իրաքի զանազան քաղաքներուն մէջ:<sup>194</sup> Այսպէս, գործունէութիւնը ընդարձակելով, առեւտրական ոլորտին մէջ, փայլուն վերելք կ'ունենայ և հանրածանօթ դէմք մը կը դառնայ միջազգային շուկաներուն մէջ: Կը զբաղի ներածման և արտածման առեւտուրով՝ ներածելով ատաղձ, երկաթ, կրաղիւս, եւրոպական խմիչքներ, անգլիական ծխախոտ եւ այլն: Իսկ գլխաւոր արտածումը կ'ըլլայ իրաքեան հոջակաւոր արմաւը, որուն համար յատուկ գործարան մը կը հաստատէ Պասրայի մէջ: 1950ական թուականներուն, ուրիշ հայ առեւտրական Իսքանդար Մարգարեանի հետ կը հիմնէ բամպակի սերմի և բուսական ձէթի գործարանը: Երկու գործարաններն ալ յետագային (1963 թուականին) կը պետականացուին:<sup>195</sup>

Անհամար են Ղարիպեանի բարեգործութիւնները, ազգօգուտ ձեռնարկներուն մասնակցութիւնը՝ ի բարօրութիւն Իրաքահայ թեմին: Իր մասնակցութեամբ և առատածեռն նուիրատուութեամբ կ'օժանդակէ հայ գաղթականներուն 1920-1921 թուականներուն Նահր Օմար գաղթաւանը փոխադրութեան գործին: Այնուհետեւ, երբ անգլիացիներու հովանաւորութիւնը կը վերցուի գաղթաւանի վրայէն, անոնցմէ մէկ մասը կը տեղաւորէ իր արմաւի գործարանին մէջ, համապազօրեայ հացը պատուով վաստակելու համար:<sup>196</sup>

Երբ 1918-1925 թուականներուն Պասրայի գերեզմանատունը կը զրաւուի պետութեան կողմէն, Ղարիպեան 12.500 քռ.մեթր տարածութեամբ հողատարածք մը կը գնէ և կը նուիրէ ազգին, որ մինչեւ օրս կը գործածուի: Իսկ 1931 թուականին Պասրայի Ս.

<sup>193</sup> حامد البازي - البصرة في الفتره المظلمة وما بعدها بغداد 1969 صفحة 108

Պամրդ Ըլ-Բազի, Պասրան՝ Խաւար ժամանակաշրջանին և ետքը, Պաղտատ, 1969, էջ 108)

<sup>194</sup> Haj S., The Making of Iraq, University of New York, 1997, p. 65.

<sup>195</sup> Օհանեան Ս.Ս., Հայ Վաճառականութիւնը..... մշ. աշխ., էջ 90-106:

<sup>193</sup> Հովհաննիսյան Ն., Նշ. աշխ., էջ 448:

Աստուածածին եկեղեցին ընդհանուր նորոգութեան կը կարօտէր. ամենայն պատրաստականութեամբ յանձն կ'առնէ և ոչ միայն եկեղեցին կը նորոգէ, այլեւ եկեղեցիին կից շէնքեր կը զնէ և կը նուիրէ ազգին՝ մէկը իբրեւ դպրոց գործածելու, միւսը միացնելով եկեղեցապատկան կալուածի մը՝ վրան շինել կուտայ առաջնորդարան, գրասենեակներ, ինչպէս նաեւ քահանայի բնակարանը, և շէնք մըն ալ իբր հասութաբեր կալուած:

Իսկ Պաղտատի իր բարեգործութիւններէն՝ 1920-1921 թուականներուն նիւթական և բարոյական օժանդակութիւն բերած է Պաղտատի որբանոցին, ուր կը խնամուէին Յեղասպանութենէն վերապրած որբ-որբուհիները:

1952 թ. օրուան Քաղաքական ժողովի կարգադրութեամբ՝ Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ և Շօրճայի հրապարակին վրայ գտնուող ազգապատկան շէնքերու նորոգութեան-վերաշինութեան հանգանակիչ յանձնախումբի անդամներէն մէկն էր: Յաջորդական ժողովներու ընթացքին Ղարիպեանը կը խոստանայ հանգանակուած գումարին չափ ինքը աւելցնել: Յետագային, վերոգրեալ խոնարհած եկեղեցւոյ տեղ, ինչպէս նշած ենք, չորս յարկանի շէնք մը կը կառուցէ և կը նուիրէ ազգին՝ իբր հասութաբեր կալուած:

Տիար Սիմոն Ղարիպեան իր բազմաթիւ բարեգործութեանց համար պարգևատրուած է Օրհնութեան Գիրով Կիլիկիոյ Կաթողիկոսութեան և Ն.Ս.Օ.Տ.Տ. Սահակ Խապայեան կաթողիկոսէն, գրուած կաթողիկոսի ձեռագիրով, ուր մեծ բարերարը կը կոչէ «ՈՐԴԻ ԼՈՒՍՈՅ ԵՒ ԱՍՏՈՒԾՈՅ»: Նաեւ Ս.Գրիգոր Լուսաւորիչ առաջին կարգի շքանշանով՝ և Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէ: Պելճիքական կառավարութիւնը նոյնպէս շնորհած է զայն բազմատեսակ ասպետութեան շքանշաններով: Իր բազմաթիւ բարեգործութեանց համար արժանացած է Հայկական Բարեգործական Ընդհանուր Սիւրբեան Պատուոյ անդամութեան:

Սիմոն Ղարիպեան իր մահականցուն կնքեց 2 Մայիս, 1961 թուականին, Բրիւքսէլի մէջ, 83 տարեկան հասակին: Դին փոխադրուած է Պասրա և թաղուած իր իսկ կառուցած Ա.Աստուածածին եկեղեցւոյ բակին մէջ, հօր գերեզմանի կողքին:

Իր ազգանուէր գործունէութիւնը շարունակած է իր որդեգիր զարմիկը՝ Արամ Ղարիպեանը, որ նոյնպէս 1969 թուականին պարգևատրուած է Ս. Գրիգոր Լուսաւորիչ առաջին կարգի շքանշանով:

**Մեծահարուստ Յակոբ և Քերոբ Գոյլումճեան եղբայրները** կալուածատէրեր և առեւտրականներ էին: Ծնած են Թալաս Թուրքիա, առաջինը՝ 1842 թուականին, երկրորդը՝ 1848 թուականին: Յակոբ մտած է առեւտրական ասպարէզ Կարնոյ մէջ և իբրեւ գործակից Կիւլպենկեան առեւտրական տան՝ անցած է Տիարաբէրի, զոր վարած է Կէս դար: Հայ ազգային հողին վրայ, երկար ժամանակ եղած է ազգային իշխանութեան ատենապետը, օժանդակած է Տիարաբէրի մէջ Ս. Կիրակոս եկեղեցւոյ վերաշինութեան՝ շօշափելի նուիրատուութեամբ: 1895-1896 թուականներու ջարդերէն ազատուած բազմաթիւ հայեր ապաստան գտած են իր տունին մեջ: Տիարաբէրէն Հալէպ անցած է, դարձեալ որպէս գործընկեր Կիւլպենկեան տան՝ հոս եւս չը զլանալով իր նիւթական և բարոյական աջակցութիւնը հայ համայնքին:

Պաղտատ փոխադրուելուն՝ հոս եւս, հայ համայնքը զինք կ'ընտրէ ազգային իշխանութեան անդամ, ուր կը մնայ այդպիսին մինչեւ իր մահը: Պասրայի հայոց կիսաւեր եկեղեցին վերանորոգելու պետական արտօնութիւն առնելու արգելքը վերացնելու համար, անձամբ Պասրա երթալով կը յաջողի վերացնել զայն: 1903 թուականին՝ Պաղտատի հայոց գերեզմանատան համար ընդարձակ հողամաս մը կը զնէ և զայն ցանկապատելու պարտականութիւնը Քերոբը յանձն կ'առնէ եղբօր մահուընէ ետք:

Պոլսոյ մէջ սովահար ժողովուրդին օգնելու նպատակով կազմուած յանձնախումբը Պաղտատէն վստահելի անձ մը Վան դրկու-

իլը կը տեղեկացնէ: Կիւլպէնկեան տան յանձնարարութեան վրայ Քերոբ Գույումճեանը կը դրկուի Վան օգնելու Խրիմեան Հայրիկին արմտիք և դրամ բաժնելու սովէն տուժած ժողովուրդին:<sup>197</sup>

Առեւտրական գործունէութեամբ Տիգրիս գետի վրայ գտնուող ճեզիրէ Գաւառին հետ յարաբերութեան մէջ մտնելով և տեղեկանալով, որ այստեղ գտնուող հայերը ազգային կազմակերպութիւն, եկեղեցի և քահանայ չունին՝ իր ծախսերով քահանայ մը ձեռնադրել կուտայ ճեզիրէի համար՝ օժտելով զայն բնակարանով և ժողովուրդին համար աղօթատեղիով:

Գույումճեանները ընդարձակ ազարակ մը ունէին Ֆէլլուճա (Պաղտատի և Թիքրիթի միջեւ) քաղաքին մէջ, ուր Իրաքի Ֆէյսալ Ա. թագաւորը քանիցս այցելութեան և հանգստանալու գացած է:<sup>198</sup>

1854 թ., Պաղտատցի մեծահարուստ վաճառական կալուածատէր **Մահտեսի Մարկոս որդի Մահտեսի Իսքէնտէրի**, իր «սեփականութիւնը եղող ամբողջ պարտեզը որ կը պարունակէր արմաւենիներ, պտղատու և այլազան ծառեր, նաեւ վերոյիշեալ կալուածին մաս կազմող արեւմտեան կողմը որ կը կոչուի Ում Իլ Ադամ (Մայր Ոսկերաց) 4.5 քմ.կմ. տարածութեամբ, կը կտակէ որպէս կատարեալ և «շարի վազըֆ» յաւիտեան յաւիտենից յատկացուելու համար Պաղտատաբնակ հայ, ինչպէս նաեւ ուրիշ երկիրներէն եկած հայ աշխատողներու և դպրոցներու մէջ բնակող հայ անհատներու, յանուն Աստուծոյ»:<sup>199</sup> Ինչէ՞ն իմանար այս ազնուահոգի հայորդին, որ համարեա կէս դար վերջ Վասպուրականցի 500է աւելի իր ազգակիցները, Յեղասպանութենէն ճողոպրած,

պիտի հանգրուանէին իր կողմէն ազգին կտակած, հենց այս հողամասին վրայ:<sup>200</sup>

Այնուամենայնիւ, Պաղտատի կեդրոնը և Տիգրիսի ափին գտնուող այս հողամասը, զանազան դատական փուլերէ անցնելէն ետք, 1968 թ., գրիչի մէկ հարուածով, Յեղափոխական Ղեկավարութեան Խորհուրդը կը գրաւէ Ում Իլ-Ադամի ամբողջ կալուածը, և կը յատկացնէ պաշտպանութեան նախարարութեան և պետական նախնի գտարաններուն: Այսպէսով, վերջ կը դրուի Ում Իլ-Ադամի 1854 թ. կտակակատար մահտեսի Մարկոս Իսքէնտէրեանի ըրած կտակին:

Թրքական տիրապետութեան շրջանին Իրաքի մէջ ապրած են հայեր, որոնք կարելոր դիրքեր գրաւած են զանազան ասպարէզներուն մէջ: Պաղտատի բրիտանական հիւպատոսարանին մէջ պաշտօնավարած են շատ մը հայեր իբրեւ փոխ-հիւպատոս, քարտուղար, աւագ թարգման եւայլն: Կը յիշուին անունները՝ Սուքել և Սինաս, որոնք աւագ թարգմաններն էին Պաղտատի բրիտանական հիւպատոսարանին 1805-1810 թուականներուն: Գեորգ և Յովհաննէս Թադէոսեան եղբայրները Հնդկաստանէն գալով 1843 թուականին, հաստատուած են Պաղտատ, իբրեւ քարտուղարներ միեւնոյն հիւպատոսարանին: Այնտեղ պաշտօնավարած են նաեւ ասոնց կրտսեր եղբայրները՝ Յակոբ և Գաբրիէլ, 1845-էն սկսեալ: Այս պատճառով, Թադէոսեան ընտանիքը պաղտատցիներու կողմէն կը կոչուէր «Բէյթ էլ քէթթաբ» (դպիրներու տուն): Պաղտատի մէջ իբրեւ բրիտանական փոխ-հիւպատոս պաշտօնավարած է նաեւ Նոր Ջուղայեցի ընտանիքէ՝ Պասրայի մէջ 1800 թ. ծնած Խաչիկ Մկրտիչեան: Մեռած է Պաղտատ 1858 թ., և մարմինը ամփոփուած է Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակին մէջ: «Էլ-Սըբա-հիթ էլ-Իրակիյա»-ի հեղինակ և Իրաքցի մտաւորականութեան մէջ

<sup>197</sup> Իրաքահայ Թեմի....., նշ. աշխ., էջ 276:

<sup>198</sup> Kouyoumdjian J., The Kouyoumdjians. A history and Reminiscences, New York 1988, page 18 (անձնական յուշեր):

<sup>199</sup> Իրաքահայ Թեմի....., նշ. աշխ., էջ 207 – 208:

<sup>200</sup> Վարդանեան Ե., նշ. աշխ., էջ 9:

իր ուրոյն տեղը գրաւած՝ Եակուբ Սարգիսը, Իրաքի նորագոյն պատմագրութեան մէջ իր խոշորագոյն ներդրումը ունի:<sup>201</sup>

Իրաւաբանական ասպարեզին մէջ, Պաղտատի անուանի փաստաբաններէն են Մարուք Մանուկեան, Քերոք Սեթեան և Յարութիւն Մինասեան: Պասրայի մէջ յայտնի անուն էր փաստաբան Յակոբ Էֆենտի Գաբրիէլեանը: Արհեստաւորներու մէջ լաւագոյն դիրքեր ունէին փորագրիչ-ոսկերիչ-արծաթագործներ Մարգար Դաւիթեան, Գրիգոր Յակոբեան, Յովնան Գասպարեան, Մկրտիչ Գույումճիպաշեան եւ այլն, եւ այլն...:

Մեծ համբաւ կը վայելէին առետրականներ Մարկոս Իսքէնտէրեան, Մեսրոպ Գույումճեան, Ներսէս Թաղէոսեան, Մեսրոպ Սեթեան, Գրիգոր և Դանիէլ Իսքէնտէրեաններ և Իսքէնտէր Անանօֆ:<sup>202</sup>

Ոսկան Մարտիկեան (Ոսկան Էֆենտի) որ Օսմանեան կառավարութեան մէջ կը զբաղեցնէր Տեղեկատուութեան նախարարի պաշտօնը, ընդառաջելով Իրաքի նորաստեղծ պետութեան հրաւերին 1920-ական թուականներուն կը ստանձնէ Ելեւմտագէտի (ֆինանսիստ) պաշտօնը Իրաքի համանուն նախարարութեան մէջ, զարգացնելով սոյն երկրի Ելեւմտական համակարգը: Սերոք Իսքէնտէրեանը և Սրապիոն Սեւեանը կարելոր պաշտօններ գրաւած

<sup>201</sup> Եաքուբ իբն Նա'ում իբն Ագոբ Չան իբն Սարգիս - գրող, հետազօտող, հրապարակախօս, Հալէպէն գաղթած հայ ընտանիքի գաւալ: Իր հսկայածաւալ երեք հատորնոց «Էլ-Սըբահըթ Էլ-Իրակիեա»-ն կը պարունակէ իր յօդուածները, որ կ'ընդգրկէ Իրաքի հասարակական կեանքը Աբբասեաններու, Խաւար և Օսմանեան ժամանակաշրջաններուն: Աշխատութեան առաջին հատորը հրատարակուած է 1948 թ., երկրորդը՝ 1955 թ. և երրորդը՝ 1984 թ.: Ճնած է Պաղտատ, 1875 թ., մահացած 1959 թ.: Ժամանակակից արաբ մտաւորականներու վկայութեամբ իր սեփական գրադարանը կը համարուէր ամենահարուստ և ամենաբովանդակալիցը Մերձաւոր Արեւելքի մէջ: Իր գործօն մասնակցութիւնը բերած է տեղւոյն հասարակական կեանքին: Այսպէս՝ Իրաքի Կարմիր Մահիկ կազմակերպութեան «Գրիչ» գրական ակումբի հիմնադիրներէն է, օժանդակ անդամ Իրաքի Գիտական Կաճառին, 1932 թ. Պաղտատ մայրաքաղաքի ճամբաները անուանակոչող յանձնախումբի անդամ եւ այլն:

<sup>202</sup> Գեորգեան Կ., Նշ. աշխ., էջ 451-452:

լին դեռեւս օսմանեան տիրապետութեան ժամանակ Պաղտատի Գետային Փոխադրութեան Կարչութեան մէջ: Վերջինս 1921 թ. կոչուեցաւ Ելեւմտքի նախարարի քարտուղարի պաշտօնին:

Իրաքահայութեան պատմութեան մէջ բացառիկ պարագայ մըն էր, 1947 թուականին յայտնի առետրական, հայորդի՝ **Իսքէնդէր Ստեփան Մարգարեանի**, Իրաքի Խորհրդարանի (Երեսփոխանական ժողով) անդամ ընտրուիլը, իբրեւ Իրաքի մէջ գտնուող բոլոր քրիստոնէայ համայնքներու ներկայացուցիչ: Մարգարեան ծնած է Պաղտատ, 1903 թուականին, քաջածանօթ էր արաբերէնին, եղած է վաճառական: Ազգային գործունէութեան ոլորտին մէջ, անդամակցած է զանազան մարմիններու և Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան վարչութեան: Եղած է Պաղտատի Առետրականներու Պալատի վարչութեան անդամ, շատ սիրուած էր արաբ շրջանակներէ և յարգանք վայելած պետական շրջանակներուն մէջ: Իբրեւ Իրաքեան պատուիրակութեան անդամ՝ 1939 թուականին մասնակցած է Իտալիոյ մէջ գումարուած Առետրական Միջազգային Համագումարին, իսկ 1946 թուականին ալ՝ Նիւ Եորքի մէջ գումարուած համանուն Խորհուրդին: 1950-ական թուականներուն, Սիմոն Ղարիպեանի հետ Պաղտատի մէջ հիմնած են մեծ գործարան մը՝ օճառ և բուսական իւղ արտադրելու համար: 1963 թուականին այս գործարանը, ի շարս ուրիշ շատ մը հաստատութիւններու՝ պետականացուած է: Մահկանացուն կնքած է ժընեւ, Հոկտեմբեր 9, 1991 թուականին:<sup>203</sup>

## 2- Հասարակական Կեանք

Իրաք անկախ պետութիւն հռչակուելէն ետք, համաձայն նոր Սահմանադրութեան 116-րդ յօդուածին, գործադրուած են այն բոլոր օրէնքները, որ առկայ էին Իրաքի մէջ մինչեւ 1914 թուականի

<sup>203</sup> Haj S. The Making of Iraq, University of New York, 1997, page 65:

Առաջին Աշխարհամարտը: Հայ համայնքը եւս ղեկավարուած է 1863 թուականի Հայ Ազգային Սահմանադրութեամբ:

Հայոց Մեծ Եղեռնի և տարագրութեան հետեւանքով Իրաքի սահմաններէն ներս ծուարած բազմահազար հայորդիներ, տեղաւորուեցան այս հիւրընկալ երկրի զանազան քաղաքներուն մէջ, և իրենց գործօն մասնակցութիւնը բերին ազգային-եկեղեցական գործերուն: Սակայն վերոյիշեալ Հայ Ազգային Սահմանադրութիւնը բնականաբար, ժամանակավրէպ ըլլալուն, և տիրող նոր պայմաններուն ներքոյ՝ անգործադրելի, հարկաւոր էր ձեռնարկել նոր օրէնքի մը մշակման:

Ուստի, կառավարական պաշտօնաթերթի 21 Յուլիս 1930-ի թիւ 880-ի մէջ հրատարակուեցաւ 1930 տարուոյ թիւ 24 «Մարտուն»<sup>204</sup> (պաշտօնական հրամանագիր – Ս.Օ.) Նախարարաց Խորհուրդի համաձայնութեամբ, առանց խորհրդարանի քուէարկութեան): Այնուհետեւ, Իրաքի խորհրդարանի 1931 թուականի Ապրիլ 4-ի նիստի օրակարգին յանձնուած նոր օրէնքը՝ գրուած դատական նախարարութեան մէջ, և վերամշակուած խորհրդարանի իրաւաբանական յանձնաժողովի կողմէն, ուր որպէս վերջաբան մշուած է «...կառավարութիւնը հանդիպեցաւ շատ դժուարութիւններու և երբ քննեցինք խնդիրը, մեզ յայտնի եղաւ որ այդ դժուարութիւնները ո՛չ թէ իրենց օրէնք մը չունենալուն պատճառով է, այլ որովհետեւ ունին Օսմանեան ժամանակէն մնացած օրէնք մը, բայց այդ օրէնքը այժմեան պայմաններուն չի համապատասխաներ, և կարելի չէ Իրաքի մէջ գտնուող Օրթոդոքս հայերուն համապատասխանեցնել: Եւ, որովհետեւ Իրաքի Սահմանադրութեան 70րդ յօդուածը, կը թոյլատրէ զանազան ազգեր իրենց օրէնքները ունենալուն, կառավարութիւնը յարմար տեսաւ օրէնք մը մշակել, որ կը համապատասխանէ իրենց պահանջներուն, և յոյս ունինք,

<sup>204</sup> 1930 1403 في 3-2001

որ այդ ազգը պիտի իւրացնէ այս օրէնքը, որ պիտի երաշխաւորէ իրենց կալուածներու լաւ մատակարարութիւնը...»<sup>205</sup>

Իսկ նոր օրէնքը չեղեալ համարելով նախկին 1930 թուականի թիւ 24 «Մարտուն»ը, ուժի մէջ մտաւ պաշտօնաթերթի մէջ հրատարակուելէն անմիջապէս ետք, որ կը կրէր թիւ 70 – 1931 թ.:

Տարիներ անց, ինչպէս վերը մշտեցինք, 1958 թ.ի գինուորական յեղաշրջումէն ետք, երկրի վարչակարգը հիմնովին փոփոխութեան կ'ենթարկուի՝ միապետական համակարգէն անցնելով հանրապետական կարգերու: Այնուհետեւ, քաղաքական իրարայաջորդ վերիվայրումներու բերումով, օրուան պետական պատկան իշխանութիւնները վերոյիշեալ օրէնքը ժամանակավրէպ գտնելով, 1963 թուականին հեթեակական անգամ ջնջելով զայն, տեղը նոր «**Թիւ 87 – 1963 Օրէնք և Կանոնագրեր Իրաքի Հայ Օրթոդոքս Համայնքի**»<sup>206</sup> անուան տակ լոյս կ'ընծայէ: Վերջինս ի զօրու է մինչեւ այսօր մասնակի փոփոխութիւններով:<sup>207</sup>

Ըստ վերոյիշեալ օրէնքին, Իրաքի Հայ Առաքելական եկեղեցւոյն պատկանող համայնքի ղեկավար մարմինն է՝ Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, որ կ'ընտրուի ուղղակի ժողովուրդին քուէներով՝ չորս տարին անգամ մը: Քուէարկութեան մասնակցելու իրաւունք ունի 21 տարեկանը բոլորած իւրաքանչիւր իրաքահայ: Վարչութեան կեդրոնը Պաղտատի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցին է: Շրջաններուն մէջ (Պասրա, Մուսուլ, Քէրքուկ) իւրաքանչիւր համայնք ունի իր Թաղական Խորհուրդը, հինգ հոգիէ բաղկացած, որոնք հաշուետու են Ազգային Կեդրոնական Վարչութեան: Վերջինս Իրաքահայութեան Օրթոդոքս համայնքի

<sup>205</sup> ՀԱԱ Ֆ. 409, Ց. 1 Գ. 4417: Տես նաեւ Մուրադեան Ս., Իրաքի Հայ Համայնքը, «Պայքար Հրատարակչութիւն», 1997, էջ 38:

<sup>206</sup> Այսպէս կը կոչուի Իրաքի Հայ Առաքելական եկեղեցւոյն պատկանող համայնքը:

<sup>207</sup> قانون وتعليمات ادارة طائفة الارمن الارثوذكس في العراق رقم 87 لسنة 1963 مع تعديل التعليمات رقم 1403 في 15-3-2001

ներկայացուցիչն է պետական շրջանակներէն ներս: Այնուամենայնիւ, ազգապատկան անշարժ գոյքերու (վակըֆ) լիազօրը (մութը-ուրըը) Առաջնորդ սրբազան հայրն է: Վերջինիս Իրաքի հպատակ ըլլալը պարտադիր է, հակառակ պարագային՝ թեմի առաջնորդ կարելի է ընտրել որեւէ արաբական երկրի հայ քաղաքացի:

Համայնքի ազգային կեանքը, կը ղեկավարուի կրօնական, բարեգործական, մշակութային, մարզական, երիտասարդական տարատեսակ կազմակերպութիւններու կողմէն: Ստորեւ կը յիշատակենք կարեւորագոյնները, որոնց գործունէութիւնը էական ազդեցութիւն ունեցած է Իրաքահայութեան ներքին ամենօրեայ կեանքին վրայ:

Նախապատերազմեան շրջանին Իրաքահայ համայնքի հասարակական գործունէութիւն ծաւալող յիշարժան կազմակերպութիւնը **Ասքանազեան Ընկերութիւնն** է, որ հիմնադրուած է 1878 թուականին Պաղտատի մէջ: Վաստակաշատ ուսուցչապետ Միհրան Սվաճեան Հայաստանէն հեռու և մեծ մասամբ արաբախօս այս վայրին մէջ, անձնուիրաբար կը գործէ և համարեա հիմնադիրը կը հանդիսանայ Իրաքի կրթական գործին: Ինչպէս Նիկոմիդիոյ մէջ, այստեղ ալ նոյն հիմունքներով կը հաստատուէ Ասքանազեան Ընկերութիւնը՝ նպատակ ունենալով երիտասարդութեան մէջ վառ պահել հայ ոգին, որ այնքան խաթարուած էր հայրենիքէն հեռու այս բնակավայրին մէջ: Ասքանազեան ընկերութիւնը ուսանողաց խնամքով, կը շարունակուի որքան ատեն որ իրենց վարժարանը բաց էր, այսինքն՝ երկու տարի, մինչեւ 1879 թ.: Սվաճեանի աշակերտները, ազգային կեդրոն մը ունենալու նպատակով՝ կը վերակազմեն սոյն ընկերութիւնը 31 Մայիս 1885 թ.:

Ասքանազեան Ընկերութիւնը ունեցաւ ակումբ, գրադարան մը, որ կը պարունակէր հարիւրաւոր թանկարժէք հատորներ՝ մեծ մա-

սամբ հայերէն:<sup>208</sup> Ընկերութիւնը մեծապէս սիրուեցաւ և գնահատուեցաւ երիտասարդութեան կողմէն: 1888 թուականին ունէր 70 անդամ և Պաղտատի մէջ միակ ազգային մարմինն էր, որ ունէր իր կանոնաւոր ընթերցարանը: Անոնք, վերջը ստանձնեցին եկեղեցապանութիւնն ալ, և իբր հսկող՝ մէկը նշանակեցին եկեղեցիին մատակարարութեան: Նոյն թուականին ընկերութիւնը կ'որոշէ Պաղտատի Ս. Երրորդութիւն եկեղեցին օժտել զանգակատունով մը և բերել զանգակ մը: Այս ձեռնարկն ալ յաջողութեամբ կը պսակուի: Զանգակատան վրայ արձանագրուած է «Արդեամբ Ասքանազեան Ընկերութեան»:<sup>209</sup>

Սվաճեանի գլխաւոր աջակիցներէն եղած է, իր աշակերտներէն Միքայէլ Տէր-Եղիայեան (յետագային՝ Պոլսոյ Զաւէն պատրիարք), որ երախտագիտութեամբ կը յիշէ իր ուսուցիչը, որմէ ստացած էր իր ազգային ներշնչումները և հենց ի՛ր թելադրութեամբ, յանձն առած նուիրուիլ ազգային ծառայութեան:<sup>210</sup>

Այսպէս, Ընկերութիւնը շարունակեց բարգաւաճ շրջան մը, մինչեւ Առաջին Համաշխարհային պատերազմի սկիզբը: Քաղաքական պայմաններու բերումով գրադարանը կը փակուի և մէջի հազուագիւտ հատորները, անհատներու տուները կը փոխադրուին, իսկ արձանագրութիւնները հարկ կ'ըլլայ ջնջել և ոչնչացնել:

Յետ պատերազմի, Ասքանազեանի նախկին անդամներէն ոմանք ջանացին Ընկերութիւնը վերակազմել, սակայն շատ կարճ ժամանակուայ մը համար: Ասոնցմէ կը յիշուին Տօթթ. Փիլիպոս Քէչիշեան և Թաթուլ Սվաճեան, վերջինը՝ որդին Միհրան Սվաճեանի, Ընկերութեան հիմնադիրին և հայկական կրթարանի ուսումնապետին, որ 40 տարիներ իբր ուսուցիչ և դաստիարակ ղեկավարած է

<sup>208</sup> Մելքոնեան Վ., Ամենուն Նոր Տարեցոյց, 1941-42, էջ 183:

<sup>209</sup> Ալադոյաճեան Ա., Նշ. աշխ., էջ 157-158:

<sup>210</sup> Նոյն:

Պաղտատի մշակութային կեանքը՝ դնելով գայն ազգային ամուր հիմքերու վրայ:

Դժբախտաբար, գրադարանի գիրքերը շատ տխուր վախճան մը ունեցան, քանի որ պատերազմի չորս տարիներուն ընթացքին, պահուելով Առաջնորդարանի ներքնայարկը գտնուող խոնաւ նկուղներուն մէջ, մեծ մասը բոլորովին փճացան:<sup>211</sup>

Այսպէսով, 1922 թուականին, վեջնականապէս լուծուեցաւ Ասքանազեան Ընկերութիւնը..... Սակայն, կարճ ժամանակ անց, գաղութը արդէն համալրուած հայրենիքէն ժամանած նոր գաղթականական առողջ, և տակաւին, անխաթար հայկական ոգիով զինուած թարմ ուժերով, յաջորդող տարիներուն, ազգային նոր եռանդ ու աւին պիտի ներշնչէին երիտասարդութեան հասարակական մարզական, մշակութային այլեւայլ նորաստեղծ կազմակերպութիւններուն գործունէութեանց ընդմէջէն....

Իրաքի համայնքի ստուարացումով՝ պայմանաւորուած գաղթականութեան հոսքով, օտար շրջանակի բացասական ազդեցութիւնը չէզոքացնելու նպատակով աստիճանաբար սկսան ձեւաւորուիլ հայկական կազմակերպութիւններ, նոր սերունդին մէջ անեղծ պահելու հայ ազգային ոգին, առողջ, բարեխիղճ և բարեսէր սերունդ կրթելու և փոխանցելու գալիք սերունդներուն, և ամենաէականը՝ հայրենիքին հետ կապը հաստատուն պահելու համար: Այս նպատակներով հիմնադրուեցաւ **Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը**<sup>212</sup> Իրաքի մէջ, 1911 թուականին, բնիկ Պաղտատահայ ազգայիններու կողմէն ի դէմս Գառնիկ Գուլումճեանի, Դաւիթ Թաղէոսեանի և Յակոբ Ստեփանեանի, որոնց

<sup>211</sup> Իրաքահայ Թեմի....., մշ. աշխ., էջ 190: Խօսքը Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ մասին է, ուր, ինչպէս նշեցինք, ստորերկրեայ ջուրերու մակարդակը պարբերաբար կը բարձրանար:

<sup>212</sup> Այսպէս անուանակոչուած է միութիւնը իր հիմնադրութեան առաջին ատենագրութեան մէջ, Մելքոնեան Է., մշ. աշխ., էջ 81:

ջանքերով Միութեան կ'անդամագրուին 41 պաղտատահայեր: Նոյն տարին կը գումարուի առաջին ժողովը, և կ'ընտրուին տիարք՝ Յակոբ Ներսէսեան՝ ատենապետ, Գառնիկ Գուլումճեան՝ ատենադպիր և Դաւիթ Յովհաննէսեան՝ գանձապահ: Յաջորդական տարիներուն վարչութեան կազմին թիւը կը բարձրանայ եօթի: Յունուար 1, 1913 թ., իբր խորհրդականներ կ'աւելնան տիարք Գալուստ և Խոսրով Գուլումճեանները:<sup>213</sup>

Առաջին Աշխարհամարտի համատարած վախի ու սարսափի տարիներուն Միութիւնը կը դադրի գործունէութենէ մասնաւանդ երբ Միութեան անդամներէն կը ձերբակալուին, կ'աքսորուին և կը նահատակուին մի քանի անդամներ: Իսկ Միութեան ատենապետ՝ Յակոբ Ներսէսեանը, ազատ արձակուելէն և Պաղտատ վերադառնալէն ետք, կրկին կը ձերբակալուի, կ'աքսորուի անյայտ ուղղութեամբ և կը նահատակուի:

Բրիտանացիներու կողմէն Պաղտատի գրաւումէն ետք Միութիւնը կը վերակազմուի, որուն նախաձեռնարկ կ'ըլլայ Գեղ. Փառէն Ծ.վրդ. Մելքոնեան, 7 Յոկտեմբեր 1917 թ., իր նախագահութեամբ գումարուած Զ.Բ.Ը.Միութեան ժողովին. կ'ընտրուին պարոնայք Գրիգոր Աղէքսանդրեան՝ ատենապետ, Խոսրով Գուլումճեան՝ ատենադպիր, Դանիէլ Թաղէոսեան՝ գանձապահ և խորհրդականներ՝ Թաղէոս Քիւրտեան և Պետրի Եղոյեան:

1934 թ. խումբ մը ազգայիններ, կը յաջողին պաշտօնապէս վաւերացնել Միութիւնը պետութեան կողմէն:<sup>214</sup> Միութեան գլխաւոր նպատակն է հոգալ չքաւոր աշակերտներուն կրթաթոշակի հարցը, օգնել անապահով ընտանիքներուն, Իրաքի հայկական դպրոցներուն, բարեսիրական հաստատութիւններուն, Առաջնոր-

<sup>211</sup> Աղբաշեան Զ., Զ.Բ.Ը.Միութեան վարչութեան նախկին անդամ, այժմ՝ ԱՄՆ (Ելեքսորոնային նամակ):

<sup>212</sup> Յուշամատեն Իրաքի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան 1926-1976, էջ 202:

դարանին առընթեր՝ Չքաւորաց Օժանդակ Մարմնին, Ազգային Ծերանոցին եւ այլն...:

1918 թ., գաղթականութեան Միջագետք հանգրուանելէ անմիջապէս ետք, Եգիպտոսի Որբախնամ յանձնախումբը յանձն կ'առնէ Պաքուբայի մէջ գտնուող որբանոցի 1500 սան-սանուհիներու հագուստեղէնի և գրեմական պիտոյքներու մատակարարման ազգանուէր գործը: 1937 թուականին՝ Միութիւնը կը բոլորէ զարթօնքի ու ծաղկումի աւելի քան տասնամեայ շրջան մը: Այս միջոցին է, որ Բարեգործականը, օրուան Ազգային Իշխանութենէն ստանձնեց Պաղտատի Գէլլանի Քէմփի նախակրթարանի հովանաւորութիւնը, տասը տարուան պայմանաժամով, զայն կոչելով՝ «Սվաճեան վարժարան»՝ ի յիշատակ մեծ դաստիարակ-նահատակ Միհրան Սվաճեանի: Աշակերտութեան մեծամասնութիւնը անկարող էր հոգալ ուսումնական կրթաթոշակները, որոնք տասը տարի շարունակ, ոչ միայն առանց տարեթոշակ վճարելու կը ստանային հայեցի դաստիարակութիւն, այլեւ կէսօրները տաք ճաշ և առաւել կարօտեալները նաեւ գրեմական պիտոյքներ:<sup>215</sup>

Նոյն այս ժամանակաշրջանին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը ունեցաւ իր Երիտասարդաց Ընկերակցութիւնը, որ գաղութին մէջ ծաւալեց մշակութային, գեղարուեստական, մարզական և այլ գործունէութիւն: Մօտաւորապէս տասը տարուան դադարէ մը ետք՝ յարմարելով տեղական պայմաններուն և պետութեան պահանջներուն՝ 1959 թուականին Միութիւնը կը վերակազմուի «**Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն**» անուան տակ:<sup>216</sup>

Մինչեւ 1974 թուականը, Միութիւնը ամէն տարի կ'որդեգրէր 80-100 չքաւոր աշակերտներ, և սատար կը հանդիսանար Իրաքի

մէջ գտնուող բոլոր ազգային դպրոցներուն: Իր նիւթական օժանդակութիւնը չէր սահմանափակուէր Իրաքահայ գաղութին մէջ ծաւալուող տարատեսակ կազմակերպութիւններուն օգնութեան ձեռք մեկնելով, այլ այն կը ներառէր նաեւ Իրաքի տեղական բարեսիրական հաստատութեանց, Կարմիր Մահիկին, Հաշմանդամներու և Խեղանդամաւորներու Խնամակալ Մարմնին, Աղքատախնամին, Կուրանոցին, Ծերանոցին, Թոքախտանոցին եւ այլն: Բաւական է յիշել, որ 1960-1975 տարիներու ընթացքին, Միութիւնը Իրաքի հայկական դպրոցներուն, բարեսիրական հաստատութեանց և նմանօրինակ նպատակներու համար, նուիրած է աւելի քան քսան հազար իրաքեան դինար, որ այդ ժամանակ պատկառելի գումար մըն էր:<sup>217</sup>

Միութիւնը 1965 թուականէն ի վեր, կը պահէ «Սայաթ Նովա» երգ ու պարի խումբ մը, որ ոչ միայն մեր հայկական շրջանակներէն ներս մեծ խանդավառութիւն մը ստեղծեր է, այլեւ արժանացեր պետութեան զնահատանքին ու քաջակերութեան:<sup>218</sup> 1973 թ. մասնակցել է Մոսկուայի մէջ տեղի ունեցած փառատօնին, ելոյթ ունեցած է «Էլ-Խուլդ» թատերաբեմի և նմանապէս Իրաքի Ազգային Թատրոնի բեմին վրայ: 1992 թուականին մասնակցած է «Բարբելոն» տարեկան փառատօնին, որ տեղի կ'ունենար պատմական Բարբելոն քաղաքի վերանորոգուած բացօթեայ բեմահարթակին վրայ: Այս փառատօնին ելոյթներ կ'ունենային զանազան երկիրներէն եկած ժողովրդական երգի-պարի խումբեր, որոնց շարքին, մի քանի տարի անընդմէջ մասնակցեցան նաեւ հայրենի երկրէն եկած նմանատիպ խումբեր մեծ երջանկութիւն և սփոփանք բերելով օտարութեան մէջ ապրող հայրենակարօտ հայորդիներուն:

<sup>215</sup> Նոյն տեղը:

<sup>216</sup> كتاب وزارة الداخلية /الجمعيات المرقم 48 في 1962/12/23.

<sup>217</sup> Անցած դարու երկրորդ կէսին, Իրաքի մէկ դինարը հաւասար էր 3.3 ԱՄՆ դոլարի:

<sup>218</sup> Պաղտատի Հեթմ Յուշամատեան, Նշ. աշխ., էջ 202:

1976 թ. Միութիւնը բարերարուհի Ռէճինէ Կարապետ Իսքէնդերեանի կտակին համաձայն տրամադրած 3500 քր.մեթր տարածութեամբ հողամասին վրայ, կը կառուցանէ իր ակումբի եռայարկ շէնքը և ապա լողաւազանը, իր անդամներուն, յատկապէս Միութեան պատույ նախագահ Երջանիկ Թաջիրեանի առատաձեռն նուիրատուութեամբ:

ՀԲԸՄ-ը կը ղեկավարուի 11 անդամներէ բաղկացած վարչութեան մը կողմէն, որ հասարակական և բարոյական բազմազան գործունէութիւնները կ'իրագործէ իր հովանիի տակ գտնուող ենթայանձնախումբերու միջոցաւ՝ համալսարանականերու հաւաք, Կանանց յանձնախումբ, սկաուտական խումբեր և մշակութային յանձնախումբ: Վերջինիս հովանաւորութեամբ կը գործէ «Յակոբ Պարոնեան Թատերական խումբ»ը 1986 թուականէն ի վեր:

Բարեգործականը, պաշտօնապէս ճանաչուած մարզական խումբեր ունենալու համար, հիմք ընդունելով 1930-ական թուականներուն կազմուած Երիտասարդաց Ընկերակցութեան դրոյթները, 2000 թուականին կը կազմէ «Նահատակ Օհան Մարզական Ակումբ»ը<sup>219</sup> արտօնութեամբ Իրաքի Ողիմպիական Կազմակերպութեան:<sup>220</sup> Այս ակումբէն ներս գործող տարատեսակ մարզախումբեր արժանացած են բազմաթիւ մրցանակներու զանազան մարզատեսակներուն մէջ: Մինչ այս թուականը գոյութիւն ունեցող Բարեգործականի մարզական խումբերը և սկաուտական յանձնախումբը, կը փոխադրուին Նահատակ Օհան Մարզական Ակումբ՝ նշանաբան ունենալով՝ «առողջ միտք առողջ մարմնի մէջ»: Ակումբը կեանքի կոչած է բազմաբնոյթ մարզախաղերու հաւաքականներինչպիսիք են՝ տղոց և աղջկանց բասքէթբոլի, բարձրագնդակի

<sup>219</sup> Ի յիշատակ՝ Բարեգործականի մարզիկ անդամներէն Նահատակ Օհաննու Արշակ Բարուճեանի:

<sup>220</sup> 2000/2/13 في 719/21 المرقم العراقية الوطنية الاولمبية

(վոլի բոլ), թէնիսի, սեղանագնդակի (փինգ-փոնգ) և լողարշալի խումբեր: Սկաուտական յանձնախումբը ունի 200է աւելի անդամներ:

Իրաքի մէջ Միութեան հիմնադրութեան 75-ամեակը տօնուեցաւ մեծ շուքով 1986 թուականին: Իր բազմապիսի բարեսիրական և ազգապահպան գործունէութեան համար արժանացաւ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Կաթողիկոսի հեռագիր-շնորհաւորանքին, և 90-ամեակին Գարեգին ամենայն հայոց հայրապետի Օրհնութեան Գիրին:

2012 թուականին Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան անդամներու ընդհանուր թիւն էր 1200 անդամանդամուհի:

Յետ Առաջին Համաշխարհային Պատերազմին 1918 թուականին, Պասրայի մէջ կը կազմուի Հ.Բ.Ը.Միութեան մասնաճիւղ մը, որ կը գործէ մինչեւ 1926 թուականը, երբ կը սկսի տկարանալ, ապա կը դադորի գործելէ: 1931 թուականին, կը վերակազմուի և կը շարունակէ իր բարեսիրական գործունէութիւնը մինչեւ 1948 թուական, ապա վերջնականապէս կը փակուի: Մուսուլի և Քէրքուկի մէջ եւս, Միութիւնը մասնաճիւղեր կ'ունենայ 1931 թ., սակայն կարճ ժամանակէ ետք կը դադորի գործելէն: Նոյն վախճանը կ'ունենայ նաեւ Հ.Բ.Ը.Միութեան Ոսկեմատեանի մէջ յիշատակուած Սիւլէյմանիյէ քաղաքին մէջ, 1930-ական թուականներուն հիմնուած մասնաճիւղը:<sup>221</sup>

Օսմանեան ժամր լուծը թօթափելէն ետք Պաղտատ հանդիսանալով Իրաքի արաբական նորանկախ պետութեան մայրաքաղաքը, սկսած էր օրէ օր հսկայական քայլերով զարգանալ, վեր համբառնալով այն լճացած և ճահճացած կեանքէն, որ դարերէ ի վեր չորած էր Միջագետքի մէջ ծնունդ առած, աշխարհի հին քաղաքակրթութեան օրրաներէն միոյն սիրտին վրայ: Թէեւ Բրիտանա-

<sup>221</sup> Իրաքահայ Թեմի....., Նշ. աշխ., էջ 183:

կան օտար հովանաւորութեան ներքոյ, այնուամենայնիւ, արդէն զգալի էին երկար թմբիւրէն զարթնած ազգային կենդանութեան նշանները: Անմասն չէին մնար նաեւ Իրաքի մէջ ծուարած մեր ժողովուրդին տարբեր խաւերը, բնիկ թէ եկուոր, որոնք կը վայելէին նորաստեղծ կառավարութեան անվերապահ համակրանքը:

Առաջին զանգուածային ներգաղթի աւարտէն ետք (1922 թ.) և մնացած գաղթականութեան Իրաքի զանազան քաղաքներուն մէջ տեղաւորուելէն յետոյ, Հայ Յեղափոխական Ղազնակցութիւնը հիմնադրեց իր առաջին մասնաճիւղը<sup>222</sup> Պաղտատի մէջ, հիմնական և առանցքային նպատակ ունենալով տարատեսակ հասարակական հաստատութիւններուն միջոցաւ պահել ու պահպանել մեր երիտասարդութիւնը օտարամուտ բարքերէն և վառ պահել ազգային ինքնագիտակցութեան ոգին: Քաղաքական աննպաստ պայմաններու բերումով, երկրի անընդհատ փոփոխուող իշխանութիւններուն անհաստատ և մանաւանդ անկանխատեսելի քաղաքականութեան հետեւանքով, Իրաքի մէջ ՀՀԴ-ն երբեւիցէ բացայայտ գործունէութիւն ունեցած չէ, այլ վերոյիշեալ նպատակը իրագործած է իր հովանաւորութեան տակ գտնուող հասարակական կառոյցներուն գործունէութեանց ընդմէջէն, որոնք էին՝ Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւնը Պաղտատ և Պասրա, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւնը և Հայ Կարօտելոց Խնամակալութիւնը:

Պաղտատ հաստատուող երիտասարդութիւնը, «.....իր առօրեայ աշխատանքէն ետք, անհրաժեշտ կը դատէր իր հաւաքականութիւնը արժեւորող, իր մտաւոր, բարոյական և ֆիզիքական կեանքին սատարող հաւաքատեղի մը ունենալ: Այս փափաքը

<sup>222</sup> Հայ Յեղափոխական Ղազնակցութեան Կեդրոնական Կոմիտէի կողմէն նամակ-իրահանգ՝ ուղղուած Լեւոն Շաղոյեանին Իրաքի մէջ կուսակցական գործունէութիւն սկսելու թիւ 54 – 9.9.1926: ՀՀԴ Կեդրոնական Արխիւ:

ունեցողներուն թիւը կը հասներ հազիւ 45-50 երիտասարդներու, որոնց մէջ կային բժիշկներ, դեղագործներ, փաստաբաններ, ուսուցիչներ և զանազան մասնագէտներ...»<sup>223</sup>

Այս գաղափարը կեանքի կոչելը այլեւս անհրաժեշտութիւն մը ըլլալով, մանաւանդ որ «Ասքանագեան»ը և յաջորդող «Թատերասիրաց»ը Ազգային Քաղաքական ժողովի խստութեան պատճառով, դադրած էին գործելէ, ուստի 1926 թուականի Յուլիս 22-ին, վեց երիտասարդներ, յանձինս Արամ Տիւզեանի, Տօթթ. Գ. Սահակեանի, Յովհաննէս Ս. Յովհաննէսեանի, Արտաշէս Մկրտիչեանի և Խիկար Մովսէսեանի՝ ժողով մը կը գումարեն, նպատակ ունենալով երիտասարդական միութիւն մը հիմնել: Այնուհետեւ, Հիմնադիր ժողովները կը շարունակուին Պաղտատի Ս. Աստուածածին եկեղեցւոյ բակը, մինչեւ այդ տարուայ Դեկտեմբեր 2-ը, երբ կը մշակուի Միութեան Ծրագիր-Կանոնագիրը, որու ամենէն կարեւոր յօդուածներէն են՝ անուանակոչումը՝ **Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւն**, նպատակ՝ սատարել իր անդամներու և հայ հասարակութեան մտաւոր, մշակութային, բարոյական և ֆիզիքական զարգացման՝ չմոռնալով յիշատակել, որ Միութիւնը քաղաքական բնոյթ չունի և չի հետապնդեր որեւէ քաղաքական կամ կուսակցական նպատակ: Վերոյիշեալ նպատակները իրագործելու համար Միութիւնը կ'ընտրէ հետեւեալ միջոցները.

1- Բանալ գրադարան և ընթերցասրահ, 2- Կազմակերպել դասախօսութիւններ, ներկայացումներ, երաժշտական երեկոյթներ և հանդէսներ, 3- Ունենալ մարմնամարզական խումբ, 4- Պահել սեփական նուազախումբ:

Կանոնագիրը՝ բաղկացած 40 յօդուածներէ, կը վաւերացուի Ազգային Քաղաքական ժողովին կողմէ՝ 9 Նոյեմբեր 1926 թուականին

<sup>223</sup> Տօթթ. Սահակեան Գ., Յուշամատեն Պաղտատի ՀեՅԵՄ....., մշ. աշխ., էջ 21:

թիւ Լ. (30րդ) նիստին մէջ, իսկ Իրաքի Ներքին գործոց Նախարարութեան կողմէ՝ 12 Մարտ 1927 թուականին թիւ 407 հրամանագրով:

Յիշատակութեան արժանի է, որ Երիտասարդացը եղաւ Իրաքահայ պատմութեան մէջ առաջին կազմակերպութիւնը, որ ունեցաւ իր բացարձակ անկախութիւնը, զոր չունեցան իր նախորդները, քանի որ բոլոր միութիւնները կը վաւերացուէին Ազգային Իշխանութեան կողմէ և պատասխանատու էին անոր:

Երիտասարդացը՝ իր Կանոնագրի և Ծրագրի բովանդակութեամբ, նոյնպէս Իրաքի հայ գաղութի առաջին կազմակերպութիւնը պէտք է համարել, իր լայն գործունէութեամբ՝ մշակութային, ընկերային, մարզական և այլ մարզերով:<sup>224</sup>

Յ.Ե.Մ.ը, համայնքի ամենազանգուածային անկուսակցական միութիւնն է:<sup>225</sup> Միութեան գործունէութեան հունը կ'ընդգրկէ գրական, մշակութային, ընկերական ձեռնարկներ (դասախօսութեանց, գրական ասուլիսներու և այլ միջոցառումներով): Նաեւ՝ մարզական, թատերական, ազգային երգի-պարի խումբեր և յատկապէս «Կոմիտաս» քառաձայն երգչախումբը, իր օրինակելի և հայ երգին նուիրեալ ղեկավար Կարապետ Քիշմիշեանով, առանց որու շատ բան պիտի կորսնցնէր Միութիւնը:

Վերոյիշեալ նպատակները իրագործելու համար Միութեան Վարչութիւնը նշանակած է զանազան յանձնախումբեր՝ Մարզական, Գրական-Գեղարուեստական, Ընկերային, Համալսարանականներու յանձնախումբ, Տիկնանց Օժանդակ Մարմին, Ընթերցասրահին պատասխանատու յանձնախումբ եւ այլն: «...Այս ակումբում երիտասարդութիւնը դաստիարակուում է ազգային ոգով»:<sup>226</sup>

<sup>224</sup> Յուշամատեան ՀԵԵՄ..., նշ. աշխ., էջ 18:

<sup>225</sup> Հայ Սփյուռք Հանրագիտարան, «Իրաք», Երեւան, 2003, էջ 272:

<sup>226</sup> ՀԱԱ, Ֆ.326, Ց.1, Գ.399, Տեղեկանք՝ Իրաքում հայկական գաղութի մասին, ԽՍՀՄ ղեսպանութիւն, 19.4.1967:

1926 թուականին Միութեան մշակուած առաջին Ծրագիր-Կանոնագրի երրորդ յօդուածով, երբ կը ճշդուին Միութեան նպատակները իրագործելու միջոցները, նոյն յօդուածի թիւ 3 բաժինը կը նշէ՝ «ունենալ մարմնամարզական խումբեր»: Հիմնադրութենէն մինչեւ 1930 թուականը թեմիսը եղած է կարեւոր խաղը, վարժուած ակումբի խաղավայրին վրայ: Այնուհետեւ, 1930-1959 թթ. կը կազմուին տղոց և աղջիկներու կանոնաւոր խումբեր՝ զանազան մարզական խաղերու: Մարզականը զարգանալով կ'ունենայ իր յատուկ կանոնագիրը, վաւերացուած Երիտասարդացի Վարչութեան կողմէ, և խումբն ալ կը կոչուի ՀԱՅ ԱԿՈՒՄԲԻ ՄԱՐԶԻԿՆԵՐ, և կ'ընդգրկէ մարզական բոլոր խաղերը:

Խաղերը կը շարունակուին մինչեւ 1949 թուականը, երբ վարչութիւնը հիմք ունենալով պետութեան նոր օրէնքը՝ կը լուծարէ մարզականը և անդամները կը փոխադրուին նոր կազմուած **Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւն – Հ.Մ.Ը.Մ.**: Նոր անուանակոչումով, արդէն մարզական գործունէութիւնը կը մտնէ նոր փուլ: 1963 թուականին թեմիսի դաշտը կ'ընդլայնուի և կը լուսաւորուի՝ գիշերները նաեւ խաղալու համար: Առաջին ակումբն էր Իրաքի մէջ, որ կ'ունենար գիշերային լուսաւորուած խաղավայր:

Անհրաժեշտ է յիշատակել, որ Երիտասարդացի մարզական կեանքի պատմութիւնը սերտօրէն կապուած է նաեւ Իրաքի տեղական մարզական կեանքին հետ, որու վերելքին իր մեծ ներդրումը ունեցած է: Մարզական գրեթէ բոլոր ճիւղերուն մէջ իր ներկայութիւնով և կազմակերպչական մասնակցութեամբ իր բաժինը բերած է և երբեմն՝ յառաջապահ դիրքերու հասած: Օրինակի համար, ծանրաբարձութեան և մարմնի գեղեցկութեան մրցոյթին 1949 թուականին ժիրայր Քեհեայեանը, Պասարայէն Վաղենակ Պետրոս-

եանը և ուրիշներ շահած են առաջին մրցանակը, որ մինչեւ այսօր արձանագրուած է Իրաքի մարզական տարեգրութեան մէջ:<sup>227</sup>

Հ.Ս.Ը.Ս.ի նպատակն է «...տալ պատանիին ֆիզիքական առողջ դաստիարակութիւն, սատարել անոր ազգային, բարոյական և իմացական բարձրացման, զարգացնելով անհատին մէջ պարտականութեան, պատասխանատուութեան և փոխադարձ օգնութեան ոգին, նշանաբան ունենալով՝ ԲԱՐՉՐԱՑԻՐ ԲԱՐՉՐԱՑՈՒՐ» մարդկային ազնուագոյն յատկանիշներէն մէկը: Ունի սկաուտական խումբեր բոլոր բաժանմունքներով: Վերջին դէպքերէն առաջ, ակունքը ունէր 450 սկաուտներ՝ բաժանուած տարիքի կարգով՝ Գայիկ և Արծուիկ՝ 6-12 տարեկան, Արի և Արեմուշ՝ 12-16 տարեկան և Երէց ու Պարմանուհի՝ 16 տարեկանէն վեր:

Հ.Ս.Ը.Ս.իութեան 50-ամեակը տօնուեցաւ 1999 թուականին: Այս առթիւ ակունքը արժանացաւ Իրաքահայ Թեմի Առաջնորդ Յօր «Գիր Օրհնութեան»:

Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւնը 2000 թուականին բոլորեց իր ազգային-հասարակական գործունեութեան 78 տարին: Թէ՛ 50-ամեակը և թէ՛ 75-ամեակը նշուած են մասնաւոր հանդիսութիւններով: Յիսնամեակի առթիւ հրատարակուած մեծապարփակ Յուշամատեանը պատմութիւնն է ոչ միայն իր (ՀեծՄիութեան – Ս.Օ.), այլև մինչ այդ գաղութին մէջ գործող բոլոր հասարակական, բարեգործական, մարզական և այլ տեսակի միութիւններու և հաւաքներու: Յիսնամեակի առթիւ երջանկայիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ Վազգէն Ա. Կաթողիկոս Ամենայն Հայոց 1 Յուլիս 1974 թուակիր Սուրբ Կոնդակին մէջ կը կարդանք. «...Ջերմօրէն կը շնորհաւորենք Հայ Երիտասարդաց Միութեան Յիսնամեայ Յօրելեանը, բարձրօրէն կը գնահատենք անոր կէս-դարեայ վաստակը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն կը յղենք մեր Հայրապետական Օրհնութիւնը,

<sup>227</sup> Իրաքահայ Թեմի....., Նշ. աշխ., էջ 184:

մաղթելով որ ան շարունակէ իր ազգանուէր գործունեութիւնը այն ոգիով և այն խտով, որ Մեծ Եղեռնէն փրկուած սերունդինը եղան...»:<sup>228</sup>

Իսկ օրուայ Իրաքի Մշակոյթի Ընդհանուր Տնօրէնութիւնը՝ իր Մայիս 13, 1975 թուականին յղած շնորհաւորական ուղերձին մէջ, այսպէս արտայայտուած է. «...Մեր ունեցածը հիացմունք է միայն ինչ որ յաջողած է իրագործել Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւնը մշակոյթի և գեղարուեստի մարզերուն մէջ, որ կ'ընդգրկէ գրականութիւն, բեմադրութիւն, գծագրութիւն և երաժշտութիւն...»:<sup>229</sup>

Միութիւնը կը շարունակէ իր բեղուն և բազմատեսակ ազգանուէր գործունեութիւնը: Ունի իր սեփական շէնքը, ընթերցասրահով, դահլիճով, ընդարձակ կանանչաւետ պարտէզով և 2001 թուականին կառուցուած լողաւազանով:

Երիտասարդացի ծաւալուն գործունեութեան մէջ մինչեւ 2000 թուականը, արձանագրուած են մօտ 1300 երիտասարդ-երիտասարդուհիներ:

Իրաքի երկրորդ հայաշատ Պասրա քաղաքի հայութիւնը, գաղթականութեան ժամանելէն առաջ, կը բաղկանար առաւելապէս, 17-18րդ դարերուն Նոր Ջուղայէն գաղթած ժողովուրդի սերունդներէն, որոնց միակ կապը հայութեան հետ Հայ Առաքելական եկեղեցին էր: Համայնքը, իր ազգային դիմագիծը ստացաւ գաղթականութեան ժամանումով, որոնց մեծամասնութիւնը Վասպուրականէն գաղթած էին՝ բերելով իրենց հետ պատմական Մեծ Հայքին հարազատ և քաղցրահնչիւն բազմազան բարբառներ: «...Այդ օրերուն հայ մարդը, իր առօրեայ ապրուստի ծանր խոհերով տարուած, իր ներքին բնագոյով կը շահագրգռուէր հայ ազգային

<sup>228</sup> Յուշամատեան ՀեծՄ....., նշ. աշխ., էջ 11:

<sup>229</sup> Սոյն, էջ 7: 1975 թ. 13 ապրիլ – وزارة الاعلام – كلمة مديرية الثقافة العامة

կեանքով, կեանք մը ինքնատիպ եռուզեռով և քաղցրայոյզ ապրումներով...»:<sup>230</sup>

1921-էն ետք, և անգլիական խնամատարութեան վերացումով, Նահր Օմարի գաղթականներէն որոշ հատուած մը տեղաւորուած էր արդէն Պասրայի զանազան թաղամասերուն մէջ, ինչպէս՝ Դայոց Քէմփը, Պասրայի մօտ եկեղեցապատկան հողամասի մը վրայ, Մարգիլի նաւահանգիստի շրջանը և այլուր, ըստ գործի յարմարութեան, և որոշ չափով ընտելացած նոր կեանքի պայմաններուն: 1923-1929 թթ. պարբերաբար երեւան կուգան հայրենակցական զանազան միութիւններ՝ Սոկսի Ընկերասիրացը, Վասպուրականի և Թիմարի Դայրենակցականները եւայլն: Այս միութիւններու միջոցաւ նորահաս երիտասարդութիւնը կը ձգտէր ինքնագարգացման և ինքնահաստատման: Կը կազմակերպուէին խաղեր, հանդէսներ, ներկայացումներ: Ամէն ջանք կը թափուէր վառ պահել ազգային ոգին և հաղորդակից պահել նորահաս սերունդը հայ մշակոյթին:<sup>231</sup>

Շատ չանցած, երիտասարդութեան գիտակից առաջնորդները պիտի գտնէին առանձին հայրենակցական միութիւններու գոյութիւնը որպէս ուժերու ջլատում: Ուստի, ի մի գալով և Լեւոն Փաշա Շաղոյեանի ցուցումով, կ'որոշուի համախմբել ուժերը մէկ միութեան մէջ՝ և անուանել զայն «**Պասրայի Դայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւն**»: Պաշտօնական արտօնութիւնը կը ստացուի Ապրիլ 4, 1931 թուականին:<sup>232</sup>

Միութիւնը ցայսօր, եղած է Պասրահայ համայնքի հանրային կեանքի առանցքը՝ իր բազմատեսակ մշակութային և մարզական ձեռնարկներով և ստեղծած խանդավառութեամբ: Ունի իր շէնքը Մարգիլի նաւահանգիստի շրջանին մէջ, պետութենէն վարձուած

<sup>230</sup> Sopp. Մինասեան Վ., «Յուշմատեան Պասրայի Դայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան 1931-1991», Պասրա, 1997, էջ 7:

<sup>231</sup> Տէր Ղուկասեան Գ., «Բսանհիզամեակ...», էջ 72-73

<sup>232</sup> وزارة داخلية العراق - شعبة الامور الذاتية - العدد 3680 التاريخ 4 نيسان 1931

հողաշերտի մը վրայ: Կը բաղկանայ ընդարձակ սրահէ՝ իր բեմով, ընթերցասրահէ՝ ճոխ գրադարանով, ընդարձակ կանանչաւետ պարտեզ և խաղավայրէ:

**Իրաքի Դայ Կարօտելոց Խնամակալութիւնը** գաղութի ամենէն ժիր կազմակերպութիւնն է, որը կոչուած է գաղութային մեր կեանքին մէջ ազգապահպանման նշանակալի դեր կատարել, և այս ուղղութեամբ մատաղ սերունդին ներշնչել ազգային աւանդական արժէքներ, պարմանուհիներէն նախապատրաստել հայ մայրեր, որոնց սրբազան պարտականութիւնն է՝ օտարութեան գայթակղեցուցիչ պայմաններուն հակադրուիլ, զաւակները հայօրէն դաստիարակել՝ չմոռնալով նաեւ օրինակելի քաղաքացիի բոլոր պարտականութիւնները, նշանաբան ունենալով՝ «մանուկին առաջին դպրոցը մայրն է»:

Գաղթականութեան՝ Իրաք ժամանումի առաջին օրէն իսկ Դայ Օգնութեան Միութեան Ամերիկայի Կեդրոնական Վարչութիւնը սերտ կապեր կը հաստատէ Իրաքի Դայ Գաղթականութեան Կոմիտէի նախագահ Լեւոն Շաղոյեանին հետ և կը հասցնէ հարկ եղած օգնութիւնը մինչեւ 1927 թուականը, երբ Իրաքի մէջ կը հիմնուի **Դայ Գրութեան Խաչի** անդրանիկ մասնաճիւղը: Յաջորդաբար կը հիմնուին Դատիտայի, Մուսուլի, Գէյլանիի, Պասրայի, Քէրքուկի,<sup>233</sup> Արլիսի, Խանըկիի, Մարգիլի, Դարեգքի և այլ վայրերուն մէջ: Շատ չանցած՝ Դայ Գրութեան Խաչը Իրաքի մէջ պաշտօնապէս կը վաւերացուի «Դայ Կարօտելոց Խնամակալութիւն» անուան տակ:<sup>234</sup>

Սկզբնական շրջանին Պաղտատի մասնաճիւղը տարած է նաեւ գործունէութիւն՝ կազմակերպական գետնի վրայ և իր անդրանիկ Պատգամաւորական Ժողովը գումարած է 1934 թուականի

<sup>233</sup> «Գոյամարտ» շաբաթաթերթ, Պաղտատ, թիւ 38, Յուլիս 28, 1949:

<sup>234</sup> Դայ Օգնութեան Միութեան հիմնադրութեան 100-ամեակին նուիրուած Մուշմատեան ՀՕՄԻ, 1910-2010, Պոսթրոն, 2010:

Յունուարին: Պատգամաւորականէն ընտրուած է առաջին Կեդրոնական Վարչութիւնը: Այնուհետեւ, աշխատանքներ տարուելով, կազմուած են 13 մասնաճիւղեր Իրաքի գրեթէ բոլոր հայաբնակ վայրերուն մէջ: Անցեալ դարու 50-ական թուականներուն, կազմակերպութեան անդամներուն թիւը 1000-էն աւելի էր, մեծ մասով՝ կանայք: Կազմակերպութեան առաջին գործը կ'ըլլայ տեւական նիւթական և բարոյական օգնութիւն ցուցաբերել ժողովուրդին, ի մասնաւորի՝ կարիքաւոր խաւին: Մուրացկանութիւնը խստիւ կ'արգիլուի: Առաջին աշխարհամարտէն ետք գաղթականութեան հսկայ հոսանք մը հասած էր Իրաք, որոնց մէջ տարածուած էր զանազան տարափոխիկ հիւանդութիւններ: Այս վտանգին դէմ առնելու համար, 1936 թուականին Կարօտելոցի նախաձեռնութեամբ Պաղտատի Գէյլանի քէմփ կոչուող թաղամասին մէջ կը հաստատուի դարմանատուն մը, ուր հայ բժիշկներ կամաւոր կերպով կը բժշկէին դարմանատուն ներկայացող հիւանդները: Հայ Օգնութեան Միութեան հիմնադրութեան 60-ամեակի առթիւ՝ 1970-ին հրատարակուած Յուշամատենին մէջ կը կարդանք հետեւեալ տողերը Իրաքի Հայ Կարօտելոց Խնամակալութեան հասցէին. «...Գաղափար մը տալու համար դարմանատան մատուցած ծառայութեան մասին, ըսենք որ ընդամենը 11 ամսուայ ընթացքին 1936 թ. Ապրիլէն մինչեւ 1937 թ. Մարտ ամիսներուն, դարմանատան կողմէ տրուած են 167 բժշկական այցելութիւններ, կատարուած են 3502 բժշկական քննութիւններ, դարմանուած են 2142 անձեր, տրուած են 7876 դեղագիրներ: Դարմանատունը բաց եղած է բոլորին համար...»<sup>235</sup>: Դարմանատան աշխատանքներուն զուգընթաց, Կարօտելոցը կապ կը պահէր Լիբանանի Ազունիէ բուժարանին հետ, և կ'ապահովէր այնտեղ ղրկուող հիւանդներուն անցագիրն ու ծանապարհի ծախսը: Այսպէս, տարուէ տարի զգալիօրէն բարձրա-

<sup>235</sup> Նոյն տեղը:

ցած է կարօտեալներու և կրթութեան գործին վրայ ծախսուող պիտօն, սակայն տարիներու այդ բեղուն գործունէութեան համար կազմակերպութեան եկամուտները եղած են շատ համեստ անդամավճարներէ, կազմակերպուած ձեռնարկներէ (ճերկայացումներ, գրական-գեղարուեստական երեկոներ, պարահանդէսներ եւ այլն) և պատահական նուիրատուութիւններէ: Յիշատակութեան արժանի են ՀՕՄի տարեկան դրամական յատկացումներն ու բացառիկ առաքումները և Վասպուրականի Հայրենակցական Միութեան յաճախակի նիւթական օգնութիւնները:

Կարօտելոցի աշխատանքները չէին սահմանափակուիր Իրաքի ժողովուրդին հանդէպ ցուցաբերած նուիրուածութեամբ, այլ կը տարածուէին երկրի սահմաններէն դուրս: 1948 և 1967 թուականներուն տեղի ունեցած պաղեստինեան յայտնի աղետալի դէպքերուն պատճառով հազարաւոր պաղեստինցի կարօտեալներուն իր օգնութեան ձեռքը կը մեկնէր և կարելիութեան սահմաններուն մէջ կ'ապահովէր հազուատեղէնով, սպիտակեղէնով և սննդամթերքով: Շատ բնական է, որ իր այս և շատ ու շատ ուրիշ տարբեր մարդասիրական գործունէութեամբ կը վայելէր բոլոր բարեսէր հայորդիներու նիւթական և բարոյական օժանդակութիւնը:

Երբ կառավարական որոշումով 1954 թ. Սեպտեմբերին լուծուեցան Իրաքի մէջ գործող բոլոր կազմակերպութիւններն ու միութիւնները, լուծուեցաւ նաեւ Հ.Կ.Խնամակալութիւնը: Վերջինս դիմեց Ներքին Գործոց Նախարարութեան՝ խնդրելով կազմակերպութեան վերահաստատումը, ինչ որ թոյլատրուեցաւ 1955-ի սկիզբները, կարգ մը փոփոխութիւններ մտցնելէն ետք իր կանոնագրին մէջ: Բարեփոխուած Կանոնագիրը նոյնութեամբ վաւերացուեցաւ Ներքին Գործոց Նախարարութենէն: Ըստ նոր Կանոնագրի, Կազմակերպութիւնը հաշուետու է սոյն նախարարութեան, որուն կը ներկայացնէ իր նիւթական և բարոյական գործունէութեան տարե-

կան տեղեկագիրը: Իրաքի բոլոր շրջաններուն մէջ գոյութիւն ունեցող Ազգային վարժարաններուն մէջ, Խնամակալութիւնը ունէր իր սաները, որոնց կրթաթոշակները կը վճարուէր Կեդրոնական Վարչութեան և մասնաճիւղերու կողմէն:

1958 թ. զինուորական յեղաշրջումէն ետք պետական որոշմամբ երկրի բոլոր կարօտեալներու խնամատարութեան յանձնառութիւնը փոխանցուեցաւ տեղական «Կարմիր Մահիկ»ին, որով այլոց տրուած արտօնագիրները չեղեալ համարուեցան, որոնց շարքին էր նաեւ Կարօտելոցը: Բարեբախտաբար, միայն Պասրայի մասնաճիւղի արտօնագիրը ի գօրու մնացած էր, և կը շարունակէր գործել նոյն թափով մինչեւ Իրաքի մէջ տեղի ունեցած վերջին դէպքերը: Այժմ Կարօտելոցի գործունէութիւնը սառեցուած է, երկրին մէջ տիրող անկայուն և անապահով պայմաններուն պատճառով:<sup>236</sup>

**Իրաքի Հայ Տիկնանց Մշակութային Միութիւնը (Ի.Հ.Տ.Մ.Ս)** հիմնադրուած է 1961 թուականին, որու գլխաւոր նպատակը նոյնպէս նիւթական միջոցներու հայթայթումն էր չքաւոր աշակերտներու կրթաթոշակները ապահովելու համար: Այս նպատակը իրագործելու համար Տիկնանցի իրարայաջորդ վարչութիւնները կը կազմակերպէին պարահանդեսներ, տարբեր բնոյթի միջոցառումներ, ինչպէս նաեւ նուիրատուութիւններ գաղութի բարեսէր ընտանիքներէն: Նուիրեալ անդամուհիներու գործը շարունակուեցաւ մինչեւ 1974 թուականը, երբ Իրաքի ամբողջ տարածքին, ազգային դպրոցները պետականացուեցան և ուսումը եղաւ անվճար: Տիկնանց Միութիւնը ինքզինքը գտաւ նոր և լուրջ հանգրուանի շեմին՝ կամ պէտք էր լուծուէր, քանի որ իրեն գործ չկար ընելիք և կամ փոխէր իր դիմագիծը և ուրիշ ձեւով օգտակար ըլլար գաղութին: Տիկնանցը ընտրեց երկրորդ տարբերակը և իր գործունէութեան սլաքը

<sup>236</sup> Օհանեան Ա.Ս., Հայ Կնոջ Դերը Իրաքահայ Գաղութի Հասարակական Կեանքին Մէջ (1915-2003 թթ.), «Լրաբեր» հասարակական գիտութիւնների, No.1, 2013, Երեւան, էջ 192-201:

ուղղեց հայ մշակոյթին, հայ կանանց և մանաւանդ հայ մատղաշ սերունդին դաստիարակման և ընկերային ու ազգային պատկանելիութեան գիտակցման բարձրացման ազգանուէր գործին:

Ազգային վարժարանի մը բացակայութեան և շաբաթական երկու ժամուան հայերէնի աղքատիկ դասաւանդութենէն փոքրերը անկարող պիտի ըլլային լուրջ հայեցի դաստիարակութիւն ձեռք բերել, մանաւանդ օտարներով գերակշիռ միջավայրի մը մէջ:<sup>237</sup> Տիկնանցի իրարայաջորդ վարչութիւնները, Պաղտատի մէջ գործող միութիւններու կողքին, իրենց ուշադրութիւնը կեդրոնացուցին մշակութային, մարզական և սկաուտական գործունէութեան, որպէսզի հայկականութեան լոյսը երբեք չմարի գաղութին մէջ, մանաւանդ մանուկ-պատանիներու հոգիներէն ներս:

1983 թուականէն Տիկնանցը մեկնարկեց մանկապատանեկան հանդէսներու շարք մը, որ տեւեց 20 տարի, որոնց ընթացքին գաղութի յառաջադէմ գաւակները, փայլուն կերպով աւարտելով պետական քննութիւնները, հրապարակաւ կը քաջալերուէին և կը պարգևատրուէին: Հանդէսներուն ընթացքին կը բեմադրուէին նաեւ ազգային ժողովրդական պարեր, երգեր, թատերական գործեր, արտասանութիւններ, հայոց պատմութենէն դրուագներ, հայ հաւատքի, հայոց լեզուի, հայկական սովորոյթներու, դիւցազներգութիւններու հարուստ շտեմարանէն զանազան թեմաներ:

Տիկնանցի ամենացայտուն ձեռքբերումներէն է Կիրակնօրեայ Հաւաքը վարելու յանձնառութիւնը, Իրաքի Ազգային Կեդրոնական Իշխանութեան և Սրբազան Հօր առաջարկով, զոր կատարեց ամենայն նուիրումով և զոհաբերութեամբ՝ 1985 թուականէն մինչեւ 2003 թուականը: Այս ժամանակաշրջանին 400-է աւելի հայ մա-

<sup>237</sup> Կրթութեան Նախարարութեան թոյլտուութեամբ շաբաթական երկու ժամ միայն արտօնուած էր հայերէն ուսուցանելու:

նուկներ կը ստանային կրօնա-ազգային հայրենասիրական դաստիարակութիւն:

Բարեսիրական, կրթական և մշակութային աշխատանքներու կողքին Տիկնանցը շօշափելի ծառայութիւն մատուցած է նաեւ հայ կնոջ, զանազան դասընթացներու, դասախօսութիւններու, տարբեր ցուցահանդէսներու միջոցաւ, օրինակ՝ հայկական տարազներու, ձեռագործներու, ինչպէս նաեւ կազմակերպելով գրական-գեղարուեստական երեկոներ, յաւերժացնելու ընդհանրապէս հայ կինը և մասնաւորապէս հայ մայրը: Այս առթիւ, արժէ յիշատակել որ Տիկնանցի բազմամեայ ատենապետուհին՝ Տիկ. Շաքէ Արծիւեանը, իր երկարատեւ և արդիւնաշատ գործունէութեան առ ի գնահատանք, 2011 թուականին պարգեւատրուեցաւ Ս.Մեսրոպ Մաշտոց շքանշանով Ամենայն Յայոց կաթողիկոսին կողմէն:

**Պաղտատի Հայ Ընտանեկան Ակումբ - Պ.Յ.Ը.Ա.,** Պաղտատի Հաբիբիէ կոչուած արուարծանը կեդրոնէն բաւականաչափ հեռու գտնուելով, 1969 թուականին, տեղւոյն հայ բնակիչները ի մի գալով, կ'որոշեն ընտանեկան հաւաքավայր մը ունենալ: Ներքին Գործոց Նախարարութիւնը, ընդառաջելով եղած դիմումին իր թիւ 2229 և 25 Սեպտեմբեր 1969 թուակիր արտօնագիր-նամակով, կը հաստատէ ակումբի բացումը:

Ակումբի գործունէութեան մաս կը կազմէր մարզական խաղեր, մասնակցութիւն Յ.Ս.Ը.Մի սկաուտական բանակումներուն եւայլն: Իր ծրագիրներուն իրագործման համար ակումբը կը կազմակերպէր դաշտահանդէսներ Մեծի Պահոց Բարեկենդանի առթիւ, նաեւ այլ առիթներով պարահանդէսներ: Սկաուտական շարժումին մասնակցած են 40է աւելի գայլիկներ:

Սոյն թաղամասէն հայ ընտանիքներու աստիճանաբար նուազելով, ակումբը կը լուծուի 13 Ապրիլ 1978 թուականին, մօտ տասը տարիներու համայնքային աշխոյժ գործունէութենէն յետոյ:

**Տիկին Ռեճինէ Կարապետ Իսքենդէր ՎաքըՖի Գործադիր Մարմին** - հիմնուած է 1976 թ.: Կտակակատար Մարմին-Ազգային բարերար՝ Տիկ. Ռեճինէի ազգին նուիրած կալուածները, դրուած են առաջնորդարանի տրամադրութեան տակ: Կը կառավարուի յատուկ կանոնագրով մը:

Ծնած է Պաղտատ, 1883 թ., և մահացած 1976-ին, իր իսկ կառուցած ծերանոցին մէջ: Բարերարուհին իր ողջութեան ըրած է կարգ մը կտակներ (Հիւջէ Վաքֆիյէ), որպէսզի ապագային իր թողածը ազգանուէր նպատակներու օգտագործուի և կտակը կոչուի «Ռեճինէ Կարապետ Իսքէնտէր վաքըֆ» (կտակ): Կտակուած կալուածներն են հողամաս մը՝ վրան ծերանոց մը կառուցելու, բազմայարկ շէնք մը Սա'ադուն հրապարակին վրայ Նասըր անունով, շէնքեր՝ Ռաշիտ և Աբու Նուաս պողոտաներու վրայ: Բարերարուհին, կտակատար (միւլթվէլի) նշանակած է իր փեսան՝ ճօն Գրիգոր ճուլճեանը, որուն մահուընէ ետք կտակակատարութիւնը կը փոխանցուի թեմի Առաջնորդին: Վերջինս կը նշանակէ չորս անձերէ բաղկացած յանձնախումբ մը, որպէս կտակատար իր նախագահութեան ներքոյ, չորս տարուան ժամանակամիջոցով, որուն անդամները կարելի է վերընտրել նշեալ ժամանակամիջոցի վերջաւորութեան: Սոյն յանձնախումբը բոլոր միջոցները ձեռք առնելու է կտակի պայմանները լիարժէք իրագործելու, որոնք են՝ հոգալ ծերանոցի ծախսերը, օգնել գաղութի չքաւոր խաւին, զարկ տալ մշակութային և կրթական ձեռնարկներուն և կտակուած կալուածները բարուք վիճակի մէջ պահել:

Ծերանոցը կառուցուած է բարերարուհիի ծախսերով, որուն բացումը կատարուած է ձեռամբ Իրաքահայոց թեմի առաջնորդ Յեր Ասողիկ եպս. Ղազարեանի: Ռեճինէ Վաքըֆի գործադիր վարչութիւնը, ազգային ծերանոցի բնակիչներուն ալ աւելի հանգստաւտ ապրելակերպ, կեցութիւն ու դիրակեցիկ պայմաններ ապա-

հովելու նպատակով, 22 Դեկտ. 1976 թուակիր նամակով, նշանակեց ժերանոցի խնամատար յանձնախումբ մը, որու անդամուհիները հերթաբար, շաբաթուան բոլոր օրերուն, ժերանոցէն ներս կը հսկեն ու կ'օգնեն զանազան աշխատանքներուն: Երջանկայիշատակ Ն.Ս.Օ.Տ.Տ. Վազգէն Ա. Ամենայն Յայոց Վեհափառի, 28 Յունուար – 8 Փետրուար 1978-ին Իրաքահայոց թեմին տուած իր շնորհաբեր այցելութեան ընթացքին, այցելեց Ազգային Ծերանոցը, Կիրակի 29 Յունուար 1978-ին: Վեհափառը Ծերանոցի Ա. Կարապետ եկեղեցւոյ դրան շէմին կանգ առաւ բարերարուհիի շիրիմին առջեւ և կարդաց հետեւեալ տապանագիրը, զոր շատ տպաւորիչ գտաւ:

**Այս է գիր հանգստեան Տիկ. Ռէմինէ Կարապետ Իսկէնտերեանի Մեծ Բարերարուհու Շինողի եկեղեցւոյս և Ծերանոցի Որոց ընդհովանեալ հանգչի իւր նշխարք՝ Մահկանացու ծնեալ եւ զանմահ եթող**

**Յիշատակ յերկրի որք մտանէք յեկեղեցին, Տուք ողորմի հոգւոյ սորին**

**Ծնեալ 1883ին և Յանգեալ ի Տէր 7-6-1976ին:**

Ապա յետ Ծերանոցի բնակիչներն այցելելը, հետեւեալ արձանագրութիւնը ըրաւ Յուշամատեանին մէջ.

«Չոգեկան գոհունակութեամբ այցելեցինք Մելինէ Դանիէլ այս ժերանոցը<sup>238</sup> ուր լաւագոյն պայմաններու մէջ խնամքի տակ են տարիքաւոր հայ տիկիներ և պարոններ: Մեր սրտագին գնահատանքը կը յայտնենք եկեղեցւոյ կեդրոնական վարչութեան և ժերանոցի խնամատար վարչութեան բարեսէր անդամներուն:

Բոլորին օրհնութիւն Մայր Աթոռ Ս.Էջմիածնէն ու մեր սրտէն»:

Բազմաթիւ այցելուներու շարքին յիշատակենք նաեւ հայրենի բանաստեղծուհի Մարօ Մարգարեանի տպաւորիչ խօսքերը ժերա-

<sup>238</sup> Մելինէ Դանիէլը բարերարուհիի վաղամեռիկ դուստրն է, որու անունով ալ կոչուած է ժերանոցը:

նոցի Յուշամատեանին մէջ Յունիս 1978ին: «...Ներս ենք մտնում ժերանոց, մաքուր, լուսաւոր սենեակներ, զբաղելու-ժամանցի համար կոկիկ, յարմարաւէտ սրահներ... դուրսը պարտէզ, զբօսարան... Այս ամէնը կառուցել է բարերարուհին, ինքն էլ ապրել է այստեղ, չկայ վաղուց, բայց մեծ նուիրումով շարունակուում է ազնիւ, հոգատար աշխատանքը՝ տարեցների խնամքը, որպէս սրբազան գործ»:<sup>239</sup>

Տարիներու ընթացքին Պաղտատի Ազգային Ծերանոցը բազմաթիւ այցելուներ ընդունած է որոնց շարքին են նաեւ Սերօ Խանգատեանը և Ս.Մուրադեանը: Վերջինս հետեւեալ արձանագրութիւնը ձգած է Յուշամատեանին մէջ «...Այցելեցինք ժերանոց: Նստած են պապիկներն ու մամիկները՝ հանգած կրակի պէս: Ո՞ր տեղացի ես: Վանից, Սասունից, Ջէյթունից, Տրապիզոնից: Ու ճակատագիրը տարբեր ճանապարհներով բերել է նրանց այստեղ: Նստում են նրանք օրերով, ամիսներով, յուշեր են պատմում՝ անցեալի մասին: Մարած կրակներ են, մոխրացած, հանգչող կայծեր...»<sup>240</sup>

Հակառակ տիրող քաղաքական աննպաստ պայմաններուն, երկրի անդորրը ցնցող յաճախակի արհւնալի յեղաշրջումներուն, իրաքահայ համայնքի ազգային և հոգեւոր ղեկավարութեան դրսեւորած բարձր գիտակցութեան շնորհիւ, հոգեւոր- հասարակական գործունէութիւնը երբեւիցէ կանգ չէ առած: 2003 թուակառնի դէպքերը բեկումնային էին Իրաքի հողին վրայ ապրող բոլոր ժողովուրդներուն կեանքին մէջ: Բացառութիւն չէր նաեւ հայ համայնքը: Համայնքի զաւակներէն զոհուեցան 45 հայորդիներ և առեւանգուեցան 32 ուրիշներ, որոնցմէ երկուքի ճակատագիրը ցարդ կը մնայ անյայտ: Մեծապէս տուժեցին երկրին մէջ գործող բոլոր ազգային կազմակերպութիւնները, արհեստական թանկա-

<sup>239</sup> Իրաքահայ Թեմի....., Նշ. աշխ., էջ 163:

<sup>240</sup> Նոյն, էջ 165:

ցումները, անապահովությունը և ահաբեկչական գործողությունները պատճառեցին հասարակական գործունեության ժամանակա-  
ւոր լճացման, բայց ոչ անեացման: Այսուհանդերձ, համայնքը թեև  
խիստ նօսրացած շարքերով, կը շարունակէ իր ազգային և հոգե-  
ւոր գործունեութիւնը: Ակունքներէն ներս, հասարակական գործունե-  
ութիւնը աշխուժ կերպով կը շարունակուի, տեղի կ'ունենան տա-  
րաբնոյթ միջոցառումներ՝ գրական-գեղարուեստական երեկոներ  
նուիրուած Հայաստանի Հանրապետութեան անկախութեան, Վանի,  
Զէյթունի և Մուսա Լերան հերոսամարտերու ոգեկոչման եւ այլն:

## ԳԼՈՒԽ ԵՐՐՈՐԴ - ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿԵԱՆՔ

### 1-Դպրոց

#### ա- Հայ Առաքելական համայնքի դպրոցներ

Իրաքահայ համայնքի կրթամշակութային կեանքը, իր բազմա-  
զան ճիւղաւորումներով, ծեւաւորուեցաւ և զարգացաւ 1920-ական  
թուականներէն սկսեալ՝ պայմանաւորուած Հայոց Սեօ Եղեռնէն  
մազապուրծ արեւմտահայ գաղթականութեան ժամանումով: Ժո-  
ղովուրդի ֆիզիքական գոյութիւնը ապահովելէն ետք, գիտակցե-  
լով որ օտարութեան մէջ, հայ դպրոցի միջոցաւ ջամբուող հայեցի  
դաստիարակութիւնը, հայապահպանման կարելոր և էական կշռա-  
քարերէն մէկն է, համայնքի հոգեւոր և ազգային մարմինները  
լծուեցան դպրոցաշինութեան սրբազան աշխատանքին: Ժամա-  
նակի ընթացքին՝ Յեղասպանութիւնը վերապրող իրարայաջորդ  
սերունդներուն համար, Մ. Իշխանի «Հայ Լեզուն տունն է հայուն»  
բանաձեւումը ո՛չ թէ փոխաբերական թռիչք դարձաւ, այլ ամենօրեայ  
կարգախօս, որու զինումով Իրաքի հայ համայնքը կարողացաւ ըն-  
դառաջ երթալ օտար միջավայրի մէջ առկայ մարտահրաւերներուն:

«...Գաղթավայրի մշակոյթի ամենից կարելոր օճախները նոր  
շրջանում, հանդիսացել են դպրոցները, որոնց նկատմամբ, պէտք է  
ասել, արտակարգ հոգատարութիւն է ցուցաբերուել: Գաղթավայ-  
րում չի եղել, և ներկայումս գոյութիւն չունի հայկական մեծ կամ  
փոքր մի համայնք, որը չունենայ իր դպրոցը: Իրաքահայերը  
դպրոցների վրայ նայել են ոչ միայն մի հաստատութեան, որը  
պարտաւորութիւն ունի կրթելու, դաստիարակելու մատաղ սերն-  
դին, այլեւ մի օճախի, որը հայերին կրթութիւն տալով, պաշտպա-  
նում է նրանց ասիմիլացիոն վտանգից»:<sup>241</sup>

<sup>241</sup> Արրահամեան Ա., Նշ., աշխ., էջ 52:

Պաղտատի մէջ, կաթոլիկ Քափուչին միսիոներական կազմա-  
կերպութիւնները, որոնք աշխոյժ քարոզչական գործունէութիւն կը  
ծաւալէին Իրաքի մէջ, 1628 թուականին՝ իրենց վանքին կից հիմ-  
նած են դպրոց մը, ուր կը յաճախէին հայ (առաքելական և կաթո-  
լիկ) և սիրիաք կաթոլիկ աշակերտներ: Իսկ 1790 թուականին Հայ  
Առաքելական եկեղեցւոյ կից դպրոցի մը մէջ, հիմնուած սոյն թուա-  
կանին, ընդմիջումներով կը դասաւանդէին կղերականները:<sup>242</sup>  
Սակայն 19րդ դարու երկրորդ կէսին դասաւանդութիւնը կը կանո-  
նաւորուի, և դպրոցի շէնքն ալ կ'ընդարձակուի:<sup>243</sup>

Ըստ հայկական աղբիւրներու, Պաղտատի մէջ 19րդ դարու  
սկիզբները, հայեցի կրթութիւն կը տրուէր քահանայի մը կողմէ,  
եկեղեցւոյ կից խուցի մը մէջ, հաւաքուած մանուկներու (մանչերու)  
դասագիրք ունենալով Դաւիթի Սաղմոսը և Աւետարանը: Կը ստա-  
նային նաեւ տարրական թուաբանութիւն:<sup>244</sup>

Մեսրոպ ծ.վարդապետ Կ.Պոլսեցին՝ Ս. Երրորդութիւն եկեղե-  
ցիի կառուցման զուգընթաց, 1852 թուականին, կը հիմնէ նաեւ  
վարժարան մը, մեծ սրահով, չորս դասարաններով ու մեծկակ  
ծաղկոցով մը փոքր տղայոց համար, հարիւրէ աւելի բացառապէս  
Պաղտատցի հայ աշակերտներով: Դպրոցը կ'անուանակոչուի Ս.  
**Թարգմանչաց Ազգային վարժարան:** Երջանկայիշատակ Մես-  
րոպ վարդապետի թելադրութեամբ 1848-1849 թուականներուն  
Էջմիածին կ'առաքուին երկու ուսեալ հայեր՝ Պաղտատսար Դաւի-  
թեանը և Մանուէլ Տիլանեանը: Քանի մը տարի ետք կը վերադառ-  
նան, առաջինը՝ իբրեւ Մեսրոպ քահանայ Դաւիթեան և միւսը՝ իբրեւ

<sup>242</sup> النجار ج. موسى - التعليم في العراق في العهد العثماني الاخير 1869-1918 بغداد 2001 صفحة 254  
(Չամիլ Սուսա Ըլ-Նաջրառ, Կրթութիւնը Իրաքի մէջ Օսմանեան Վերջին ժամա-  
նակաշրջանին 1869-1918 թթ., Պաղտատ, 2001, էջ 254):

<sup>243</sup> - 144 صفحة - نفس المصدر - روفائيل بابو اسحاق (Ռուֆայիլ Բաբու Իսհակ, նշ. աշխ., էջ  
144):

<sup>244</sup> Թաղէտեան Դ., Իրաքահայ Թեմի....., Նշ. աշխ., Նօթեր Տետր 2, էջ 17:

ուսուցիչ: Վերջինս կը հանդիսանայ Ս. Թարգմանչաց դպրոցի  
առաջին տնօրէնը: Կը պատմուի, թէ Իրանի Նասրէտտին Շահը,  
1871 թուականին Շիիներու սրբավայրերը՝ Քերբելա և Նեճէֆ այցե-  
լելու համար կ'անցնի Պաղտատէն: Ս. Տիլանեան, Շահին ժամա-  
նումէն առաջ կը յօրինէ հայերէն գրաբար երգ մը և կը սորվեցնէ  
դպրոցի աշակերտներուն: Ժամանման օրը, ուրիշ դպրոցներու  
կարգին, Հայոց Ազգ. Վարժարանին աշակերտներն ալ կը դիմաու-  
րեն Շահը և կ'երգեն՝ անոր ի պատիւ ձօնուած երգը, որ կը կրկնուի  
քանի մը օր ետքը, երբ Շահը կ'այցելէ Հայոց վարժարանը: Երգին  
բառերը թարգմանուելէն յետոյ, Շահը շատ գոհ կը մնայ և միւթա-  
կան պարգեւներ կը նուիրէ աշակերտներուն, որոնք իրենց կարգին  
ստացած նուէրները կը նուիրեն Ս. Տիլանեանին: Վերջինիս կը յա-  
ջորդէ Սղերդցի Իսրայէլ Խաչատուրեան, որ պաշտօնավարեց  
երեք տարի:<sup>245</sup>

Դպրոցի ուսումնական մակարդակը բարձրացնելու համար,  
օրուան Ազգային Իշխանութիւնը, Առաջնորդ Մաղաքիա ծ.վրդ. Տէ-  
րունեանի միջոցով, կը ձեռնարկուի ուսուցիչի մը առաքումը: Եւ  
այսպէս, 1876 թուականի Դեկտեմբեր ամսուն, Պաղտատ կը ժա-  
մանէ մտաւոր լայն պաշարի տէր, գրաբարի, ֆրանսերէնի, թրքերէ-  
նի և աշխարհագրութեան մէջ հմուտ, Պոլսոյ Նուպար-Շահնազա-  
րեան վարժարանէն ընթացաւարտ Միհրան Հրաչեայ Սվաճեանը,  
որ այնքան էական ծառայութիւններ մատուցեց Պաղտատի մշակու-  
թային ընդհանրապէս և կրթական կեանքին մասնաւորապէս: Իր  
օրով Ս. Թարգմանչաց վարժարանը հասաւ յառաջդիմութեան  
ամենաբարձր աստիճանին և գրաւեց առաջին տեղը Պաղտատի  
բոլոր համաստիճան վարժարաններուն մէջ:

Ս. Սվաճեան, որ ընդհատաբար պաշտօնավարեց նաեւ հայ  
կաթողիկէ համայնքի և թուրք պետական (Ռաշիդիյը) վարժարան-

<sup>245</sup> Գեորգեան Կ., Նշ. աշխ. էջ 406:

ներու մէջ, տարիներու ընթացքին, յաջողեցաւ հասցնել զարգացած և հայօրէն դաստիարակուած երիտասարդութիւն մը: Այս նահատակ ուսուցչապետը, միաժամանակ հիմը դրաւ, վարժարանին կից մարզարանի և գրադարանի մը՝ զարգացնելով ֆիզիքական կրթութիւնը և քաջալերելով ընթերցասիրութիւնը:<sup>246</sup>

Հայկական աղբիւրներու մէջ կը յիշուի, որ այս շրջանին, տակաւին աղջիկներու համար դպրոց յաճախելը անմատչելի ըլլալով, անոնց դաս կը տրուէր տուններու մէջ՝ տարեց ուսուցիչի մը կամ քահանայի մը կողմէ: Սակայն, ըստ արաբ պատմաբան Ջըմիլ Մուսա էլ Նաջջառի՝ 1853 թուականին Պաղտատ վիլայէթի մէջ, կը հիմնուի աղջկանց առաջին դպրոցը, որ կը պատկանէր Հայ Առաքելական համայնքին:<sup>247</sup> Այս փաստը նաեւ հերքում մըն է ուրիշ պատմաբանի՝ Ջօն Դիսքինի յիշատակմանը իր դրքերական ատենախօսութիւնը պաշտպանելու ընթացքին, որ այս դպրոցի հիմնադրման թուականը նշած էր 1900ը:<sup>248</sup>

Դպրոցը նախակրթարանի մակարդակն ուներ, ուր մինչեւ 1898 թուականը կը դասաւանդէին երկու ուսուցչուհիներ: 1899 թուականին աւելցաւ նաեւ ֆրանսերէնի ուսուցումը դասաւանդութեամբ Ս. Թարգմանչաց մանչերու դպրոցի տնօրէն Սիիրան Սվաճեանի,<sup>249</sup> իսկ 1907 թուականին երրորդ ուսուցչուհիի մը հաւալրումով՝ նաեւ գործնական ասեղնագործութիւն և ձեռագործ:

<sup>246</sup> Ալպոյաճեան Ա, Նշ. աշխ. էջ 157:

<sup>247</sup> النجار ج موسى - نفس المصدر صفحة 242

(էլ-Նըջջառ Ջ. Ս., նշ. աշխ. էջ 242 - Այս կապակցութեամբ Իրաքի Արաբ պատմաբանը, հիմնուած է Պաղտատ վիլայէթի «Սալնամէ», 1319 Հիջրէթ թ., էջ 478-479, նշելով նաեւ որ այս դպրոցի անունը յիշատակուած է դեռեւս 1892 թուականի Սալնամէներու (տարեկան տեղեկագիրներ) մէջ - 1310 Հիջ. էջ 139):

<sup>248</sup> Diskin John J., The Genesis of the Government Educational System in Iraq, A doctoral dissertation submitted to the Graduate Faculty in the School of Education, University of Pittsburgh, 1971, page 132.

<sup>249</sup> Սալնամէ Պաղտատ վիլայէթի 1317 Հիջ. տարուայ էջ 173, ըստ նոյն արաբ պատմաբանի:

1892 թուականին աշակերտուհիներուն թիւը 45 էր, իսկ 1907 թուականին՝ արդէն 70:<sup>250</sup>

1901 թուականին կը կառուցուի նոր շէնք մը, ազգային բարերար Յովհաննէս Իսքէնտրեանի կողմէն և կը կոչուի Ջապէլեան Աղջկանց Վարժարան՝ բարերարի վաղամեռիկ դստեր յիշատակին: Այս վարժարանի տնօրէնութիւնն ալ վարեց Մ. Սվաճեան, իրեն օգնական ունենալով պաղտատցի Օր. Աղաւնի Գասպարեանը:

Մ. Սվաճեան, օրուայ առաջնորդին հետ տարակարծութեան մը պատճառով, 1906 թուականին կը հրաժարի Ս. Թարգմանչաց և Ջապէլեան դպրոցներու տնօրէնութենէն և ասոր վրայ, աղջիկներու վարժարանին համար, Պոլսէն 23 Օգոստոս 1908-ին Պաղտատ կը ժամանէ Օր. Թերեզա Շալճեան, որ մեծապէս օգտակար եղաւ հայ աղջիկներու դաստիարակութեան գործին: Օր Շալճեանի անունն ալ երախտագիտութեամբ յիշուած է իր սանուհիներուն կողմէ: Վերջինս կը հեռանայ Պաղտատէն 1911 թուականին: Այնուհետեւ Ջապէլեանին տնօրէնուի կը կարգուի Խարբերոցի Տիկ. Վիքթորիա Ս. Փափագեան, որուն պաշտօնավարութիւնը նոյնպէս արդիւնաւոր կ'ըլլայ:<sup>251</sup>

1917 թուականին, Պաղտատի գրաւումէն վերջ դաշնակիցներու կողմէն, տղայոց Ս. Թարգմանչաց և աղջկանց Ջապէլեան վարժարանները, կը միացուին և այս հաստատութիւնը կը կոչուի «Թարգմանչաց Երկսեռ Վարժարան»: Այս վարժարանը 1923-1924 կրթաշրջանին կը բաժնուէր 7 կարգերու, 189 աշակերտ-աշակերտուհիներով, որոնցմէ 116ը՝ տարագիր, 10 ուսուցիչներով և միայն 21.350 ռուփի պիւտճեով: Խմբագրուած ծրագիր չունէր: Սանկապարտէզի բաժինը Ա-Բ բաժանումով կը բաղկանար 92 աշակերտներ:

<sup>250</sup> جميل موسى النجار - نفس المصدر صفحة 242

(էլ-Նըջջառ Ջ.Ս., նշ. աշխ. էջ 242):

<sup>251</sup> Գեորգեան Կ., Նշ. աշխ., էջ 410-411:

1921 թուականին, Նահր Օմարի գաղթականյանի մասամբ վերացումով, գաղթականներէն ոմանք կը հաստատուին Պաղտատի Գէլյանի Քէմփին մէջ, որ կարելոր վրանաքաղաք մը, ապա հիւղական մը եղաւ: Նահր Օմարի մէջ մնացած ժողովուրդը, 1923-1924 թթ. ունէր 6 կարգերով նախակրթարան մը, որը մանկապարտեզի հետ միասին կը հաշուէր ընդամենը 233 երկսեռ տարագիր աշակերտներ, 9 ուսուցիչներ և 4000 ռուփի պիւտճէ, առանց որոշ կրթական ծրագիրի:<sup>252</sup>

Իսկ Գէլյանի Քէմփին մէջ տեղակայուած գաղթականներու զաւակներուն համար համեստ դպրոց մը կը բացուի: Այս դպրոցի կառավարումը 1932 թուականին կը փոխանցուի Ազգային Իշխանութեան, իսկ վարժարանի շէնքն ալ կը տեղափոխուի Քէմփին մօտիկ հայոց գերեզմանատան շրջափակէն ներս, ազգապատկան կալուածի հողաշէն շէնքի մը մէջ: Առաջնորդարանի կարգադրութեամբ դպրոցը յանձնուեցաւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան խնամատարութեան՝ տասը տարուան պայմանաժամով և կոչուեցաւ Սվաճեան Վարժարան՝ Միհրան Հրաչեայ Սվաճեանի յիշատակին: Իսկ Ս.Թարգմանչաց վարժարանը կը շարունակէր Շօրճայի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ շրջափակէն ներս՝ այդ շրջանի աշակերտութեան համար:

Հ.Բ.Ը.Միութեան հետ պայմանագրութեան վերջաւորութեան՝ 1946 թուականին, Սվաճեան դպրոցը վերստին կը փոխանցուի Ազգային Իշխանութեան: Երկու նախակրթարաններն ալ կը ղեկավարուէին Ազգային Իշխանութեան կողմէն՝ անջատ շէնքերու մէջ: 1946 թուականին Ս. Թարգմանչաց դպրոցը կ'ունենայ իր Ա. Միջնակարգ (7րդ) դասարանը՝ 6 աշակերտներով: 1949ին Սվաճեանի

<sup>252</sup> 1921-1922 թթ. զանգուածային ներգաղթէն ետք, Նահր Օմարի մէջ տակաւին կը մնային որոշ թիւով տարագիրներ, որոնք ունէին դպրոց, եկեղեցի, մաշեքատրոն:

և Թարգմանչացի միացումով և տարուէ տարի աշակերտներու ստուարացումով՝ 1954 թուականին կը դառնայ լրիւ երկրորդական (միջնակարգ), 1955-1956 տարեշրջանին տալով անդրանիկ շրջանաւարտներ՝ երեք մանչ և մէկ աղջիկ:

1949 թուականին՝ գերեզմանատան շրջափակէն ներս, շէնքին կարելոր նորոգութիւններ և յաւելեալ դասարաններ կառուցանելէ ետք, երկու դպրոցները միացնելով, դպրոցը կոչուեցաւ «Ազգային Միացեալ Վարժարան»: Ժամանակի ընթացքին, աշակերտութեան թիւը բազմապատկուելով, կարիքը կը զգացուի յաւելեալ դասարաններու: 1962 թուականին, երեք յարկանի շէնք մը կը կառուցուի միջնակարգ և երկրորդական բաժիններուն համար: Իսկ Գալուստ Կիւլպէնկեան հիմնարկութեան ծախսով միջոցառումներու համար կը կառուցուի ընդարձակ սրահ մը:

Ստորև կը ներկայացնենք Պաղտատի Ազգային Միացեալ  
դպրոցի աշակերտութեան պատկերը մինչեւ 1974-1975 թթ.<sup>253</sup>

կրթական տարեշրջան	մանկապարտեզ	նախակրթարան	երկրորդական	ընդհանուր գումար
1949-1950	172	634	34	840
1950-1951	135	605	31	771
1951-1952	98	663	29	790
1952-1953	195	650	49	894
1953-1954	217	655	72	944
1954-1955	200	629	83	912
1955-1956	214	657	86	957
1956-1957	203	691	118	1012
1957-1958	212	681	124	1017
1959-1960	240	666	191	1097
1960-1961	221	695	228	1144
1962-1963	288	801	231	1320

لازاريان ه. م. - مدرسة الارمن المتحدة الاهلية و مدرسة الارمن الاساسية الاهلية المختلطة - بغداد صفحة 8. <sup>253</sup>  
2010

(Լազարեան Յովսէփ, Պաղտատի Ազգային Միացեալ Դպրոց և Հայոց Ազգային Տարրական Երկսեռ Վարժարան, Պաղտատ, 2010, էջ 8):

1963-1964	263	773	215	1251
1964-1965	270	800	197	1267
1965-1966	287	833	200	1320
1966-1967	274	872	209	1355
1967-1968	267	915	236	1418
1968-1969	276	946	276	1498
1969-1970	249	937	298	1484
1970-1971	218	937	307	1462
1971-1972	199	944	304	1447
1972-1973	214	922	330	1466
1973-1974	185	813	296	1294

Այս և միւս բոլոր ազգային դպրոցները, ինչպէս վերը նշեցինք, կը պետականացուին 1974 թուականին: Առաջնորդ Սրբազան Հայրը և Ազգային Կեդրոնական Վարչութիւնը, բաւարար չհամարելով պետութեան կողմէն թյուտրուած շաբաթական երկու պահ հայոց լեզուի և երկու պահ ալ կրօնի դասաւանդութիւնը, կը ձեռնարկեն Կիրակնօրեայ դպրոցի մը բացման, որ կեանքի կը կոչուի Փետրուար 1985 թուականին և կը շարունակուի մինչեւ 2004 թուականը, երբ վերաբացուեցաւ Ազգային Թարգմանչաց-Սվաճեան Վարժարանը, վերանուանուելով՝ **Հայ Ազգային Տարրական Երկսեռ**

**Վարժարան** և մանկապարտեզ մը:<sup>254</sup> Դպրոցի վերաբացման առթիւ Իրաքահայ Թեմի երկարամեայ Առաջնորդ Գեորգ Տ.Աւագ Ասատուրեանը հարցազրոյցի մը ընթացքին այսպէս արտայայտուած է. «...Կեանքիս ամենէն երջանիկ պահերէն մէկն էր, երբ հնչեցուցի ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑԻ վերաբացումը աւետող առաջին զանգը: Ատիկա տեղի ունեցաւ 2004 թուականի Հոկտեմբեր 15-ին ժամը 12.20-ին: Այնքան յիշատակելի պահ էր»:<sup>255</sup>

### **Սլեխի Արեւմտեան աւանը և դպրոցը**

1939 թ. վարձակալուած շէնքի մը մէջ դպրոց մը կը հիմնուի նաեւ Պաղտատի Սլեխ աւանին մէջ գնուած հողամասի մը վրայ, ուր ժամանակի ընթացքին բնակչութեան թիւը կը հասնի մինչեւ 120 ընտանիքի, իսկ աշակերտութեան առաւելագոյն թիւը եղած է 120 աշակերտ, որմէ 29ը՝ մանկապարտեզի մանուկներ, 91ը՝ նախակրթարանի վեց դասարաններուն մէջ: Դպրոցի հոգաբարձութիւնը սեփական շէնք մը ունենալու նպատակով, կը ձեռնարկէ ազգապատկան հողամասի մը վրայ շէնքի կառուցման: Շինարարութեան ծախսերը ինչպէս միշտ, կ'ապահովուի նուիրատուութիւններէ և ժողովրդային հանգանակութեամբ: 1944-1945 թթ. դպրոցական տարեշրջանը կը սկսի նորաշէն դպրոցի շէնքին մէջ:

1947 թ. ներգաղթի և ոմանց քաղաքի կեդրոնը փոխադրուելուն, թաղամասի բնակչութիւնը կը սկսի նուազիլ, որուն իբր հետեւանք դպրոցը կը փակուի՝ Կրթական Տնօրէնութեան 29 Նոյեմբեր 1961 թուակիր նամակով:<sup>256</sup> Իսկ դպրոցի ազգապատկան հողամասը և քանի մը կալուածներ առաջնորդարանը կը վաճառէ, և հասոյթը Ս.Երրորդութիւն եկեղեցւոյ կալուածին վրայ արդիական շուկայի մը կառուցման ծախսերը հոգալու համար: 1998 թ. այս

<sup>254</sup> Ակարը Յաւելուածներու բաժնի մէջ:

<sup>255</sup> «Կանթեղ» Իրաքի Հայոց Առաջնորդարանի պարբերական, Թիւ 32, 2008, էջ 57:

<sup>256</sup> Իրաքահայ Թեմի....., Նշ. աշխ., էջ 153:

աւանին մէջ մնացած էին հազիւ մէկ տասնեակ հայ ընտանիքներ:<sup>257</sup>

### **Պաղտատի Նորաշէն աւանի Ազգային Արեւելեան Վարժարան**

1935 թ. Տիգրիս գետի յորդումի հետեւանքով կալուածատէրը կառավարական հրահանգ ստացաւ շրջանի տուներէն մաս մը փլցնել՝ արեւելեան թումբը բարձրացնելու համար: Ուստի Գէլլանի Քեմփէն որոշ ընտանիքներ տեղափոխուեցան Պաղտատի արեւելեան կողմը՝ ութ քիլոմէթր հեռու, հանրածանօթ բարերարուհի՝ Տիկ. Սառա Թաղեմեանի կողմէն յատկացուած հողամասին վրայ հաստատուելու մտօք: Այս նորակառոյց աւանը կոչուեցաւ Նորաշէն, որու հիմնադիրն է Ձէթունցի Յովհաննէս Սեմերճեանը:<sup>258</sup> Վերջինս՝ 1935 թուականին կը կառուցէ իր սեփական տունը: Իր օրինակին կը հետեւին բազմաթիւ ընտանիքներ: Այստեղ բնակչութեան թիւը կը հասնի մինչեւ 200 տուն, մեծամասնութեամբ գէյթունցիներ, հաճընցիներ և քիչ թիւով ուրիշներ: Աւանի հիմնադրութեան առաջին իսկ տարին 1936 թուականին կը բացուի դպրոց մը՝ վարձակալուած ընդարձակ սենեակի մը մէջ՝ 54 աշակերտներով, մանկապարտեզով և նախակրթարանի առաջին և երկրորդ դասարաններով:

1941 թուականին աւանի աստիճանաբար ընդարձակուելով, Նորաշէնն ոչ հեռու, մեծ շէնք մը կը վարձուի, ուր կը տեղադրուին աւանի աշակերտները: 1943 թ.էն սկսեալ դպրոցն ունեցաւ նախա-

<sup>257</sup> Նոյն, էջ 154:

<sup>258</sup> Յովհաննէս Սեմերճեան ծնած է Ձէթուն, 1906 թուականին: Տարագրութեան տարիները անցուցած է անապատի արարներուն մօտ: Զինադադարին, անօգնական վիճակի մէջ նետուած է Պաղտատ: Սկզբնական շրջանին ուրիշներու մօտ աշխատելով՝ հայուն յատուկ ձեռներեցութեամբ, կարճ ժամանակուայ մէջ կրցած է ունենալ իր սեփական գործը և լաւ դիրքերու հասնիլ: Եղած է Գաւառականի, Քաղաքականի, Ազգ. Կեդրոնական Վարչութեան և Կրթական Յանձնախումբի անդամ: Մահացած է 1976-ին:

կրթարանի վեց կարգեր և մանկապարտեզ մը: 1966-1967 դպրոցական տարեշրջանին ունէր 147 աշակերտ, 79 տղայ, 68 աղջիկ և 9 ուսուցչուհիներ: Դպրոցը կը կոչուէր «Ազգային Արեւելեան Վարժարան»: Վեցերորդ դասարանի աշակերտութիւնը կը մասնակցէր պետական պաքալօրիայի քննութիւններուն:

1944 թուականին աւանի հիմնադիր Պրն. Յովհաննէս Սէմէրճեանի ու ժողովուրդի ջանքերուն շնորհիւ հիմը դրուեցաւ դպրոցի սեփական շէնքի մը՝ 10 դասարաններով: Շինարարութեան աշխատանքը տարած է աւանի բնակչութիւնը՝ աշխատելով մինչեւ առաւօտեան ժամերը: Շինարարութեան ծախսերուն մասնակցած է կարեւոր գումարով մը աւանի հիմնադիրը, իսկ մնացեալ մասը հայթայթուած է ժողովուրդի նուիրատուութեամբ:

Նորաշէնի դպրոցը հիմնադիրի՝ Պրն. Սէմէրճեանի մասնաւոր հոգատարութեան առարկան եղած է: Աշակերտները անսահման սիրով կապուած էին անոր և զինքը կը կոչէին «Սէմէրճեան հայրիկ»: Դպրոցը փակուեցաւ 14 Յոկտեմբեր 1970 թ.:<sup>259</sup>

Պասրա՝ Իրաքի երկրորդ հայաշատ քաղաքը, շատ բարգաւաճ գաղութ մը ունեցած է 17-19րդ դարերուն, որ պայմանաւորուած էր այդ քաղաքի մէջ հանգրուանած Պարսկաստանէն գաղթած վաճառականական դասին աշխոյժ գործունէութեամբ: Ունէին երեք դպրոցներ,<sup>260</sup> որոնց մասին դժբախտաբար վաւերական ստորյգ տեղեկութիւններ կը պակսին: Ս. Աստուածածին եկեղեցին (կառուցուած 1736 թ.) ունեցեր է իր վարժարանը, որու գոյութիւնը կը փաստուի այն իրողութեամբ, որ 1754 և 1760-1763 թուականներուն, Պասրայի հոգեւոր առաջնորդն էր Տ. Գեորգ եպիսկոպոսը, որ ուսած էր իր ծննդավայր Պասրայի մէջ:<sup>261</sup>

<sup>259</sup> Իրաքահայ Թեմի....., Եշ. աշխ., էջ 151-154:

<sup>260</sup> «Հայրենիք ամսագիր», ԺԸ տարի, թիւ 6, էջ 106-114:

<sup>261</sup> Մելքոնեան Վ. Եշ. աշխ., էջ 64:

1910 թ., քանի մը ազգամուէր հայ անհատներ, ի մի գալով, մանկապուրակ մը բանալու գաղափարը կու'նենան: Այսպէս մեծամեծ ջանքերով մանկապարտեզ մը հիմնուեցաւ Ս. Աստուածածին եկեղեցւոյ գաւիթը՝ Վարդանանց Վարժարան անունով և քսաներկու աշակերտներով, որ թէև կարծաւեւ, բայց շատ բեղուն կեանք մը ունեցաւ, յատկապէս Սղերդցի Տէր Պետրոս Ղարիբճանեանի տնօրէնութեան ժամանակաշրջանին, երբ աշակերտութիւնը յառաջդիմեց հսկայաքայլ, ոսկեղինիկ մայրենի լեզուին մէջ իր ընծայած հայեցի դաստիարակութեամբ:<sup>262</sup> Դժբախտաբար, այս վարժարանը ինչպէս նշեցինք, կարճ կեանք ունեցաւ, քանի որ 1911 թ. ամերիկեան միսիոնարութիւնը Պասրայի մէջ երկու վարժարաններ բանալով, մէկը մանչերու և միւսը աղջիկներու համար, հայ երկսեռ աշակերտութիւնը աստիճանաբար ձգեց Վարդանանցը և դիմեց այդ զոյգ կրթարանները, ուր կ'ուսուցանէին նաեւ անգլերէն և արաբերէն, որ ինքնին շօշափելի առաւելութիւն կը կազմէր Վարդանանցի նկատմամբ: Այս պատճառով 1912 թ. ընդմիջտ փակուեցաւ Պասրայի Վարդանանց Վարժարանը:<sup>263</sup>

Այնուամենայնիւ, հայ ծնողները, նախանձախնդիր իրենց զաւակաց հայեցի դաստիարակութեան, 1920 թ. կը յաջողին օտար դպրոց յաճախող հայ երեխաները ի մի բերել գէթ ամառնային արձակուրդներուն, և անոնց Մայրենին սորվեցնել: Այդ նպատակին համար ուսուցիչի պաշտօնը կը յանձնուի եկեղեցւոյ լուսարարին՝ Պրն. Ոսկեան Ծնունդեանին:

1921 թ. Նահր Օմարի գաղթականներէն 100 ընտանիք հանգրուանած էին Պասրայի Հայոց Քէմի կոչուած վայրին մէջ: Ուստի, դպրոց մը ունենալու խնդիրը կը դառնար անյետաձգելի պահանջ մը: Հետեւաբար օրուայ թաղական խորհուրդը որոշում կը կայաց-

<sup>262</sup> Նոյն էջ 66:

<sup>263</sup> Նոյն:

նէ կառուցանել ազգային դպրոց մը, որ տեղի կ'ունենայ նոյն թուականին, եկեղեցւոյ շրջափակին մէջ, տեղացի հայերու կողմէն եղած նուիրատուութիւններով: Հետագային՝ 1931 թուականին, ազգային բարերար Սիմոն Ղարիպեանի առատածեռն ծախքերով, եկեղեցւոյ կից շէնք մը կը գնուի և կը յատկացուի ազգային դպրոցին: Դպրոցը կը կոչուի բարերարին անունով՝ *Ղարիպեան Վարժարան*: Այս դպրոցը կը յաճախէին գլխաւորապէս քաղաքին մօտ բնակուող ժողովուրդին զաւակները և Նահր Օմարի ժողովուրդէն ուրիշ կարելոր հատուած մը, որոնք իբր պաշտօնեայ և արհեստաւոր յաջողած էին գործ գտնել նաւահանգիստի, երկաթուղիի և կամ զինուորական այլ և այլ հաստատութիւններուն մէջ և կայք հաստատել Մարգիլի նաւահանգիստի շրջանը, որ 10-12 քիլոմէթր հեռու է քաղաքէն:

Ինչպէս վերը նշեցինք, 1921 թուականին, Բրիտանական խնամատարութեան վերացումով ժողովուրդէն շօշափելի հատուած մը, որ բախտ չէր ունեցած Հայրենիք ներգաղթողներու կարաւաններուն մաս կազմելու, կը մնար և կը հարկադրուէր յարմարուիլ նոր կացութեան, ինչպէս որ հնարաւոր էր: Կարգ մը Մուսուլի շրջանը անցան, կարգ մը՝ Պաղտատ, բայց խոշորագոյն մասը մնաց Նահր Օմար, ուր Գաղթականական Կոմիտէն իր աղքատիկ միջոցներով ապահոված էր ամէն կարգի «յարմարութիւններ», որ համայնքի մը համար անհրաժեշտ էր գոյատեւել, ինչպէս օրինակ, եկեղեցի, դպրոց, տեղական ոստիկանութիւն, առողջապահական կազմ, դեղարան և շուկայ, նոյնիսկ թատրոն: Այս յարմարութիւններուն շնորհիւ էր, որ 1921 թուականէն մինչեւ ժողովուրդի վերջին մասի փոխադրութիւնը Հաւրէք գիւղը (Մուսուլի Շրջան), 1929-1930 թուականներուն, գաղթականութեան կեդրոնը մնաց Նահր Օմար, թէւ շատեր մինչ այդ, բնակութիւն հաստատած էին Պասրայի մօտակայ շրջաններուն մէջ, ինչպէս Հայոց Քէմփը՝ Պասրայի մօտ

եկեղեցապատկան հողամասի մը վրայ, նաեւ Մարգիլի նաւահանգիստի շրջան, Շէյպայի օդակայանի շրջան (Պասրայէն շուրջ 20 քիլոմէթր հեռու), փոքրաթիւ գաղութ մըն ալ պիտի կազմուէր հեռաւոր Ֆասի մէջ (Պասրայէն 90-100 քիլոմէթր հարաւ) և այլուր, ըստ գործի յարմարութեան: Այս բոլորը պիտի կապուէին Պասրայի հետ, ուր կար եկեղեցի՝ Ս. Աստուածածինը և դպրոց՝ Ղարիպեան վարժարանը:

Ահա գաղթականութեան այս մնացորդացը, որոնք մեծամասնութեամբ Վասպուրականցիներ էին, պիտի մնային և ստուարացնէին Պասրայի մինչ այդ 30-40 տուն ունեցող փոքրաթիւ համայնքը՝ նոր կեանք և աշխուժութիւն ներարկելով անոր:<sup>264</sup>

Մինչեւ 1930 թուականը «Ղարիպեան»ը միակ հայ դպրոցն էր Պասրայի մէջ, ուր կը յաճախէին ոչ միայն Պասրայի «տեղացի»<sup>265</sup> հայ, այլ նոյնպէս մօտակայ հայ գիւղի գաղթականներու երեխաները: Այնուամենայնիւ, այս դպրոցը հասանելի չէր Մարգիլի մէջ հաստատուած երեխաներուն, քանի որ 7-10 քիլոմէթր հեռու էր իրենց բնակած վայրէն և երթելելութեան միջոցները՝ սակաւ: Ուստի, ժողովուրդի միահամուռ ջանքերով, և կարգ մը նուիրեալ ազգայիններու հանգանակած գումարներով կարելի կ'ըլլայ Մարգիլի Պայ Ազգային Վարժարանի դպրոցը կառուցել: 1931 թուականին, երբ այս շրջանի մէջ որեւէ դպրոց գոյութիւն չուներ, Մարգիլի 30-35 տուն ունեցող համայնքը կ'ունենար իր դպրոցական շէնքը երեք խոշոր սենեակներով և բեմով մը: Շէնքին վրայ, ութ տարի վերջ, պիտի աւելնային երկու սենեակներ եւս, որ պիտի ծառայէր գաղութին թէ՛ որպէս դպրոց և թէ՛ որպէս սրահ, համայնքի բոլոր հասարա-

<sup>264</sup> Տր Դուկասեան Գ. Քսանհիգամեակ....., Նշ. աշխ., էջ 69-70

<sup>265</sup> «Տեղացի» կը կոչուէին այն հայերը որոնք կայք հաստատած էին Իրաքի տարրեր քաղաքներու մէջ, դեռեւս Շահ Աբբասի կողմէն Արարատեան դաշտէն յոնազաղթուած ժողովուրդին սերունդը:

կական ձեռնարկներուն համար, քանի որ միջնորմերը շարժական էին և պահանջել հարկին՝ կարելի էր սրահի վերածել:

Դպրոցը զարգացած է աստիճանաբար՝ նախապես ունենալով միայն մանկապարտեզ, յետոյ նախակրթարանի քառամեայ և հիմնական շրջաններ, ապա լրիւ վեցամեայ նախակրթարան, բաքալորիայի շրջան (պետական քննութեան մասնակցելու իրաւունք):

Սակայն շուտով այս շէնքն ալ փոքր կուգար աշակերտութեան, որու թիւը 140ը կ'անցներ: Հետեւաբար, օրուայ Հոգաբարձութիւնը կը դիմէ Նաւահանգիստի Տնօրէնութեան՝ նոր հողամասի մը համար, ուր պիտի կառուցուէր դպրոց և Հ.Ե.Միութեան ակումբ: Առաջնութիւնը տրուեցաւ ակումբի շինութեան, որպէսզի վերջինիս ձեռնարկներէն գոյացած հասոյթով հնարաւոր ըլլար կառուցել նաեւ դպրոցը: Եւ եղաւ այդպէս: Միութեան և դպրոցի Հոգաբարձութեան միացեալ ջանքերով և մանաւանդ մեր ժողովուրդի անսակարկ նուիրումով՝ 1945 թուականին կ'աւարտուի դպրոցի շէնքը, սալայատակուած ընդարձակ բակով և սրահով:

Հետեւեալ ցուցակը կը ներկայացնէ Մարգիլի Հայ Ազգային Վարժարանի աստիճանաբար զարգացման փուլերը:

Կրթական տարեշրջան	Աշակերտութեան թիւ	Ուսուցչութեան թիւ	Պիւտճէ Ի.Տ.
1931-1935	25-50	1-3	30-200
1935-1940	50-90	3-5	200-300
1940-1945	90-140	5-6	300-1418
1945-1950	140-180	6-7	1418-1620
1950-1955	180-260	7-9	1620-2000

Մարգիլի Հայ Ազգային Վարժարանը այդ օրէն կը բաղկանայ մանկապարտեզէ և նախակրթարանի 6 դասարաններու բաժա-

նումներէն, որ գործած է մինչեւ 1963 թուական, երբ նաւահանգիստի տնօրէնութիւնը կը դադրեցնէ հողամասը վարձել:

Պասրայի Թաղական Խորհուրդի անվիատ ջանքերուն շնորհիւ 1965 թուականին կը յաջողուի Կիւլպէնկեան հաստատութենէն նիւթական օժանդակութիւն մը ապահովել, պասրահայութեան համար արդի շինութեամբ դպրոց մը կառուցանել երկու բաժանմունքներով՝ մանկապարտեզ և վեցամեայ նախակրթարան: Վարժարանը բացուեցաւ 1964-65 ուսումնական տարեշրջանին, ուր ջանասիրաբար սկսաւ յաճախել համայնքի հայ աշակերտութիւնը:<sup>266</sup>

1974 թուականին Պասրայի ազգային դպրոցն ալ, ի շարս երկրի բոլոր ազգային սեփական դպրոցներուն, պետականացուեցաւ և շնորհիւ Ազգային Կեդրոնական Վարչութեան ջանքերուն, հայերէնի և կրօնի դասաւանդութիւնը Պասրայի մէջ եւս շարունակուեցաւ մինչեւ 2003 թուական: Թէեւ դպրոցը կը վերադարձուի իր օրինական տէրերուն, սակայն յաճախող հայ մանուկներու արդէն շատ նօսրացած և ցանցառ թիւերով:

Յիշատակութեան արժանի է, որ այս գաղութի վարժարաններու աշակերտներէն բաւական թիւ մը, Իրաքի և արտասահմանի համալսարաններէն շրջանաւարտ եղած են որպէս բժիշկներ, ճարտարագէտներ, քիմիկոսներ և այլ ճիւղերու մասնագէտներ:

Իրաքի միւս հայաշատ կեդրոններուն մէջ՝ Սուսուլ, Քէրքուկ, Չախօ, Աւզրուկ և Հաւրէզք, ազգային վարժարաններ հիմնուած են իւրաքանչիւր շրջանի մէջ տարբեր թուականներուն, տուեալ հայ համայնքի թիւի աճման հետ առընթեր: Սոյն շրջաններուն դպրոցները, ազգային իշխանութեանց հովանաւորութեան տակ կը գտնուէին՝ գործադրելով պետական կրթական տնօրէնութեան ուսումնական պահանջները, առաւել՝ դասաւանդելով հայերէն, հայոց պատմութիւն և կրօն: Հաւրէզքի մէջ 1932 թ. հիմնուած է նորակա-

<sup>266</sup> Տօքթ. Մինասեան Վ., Նշ. աշխ., էջ 38-39:

ռոյց դպրոց մը որը «... վիթխարի միւթական և բարոյական գոհողութիւններու արդիւնքն է: Դպրոցի կահաւորման մեծապէս նպաստեցին մեր արտասահմանի յարգոյ հասարակութիւնը, որը աւելի դիրութիւններ ստեղծեց աշակերտներու համար. գրասեղան և աթոռ...»: <sup>267</sup> Դպրոցի նոր շէնքի բացումը կատարուած է 1933 թ. Դեկտեմբեր 4-ին, ուր չորս ուսուցիչներ և երեք ուսուցչուհիներ կը դասաւանդէին 220 աշակերտներու. 123 մանչ և 97 աղջիկ բաժնը: Ուած եօթը կարգերու որոնցմէ երկուքը մանկապարտեզի բաժին: Մնայուն պիտօճէ չունենալուն պատճառով, դպրոցը կը գոյատեւեր միմիայն նուիրատուութիւններով: <sup>268</sup>

Մուսուլի մէջ 1857 թ. Ա.Էջմիածին եկեղեցւոյ կառուցումէն ետք հայ մանուկներ մայրենին սորված են եկեղեցւոյ շրջափակէն ներս: 1910ական թուականներուն 20-25 ընտանիքներէ բաղկացած այս փոքրիկ գաղութը, ունեցած է նախակրթարան մը ըստ Մուսուլի թաղականութեան 01 Ապրիլ 1911 թուակիր նամակին մէջ, ուղղուած Կ.Պոլսոյ պատրիարքական տեղապահ Վահան եպս. Մանկունիի: Սոյն նամակով օժանդակութիւն կը խնդրուի դպրոցին համար: Վերոյիշեալ նամակը Պատրիարքարանի կողմէն յղուած է Պաղտատի Առաջնորդարանին՝ վիճակի մասին տեղեկութիւններ պահանջելով: Վերջինիս արխիւներուն մէջ սոյն դպրոցի մասին յաւելեալ տեղեկութիւններ կը պակսին, թէ դպրոցը որքան ատեն գոյատեւած է:

1919-1920 թթ. Մուսուլ կը ներկայացնէր 3000-4000 գաղթականներէ բաղկացած համայնք մը, որու կազմակերպութեան աշխատանքին, ձեռնամուխ կ'ըլլայ արագօրէն կազմուած թաղական խորհուրդ մը, ատենապետութեամբ հանրայայտ հասարակական

<sup>267</sup> Լեւոն Շաղոյեանի արխիւ, տեղեկագիր «Հայ Կեանքը Հաւրեգքի մէջ» 13 Մարտ 1934:

<sup>268</sup> Նոյն տեղը:

գործիչ Տոքթ Գրիգոր Ասթարճեան: Անմիջապէս գործի անցնելով առաջնահերթութիւնը կը տրուի կրթութեան հարցին: Մեծ պո-դոտային վրայ, ընդարձակ աւերակ տան երկու խարխլած սենեակներ վարձելով՝ մանկապարտեզի և տարրական նախակրթարանի մը հիմը կը դրուի: Երկու տարի վերջ, գաղութը կենսունակութեան նշաններ ցոյց տուած պահուն, կալուածատէրի մը պանդոկը կը վարձուի չորս տարուան շրջանով, մանկապարտեզի և նախակրթարանի համար: <sup>269</sup>

1923-1924 թթ. Մուսուլի ազգային վարժարանը կը բաղկանար 6 դասարաններէ, 107 աշակերտներով, 4 ուսուցիչներով և տարեկան 3077 ռուբի պիտօճեով: Տարիներու ընթացքին վերոնշեալ քիւերը պիտի բազմապատկուէին, ընդհուպ մինչեւ ազգային դպրոցներու պետականացումը՝ 1974 թուականին:

1925 թուականին տարեկան շօշափելի գումար մը պահանջող վարձքի տաղտուկէն ազատուելու համար դպրոց-շէնք մը կը գնուի քաղաքին կեդրոնը: 1927 թ. Հոկտեմբեր ամսուն՝ աշակերտութեան շարքերը խտացած ըլլալով՝ համայնքի թաղական խորհուրդը Լիբանանէն կը հրաւիրէ պրն. Սիրական Օրջանեանը (ապա՝ քահանայ Տէր Մեսրոպ) որպէս նախակրթարանի տնօրէն և տիկինը՝ Լուսաբեր, որպէս մանկապարտիզպանուհի: 1931 թուականին դպրոցի շէնքը արդէն պատրաստ էր իր վեց դասարաններով, տնօրէնի սենեակով և թատերասրահով մը:

Այնուհետեւ, 1935 թուականին 750 քմ. հող մը կը գնուի ազգային վարժարանին յարակից եկեղեցիի մը կառուցման համար, որուն շուրջը շինուեցան խանութներ, գործատեղէր, որոնք իրենց ապահոված վարձքերով, կարելոր եկամուտ մը կ'ապահովէին ազգային վարժարանին յարատեւման համար: <sup>270</sup>

<sup>269</sup> Տոքթ. Ասթարճեան Գ., Եջ. աշխ., էջ 44-45:

<sup>270</sup> Նոյն:

Առաջին համաշխարհային պատերազմին առաջ, քանի մը ընկերություններ, Գալուստ Կիլպենկեանի միջնորդութեամբ Իրաքի որոշ շրջաններուն մէջ նաւթահորեր պեղելու մենաշնորհը ստացած էին:

Ընկերութեան<sup>271</sup> կեդրոնատեղին նաւթառատ **Քերքուկ**, քաղաքն էր, որտեղ պեղումները կը սկսին 1927 թուականին: Աստիճանաբար հայ որակաւոր արհեստաւորներու թիւը կը բարձրանայ: Յետագային մեծ թիւով հայեր զանազան ճիւղերու մէջ կարելոր և պատասխանատու պաշտօններ կը գրաւեն: Համայնքի բնակչութեան թիւն ալ կը բարձրանայ մինչեւ հազարի: Ուստի դպրոց մը ունենալու սուր կարիքը կը զգացուի և 1929-30 թուականներուն, Պաղտատի Կեդրոնական Իշխանութեան օժանդակութեամբ, որպէս ուսուցիչ կը նշանակուի Ջէթունցի Համբարձում անունով երիտասարդ մը: Սկզբնական շրջանին, կ'ունենան 17 աշակերտներ: Սակայն այս դպրոցը հազիւ 5-6 ամսուան կեանք մը կ'ունենայ: Այնուհետեւ, 1931 թ.ի վերջերը, օրուան Իրաքահայ թեմի առաջնորդ Ռուբէն եպս. Մանասեանի եւ Ազգային իշխանութեան կարգադրութեամբ. Մեսրոպ քինյ. Օրջանեան կը նշանակուի հոգեւոր հովիւ Քերքուկի: Տէր հոր առաջին գործերէն մէկը կ'ըլլայ հոգաբարձութիւն մը նշանակել տալ, ազգային գործերը վարելու իր նախագահութեան ներքոյ: Կը նշանակուին պրնք. Յովհաննէս Զովհաննէսեան, Տիգրան Գասպարեան և Գրիգոր Փօթթոյեան:

Անյապաղ տուն մը կը վարձուի, որու սենեակներէն մէկը աղօթատեղիի կը վերածուի, մնացեալ սենեակներուն մէջ Տէր Մեսրոպ քահանան կը ձեռնարկէ հայերէնի դասաւանդման:

<sup>271</sup> Այս ընկերութիւնը The Turkish Petroleum Company անուան տակ կը գործէր մինչեւ Իրաքի անկախացումը, որմէ ետք կոչուեցաւ Iraq Petroleum Company: Ընկերութեան բաժնետէրերէն մէկը Գալուստ Կիլպենկեանն էր՝ «Պարոն 5%» յայտնի մակդիրով:

Աշակերտներու թիւի ստուարացմամբ 1932 Սեպտեմբերին աւելի մեծ շէնք մը կը վարձուի որպէս դպրոց-մանկապարտէզ և նախակրթարանի չորս դասարաններով, որուն տնօրէն կը նշանակուի համայնքի հոգեւոր հովիւը: Նոյն տարին դպրոցի շրջափակէն ներս առաջին հողաշէն աղօթատեղին կը կառուցուի:

1948 թ. այս շէնքը ազգապատկան կը դառնայ, դպրոցը կը կոչուի «Խրիմեան վարժարան» հինգ դասարաններով:<sup>272</sup> Իսկ եկեղեցւոյ կառուցման համար կցուած հողամաս մը ծախու առնելով 1948 թ., նոր եկեղեցիի մը հիմնարկէքը կը կատարուի 1952 թ. ձեռամբ Արշաւիր քինյ. Սեւտալեանի: Ապագայ եկեղեցիի գաւիթին մէջ, Երուսաղէմէն յատկապէս բերուած վեմ քարը կ'օծուի և 1956 թ.ին եկեղեցին կ'անուանակոչուի Ս.Աստուածածին ձեռամբ գեր. Տ. Զոօն վրդ. Տէր Յակոբեանի ու պաշտամունքը կը սկսի այս եկեղեցւոյ մէջ:

Դպրոցի շէնքը հայաշատ կեդրոնի մէջ էր: Սակայն, ժամանակի ընթացքին հայեր կը հեռանան այս թաղամասէն սեփական բնակարաններ կառուցանելով, նաեւ օգտուելով քարիւղի ընկերութեան ընծայած բնակարաններ տրամադրելու ծրագրէն: Քերքուկի Թաղական խորհուրդը ազգային դպրոցի թաղային դրութեան վիճակը կը ներկայացնէ «Գալուստ Կիլպենկեան» հաստատութեան, որ տեղւոյն քարիւղի ընկերութեան բաժնետէրերէն մէկն էր՝ խնդրելով իր օժանդակութեան հարցը լուծելու: Հաստատութիւնը 1962 թ. կ'ընդառաջէ դիմումին՝ քաղաքին նորաճ ու արդիական թաղի մը մէջ հողամաս մը ծախու առնելով:

Հաստատութեան ծախսով անմիջապէս կը կառուցուին արդիական նախակրթարանի համար 12 դասարաննոց շէնք մը՝ յարակից բաժիններով ու դպրոցը կը կահաւորուի: Դպրոցը նոր շէնք կը փոխադրուի 1965 թ., 100 աշակերտներով, հինգ դասարաններու

<sup>272</sup> «Գոյամարտ», թիւ 38, 28 Յուլիս, 1949:

բաժնուած: Աշակերտութեան թիւը յետագային կը հասնի 165-ի: Այս դրութիւնը կը շարունակուի մինչեւ ազգային վարժարաններու պետականացումը 1974-ին:<sup>273</sup>

Յիշատակութեան արժանի է որ Իրաքի բոլոր ազգային դպրոցներուն մէջ մինչեւ 1974 թուականը, հայերէն դասաւանդութեան համար կ'օգտագործուէր Պէյրութէն առաքուած՝ ԱՐԱԳԱԾ, ԶԱՅԿԱՐԱՆ դասագիրքերը նախակրթարանի և երկրորդական կարգերուն համար: Ներկայիս՝ նախակրթարանի կարգերուն համար կը դասաւանդուի ԶԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԱԳԻՐՔՍ, իսկ միջնակարգի համար ԱՆԴԱՍՍԱՆ: Վերջին երկու դասագիրքերու հեղինակն է Սուրիահայ Յակոբ Չոլաքեանը:

Յիշատակութեան արժանի է որ Իրաքի մէջ միակ ազգային երկրորդական վարժարանը կը գտնուէր Պաղտատի մէջ՝ Դայ Ազգային Միացեալ Վարժարան անունով: 2004 թ. ետք՝ դպրոցը կը կոչուի Դայ Ազգային Տարրական երկսեռ վարժարան:

Եզրափակելով այս աշխատութեան Կրթական բաժինը, հարկ է նշել, որ 2005 թ. Առաջնորդարանի տուեալներով, Իրաքի հայ համայնքը իր մէջ կը հաշուէր 117 մագիստրոսի և տարաբնոյթ գիտութիւններու տօքտորական կոչումի արժանացած հայորդիներ, բժիշկներ, փաստաբաններ, համալսարանի դասախօսներ, գիտնականներ եւայլն:<sup>274</sup>

**Կիրակնօրեայ Դաւաք<sup>275</sup>**

Իրաքահայ թեմի Դայաստանեայց եկեղեցւոյ Կիրակնօրեայ Դաւաքը հիմնուած է 1985 թ. Փետրուար ամսուն: Ազգային կրթօջախի մը բացակայութեան պատճառով, վերոյիշեալ թուականէն բաւական առաջ (երբ 1974 թ. պետականացուեցան ազգային դպ-

<sup>273</sup> Իրաքահայ թեմի....., Եշ. աշխ., էջ 131-134:

<sup>274</sup> Նոյն էջ 366-378

<sup>275</sup> Արծիւեան Շաքէ, Կիրակնօրեայ Դաւաք, 1996, (վերամշակուած 2002 թ.), էջ 1-7, (անտիպ):

րոցները) կիրակնօրեայ վարժարանի մը կարիքը կը զգացուէր Իրաքահայ գաղութէն ներս՝ հայ մատղաշ սերունդին հայեցի կրօնա-եկեղեցական դաստիարակութիւնը ապահովելու համար: Այս եկեղեցւանուէր և ազգօգուտ ծրագիրի իրականացման նպատակով ոգի ի բռին գործի լծուեցան Իրաքահայ թեմի և՛ առաջնորդը և՛ Ազգային Կեդրոնական վարչութիւնը:

Առաջնորդ Սրբազան Դօր այս տրամադրութենէն քաջալերուած և մանաւանդ մօտէն ծանօթ ըլլալով ծնողներու կրած նեղութիւններուն և արտայայտած մտահոգութիւններուն՝ հայ պգտիկներու դժուարութիւններուն լեզուի և կրօնքի նկատմամբ, Իրաքի Դայ Տիկնանց Մշակութային Միութիւնը ընդառաջելով Սրբազան Դօր ցանկութեան, որոշում կայացուց սկսելու այս աշխատանքը և բուռն թափով գործի լծուեցաւ 1984 թ. վերջերը: Այս ազգապահպան նպատակը իրագործելու համար կեանքի կոչուեցաւ մասնաւոր յանձնախումբ մը վերոյիշեալ Միութեան անդամուհիներէն բաղկացած՝ տարեկան ուղեցոյց-ծրագիր մը մշակելու Սրբազան Դօր հովանաւորութեան ներքոյ և գրասենեակային աշխատանքներ տանելու համար: Զանազան պատրաստութիւններէ ետք Դաւաքը կեանքի կոչուեցաւ 17 Փետրուար 1985 թ. Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ առաջնորդարանի հին դահլիճը ունենալով որպէս առաջին հաւաքավայր: Դաւաքը սկսաւ 25 աշակերտ-աշակերտուհիներով միայն, որը ժամանակի ընթացքին պիտի բարձրանար մինչեւ 400 աշակերտ-աշակերտուհիներու:

Շուտով, սակայն թէ՛ աշակերտութեան թիւի աճման, թէ՛ տարիքի և մտային մակարդակի տարբերութիւններուն և թէ՛ հաւաքավայրի աննպաստ ըլլալուն պատճառաւ, կարիքը զգացուեցաւ կանոնաւոր դասարաններ ունենալու: Դետեւաքար Սրբազան Դօր և Ազգային Կեդրոնական Վարչութեան կարգադրութեամբ Դաւաքին յատկացուեցաւ եկեղեցւոյ կից գտնուող դպրոցի նախկին դարձա-

նատան շենքեն մաս մը: Դասարանները վերանորոգուեցան և պատշաճ կերպով կահաւորուեցան:

Տարիներու ընթացքին աշակերտութեան թիւի յարատեւ աւելնալուն դասարանները եւս կրկնապատկուեցան, եռապատկուեցան, հինները վերանորոգուեցան, նոր սենեակներ կառուցուեցան և օժտուեցան պատշաճ և յարմարաւետ կահոյքով: Կիրակնօրեան ունեցաւ նաեւ իր տեսչարանը:

Կարճ ժամանակէն Հաւաքի մէկ դասարանը բաժնուեցաւ երեք դասարաններու և յատկացուեցաւ 6-12 տարեկան փոքրերու, որոնք նախակրթարան կը յաճախէին. «Սասունցի Դաւիթ»՝ 6-8 տարեկան, «Մեսրոպ Մաշտոց»՝ 9-10 տարեկան և «Սարգարապատ»՝ 11-12 տարեկաններու համար: Դասընթացքը, հետեւաբար, կը տւելը երեք տարի: Շուտով այդ թիւը պիտի բարձրանար չորսի, երբ կարիքը զգացուեցաւ մանկապարտէզի տարիք ունեցող փոքրերու համար եւս դասարան մը բանալ՝ «Վարդան Մամիկոնեան» անուանով: Վերջինին և «Սասունցի Դաւիթ» դասարանին միջեւ քանի մը տարիէն աւելցան 2 դասարաններ եւս՝ «Արցախ» և «Սայաթ-Նովա»: Այսպէսով, ուրեմն Կիրակնօրեան կը հաշուէր 6 դասարան՝ 4 տարեկանէն մինչեւ 12 և աւելի տարիք ունեցողներու համար: 1995 թ. Յուլիս ամսուն երկու տարուայ համար յատուկ դասարան մը բացուեցաւ «Կոմիտաս» անուանով՝ Կիրակնօրեայ Հաւաքը աւարտած պատանի-պարմանուհիներու հայեցի և քրիստոնեական կրթութեան իբր շարունակութիւն Կիրակնօրեային:

1998 թ. դասարան մը եւս բացուեցաւ մանկապարտէզի Ծաղիկ դասարանի փոքրիկներուն համար «Դեւոնդ Երէց» անուանով, և շուտով անոր պիտի յաջորդէր դասարան մը եւս՝ «Հայկ Նահապետ» անուանով՝ յատուկ ծրագիրով մը՝ հայերէն լեզուն չիմացող փոքրերու համար (մանաւանդ խառն ամուսնութիւններու զաւակներուն):

Ուրեմն, Կիրակնօրեան ունեցած է 8 դասարաններ 4-12 և աւելի մեծ տարիքի աշակերտներուն համար: Դասարաններու թիւի աճման հետ միասին, անշուշտ, վերամշակման ենթարկուած է նաեւ Հաւաքի ծրագիր-ուղեցոյցը:

Տասնութ տարիներու (1985-2003 թթ.) ընթացքին, Կիրակնօրեայի մէջ իրենց ծառայութիւնը բերած են տասնեակներ՝ ոմանք փորձառու ուսուցչուհիներ, իսկ ոմանք ալ՝ սկսնակներ, վերջիններս, սակայն, իրենց ոգեւորութեամբ, խանդավառութեամբ և սորվելու ու սորվեցնելու անսահման փափաքով, բերին իրենց մասնակցութիւնը ազգակերտման այս նուիրական գործին: Ուսուցչական և Տեսչական կազմը, հին կամ նոր, եկած են կամովին, և նուիրումով տրամադրած իրենց ժամանակը հայ մատղաշ սերունդին զինելու կրօնա-ազգային և մշակութային գիտելիքներով՝ դիմակայելու օտար միջավայրին մէջ առկայ գայթակղիչ մարտահրաւերներուն:

Մինչեւ 2003 թ. Կիրակնօրեայի մէջ կը գործէին 22 ուսուցիչ-վարչականներ:

#### **Բ- Պաղտատի Հայ Կաթոլիկ համայնքի դպրոցներ**

1821 թուականին, Ստեփան վարդապետ Վեցմատեան, Պաղտատի մէջ երեք տուններ կը գնէ Ջամի էլ-ԽուլաՖա՝ թաղին մէջ ուր կը գտնուէր Կարմեղեանց եկեղեցին: Իր բնակած տան մէջ կը բանայ պզտիկ դպրոց մը, ուր հայ և օտար պզտիկներուն կարողագրել և տարրական թուաբանութիւն կը սորվեցնէր մինչեւ իր Պաղտատին հեռանալը 1829 թուականին: Այնուհետեւ, 1850 և 1901 թուականներուն Թովմաս վրդ Պասմաճեան և Ներսէս ծ.վրդ. Տիկտանեան յաջորդաբար նման դպրոցներ բացած են, որոնք երկար կեանք չեն ունեցած:

1906 թուականին, ըստ Սայեղեանի, Պաղտատի հայ կաթոլիկ համայնքը կը բաղկանար 60 ընտանիքներէ, և հետեւաբար կանոնաւոր դպրոցի մը սուր կարիքը կար, նոյն ուսումնական տարուայ

սկիզբը 1 Յոկտեմբերին, դպրոց մը կը բացուի, ուր կը դասաւանդուէր հայերէն, ֆրանսերէն, թուրքերէն և ուրիշ առարկաներ: Վարժարանը կը ստանայ բարեկարգ վիճակ մը և շուտով կը գրաւէ ժողովուրդին վստահութիւնը: Մէկ ամսուան ընթացքին աշակերտներու թիւը 8էն կը բարձրանայ 40ի, որոնք գրեթէ բոլոր յարանուանութեանց զաւակներն էին: Դժբախտաբար, այս դպրոցն ալ տեւական չէ եղած և այլեւայլ պատճառներով փակուած է 1909 թուականին:

Անարատ Յղութեան Քոյրերու Սրբուհի Աննա աղջկանց Վարժարանը հիմնուած է 1932 թուականին, ֆրանսացի կաթոլիկ հոգեւորական Յայր Մանեարի (Chanoine Magnard) առատաձեռն նուիրատուութեամբ՝ (80000 ֆրանք),<sup>276</sup> կը գտնուի Պաղտատի Ասֆար թաղամասին մէջ: Վարժարանը ունի երեք բաժանումներ, մանկապարտէզ, նախակրթարան և միջնակարգ-երկրորդական: 1935 թուականին վարժարանի շէնքին վրայ յարկ մը կ'աւելցուի մայրապետներուն համար խցիկներ կառուցանելու, և վերջիններու սենեակները գիշերօթիկներու վերածուելու համար:

Անարատ Յղութեան Քոյրերը մանչերուն նաեւ հայեցի կրթութիւնը ապահովելու համար փոքր տարիքով մանչեր ալ կ'ընդունին, և կը համաձայնին Կարմեղեան հայրերուն հետ, որպէսզի անոնց հաստատութեան մանչ տղաքը յետոյ անցնին իրենց վարժարանը, ուր հայերէն ալ կ'աւանդուի:<sup>277</sup>

1955-1956 կրթական տարեշրջանին Յայ Կաթողիկէ համայնքը ունէր Ա.Ներսէս Վարժարանը՝ մանկապարտէզի, նախակրթարանի բաժիններով: Մանկապարտէզ կը յաճախէին 118 փոքրիկներ, որոնց 100ը՝ հայ: Նախակրթարանի աշակերտութեան թիւն էր

<sup>276</sup> صايفيان دير نيرسيس -

<sup>39</sup> نفس المصدر صفحة 39 (Սայեղեան Տր Ներսէս, նշ. աշխ., էջ 39):

<sup>277</sup> Ալպոյաճեան Ա., նշ. աշխ., էջ 60:

219, որոնց 175ը՝ հայուհիներ, իսկ միջնակարգի աշակերտութեան թիւը՝ 88, որոնց 25ը միայն հայուհիներ: Աշակերտութեան ընդհանուր թիւը՝ 425 էր որոնց 300ը՝ հայուհիներ: Կը պաշտօնավարէին 10 քոյրեր և 21 ուսուցչուհիներ, որոնց 5ը հայուհիներ էին:

Վարժարանի նորակառոյց շէնքը կը գտնուի 4600 քառ.մէթր տարածութեամբ հողի վրայ, որուն 3500 քառ.մէթրը նուիրած են հայ կաթոլիկ բարերարուհի Մինա և Ռէճինա Գասպարխան քոյրերը: Վերջիններս նուիրած են նաեւ կոկիկ գումար մը՝ շէնքի կառուցման ծախքերուն համար: Վարժարանին վրայ զետեղուած է հետեւեալ արձանագրութիւնը. «Անարատ Յղութեան Յայ քոյրերու Սրբուհի Աննա Վարժարանս հիմնուեցաւ 1932ին, փոխադրուեցաւ 1947ին՝ նորակառոյց այս շէնքը, և ի յաւերժական յիշատակ կ'արձանագրէ անոր ծակատը իր առատաձեռն և գլխաւոր բարերարուհիներուն՝ Ռէճինա և Մինա Գասպարխանի անունները»:<sup>278</sup>

Այս դպրոցն ալ, ի շարս ազգային միւս դպրոցներուն, 1974 թուականին կը պետականացուի, և հայ աշակերտուհիները կը փոխադրուին պետական Էլ Շարկիյը (Արեւելեան) Աղջկանց Վարժարան, որ կը պարփակէր 6 դասարաններ<sup>279</sup>: Իսկ մանկապարտէզն ու նախակրթարանը կոչուեցաւ Էլ-Ջընաբըկ նախակրթարան:

<sup>278</sup> Գեորգեան Կ., նշ. աշխ., էջ 439-440:

<sup>279</sup> Իրացի դպրոցական շրջանը ունի չորս մակարդակ. Մանկապարտէզ՝ 2 տարի, նախակրթարան՝ Ա. դասարանէն մինչեւ 2. դասարան, որմէ վերջ աշակերտը կը մասնակցի ընդհանուր պետական պաքալորեայի քննութեան, զայն յաջողութեամբ աւարտելէն ետք, կ'անցնի միջնակարգ եռամեայ դպրոց. երրորդ տարուան վերջը դարձեալ կը մասնակցի պետական պաքալորեայի քննութեան, ապա կ'անցնի երկրորդական եռամեայ (իր հինգ ժիւղերով՝ հումանիտար, տնտեսագիտական, րնագիտական, արհեստագիտական և գիտատնտեսական) դասընթացք, որու աւարտին կը մասնակցի պաքալորեայի վերջին և աշակերտի համար ճակատագրական քննութեան: Յաջողութեան պարագային աշակերտը իրաւունք կ'ունենայ համալսարան մտնելու իր հաւաքած բալերուն համեմատ:

## 2- Թատրոն և Երաժշտություն

Թատերական գործունեությունը Իրաքահայ նորագոյն շրջանի կեանքին մէջ սկսած է դեռելու Նահր Օմար գաղթակայանին մէջ, այսինքն՝ 1920-ական թուականներէն: Վաստակաւոր ուսուցիչ և մանկավարժ, Պէյրութի Նշան Փալանճեան ճեմարանէն ընթացաւարտ Պաղտասար Յարութիւնեանի յուշերուն մէջ կը կարդանք հետեւեալը. «...Անգլիացիներ, երբ իրենց հոգատարութիւնը դադրեցուցած և մեզի տուած վրանները առած գացին, մեզի թողնելով արեւին տակ, ամէն ընտանիք իրեն համար հում աղիւսէ բնակարան կառուցեց և պատսպարուեցաւ: Այս ատեն, Գաղթականութեան Կոմիտէի նախագահ՝ Լեւոն Շաղոյեանը, ժողովուրդը կառավարեց լաւագոյն կերպով, հոգ տարաւ բնակավայրի մաքրութեան, ապահովութեան, կարգելով ժողովուրդէն աշխատաւորներ և հսկիչներ, պահակներ: Եկեղեցիի և դպրոցի շէնքը շինել տուաւ, ինչպէս նաեւ թատերական բեմահարթակ և հանդիսականներուն համար աղիւսաշէն ամփիթատրոն, բոլորածել բացօթեայ շինուածք աստիճանաւոր նստարաններով...»<sup>280</sup> Ուրեմն՝ գաղթական հայը, տակաւին մօտիկ անցեալի մահասարսուռ, ահաւոր յիշատակներով ծանրաբեռնուած, բառացիօրէն՝ օրուայ հացի կարօտ (մանաւանդ անգլիացիներու հովանաւորութիւնը վերցուելէն ետք), ու թէւ անյայտ, բայց լուսաւոր ապագայի տեսլականով, կ'աշխատէր վառ պահել ազգային աւանդական բարքերն ու նկարագիրը՝ քաջ գիտակցելով, որ թատրոնը օտար միջավայրի մէջ, ինքնապաշտպանման և ազգապահպանման կարելոր գործօններէն մէկն է: Թատրոնը եղած է նաեւ մայրենի լեզուն՝ իր գաւառային բոլոր բարբառներով, ազգային բարքերը և սովորութիւնները պահպանելու, և մանաւանդ ազգային ազատագրական պայքարը մարմնաւոր

րող կերպարներու բեմադրութեան ընդմէջէն, կարեւորագոյն ազդակներէն մէկը:

Պաղտատի մէջ առաջին հայկական թատերական ներկայացումները բեմադրուած են 1921 թուականին՝ Կովկասահայ դերասան Բարսեղ Աբովեանի կողմէն, Պաղտատի Ս. Երրորդութիւն եկեղեցւոյ բակին մէջ: Այնուհետեւ 1924 թուականին խումբ մը երիտասարդներու նախաձեռնութեամբ՝ ներկայացում մը տալ կը ձեռնարկուի: «...Այս ներկայացման ամնչութեամբ, Թատերասիրացը մնայուն միութիւն մը կազմելու գաղափարը յղացաւ, որուն օժանդակեցին և քաջալերեցին երիտասարդութեան մտաւորական խաւը յանձինս՝ Գալուստ Սիւրմէնեանի, Բագրատ Բուդաղեանի, Գրիգոր Մելքոնեանի, Բարսեղ Յովհաննէսեանի, Լեւոն Մելքոնեանի և ուրիշներու:

Միութիւնը ոչ միայն ներկայացումներ կու տար, այլեւ կը կազմակերպէր գրական-գեղարուեստական երեկոյթներ և ցերեկոյթներ՝ միշտ եկեղեցւոյ և դպրոցի շրջափակէն ներս և միշտ դպրոցի ծախքերը հոգալու համար: Հետագային Թատերասիրաց Միութեան տրամադրութեան տակ դրուեցաւ նաեւ նախկին Ասքանազեան Ընկերութեան գրադարանը, որ բաց էր հասարակութեան առջեւ...»<sup>281</sup>

Թատերասիրացը կորիզը կը դառնայ երկու տարի ետք՝ 1926 թուականին կազմուելիք Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան, որու թատերական գործունեութիւնը կը սկսի Հ.Ե.Ե.Միութեան կազմութեան հենց առաջին օրէն: Առաջին ներկայացումը կը կազմակերպուի Մարտ 20, 1927-ին, սինեմա Ռոյալի մէջ, «Մաշտի Ի Բադ» օփերէթը՝ Օհան Ծատուրեանի բեմադրութեամբ: Այս ներկայացումը շատ մեծ դրական արձագանգ կ'արձանագրէ և կը պսակուի մեծ յաջողութեամբ: Կամաց-կամաց Միու-

<sup>280</sup> «Կանթեղ» Իրաքի Հայոց Առաջնորդարանի պարբերաբեր, Թ. Տարի, 2008, Հոկտ., էջ 6:

<sup>281</sup> Տիւզեան Ա., «Յուշամատեան Պաղտատի Հ.Ե.Ե.Մ...», Եջ. աշխ., էջ 19:

թիւնը իր շուրջը կը հաւաքէ նորանոր ուժեր և կը սկսին յաջորդաբար նոր ներկայացումներ կազմակերպել: 1926-1933 թթ. կը համարուի Միութեան թատերական կեանքին առաջին շրջանը, որու ընթացքին կը ներկայացուին ի մէջ այլոց՝ «Դրօշակի Համար», «Ան Գողերը», «Մագնիսը», «Լէյլի Մէծնուն», «Տրդատ», «Տայի Կարպետ» եւ այլն: Այս շրջանին բեմադրուած ներկայացումներու մեծամասնութիւնը բեմադրուած է Հ.Ե.Սիութեան հիմնադիրներն Աւետիս Վ.Յովհաննէսեանի կողմէն:<sup>282</sup>

Այս շրջանին է, որ Հ.Ե.Սիութեան թատերական Յանձնախումբը և Միութեան վարչութիւնը, կ'որոշեն ներկայացումները, դեռևս գոյութիւն ունեցող թատերասիրաց Միութեան հետ կազմակերպել և այդպէս ալ կ'ըլլայ: Կը սկսին միասին գործել և աստի-

<sup>282</sup> Պրն. Աւետիս Վ. Յովհաննէսեանը, կը հանդիսանայ Միութեան գլխաւոր սիւներն մէկը. ծնած է Պաղտատ, 1903 թ. Պաղտատի ծնողքէ: Հայրը՝ Վարդան, ազգային դէմքերէն մին, աշակերտած է Միհրան Սվաճեանին և անոր շունչին տակ մեծցած հայրենասէր անձնաւորութիւն մըն էր, որ զգալիօրէն պիտի ազդէր իր անդրանիկ որդւոյն՝ Աւետիսի վրայ, որ իր կարգին նոյնպէս աշակերտած է Միհրան Սվաճեանին: Իր նախնական կրթութիւնը ստացած է Պաղտատի Ս.Թարգմանչաց վարժարանին մէջ, ապա երեք տարի՝ Հնդկաստանի «Քինկս Քոլէճ»: Վերադառնալով Պաղտատ՝ կը ստանձնէ Անգլիացիներու կողմէն 1920-ին կազմուած Հայկական Սկաուտներու ղեկավարութիւնը և կը ստանայ սկաուտական բարձրագոյն վկայական նոյն ինքն սկաուտական շարժումի հայր Բեդըն Փաուլէն: Կ'անդամակցի Հայկ. Բարեգործական Ընդհ. Միութեան Իրաքի մասնաճիւղին՝ իր սկզբնական շրջանին, կը ստանձնէ վարչութեան ատենադպրութիւնը: Իր շրջանին է, որ Միութիւնը (Բարեգործական) թէ՛ Կեդրոնին հետ կայերը կը հաստատէ և թէ՛ Իրաքեան օրուան կառավարութեան կողմէ կը վաւերացուի: Այնուհետեւ, երբ 1926-ին Երիտասարդաց Միութեան նախաձեռնողները գինք կը հրաւիրեն առաջին խորհրդակցական ժողովին, որ ապագային պիտի կոչուէր «Առաջին Հիմնադիր ժողով», Պրն. Աւետիսը իր բոլոր ուժով կը փարի Հ.Ե.Սիութեան և կ'ըլլայ հիմնադիրներէն մէկը և ամբողջ կէս դար եղաւ այս Միութիւնը մարմնավորող անձը: Վարած է նաեւ տարբեր ազգային գործեր: Եղած է Ա.Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ շինութեան հանգանակիչ մարմնի անդամ: Իսկ 1959ին՝ Ազգ. Կեդրոնական Վարչութեան անդամ: Նաեւ՝ Լիբանանի Ազունիի Ազգային Բուժարանի Իրաքի անդամ: Իրաքահայութեան բովանդակ կեանքին մէջ կը հանդիսանայ ազգասիրութեան և ազգայնականման խորհրդանիշ:

ճանաբար թատերասիրաց Յանձնախումբը կը լուծուի Երիտասարդաց Միութեան մէջ:

Թատերասիրացի համար անկիւնադարձ կը հանդիսանայ 1933 թուականը, երբ Պաղտատ կ'այցելէ դերասանապետ Մանուէլ Մարութեանը, որ կը ղեկավարէ թատերականի գործունէութիւնը, բեմադրելով շարք մը ներկայացումներ՝ «Քորրատո», «Շերլոք Պօլմս», «Աւազակները» և «Օթելլօ»: Այս շրջանէն առաջ՝ 1929-1930ական թուականներուն, կը յայտնաբերուին շնորհալի դերասան-դերասանուհիներ, որոնցմէ իր առանձնայատուկ տեղն ունի Նուարդ Քէթնճեանը: Վերջինս մինչեւ անցեալ դարու վերջերը իր անջնջելի հետքը թողած է Պաղտատի հասարակութեան մտքերուն մէջ, իր դերասանական կարողութիւններուն և կազմակերպչական աշխատանքներուն շնորհիւ: Այս թուականներուն, հասկնալի պատճառներով, երբ շատ դժուար էր իգական սեռը բեմ բարձրացնել, Քէթնճեանը, ոչ միայն բեմ բարձրացաւ, այլեւ կարողացաւ իր շուրջ համախմբել հոյլ մը շնորհալի օրիորդներ, որոնք Երիտասարդացի Մարզական, Թատերական և Ընկերական կեանքին մեծ զարկ տուին, ու Միութիւնը ունեցաւ թէ՛ թատերականի և թէ՛ այլ մարզերու համար իգական սեռէն բաւարար ոյժեր:<sup>283</sup>

Իրաքահայ բոլոր համայնքներուն մէջ, Պաղտատ, Մուսուլ, Թերքուկ և աւելի փոքր բնակավայրերու թատերական կեանքի գործունէութեան աշխուժացման ազդակներէն էին յատկապէս երգիծական-գաւեշտական բեմադրութիւնները, որոնք հայրենիքէն զրկուած ժողովուրդի մը ամէնօրեայ կեանքին հոգսերը գէթ ժամանակաւորապէս մէկդի դնելու և իրականաւորութենէն անջատուելու նպատակն ունէին, ինչպէս՝ «Զարշըլը Արթին Աղան», «Մեծապատիւ Մուրացկանները», «Դղումի Վաճառականը», «Պաղտասար Աղբար» եւ այլն:

<sup>283</sup> «Յուշամատեան Պաղտատի Հ.Ե.Ս.», մշ. աշխ., էջ 51:

Աստիճանաբար սիրողական դերասան-դերասանուհիներու խաղացանկին վրայ, կը յայտնուին եւրոպական դասական հեղինակներու գործերը: 1933-1947 թուականները Երիտասարդացի Թատերականի ամենափայլուն և արդիւնաշատ շրջանը կը համարուի, երբ բացի հանրայայտ դերասան և բեմադրիչ Մանուէլ Մարութեանի երեք այցելութիւններէն, Պաղտատ կ'այցելեն յաջորդաբար՝ դերասան Արարատեան՝ 1934-ին, որ կը ներկայացնէ «Պաղտասար Աղբարը», դերասան Քոչարեանը՝ 1934-1935-ին, կը ներկայացնէ «Աշխարհի Դատաստանը», «Եա Դասդ», «Շուշանիկ», «Մաշտի ի Բադ», ռեժիսոր Վահէ Գույումճեանը կը ներկայացնէ Շիրվանզադէի «Պատուի Համար»ը: Մանուէլ Մարութեանը այս ժամանակաշրջանին կը ներկայացնէ «Տրիլքի», Րաֆֆիի «Խաչագողի Յիշատակարանը» Մեծ Վիպասանի ծննդեան 100ամեակին առթիւ, այնուհետեւ՝ Շէքսպիրի «Օթելլօ»ն, ապա՝ «Մարսիլիոյ Բեռնակիրը», «17 Տարեկան» և «Էրիքա»ն:

Քաջալերուելով հիւր դերուսոյց-բեմադրիչներու խրախուսանքներէն՝ հրապարակ կուզան տեղական ուժեր, և Միութեան սիրողական դերասանները նոյնպէս փայլուն գործունեութիւն կը ցուցաբերեն: Պրն. Բորոզանը կը ներկայացնէ «Սիրոյ Զոհերը», «Բանաստեղծը», «Սօս և Վարդիթեր» եւ այլն: Տեղական ուժերը, ղեկավարութեամբ Աւետիս Վ. Յովհաննէսեանի և ուրիշներու, կը բեմադրեն շարք մը ներկայացումներ՝ «Չարշըլը Արթին Աղա», «Շողոբորթը», «Պատուի Համար», «Դղումի Վաճառականը» «Արիստոլոմ Աղան»... եւ այլն:

1957 թուականին մեծ խանդավառութիւն պիտի ստեղծուէր Պաղտատի մէջ, երբ Հ.Ե.Ե.Միութեան վարչութեան հրաւերով, Պէյրութի Համազգայինի Գասպար Իփեկեան թատերախումբը, ժորժ Սարգիսեանի ղեկավարութեամբ՝ յաջորդաբար պիտի ներկայացնէր

«Ոսկի Աքաղաղը», «Փառքի Վաշխառուները» և «Տուն Փեսան» մեծ գուհունակութիւն պատճառելով Իրաքահայ գաղութին:<sup>284</sup>

Այնուհետեւ, թատերական կեանքը աշխուժութեամբ կը շարունակուի: Թատերական խումբը, որ կը հաշուէր մօտաւորապէս 70 անդամ-անդամուհի, կ'ունենայ իր յատուկ հաւաքոյթի օրերը և դասախօսութեանց շարքը, որ կը յանգեցնէ ինքնուս դերասաններու ինքնազարգացման և բեմական արուեստի որակի բարձրացման:

Այս կապակցութեամբ յիշատակութեան արժանի է Ցեղասպանութիւնը վերապրող ծնողներու զաւակ՝ տոքթ. Հրանտ Մարգարեանի ներդրումը նախ Իրաքահայ համայնքի ապա՝ ամերիկահայ թատերական կեանքին մէջ: Ծնած է Պասրա, նախնական ուսումը ստացած Մարգիլի Հայ Ազգային Վարժարանին մէջ, ապա յաճախած պետական երկրորդական վարժարան: Առաջին անգամ բեմ բարձրացած է 1956 թուականին իր ծննդավայր Պասրա, Յակոբ Պարոնեանի՝ «Մեծապատիւ Մուրացկանները» թատերգութեան մէջ ներկայացնելով բանաստեղծի կերպարը, իսկ առաջին բեմարութիւնը կատարած է 1958 թուականին Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան ակումբին մէջ: Պաղտատի Գիտութեանց Քոլէջը աւարտելէն ետք, ուսումը շարունակելու նպատակով հաստատուած է Ամերիկայի Միացեալ Նահանգներ, ուր գիտական ուսումնառութեան զուգահեռ, ծաւալած է թատերական քեդում գործունեութիւն հիմնադրելով Մասիս թատերախումբը, որ հետագային վերակոչուած է Համազգայինի Թատերախումբ:<sup>285</sup>

Հեղինակ է 27 թատերախաղերու՝ 24 հայերէն, 2 անգլերէն, 1 հայերէն-անգլերէն...եւ այլն:

Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Թատերախումբը կազմուած էր «Արովեան» անուան տակ դեռեւս

<sup>284</sup> Յուշամատեան Պաղտատի ՀԵԵՄ... մշ. աշխ., էջ 58-59:

<sup>285</sup> [www.hamazkayin.com](http://www.hamazkayin.com), Armenian Educational and Cultural society,

1939 թուականին: Սակայն, թատերական գործունեությունը մեծ թափ կը ստանայ, երբ կը վերակազմուի 1989 թուականին՝ վերանուանուելով «Յակոբ Պարոնեան» թատերախումբ, ղեկավարութեամբ՝ ճարտարապետ Համբարձում Աղբաշեանի, որ ստանձնած էր նաեւ ներկայացումներու բեմադրութիւնը: Այս խումբը ծաւալեց աշխոյժ գործունեութիւն և ներկայացուց հետեւեալ թատերգութիւնները՝ Յակոբ Պարոնեանի «Պաղտասար Աղբար», Զ.Արշակեանի «Դդումի Վաճառականը», Յ.Թորոսեանի «Յոբելեարը», Երուանդ Օտեանի «Ազգային Բարերար», Հ.Աղբաշեանի «Հայր և Որդի», «Անուսինս բօքօք է», «Ձէթունցիներու աւանդական հարսանիք» և «Ս.Գրիգոր Լուսաւորիչի Կեանքը»:<sup>286</sup>

Պասրայի Հ.Ե.Ե.Միութեան<sup>287</sup> թատերասէր անդամները եւս, միութեան հիմնադրումէն անմիջապէս ետք, 1932 թուականին, կը բեմադրեն «Ուշ Լինի Նուշ Լինի» ներկայացումը, Մարգիլի Ազգային Վարժարանի դեռեւս շատ համեստ բեմին վրայ՝ հասոյթը վերապահելով սոյն դպրոցի զարգացման: Այնուհետեւ ներկայացումները կը յաջորդեն իրար, և այստեղ նորանոր տաղանդներ կը յայտնաբերուին եւ բեմադրութեան եւ դերակատարման մէջ: Պրն. Աբրահամ Տէր Ղուկասեանը՝ «Պասրայի Քեռօղլի»-ն, որու անունը անբակտելիօրէն կապուած է Պասրայի մէջ տեղի ունեցած բոլոր գեղարուեստական ձեռնարկներուն հետ, կը հանդիսանայ վերոյիշեալ քաղաքի թատերական և մշակոյթի այլ ճիւղերու գործունեութեանց խթանիչ ուժը, և ղեկավարը: Ան եւ բեմադրիչ էր, եւ բեմադրող, եւ դերուսոյց եւ մանաւանդ սքանչելի դերասան, օժտուած աստուածատուր, շատ հմայիչ ձայնով: Իր նուիրումը բեմին անսահման էր, բեմը իր բոլոր ճիւղաւորումներով: Ա. Տէր Ղուկա-

<sup>286</sup> Աղբաշեան Հ., Ի.Հ.Բ.Ը.Միութեան վարչութեան երկարամեայ անդամ և սոյն միութեան մշակութային յանձնախումբի պատասխանատու:

<sup>287</sup> Տօքթ. Մինասեան Վ., նշ. աշխ., էջ 20-21 և «Վարագ» Պարբերական Վասպուրականի Հայրենակցական Միութեան, Թիւ 59, 2012, Երեւան, էջ 44-48:

սեան ծնած էր 1906 թուականին, Արեւմտեան Հայաստանի Շատախ գաւառի Ծիծանց գիւղը, ճաշակած էր գաղթի ճանապարհին բոլոր տառապանքները և դառնութիւնները: Իր և իր սերնդակիցներու կեանքին առանցքը «Կորուսեալ երկիր»-ն էր՝ իր յոյզերով, յուշերով և անոր յաջորդող փոքրիկ, բայց յաւերժական Հայրենիքը, իր մշակութային, գիտական և այլ ոլորտներու մէջ բազմապիսի ձեռքբերումներով: Իւրաքանչիւր ելոյթէն ետք, հայրենածարաւ ժողովուրդը սրահէն կը հեռանար աւելի ամրապնդուած հաւատքով, ազգային ոգին ամբարած իրենց երակներուն մէջ՝ վստահ ըլլալով, որ օրերէն մի օր իրենք ալ բախտը պիտի ունենան վերջապէս վերադառնալու իրենց անտէր թողած օճախները շէնցնելու...<sup>288</sup>

Պասրայի Երիտասարդացը ունեցած է ծաւալուն թատերական կեանք: Բեմադրուած են հայ և օտար հեղինակներու բազմապիսի գործերը՝ «Պատուի Համար», «Ոսկի Հէքիաթ», «Շողոքորթը», «Աբիսողոմ Աղա», «Չար Ոգին», «Չարշըլը Արթին Աղա», «Պաղտասար Աղբար», «Ինկած Բերդի Իշխանուհին» եւայլն... Նաեւ եւրոպական դասական հեղինակներու գործերէն՝ «Օթելլօ», «Համլէթ», «Քօրրատօ» եւայլն... Հայ հանրածանօթ թատերական դէմքեր, ինչպիսիք են Մանուէլ Մարութեանը, Պերճ Թոմպուլեանը, Գեորգ Քոչարեանը և ուրիշներ, տեղական ուժերու օժանդակութեամբ, իրենց դերասանական արուեստով բազմիցս խանդավառած են Պասրահայ գաղութը: Երիտասարդ թատերասէրներէն աչքի կ'իյնան Ժիրայր Պալասանեանը, Նշան Արսէնեանը, Անդրանիկ Մուրատեանը եւայլն: Վերջինս, հետագային կը զբաղուի նաեւ բեմադրութեամբ:<sup>289</sup>

<sup>288</sup> Տէր Ղուկասեան Ս. «Վարագ» Վասպուրական Հայրենակցական Միութեան պարբերական, Թիւ 59-2012, Երեւան, էջ 45-46:

<sup>289</sup> Տօքթ. Մինասեան Վ., նշ. աշխ., էջ 21:

Ի հակադրութիւն հայկական կեդրոններուն մէջ ծաւալուող թատերական գործունէութեան, համայնքի զաւակներէն շատ քիչեր մասնակցած են տեղական՝ արաբական թատերական ներկայացումներուն, քանզի այս երկիրը ապաստանած հայորդիները կը վարէին շատ զգուշաւոր և ներամփոփ թատերական ու այլ մշակութային գործունէութիւն, և հեռու էին անմիջական շփման մէջ մտնելու տեղացի արաբ դերասաններուն հետ: Այս բացառիկներէն է դերասանուհի Ազատուհի Սամուէլ Լաչինեանը, ծնած՝ 1942 թ., Գեղարուեստից Ակադեմիայի իգական սեռին պատկանող առաջին ուսանողուհին: Ազատուհին տեղական արաբերէն ելոյթներուն մէջ առողջանութեամբ և հնչումով երբեք կարելի չէր զանազանել ազգութեամբ արաբ դերասանուհիէ մը: Բեմական կեանքը սկսած է դեռելս 1954 թ. և մինչեւ 1968 թ. տարբեր դերերով հանդէս եկած է աւելի քան 30 թատերական և շարժանկարային գործերու: մէջ: 2002 թ. տեսակցութեան մը ընթացքին, լրագրողուհի Բան Սրդիւլ Լաթիֆը այսպէս կ'արտայայտուի իր մասին. «Իրապէս տաղանդաւոր դերասանուհի մըն է, որ իր փայլը չի կորսնցներ»: Իրաքի շարժանկարի (կինոյի) և թատերական բեմի վրայ մօտաւորապէս 50 տարիներու շարունակական աշխատանքը լի է զանազան ժանրի դերակատարութիւններով: Ստացած է մրցանակներ և գնահատանքի շատ մը վկայագրեր: Ըստ դերասանուհիին՝ լաւագոյն գնահատանքը, հանդիսատեսի սերն է, որ պարգեւած է իրեն «Բեմի կառկառուն դէմքը» տիտղոսը:<sup>290</sup> Իր բոլոր դերերուն մէջ առանձնապէս անզուգական է մօր կերպարով:

Մինչեւ 2003 թուականը, իր գործունէութիւնը կը շարունակէր Իրաքի պետական շարժանկարի և թատրոնին մէջ:<sup>291</sup>

<sup>290</sup> Abdul Latiff B., "The Iraq Daily", 12/01/2002.

<sup>291</sup> «Իրաքահայ Թեմի.....», մշ. աշխ., էջ 401:

Վերջին դէպքերէն ետք, յայտնի պատճառներով, Իրաքի մէջ հայկական որեւէ թատերական լուրջ գործունէութիւն արձանագրուած չէ:

Մուսուլի և Քերքուկի համայնքներն ալ ունեցած են աշխույժ թատերական կեանք՝ բեմադրելով ազգային-հայրենասիրական ներկայացումներ, յոյս և հաւատ ներշնչելով ներկայ հասարակութեան: Գրիգոր Ասթարճեան կը մշտ. «...Մուսուլի մէջ 1931 թուականին կազմակերպեցինք թատերախումբ մը, նուազախումբ մը, մարզական խումբ մը՝ որոնք օր ըստ օրէ ինքնզինքնին զարգացնելով՝ նորակազմ Իրաքեան պետութեան ուշադրութեան առարկայ դարձան: Դպրոցական ամսվերջի հանդիսութիւններուն և ուրիշ որեւէ պաշտօնական դպրոցական հանդիսութիւններուն՝ յաճախ կրթական տնօրէնութենէն խնդրագիր մը կը ստանայի այսինչ հանդիսութեան մէջ նուագելու համար: Եւ մեր վերոյիշեալ կազմակերպութիւնները կանոնաւոր կերպով շարունակեցին իրենց գործունէութիւնը ի նպաստ համայնքի զարգացման և մշակութային կեանքի վերելքին...»:<sup>292</sup>

1936 թուականին Մուսուլի մէջ գոյութիւն ունեցող Հայ Նուագասիրաց Խումբի նախաձեռնութեամբ համայնքի սրտցաւ արհեստաւորներու աշխատակցութեամբ և պարտաճանաչ ազգայիններու առատաձեռն նուիրատուութեամբ, կը կառուցուի Հայ Ազգային Վարժարանի բեմը, ուր ելոյթ կուրենային թէ՛ դպրոցի աշակերտները և թէ՛ թատերասերներու կողմէն կը բեմադրուէին զանազան ազգային հայրենասիրական ներկայացումներ:

**Երաժշտութիւնը**, իր բոլոր ճիւղաւորումներով՝ հոգելոր, ազգային-ժողովրդական և հայրենասիրական էական լծակներէն մէկն է, յատկապէս մայր հայրենիքէն դուրս բնակութիւն հաստատած հայորդիներու պարագային: Ոգեկոչելով հայրենի բնակա-

<sup>292</sup> Տօք. Ասթարճեան Գ., մշ. աշխ., էջ 45:

վայրին մէջ սերունդէ սերունդ փոխանցուած ազգագրական, հայրենասիրական երգերն ու աւանդական զրոյցները, ինքնին ազգապահպանման միջոցներէն մէկն է: Իրաքահայութեան պարագային, այն ծնունդ առաւ և մարմնաւորուեցաւ գաղթականութեան ժամանումէն ետք, որոնք իրենց հետ բերին արեւմտահայոց իւրայատուկ երգերն ու պարերը, երգերու ընդմէջէն ազգային աւանդոյթները, և զանոնք պահպանելու և յաջորդ սերունդին փոխանցելու ամենայն հոգատարութեամբ և նախանձախնդրութեամբ: Իւրաքանչիւր երաժշտական ելոյթէն ետք, հայրենաբաղձ ունկնդիր ժողովուրդը, կը հեռանար սրահէն ալ՝ աւելի ոգեշնչուած և օրերէն մի օր հայրենիք վերադառնալու տեսլականը աւելիով ամրապնդուած իրենց հոգիներուն մէջ:

Այս կապակցութեամբ, յիշատակութեան արժանի է Պաղտատի «Կոմիտաս» քառածայն երգչախումբը՝ հիմնադիր և խմբավար ունենալով Կարապետ Քիշմիշեանը: Մասնագիտութեամբ երկրաչափ, արուեստագետի բնածին կարողութիւններով օժտուած երիտասարդ մը, որ 24 տարեկանին կարողացաւ Պաղտատի մէջ կազմել քառածայն երգչախումբ մը: «...50ական թուականներուն Գէորգ Զօպանեանը և ես կը մտածէինք երգչախումբ մը կազմել և կը զգայինք պահանջքը անոր, մանաւանդ լսելէ ետք Կանաչեանի տուած համերգները, ես՝ Զալէպ, իսկ Գէորգը՝ Պոլիս...»<sup>293</sup> Իր իսկ խոստովանութեամբ՝ «...երգչախումբ մը ղեկավարելու ո՛չ ուսումը և ոչ ալ փորձառութիւնը ունի. ուստի ամբողջ յոյսս դրած էի ջութակի վերաբերեալ ունեցած իմ ուսումիս վրայ...»:<sup>294</sup>

Երգչախումբը իր փորձերուն կը սկսի 26-30 երկսեռ երիտասարդներով և ինը ամիս տքնաջան աշխատանքէ ետք, 1954 թ. կը ներկայացնէ իր առաջին համերգը՝ «Ֆէյսալ Բ.» սրահին մէջ, նա-

<sup>293</sup> Քիշմիշեան Կ., «Յուշամատեն Պաղտատի ԴեբՄ...», նշ. աշխ., էջ 80:

<sup>294</sup> Նոյն տեղը:

խածեռնութեամբ՝ Դայոց Ազգային Իշխանութեան և հովանաւորութեամբ Իրաքի Կարմիր Մահիկին: Դամերգէն գոյացած հասոյթը, կը յատկացուի Տիգրիսի այդ տարուայ ողողումներէն տուժածներուն:<sup>295</sup>

Սկզբնական շրջանին այս անփորձ երիտասարդներէն կազմուած անկախ երգչախումբը տարիներու ընթացքին իրարայաջորդ յաջողութիւններ կ'արձանագրէ և կը դառնայ ամենափնտրուած և սիրուած երգչախումբը՝ դառնալով գաղութի սիրոյ և գուրգուրանքի առարկան: 1957 թուականին կը միանայ Դ.Ե.Միութեան: Դետագային երգչախումբի անդամներու թիւը կը բարձրանայ մինչեւ 70-80 երիտասարդ-երիտասարդուհիներ:

Իրաքահայ պատմութեան կեանքին մէջ կարելոր և մեծ տեղ կը գրաւէ, իր անունը արդարացնող և արժանավայել կերպով դրսեւորող «Կոմիտաս» քառածայն երգչախումբը: Այս կապակցութեամբ արժէ այստեղ արձանագրել երգահան և խմբավար Բարսեղ Կանաչեանի հետեւեալ խօսքերը երգչախումբի և իր ղեկավարի մասին, լոյս տեսած «Ազդակ» օրաթերթի 03 Դոկտեմբեր 1966-ի թիւին մէջ. «Պաղտատի Կոմիտաս երգչախումբը կը ղեկավարէ Կարապետ Քիշմիշեան: Լաւ երգչախումբ մըն է: Արտասահմանի մէջ չեմ լսած այնքան լաւ երգուած խմբերգներ, որքան Քիշմիշեանի ղեկավարած երգչախումբին խմբերգները»:<sup>296</sup>

«Կոմիտաս» երգչախումբը իր գոյութեան 50-55 տարիներու ընթացքին, եղած է երիտասարդացը ներկայացնող լաւագոյն ձեռնարկը: Գաղութը ո՛չ անցեալին, ո՛չ ալ ներկայիս նման կազմակերպուած երգչախումբ մը ունեցած չէ, որ հայ հասարակութիւնը այնքան խանդավառէ և ԴԱՅ ԵՐԳԸ տարածէ ոչ միայն հարազատ ժո-

<sup>295</sup> Նոյն տեղը:

<sup>296</sup> Դանրայայտ երգահան-խմբավար Բարսեղ Կանաչեան՝ անմահ Կոմիտասի չորս սաներէն մէկն էր: Պաղտատ գտնուելու ժամանակ քանի մը անգամ ղեկավարած է երգչախումբը:

ղովուրդի շրջանակներում մեջ, այլև հայութենէ դուրս՝ օտար շրջանակներու մեջ, որ արդիւնք էր երգչախումբի բազմաշնորհ ղեկավարին և իւրաքանչիւր անդամ-անդամուհիի անսակարկ նուիրումին և զոհաբերութեան:

Երգչախումբը և իր ղեկավարը բազմիցս պարգեւատրուած են Երիտասարդացի վարչութեան կողմէն ոսկեայ և արծաթե մետալներով, մանաւանդ այն հինգ անդամները, որոնք երգչախումբի կազմութեան առաջին օրէն մաս կազմած են խումբին յանձնու Սիրվարդ Քէշիշեանի, Լիոնի Նահապետեանի, Շաքէ Քիշմիշեանի, ԺողէՖ Քիշմիշեանի և Միսակ Մէյմարեանի:<sup>297</sup>

Այս առնչութեամբ, հայրենի խումբ մը մտաւորականներ, 1972 թուականին Պաղտատ այցելութեան և վերոյիշեալ երգչախումբի ելոյթին ներկայ գտնուելէն ետք, հետեւեալ խօսքերն են արձանագրած Սիւթեան Յուշամատեանին մէջ. «Երգչախումբը թողնում է հիանալի տպաւորութիւն: Նա գտնուում է կատարողական բարձր մակարդակի վրայ, որն արդիւնք է նրա ղեկավար Կ.Քիշմիշեանի և երգչախումբի նուիրուած անդամների համատեղ ջանքերի: Ցանկանում ենք երգչախումբին նորանոր ստեղծագործական յաջողութիւններ, Տիգրիսի ափերուն վրայ հայ երգը բարձր հնչեցնելու և էսթետիկական հաճոյք պատճառելու համար»:

Ստորագրուած՝ ՓՐՈՖԵՍՈՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, Հայաստանի ժողովրդական դերասանուհի, Պետական Մեներգզուհի՝ ԳՈՅԱՐ ԳԱԼԱՅԵԱՆ, Մշակոյթի Նախարարութեան Թատրոնի Բաժնի Խմբավար-Ռեժիսոր՝ ՌԱՖԻԿ ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ, Պոցեմը կոնս. և երգի Ղասատու, Հայաստանի Վաստակաւոր Ղերասանուհի՝ Մ.ՅԱՐՈՒԹԻԻՆԵԱՆ (15-12-1972):

Կարապետ Քիշմիշեանի անունը այսօր անքակտելիօրէն կապուած կը մնայ Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Սիւ-

<sup>297</sup> Յուշամատեան Պաղտատի ՀեՅՄ...., մշ. աշխ., էջ 78:

թեան «Կոմիտաս» երգչախումբի անունին՝ իբրեւ նուիրեալ հիմնադիրը և ձեռնհաս խմբավարը այս խումբին:<sup>298</sup>

Հայկական Բարեգործական Ընդհանուր Սիւթեան հովանիի ներքոյ կը գործէ «Սայաթ-Նովա» երգի պարի խումբը՝ հիմնադրուած 1965 թուականին: Բազմիցս ելոյթ ունեցած է ինչպէս Բարեգործականի, նմանապէս տեղական ակումբներուն մէջ: 1973 թուականին, Մոսկուայի մէջ մասնակցած է Արուեստից փառատօնին, նաեւ Բաբելոնի ամենամեայ փառատօնին 1992 թուականին: 1968 թուականին Իրաքի Ազգային և Էլ-Խուլդ սրահներուն մէջ, շատ յաջող ելոյթներ ունեցած է՝ ներկայացնելով հայկական ժողովրդական, նաեւ տեղական պարեր և երգեր:

Ներգաղութային գործունէութենէն դուրս համայնքը շօշափելի և լուրջ ներդրում ունեցած է Իրաքի երաժշտական զարգացման գործին: Այսպէս, 1940 թուականին Պաղտատի մէջ հիմնադրուած «Գեղեցիկ Արուեստներու Ակադեմիա»ի երաժշտութեան բաժանմունքի դասատուներուն մեծ մասը հայեր էին՝ դաշնակահարներ Ս. Պօղոսեանը, Մ. Ամտոնեանը, Ք. Գանթարճեանը, Ն. Տատեանը և Պիաթրիս Օհաննեսեանը: Իսկ ջութակահարներ Ա. Պապուխեանը, Ա. Թաճիրեանը, Հ. Պալեանը, Ա. Ջարացեանը, Նուպար Բշտիկեանը. թաւջութակահար Հ. Գույումճեանը եւ այլն: Միջին Արեւելքի նշանաւոր ուղահարներէն է Միսակ Ջարբխանելեանը, որ «Ուրի Մերօղ» ձեռնարկի հեղինակն է:<sup>299</sup>

Ղաշնակահարուհի Պիաթրիս Օհաննեսեանը երկար տարիներ պաշտօնավարած է Պաղտատի Գեղեցիկ Արուեստից Ակադեմիայի մէջ որպէս դասախօս: Ծնած է Պաղտատ, 1927 թուականին: Եղած է սոյն Ակադեմիայի յաջողագոյն ընթացաւարտներէն: Պետական կրթաթոշակին արժանանալով՝ կը մեկնի Լոնդոն ուր չորս տարի-

<sup>298</sup> Կարապետ Քիշմիշեանը ներկայիս կը բնակի Երեւանի մէջ, իր ընտանիքին հետ:

<sup>299</sup> Հայ Սփիւռք Հանրագիտարան, «Իրաք», Երեւան, 2003, էջ 273:

ներ ուսանել է տոք կ'աւարտէ Երաժշտութեան Արքայական Ակադեմիայի դասընթացը՝ ստանալով միաժամանակ Ֆրեդրիք Ուեսթ Լէյքի յիշատակին յատկացուած մրցանակը 1948 թուականին: Այնուհետեւ իր ուսումը կատարելագործելու համար կը մեկնի Միացեալ Նահանգներ՝ Նիւ Եորք: Իր շրջանաւարտից համերգը կատարած է աշխարհահռչակ Քարնեգի Յոլի մէջ: Համերգներով շրջագայած է Միջին Արեւելքի երկիրներ, Եւրոպա և Ամերիկա: Իր արուեստը բարձր գնահատուած է երաժիշտ-քննադատներու կողմէն: Վերջին դէպքերէն տոք արտագաղթած է ԱՄՆ, Միներոթա, ուր կը պաշտօնավարէր իբր փոօֆեսոր: Մաս կազմած է նաեւ Միներոթայի Սիմֆոնիք նուագախումբին, որուն հետ շրջագայած է տարբեր նահանգներ: Մահացած է ԱՄՆ:<sup>300</sup>

Իրաքի երկրորդ հայաշատ քաղաք Պասրայի մէջ Հ.Ե.Ե.Միութիւնը (քաղաքի մէջ միակ հայկական միութիւնը) թէւ մնայուն երգչախումբ ունեցած չէ, սակայն ի պահանջել հարկին գրական-գեղարուեստական երեկոներուն կամ ազգային տօնակատարութիւններու առթիւ բեմ բարձրացած են սիրողական խումբեր և գոհացուցած հայ երգի ծարաւ հանդիսատեսը: Հանգուցեալ Արրահամ Տէր Ղուկասեանը առաջին անգամ ըլլալով 1939 թուականի Ապրիլ 24-ի սգահանդէսին երգչախումբով մը ելոյթ կ'ունենայ՝ կատարելով օրուան պատշաճ երգացանկ մը: Հետեւաբար, Միութեան երգչախումբերու գոյութիւնը կամ հանդէս գալը պայմանաւորուած էր սոյն խումբը վարելու ղեկավարի առկայութեան: Այս ուղութեամբ աշխատանք տարած են նոյնպէս Մարգիլի Հայ Ազգային Վարժարանի տնօրէն Ալեքսան Գուզոյեանը 1954, 1955 և 1956 թուականներուն, իսկ Ա. Տէր-Ղուկասեանի դուստր Սօնիկ Տէր Ղուկասեան-Օհաննէսեանը՝ 1988, 1989 և 1990 թուականներուն:<sup>301</sup>

<sup>300</sup> Իրաքահայ թեմի....., նշ. աշխ., էջ 401:

<sup>301</sup> Տօքթ. Միներոթան Վ., նշ. աշխ., էջ 23:

Համայնքին մէջ, պարախումբ մը ունենալու գաղափարը միշտ առկայ եղած է դեռեւս անցեալ դարու քսանական թուականներուն: Սակայն միայն 1951 թուականին Հ.Ե.Ե.Միութիւնը առաջին անգամ ըլլալով, կ'ունենայ իր պարախումբը Պաղտատ այցելող դերասան Ալբերթ Բուռնութեանի և Տիկ. Մարի Գարախանեանի ղեկավարութեամբ, որ իր ելոյթը կ'ունենայ 1951 թ.: Այս խումբը դժբախտաբար մէկ տարուայ կեանք կ'ունենայ: Այնուհետեւ շատ մեծ դժուարութեամբ և երկար փնտռութիւններէ ետք ծնունդ կ'առնէ այնքան սպասուած լուրջ պարախումբը Պաղտատի պետական հեռատեսիլի պարուսոյցներէն՝ Յակոբ Մալխասեանի ղեկավարութեամբ՝ օժանդակներ ունենալով պարոնայք Տիգրան Գասապեան, Պերճ Զօպանեան, Արմէն Մարգարեան, Կարապետ Քիչմիշեան և Խաժակ Մարաշլեան: Խումբը առաջին անգամ ելոյթ կ'ունենայ Միութեան հիմնադրման 40-ամեակի հանդիսութիւններուն: Իսկ առանձին ելոյթով կը ներկայանայ ժողովուրդին 1967 թուականի Օգոստոս 29ին և 30ին Պաղտատի «Միներա և Մասրահի» (Շարժանկար և Թատրոն) բեմին վրայ, և ժողովուրդի բուռն փափաքին ընդառաջելով՝ կը կրկնէ իր ելոյթները Սեպտեմբեր 22, 23 և 24-ին:

Այս առթիւ կը կազմուի ժողովրդային նուագախումբ մը, որ կ'անուանուի Հ.Ե.Ե.Միութեան «Քնար» ժողովրդական նուագախումբ: Հարկ է նշել, որ ժողովրդային երգերն ու պարերը, ներկայացուած թէ՛ Հ.Ե.Ե.Միութեան և թէ՛ Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան խումբերուն կողմէն, մեծ ընդունելութիւն կը գտնէին թէ՛ հայ հասարակութեան զանազան խաւերէն և թէ՛ տեղացի և օտար շրջանակներէն ներս:

Յաջորդ տարին պարախումբի պատրաստութիւնը յանձն կ'առնէ Յակոբ Մալխասեանը օգնական ունենալով Վարդան Մալաքեանը, ինչպէս նաեւ Տիգրան Գասապեանը: Պարախումբի անդամներուն թիւը 27-էն կը բարձրանայ 36-ի:

Համայնքի զոյգ միութիւններու՝ Երիտասարդացի և Բարեգործականի պարախումբերը, օրին շատ մեծ յաջողութիւններ արձանագրած են և կը համարուէին Պաղտատի առաջնակարգ խումբերէն, հարուստ էին թէ՛ իրենց ներկայացուցած պարերուն զանազանութեամբ և թէ՛ տարագներու ճոխութեամբ և բարձր կատարողականութեամբ: Երիտասարդացի խումբի անդամներուն, մեներգողներուն, նուագախումբին և աշխատողներուն թիւը հասած է մինչեւ 70-ի:

Հակառակ երկրի մէջ տիրող անբարենպաստ քաղաքական պայմաններուն՝ 2004 թուականի Հոկտեմբեր ամսուն ՀԵԵՄ-ի պարախումբը, հրաւեր ստանալով Սուրիայի և Լիբանանի հայ համայնքներէն, յաջող ելոյթներ կուենայ և կ'արժանանայ սոյն համայնքներու ջերմ ընդունելութեան և գնահատանքին:

Պասրայի մէջ, հայկական ժողովրդական պարախումբ մը կը հիմնուի 1971 թուականին, ղեկավարութեամբ Օր. Սեդա Յակոբեանին<sup>302</sup>, որ իր մասնակցութիւնը կը բերէ Իրաքի Յուլիսեան յեղափոխութիւններու տօնակատարութեանց:<sup>303</sup> Նոյն առիթով խումբը կը մասնակցի նաեւ Պասրայի նահանգապետարանի կողմէն կազմակերպուած ձեռնարկի մը տօնակատարութեան և կ'արժանանայ նահանգապետի և պաշտօնական բարձրաստիճան հիւրերու գնահատանքին և պարգեւատրութեան: Պասրայի մէջ Հ.Ե.Ե.միութեան երգի-պարի խումբը կը հանդիսանար առաջին ոչ պետական խումբը, որ ելոյթ կ'ունենար հասարակութեան առջեւ՝ ներկայացնելով հայկական և տեղական պարեր: Քաջալերուած այս յաջողութիւններէն՝ յաջորդ տարին Միութեան դիմումին կ'ընդառաջէ Պաղտատի Իրաքի Հայկ. Բարեգործական Ընդհանուր Միութեան պարախումբի անդամներէն Պրն. Համբարձում

<sup>302</sup> Հանրայայտ երգչուհի, շատ սիրուած էր Իրաքցիներու կողմէն: Այժմ ընկուցութիւն հաստատած է Քանատա՝ իր երկու դուստրերու և ամուսնուն հետ:

<sup>303</sup> 1958 թուականի 14 Յուլիսի յեղափոխութիւնը՝ միապետական կարգերու տապալում և 17 Յուլիսի 1968-ի Բա'սս կուսակցութեան յեղափոխութիւնը:

Հարոյեանը՝ ստանձնելով պարուսոյցի պարտականութիւնը և պարախումբի մակարդակը այնպիսի բարձրութեան մը կը հասցնէ, որ յանդգնութիւնը կ'ունենայ իր անդրանիկ ելոյթը մեծ շուքով ներկայացնելու նահանգապետարանի ամենամեծ սրահին մէջ՝ արժանանալով հայ թէ օտար հանդիսատեսի անվերապահ հիացմունքին:<sup>304</sup>

Իրաքահայ համայնքի հասարակական կեանքը հարուստ է նաեւ իր նուագահանդէսներով և երաժշտական երեկոներով: Քանոնահար Նուպար Մալխասեանը, իր առաջին նուագահանդէսը կուտայ Ռոյալ Սինեմայի մէջ 1928-ին, իսկ 1938-ին Պաղտատ այցելած է տաղանդաւոր երգիչ Արմենակ Շահմուրատեանը և իր ելոյթը ունեցած է Երիտասարդացի ակումբին մէջ: 1933-ին Քեմանչահար Ռուբէնը իր տիկնոջ ընկերակցութեամբ կ'առիւթնէ հայ հասարակութիւնը իր հայաշունչ համերգով: Հ.Ե.Ե.Միութեան Յուշամատենին մէջ կը կարդանք, նուագահանդէսի մը ծանուցումը 11 Յունիս 1939 թ., մասնակցութեամբ՝ Վիէննայի երաժշտանոցէն Օննիկ Սիւրմէլեանի՝ ջութակ, Ռօզենֆէլտի՝ դաշնակ և Բորոզանի<sup>305</sup> երգ և Լիպշերի՝ թաւջութակ: Պաղտատի մէջ առա-

<sup>304</sup> Տօքթ. Մինասեան Վ., մշ. աշխ., էջ 14:

<sup>305</sup> Բորոզանը ծնած է 1892 թուականին, Վասպուրականի Գաւառ գիւղաքաղաքին մէջ: Թողն էր ծննդավայրի հոգետը հովիւին՝ տէր Գրիգոր քահանային: Պօղոսը (Բորոզան) իր ուսումը ստացած է Գէորգեան ճեմարան, ապա՝ Թիֆլիսի երաժշտանոցը: Աշակերտած է Ռոմանոս Սելիքեանին: Հեղինակն է բազմաթիւ երգերու: Երաժշտագետ Արմէն Տիգրանեանի ղեկավարութեամբ 1920 թուականին երեւանի մէջ և 1930 թուականին Ղարաբիլիսայի մէջ ստանձնած է Սօսոյի դերը: Հակառակ Ռ.Սելիքեանի խորհուրդներուն 1930թ. ընտանիքով փոխադրուած է Պարսկաստան, վերջը՝ Պաղտատ, ուր 14 տարի կը պաշտօնավարէ որպէս երգ-երաժշտութեան ուսուցիչ: Պաղտատահայութիւնը հաճոյքով կը յիշէ Բորոզանի բեմադրութեամբ ու խաղարկութեամբ հայկական օփերեթները՝ «Սայաթ-Նովա», «Սօս և Վարդիթեր», «Լէպլէպիճի Գօր-Գօր» եւայլն: 1947 թուականին ընտանիքով կը վերադառնայ Հայրենիք: Ռադիոկոմիտի մեմակատար երգիչ էր, միաժամանակ կը դասաւանդէր քանի մը դպրոցներու մէջ: 1949-ին «անբարեյոյսներու» շարքին կ'աքսորուի, 1956-ին ետ կը դառնայ արքայութիւն: 1979-ին իր մահականացուն կը կնքէ Երեւանի մէջ:

ջին անգամ ըլլալով, 1932 թուականին, քառաձայն երգչախումբ մը կազմելու կը ձեռնարկէ Արշաւիր Ադամեանը, ապա 1934-ին Բորոզանը կը ղեկավարէ զայն: Սակայն այս երգչախումբը երկար կեանք և յաջողութիւն չ'ունենար:

1940-1941-ին դարձեալ փորձ մը կը կատարուի նոյն ուղղութեամբ, Նուպար Էքմէքճեանի կողմէն, որ նոյնպէս կը յաջողի՝ երգչախումբի անդամներու թիւը հասցնելով մինչեւ 55 երկսեռ երգիչներ: Սակայն այս խումբն ալ միայն երկու տարուայ կեանք կ'ունենիայ: Միայն 1954 թուականին, ինչպէս վերը նշեցինք, «Կոմիտաս» երգչախումբի կազմութեամբ է, որ Իրաքահայ գաղութը կ'ունենայ իր արհեստավարժ քառաձայն երգչախումբը, ղեկավարութեամբ Կարապետ Քիշմիշեանի:

Համաշխարհային երկրորդ Պատերազմի նախօրէին, 1938 թուականին Պաղտատ կ'այցելեն քեմանչահար Հայկոն ու թառահար Աշոտ և կը ներկայացնեն հայկական և արեւելեան երգերու ու նուազներու համերգը՝ անսահման բաւականութիւն պատճառելով հասարակութեան:<sup>306</sup>

Ինչպէս վերը նշեցինք, Իրաքի պետական Գեղարուեստական Ինստիտուտի (Քոնսերվատորեա) մէջ իր հիմնադրման օրերէն իսկ հայ դասախօսներու և ուսանողներու թիւը մեծ եղած է: 1947-ին Պաղտատի Երիտասարդաց Միութիւնը նուագահանդէս մը կը կազմակերպէ վերոյիշեալ Քոնսերվատորեայի հայ աշակերտութեան մասնակցութեամբ: Յաջողութիւնը մեծ կ'ըլլայ և իր տեսակին մէջ աննախադէպ:

Յիշատակութեան արժանի է դասական երաժշտութիւն ունկնդրելու երեկոները, որոնք յաջողութեամբ կազմակերպուած են Տիգրան Գասապեանի կողմէ, որը դասախօսութեանց երկար շարքով մը ներկայացուցած է համաշխարհային երաժշտական կտոր-

ներ՝ լուսաբանելով սոյն կտորներու ստեղծագործման պայմանները և հեղինակներու կեանքն ու գործունէութիւնը:<sup>307</sup>

Պասրայի մէջ Հ.Ե.Ե.Միութեան սրահին կառուցումէն ետք, պարահանդէսներ կազմակերպելու և այլ ազգային ժողովրդական հանդիսութիւնները վարելու համար սեփական նուագախումբ մը ունենալու կարիքը աւելի քան հրամայական կը դառնայ: Ուստի 1944 թուականին Միութեան օրուայ վարչութիւնը կը ծրագրէ հրաւիրել բոլոր երաժշտասէր անհատները ներկայանալ ակումբ՝ հետագային մաս կազմելու ծրագրուած նուագախումբին: Ուր երիտասարդ և չորս երիտասարդուհի կը ներկայանան, և դասերը կը սկսին 1945 թուականին: Սակայն այդ փորձը անհետեւանք կը մնայ:

Համաշխարհային երկրորդ Պատերազմի աւարտին համայնքի երաժշտասէր երիտասարդներէն ոմանք, որոնք շփման մէջ էին դաշնակից երկիրներու զօրայիններու հետ երաժշտական ասպարեզին մէջ, կը միանան և կը կազմեն «Արարատ» նուագախումբը: Այդ օրէն ի վեր, նուագախումբը կը գոյատեւէ որպէս Միութեան ենթայանձնախումբ, և իր մասնակցութիւնը բերած է ոչ միայն Միութեան ձեռնարկներուն, այլեւ Պասրայի մէջ ազգային հաստատութիւններուն կողմէն կազմակերպուած բոլոր ազգօգուտ ձեռնարկներուն, բոլորն ալ կամավոր:

Տարիներու ընթացքին, նուագախումբի կատարողական մակարդակը այնքան կը բարձրանայ, որ կը հանդիսանայ նահանգի ճանջուած և փնտռուած խումբերէն մէկը՝ տեղւոյն նշանաւոր պանդոկներու և ակումբներու տարբեր ձեռնարկներուն մասնակցելու համար:

1955 թուականին Նեվրուզի տօնակատարութիւններու առթիւ, «Արարատ» նուագախումբը կը հրաւիրուի Պարսկաստանի Աի-

<sup>306</sup> Յուշամատեն Պաղտատի ՀեՅՄ..., մշ. աշխ., էջ 126:

<sup>307</sup> Նոյն:

վագ քաղաքի նախաին ընկերության ակումբին մեջ նուագելու: Նուագախումբը կը մասնակցի նաեւ 1971 թուականին, Պասրայի Պետական հեռատեսիլի և Քաղաքապետարանի Կեդրոնական սրահի բացման հանդեսին: Հետագային մասնաւոր իրաւերներով բազմիցս ելոյթ ունեցած է սոյն հեռուստակայանէն:

Պասրայի մեջ եւս, կազմակերպուած են նուագահանդէսներ, հայկական ժապաւեններ և վիտեօ-երիզներու ցուցադրութիւններ:<sup>308</sup>

Իրաքահայ գաղութի երաժշտական կեանքին անդրադառնալուն անհրաժեշտ է յիշատակել նաեւ հոգեւոր երաժշտութեան կազմաւորումը և զարգացումը տարիներու ընթացքին: Պաղտատի Ա.Գրիգոր Լուսաւորիչ առաջնորդանիստ եկեղեցւոյ քառաձայն «Զուարթնոց» Դպրաց Դասը, որ տարիներ շարունակ առանց որեւէ նիւթական ակնկալիքի կամաւոր կերպով ծառայած է սոյն եկեղեցւոյ, հիմնուած է դեռեւս անցեալ դարու 50ական թուականներէն՝ ունենալով կարող և անշահախնդիր երաժիշտ դպրապետներ: Դպրաց դասը կը շարունակէ իր եկեղեցաւեր գործունէութիւնը՝ հակառակ երկրի մեջ տիրող անապահով պայմաններուն: 1992-էն ցայսօր, խմբավարութիւնը ստանձնած է Պրն. Նուպար Բշտիկեանը, որ միեւնոյն ատեն Իրաքի Պետական Սիմֆոնիկ Նուագախումբի ջութակահարներէն է:

«Զուարթնոց» դպրաց դասի անդամներուն թիւը, 1989-1990 թուականներուն հասած է մօտաւորապէս 35 դպիր-դպրուհիի, որոնք քանի մը անգամ մասնակցած են Իրաքի այլ եկեղեցիներու կողմէն կազմակերպուած կրօնական հանդիսութեանց, Սուրբ Պատարագի մատուցմամբ: Դպրաց դասը ելոյթներ ունեցած է նաեւ

<sup>308</sup> Sopp. Մինասեան Վ., նշ. աշխ., էջ 28-29:

Իրաքի տարբեր հայաշատ քաղաքներուն մեջ հոգեւոր և աշխարհիկ երգացանկով:<sup>309</sup>

### 3 - Գրական-Գեղարուեստական Կեանք և Կերպարուեստ

Իրաքի հայաշատ քաղաքներուն մեջ, գաղթականութեան ժամանումէն շատ քիչ ժամանակ անց, արդէն կազմակերպուած են գրական-գեղարուեստական երեկոներ: Ազգային բոլոր տօները անխտիր յիշատակուած են պատշաճ կերպով, ամհատաբար կամ ալ բոլոր միութիւններու և Ազգային Իշխանութեանց հետ համագործակցութեամբ: Պաղտատի մեջ առաջին գրական-գեղարուեստական երեկոն, կազմակերպուած 1930 թուականին, նուիրուած էր Աւետիս Ահարոնեանի գրական գործունէութեան քառասունամեակին, որուն կը նախագահէր Աւ. Սահակեան (Հայր Աբրահամ) և օրուայ բանախօսներն էին Արսէն Կիտուր և Գր. Ալեանաք:<sup>310</sup> Սոյն թուականին է նաեւ, որ Պաղտատի Հ.Ե.Ե. Միութիւնը կը կազմակերպէ ազգային մեծ բարերար Պօղոս Նուպար Փաշայի մահուան սգահանդէսը: Այնուհետեւ կը սկսի կազմակերպումը գրական լուրջ երեկոներու՝ նուիրուած Պետրոս Դուրեանին՝ 1931-ին, Խրիմեան Հայրիկի մահուան 25ամեայ տարելիցին՝ 1932-ին,

<sup>309</sup> Քէթնճեան Ա., ելեքտրոնային նամակ, 15-03-2014: Արամ Քէթնճեանը «Զուարթնոց» Դպրաց Դասի բազմամեայ անդամ է, շնորհալի բանաստեղծ և Պաղտատի Հայոց Ազգային Տարրական Երկսեռ Վարժարանի Հայ Լեզուի և Գրականութեան ուսուցիչ: Պարգևատրուած է Ն.Ա.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կողմէն Օրհնութեան Ա.Կոնդակով:

<sup>310</sup> Հայր Աբրահամը 1928 թուականին, Իրաքի կառավարութեան կողմէն կը հրաւիրուի Իրաք՝ հացահատիկային ցանքատարածքներու միջատային (սեն) վտանգին դէմ առնելու: Պաղտատէն ոչ հեռու՝ Ռուսթամիէ կոչուող գիւքաղաքին մեջ կը մնայ մինչեւ 1930-ի ամառը՝ չկրնալով դիմանալ Իրաքի ամառուան 50 աստիճան հասնող շոգին, կը տեղափոխուի Պէյրութ, ուր և կը մնայ մինչեւ իր մահը: Իրաք հրաւիրուելէն առաջ նոյն առաքելութեամբ Պարսկաստանի մեջ աշխատած է «կռիւ տալով սենի և մորեխի դէմ, որոնք թագաւորում են այս երկրում» (Պարսկաստանում): (Աւետիք Սահակեան, Աշոտ Ներսիսեան, Երեւան, 2003, էջ 252-253):

Յովհաննես Թումանյանին, Միսաք Մեծարենցին և Սիպիլին՝ 1934-ին:

1934-1944 թթ. կը կազմակերպուին բազմաթիւ գրական-գեղարուեստական երեկոներ, որոնցմէ ամենամեծը թերեւս եղած է հայ երգի մեծ վարպետ Կոմիտասի մահուան տարելիցին առթիւ 1936-ին՝ բանախօս ունենալով Տօթթ. Է.Քէթենճեանի և մասնակցութեամբ հայ կաթոլիկ համայնքին պատկանող Անարատ Յղութեան Քոյրերու վարժարանի աշակերտութեան երգչախումբին:

1993 թուականին Պաղտատի Յ.Ե.Ե.Միութեան սրահէն ներս կը կազմակերպուի առաջին Գիտական-Մշակութային Համագումարը 14-15 Նոյեմբերին, սոյն միութեան Գիտական Յանձնախումբի կողմէն: Այս համագումարին իրենց մասնակցութիւնը կը բերեն Պաղտատի պետական համալսարանին մէջ դասախօսող յայտնի հայ գիտնականներ, բժիշկներ, պետական բարձրաստիճան պաշտօնեաներ և հայ մշակոյթին նուիրեալներ: Համագումարը՝ առաջինը իր տեսակին մէջ, աննախադէպ յաջողութիւն կ'արձանագրէ, որմէ քաջալերուած, Յանձնախումբի ամենամեայ ծրագրին մաս կը կազմէ յաջորդ ինը տարիներուն անընդմէջ վերջինը՝ 2002 թուականին:

Գիտական Յանձնախումբը տարիներու ընթացքին հիւրընկալած է տարբեր մասնագիտութիւններ ունեցող հանրայայտ դէմքեր՝ դասախօսելու ակումբէն ներս: Ասոնցմէ յայտնի է քիւրտ պատմաբան՝ Քամալ Սուդիըր Ահմեդ, որ իր դասախօսութեան ընթացքին հրապարակաւ ներողութիւն խնդրեց հայ ժողովուրդէն քիւրտերու ձեռամբ գործադրուած ջարդերուն և տեղահանութեանց համար:<sup>311</sup>

<sup>311</sup> كردستان في سنوات الحرب العالمية الاولى - الفصل الخامس (الاكراد والدم الارمني المراق) (Քիւրտիստանը Առաջին Համաշխարհային Պատերազմին - 5րդ գլուխը վերնագրուած է «Քիւրդերը և Հայկական Արեան գեղումը»: Գիրքը առաջին անգամ լոյս տեսած է 1975 թուականին քիւրդերէն լեզուով, թարգմանուած է արաբերէնի և հրատարակուած 1977-ին: Թարգմանուած է նաեւ անգլերէնի:

Պասրայի մէջ առաջին լուրջ գրական ձեռնարկը, կազմակերպուած 1939 թուականին, գրական դատավարութիւն մըն էր՝ նիւթ ունենալով Վահրամ Միրաքեանի «Լալվարի Որսը», մասնակցութեամբ Պասրահայ համայնքի գրասէրներուն: Պայմանաւորուած ձեռնարկի յաջողութեամբ կը փորձուի կրկնել այդ և նման այլ գրական դատեր, ինչպէս՝ Լեւոն Շանթի՝ «Դարձը» 1966 թուականին եւայլն... Այս քաղաքին մէջ, գրական կամ ընդհանրապէս այլ մշակութային ձեռնարկներուն ներկայացումը թափ կ'առնէ 1944-ին, Միութեան շէնքի և բեմի կառուցումէն ետք: Ազգային-հասարակական, գիտական-բժշկական դասախօսութիւններու պակասը երբեք զգացուած չէ հայ կամ տեղացի դասախօսներու կողմէն: Անպակաս եղած են ասմունքի երեկոներ, յոբելինական հանդիսութիւններ և ի հարկէ Ապրիլ 24-ի ոգեկոչում, Հայաստանի առաջին հանրապետութեան անկախութեան օր՝ Մայիս 28, Վարդանանց, Սուրբ Թարգմանչաց եւայլն:

Պասրայի Յ.Ե.Ե.Միութեան իրարայաջորդ վարչութիւնները քաջալերած են հայերէն ընթերցանութիւնը, մանաւանդ նորահաս սերունդին՝ հիմնելով ընթերցասրահ-գրադարան մը, ուր այսօր կը պահուին 700-800 գիրքեր՝ չհաշուած բազմալեզու, տարաբնոյթ ամսաթերթեր և պարբերականներ, ուր երիտասարդ համալսարանականները կը կազմակերպեն հայ հասարակութեան յուզող հարցերու մասին ասուլիսներ, վիճաբանական երեկոներ, դասախօսութիւններ եւայլն: Հրատարակուած են նաեւ ձեռագիր պատի թերթեր՝ «Մշակոյթ» ապա «Նոր Այգ» և արաբերէն «Էլ-Մըշրըկ» անցեալ դարու 60-ական թուականներէն մինչեւ վերջին դէպքերը.

Պաղտատի մէջ հայ գեղանկարչութեան առաջին ցուցահանդէսը տեղի ունեցած է Երիտասարդացի ակումբի սրահին մէջ, 1960 թուականին, որու զլխաւոր մասնակցողը եղած է նկարիչ Երջան

Պողոսեանը: Մեծ ցուցահանդես մը կազմակերպուած է նաեւ 1966 թուականին, որտեղ ներկայացուած էին ոչ միայն գեղանկարչական ստեղծագործութիւններ, այլեւ ձեռագործներ, փորագրութիւններ և այլն: 1970 թ., նկարիչ Երջանը իր երկրորդ անձնական ցուցահանդէսը ներկայացուց հանրութեան:

Իրաքահայ համայնքի զաւակներէն թերեւս ամենահռչակաւոր և միջազգային համբաւ վայելող արուեստագէտ-գեղանկարիչը եղած է Արտաշ Կաքաւեանը: Ծնած է Մուսուլի մէջ, 1941 թուականին, Ցեղասպանութիւնը վերապրող գաղթական ծնողքէ: Իր արուեստը կատարելագործած է Փարիզի մէջ, ուր իր առաջին ցուցահանդէսը կազմակերպած է «Չորս Դովեր» կոչուած յայտնի սրահին մէջ: Բազմաթիւ ցուցահանդէսներ կազմակերպած է աշխարհի չորս կողմերուն՝ Ճափոն, Զնդկաստան, ԱՄՆ եւ այլն: Բազմաթիւ մրցանակներու դափնեկիր է. Ֆրանսայի մէջ 1971 թուականին «Դոմ» Միջազգային մրցոյթին, 1967 թուականին «Աշուն» սրահի կազմակերպած ցուցահանդէսին, եւ այլն: Մահացած է Փարիզ, 2000 թուականին, և կտակին համաձայն իր աճիւնէն մաս մը բերուած է Իրաք և միախառնուած Տիգրիսի ջուրերուն:

Նոր սերունդէն Անդրանիկ Օհաննէսեանը ծնած է Պասրա, 1949-ին: Շնորհալի արուեստագէտ-գեղանկարիչ-լուսանկարիչ՝ դպրոցական տարիքէն սկսած է նկարել, մասնակցած է ծննդավայրի Կրթական Տնօրէնութեան կազմակերպած տարեկան ցուցահանդէսներուն, և արժանացած առաջին կամ երկրորդ մրցանակին: Իր առաջին անհատական ցուցահանդէսը կազմակերպած է 1970 թուականին, յաջորդ տարին մասնակցած է Պասրայի Զ.Ե.Ե.Միութեան կազմակերպած ցուցահանդէսին, ապա զինուորական ծառայութեան ընթացքին իր երկրորդ անհատական ցուցահանդէսը 1972 թուականին, որ աննախադէպ էր Իրաքի զինուորական պատմութեան մէջ: Պասրայի Թաղական Խորհուրդի առա-

ջարկով սոյն քաղաքի Ս.Աստուածածին եկեղեցւոյ համար նկարած է «Յիսուսի Վերջին Աղօթքը», ինչպէս նաեւ Ս. Աստուածամօր պատկեր մըն ալ՝ Պասրայի հայոց գերեզմանոցին մէջ գտնուող Ս.Յովհաննէս Կարապետ Մատուռին մէջ տեղադրելու համար: Այնուհետեւ բազմիցս ցուցահանդէսներ ունեցած է՝ անհատական կամ տեղացի արուեստագէտներուն հետ միասնաբար: Յիշատակութեան արժանի է վերջին ցուցահանդէսէն ետք հարցազրոյցի մը ընթացքին արտայայտած իր հետեւեալ խօսքերը. «Եղեռնի զգացողութիւնը ուղղակիօրէն կ'արտացոլայ իմ ցուցադրած պատառներուն ընդմէջէն: Ցեղասպանութեան բոլոր կտաւներս, մտայնացումներ են կարդացածս գիրքերէն (յուշեր, պատմութիւններ եւ այլն) կամ տեսածս պատկերներէն: Իմ այս վերջին ցուցահանդէսին Մարտ 2006-ին, օգտուելով երկրիս ներկայ ազատ պայմաններէն, ուզած եմ Զայկական Ցեղասպանութիւնը ծանօթացնել յատկապէս արաբ ազնիւ ժողովուրդին: Իրաքի այժմու տեղացի հասարակութիւնը, ծանօթ չէ մեր Սփիւռքի անցեալին, առաւել, չի ճանչնար իսկական ոճրագործը: Ի՞նչ կրնայ զգալ Իրաքահայը երբ ինքզինք կը գտնէ միջավայրի մը մէջ, որ գաղափար չունի մեր ահաւոր անցեալէն: Չի գիտեր որ ցեղասպանութեամբ հայ ժողովուրդը մորթուած է, արմատախիլ եղած և անապատներ քշուած է, իր հողերն ու քաղաքները գրաւուած են, եկեղեցիներն ու դպրոցները հրկիզուած ու քանդուած են: Եղեռնի յիշատակին կտաւներ նուիրելով, կ'աշխատիմ զայն մոռացութենէ փրկել և նահատակներու աճիւնները աւազներու մէջէն խլելով՝ պատուանդաններու վրայ բարձրացնել»<sup>312</sup>

Իր վաղեմի երազանքը իրականութիւն դարձաւ, երբ 2010 թուականին Պր. Անդրանիկ Օհաննէսեանը, Սփիւռքի Նախարարութեան հրաւերով, Զայրենիքի մէջ կազմակերպեց իր անդրանիկ ցու-

<sup>312</sup> «Կանթեղ», Պաղտատ, Թիւ 3, 2006, Մայիս (Է. Տարի Թիւ 22), էջ 60:

ցահանդէսը՝ արժանանալով հայրենի արուեստագետներու գնահատանքին:

Իրաքահայերու տաղանդն ու արհեստավարժութիւնը, ցայտուն կերպով դրսեւորուած է նաեւ լուսանկարչութեան մէջ: Առաջին Իրաքի հայ լուսանկարիչը եղած է Ջօրաբաբել Գրիգոր Տօնաթօսեան: Թէեւ կը պատկանէր Բողոքական համայնքին, սակայն արձանագրութիւն ունէր հայ առաքելական եկեղեցւոյ առաջնորդարանի տոմարներուն մէջ: Ծնած էր Արաբկիր, 1876-ին, գաղթած է Իրաք 1896-ին, մահացած է 1926-ին, և թաղուած Պաղտատի Անգլիական գերեզմանատանը բողոքականներու կողմէն: Իր լուսանկարչատունը հաստատած էր «Խալիլ Փաշա» պողոտային վրայ (ներկայիս Ռաշիտ պողոտայ), յատկապէս Օսմանեան պետութեան մեծամեծները լուսանկարելու: Երբ Ֆէյսալ Ա. թագաւորը իր կնոջ՝ հետ Ջուիցերիա պիտի մեկնէր, վերջինիս դարմանումի համար, հայ լուսանկարիչին վստահուեցաւ տիկնոջը նկարել և այնուհետեւ ֆիլմը փճացնել:<sup>313</sup>

Նկարիչ Արշակ հաստատուած է Պաղտատ 1925-ին: «...Ամմիջապէս գրաւած է ժողովուրդին ուշադրութիւնը... օրուան որեւէ ժամուն իր յարափոփոխ ցուցափեղկերուն առջեւ խռնուած է հիացող բազմութիւնը: Պրն. Արշակ 1930-ին Ֆէյսալ Ա. թագաւորի գնահատանքին և քաջալերանքին արժանացած է և անոր ընկերացած դէպի Պարսկաստան ճամբորդութեան միջոցին, նոյնպէս 1937-ին արտաքին գործոց նախարարութեան և 1939-ին Խնամակալ Իշխան Արդուլլահ-ին՝ Իրաքի շրջաններուն քննական այցելութեանց ընթացքին »:<sup>314</sup>

Լուսանկարիչ Անդրան (Անդրանիկ Մանուկեան, երեք եղբայրը երուսաղէմի պատրիարք՝ երջանկայիշատակ Թորգոմ արք. Մա-

<sup>313</sup> اسماعيل محمد - جريدة الجمهورية بغداد 5/ 6/ 1999.

<sup>314</sup> Արիս. «Հայաստանի Կոչնակ», Պոյնէս Այրըս, թիւ 31, 03 Օգոստոս, 1940:

նուկեանից), յայտնի անուն էր, և լուսանկարիչն էր թագաւորական տան մինչեւ 1958-ի զինուորական յեղաշրջումը: Նմանապէս յայտնի էին Էմրի Սէլիմ Իսա Լուսինեան, Յովհաննէս Գուլումճեան, Նժդէհ Թորոսեան, Յարութիւն Ղազարեան, Տիգրան Ղազարեան, Նասրի (Նազարէթ) Տըքաբեան, Յակոբ, Ենովք և Եղուարդ Փնճոյեաններ, Աւետիս Մակարեանի «Քօվատիս» անունով նկարչատունը: Վերջին եօթ լուսանկարիչները Մուսուլ քաղաքի մէջն էին հաստատուած: Իսկ Պասրայի մէջ լուսանկարիչներ Սեդրակ, Վինուս, Հայկ, Հնայեակ եւայլն, յայտնի անուններ էին:

#### 4 - Տպարան և Մամուլ

Պաղտատի մէջ առաջին հայկական տպարանը բացուած է 1874-ին: Մինչ այդ, դասագիրքերը կը պատուիրուէին Պոլսէն կամ այլ վայրերէ: Սակայն փոխադրական անկանոնութեանց և յապաղումներու պատճառով շատ ուշ կը հասնէին Պաղտատ և հետեւաբար չէին ծառայէր նպատակին: Ուստի Յակոբ և Գաբրիէլ Թաղէտեան եղբայրները գեղեցիկ գաղափարը կ'ունենան հիմնելու տպարան մը, ուր Ս. Թարգմանչաց դպրոցի համար կը տպագրուին դասագիրքեր. Սաղմոսներ և Շարականներ: Տիգրանակերտցի Յակոբ Յովհաննէսեանի կամ աւելի ծանօթ Խալֆա Յակոբի հեղինակութեամբ լոյս կը տեսնեն այբբենարան և քերականութեան դասագիրք: Յովհաննէսեանը, որ Ս.Թարգմանչաց Վարժարանին մէջ ուսուցիչ էր, 1876-ին կը հրատարակէ նաեւ գրաբար քերականութեան գիրք մը Սամուէլ աղա Գեորգեանի մեկենասութեամբ:

1890-1892-ին Մ. Սվաճեան կը հրատարակէ «ՓՈՒՆՁ» անունով տպագիր հանդէս մը, վերոյիշեալ դպրոցին յառաջադէմ աշակերտներուն խմբագրութեամբ:

«ՏԻԳՐԻՍ» անունով խմորատիպ պարբերաբերք մըն ալ հրատարակուած է Պաղտատի մէջ, բժիշկ Գուրգէն Փափագեանի կողմէ, սակայն լոյս տեսան միայն 2-3 թիւեր:

1920ական թուականներուն, Պաղտատի «Սուրբ Կաթողիկէ Տպարանը», հայկական բաժին մը ունեցած է, ուր, ի մէջ այլոց, 1926-ին հրատարակուած է Ե. Բաղալեանի «Սիրոյ Արկածներ» անունով բանաստեղծութեանց գրքոյկ մը:

Իսկ, 8 Նոյեմբեր 1948-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան հովանաւորութեամբ, սկսաւ հրատարակուիլ «ԳՈՅԱՄԱՐՏ»<sup>315</sup> շաբաթաթերթը՝ Տօքթ. Բաբկէն Փափագեանի և Լեւոն Գարմէնի (բանաստեղծ Լեւոն Ստեփանեան) խմբագրութեամբ, և Արամ Տիգեանի արտօնատիրութեամբ ու պատասխանատուութեամբ: Ազգային գործիչ Մարգար Սոսոյեանը և տպարանատէր Յակոբ Տէր Ներսէսեանը նոյնպէս հիմնադիրներէն կը համարուին: «Գոյամարտ»ը կը հանդիսանայ Իրաքահայ համայնքի մամուլի պատմութեան մէջ միակ լուրջ պարբերաթերթը, որուն աշխատակցած են, ի միջի այլոց, Յ.Իրագեկ, Հայկ Օհանեան, Սմբատ Միրոյեան, Ռուբէն Մոմճեան, Տօքթ. Գրիգոր Ասթարճեան, Տէր Մեսրոպ քինյ. Օրջանեան, Տօքթ. Գուրգէն Փափագեան, Մարգար Սոսոյեան, Գալուստ Սիւրմէնեան, Տօքթ. Հ.Իգմիրլեան, գաղութի վեթերան զաւակներէն Դաւիթ Թաղէսեան, Օր. Մելինէ Սիւրմէնեան և այլն.: Այստեղ կը հրատարակուէր նաեւ իրաքահայ համայնքին յուզող հարցեր, կը բացայայտուէին բանաստեղծական շնորհի ունեցող երիտասարդներ, ինչպիսիք են Սմբատ Միրոյեան, Ռուբէն Մոմճեան և Օր. Մելինէ Սիւրմէնեան, որոնք այլեւայլ պատճառներով չեն շարունակած այս ուղին: Այս շաբաթաթերթի էջերուն վրայ, Տօքթ. Գրիգոր Ասթարճեանը, ծանօթացուցած է արաբական հարուստ գրականութիւնը ու գրական յայտնի արժէքները, Իրաքահայ հասարակութեան:<sup>316</sup>

«Գոյամարտը»ը, որ կարելի էր պակաս մը կը լրացնէր իրաքահայ գաղութին մէջ, փակուեցաւ 26 Օգոստոս 1954-ին՝ կառավարութեան հրամանով, ի շարս տեղական այլ 40 թերթերու: Օրուայ պատկան իշխանութիւնները, հետագային խոստովանեցին, որ սոյն թերթի փակումը, թիրիմացութեան արդիւնք էր: Շաբաթաթերթը վերստին լոյս տեսաւ 1957-ին, սակայն վերջնականապէս դադրեցաւ հրատարակութենէ 1958-ին Յուլիսեան յեղափոխութենէն ետք:<sup>317</sup>

2000 թուականէն ցայսօր լոյս կը տեսնէ «Կանթեղ» եռամսեայ պարբերականը Իրաքի Հայոց Առաջնորդարանին կողմէն: Տարիներու ընթացքին հրատարակուած են գաղութին յուզող տարաբնոյթ նիւթեր, Առաջնորդարանին և անոր առընթեր յանձնախումբերու և գործող մարմիններուն տարած եկեղեցական և հասարակական գործունէութիւններ եւայլն: Այսպէս, «...Կանթեղը մեզի յիշեցուց թեմիս սքանչելագործ պատմութեան մասին հարիւրաւոր տարիներու վրայ երկարող, ներկայացուց Աւետարանի պատգամներն ու աստուածային ակունքէն բխեալ քարոզները, ակնարկ սեւեռեց Ամենայն Հայոց Հայրապետութեան ու Հայրապետի, ինչպէս նաեւ մեր ներկայացուցած աւանդներուն ու պատուէրներուն վրայ և խօսեցաւ հայ համաճարեղ անձանց մասին անդրադառնալով անոնց ներդրումին հայ ժողովուրդի իմացական գանձանակին մէջ...»:<sup>318</sup>

2000 թուականին, երբ կեանքի կոչուեցաւ «Կանթեղ»ը, Իրաք արդէն տասը ժանր տարիներէ ի վեր կը գտնուէր տնտեսական շրջափակման մէջ: Հազիւ երեք տարի անցած էր, երբ երկիրը նուաճուեցաւ դաշնակից պետութիւններու կողմէն: Այնուհետեւ պատերազմ, քաղաքական վերիվայրումներ, անիշխանութիւն, անա-

<sup>315</sup> Վերջերս հաճոյքով տեղեկացանք, որ «Գոյամարտ»ի ամբողջական արխիւը փոխադրուած է Պէյրութ, «Ազդակ»ի խմբագրատուն:

<sup>316</sup> «Յուշամատեն Պաղտատի Հե՛տ Եւ», մշ. աշխ., էջ 203:

<sup>317</sup> Գեորգեան Կ., Նշուած աշխատութիւն, էջ 447-448: Նաեւ՝ Պաղտատի Հե՛տ Եւ, Յուշամատեն, էջ 203:

<sup>318</sup> Ասատուրեան Ա. Արք.՝ Առաջնորդ Իրաքի Հայոց, Բացառիկ թիւ «Կանթեղ»ի հրատարակման 10-ամեակին առթիւ (2000-2009), 28 Նոյեմբեր 2009, էջ 2:

պահովութիւն և տարատեսակ գրկանքներ, «ուղեղներու» հոսք և..... կրկին արտագաղթ, որ կը շարունակուի մինչեւ այսօր: Այսուհանդերձ, հակառակ գոյութիւն ունեցող բոլոր նիւթական, բարոյական և քաղաքական անկայուն պայմաններուն, «Կանթել»ը կը շարունակէ հրատարակուիլ....:

## Վերջաբան

Եռալեզու (հայերէն, արաբերէն և անգլերէն) աղբիւրներու և արխիւային նիւթերու ուսումնասիրութիւնը, յուշագրերու և տարաբնոյթ տուեալներու համադրումն ու վերլուծութիւնը, իրաւունք կուտայ մեզ յանգելու հետեւեալ եզրակացութեանց:

- Իրաքահայ գաղութը բազմադարեայ պատմութիւն ունի, եղած է երբեմն տնտեսապէս և մշակութապէս շատ կենսունակ, ինչպէս 17րդ և 18րդ դարերուն, պայմանաւորուած Նոր Ջուղայէն իրաքի գլխաւոր քաղաքները տեղափոխուած, հայ վաճառականներու կամ իրենց գործակալներու եռանդուն գործունեութեամբ, մրցակցելով այնտեղ դարեր առաջ հիմնաւորուած հրեայ վաճառականներուն հետ, և երբեմն ալ զերազանցած անոնց:

- Գաղութի բարգաւաճումը սերտօրէն կապուած է տեղական իշխանութիւններու բարեացական քաղաքականութեան կամ հակառակը, ենթարկուած է բազմապիսի կտտանքներու, ինչպէս սելճուկ-թաթարներու, թրքական պետութեան յատուկ բռնատիրական արարքներուն և երկիրը հարուածող յաճախակի համաճարակներուն, որոնցմէ անմասն չէր մնացած նաեւ հայ համայնքը: Այնուամենայնիւ, հայերը իրենց գործօն մասնակցութիւնը բերած են երկրի տնտեսական վերելքին, այդ ժամանակներուն (17րդ և 18րդ դարերուն), երկրի մէջ առկայ, համատարած յետամնացութեան պայմաններուն, ուր յատկապէս ցայտուն կերպով երեւան կուզան Պասրայի մէջ գործող հայ վաճառականները:

- 1640–1918 թթ. իրաքի մէջ բնակութիւն հաստատած հայերը փաստօրէն եղան այս երկրի մէջ հայկական վերակազմեալ գաղթօճախի հիմնադիրները: Հայերը իրենց աշխատասիրութեամբ և քաղաքացիական դրական նկարագրով, արժանացած էին տեղացի ժողովուրդին յարգանքին և համակրանքին, որ շատ

եական դեր խաղաց 1918 թուականին Իրաք բռնագաղթուած հայերու ստուարաթիւ գանգուածին համար:

- Իրաքահայ գաղութի նորագոյն պատմութիւնը սկիզբ կ'առնէ արեւմտահայոց, յատկապէս Վասպուրականցիներու վերջին նահանջէն՝ 1918 թ. Մարտին և նոյն թուականի Օգոստոս ամսուն Միջագետք հանգրուանած, հայրենագրկուած ժողովուրդի կեանքին պատմութեան հետ: Այս ժողովուրդը իրենց բախտակից ասորիներուն հետ, հարկադրուած կը բռնէ նահանջի ճամբան և ամբողջ հինգ ամիս շարունակ կռուելով և բազմաթիւ զոհեր տալով ճանապարհին վերջապէս կը ժամանէ Իրաք, ուր անգլիացիներու կողմէն, նախապէս պատրաստուած էր 3000 վրաններէ բաղկացած «սպիտակ» գաղթաւանը, ուր վերջապէս յարաբերական հանգիստ (ֆիզիքական ապահովութիւն) պիտի գտնէին, անկախ անգլիացիներու ունեցած քաղաքական-տնտեսական թաքուն այլ նպատակներէն:

- Այնուամենայնիւ, տարիներ շարունակ ժողովուրդը չկարողացաւ հաշտուիլ օտար միջավայրին, աննպաստ կլիմային, և թէ՛ իր և թէ՛ իր ղեկավարութեան երկիր վերադառնալու անընդհատ դիմումներուն հետեւանքով, 8-9000 երջանիկներ, բախտը ունեցան մաս կազմելու Յայաստան ներգաղթող կարաւաններուն:

- Երբ ներգաղթելու շարունակութեան յոյսը անհետացաւ, մնացած ժողովուրդը, հարկադրուած տարածուեցաւ հիւրընկալ երկրի տարբեր քաղաքներուն մէջ, փինիկի պէս մոխիրներէն յարութիւն առաւ, կազմակերպուեցաւ հայօրէն, զարգացաւ և ազգային շունչ ու ոգի ներարկելով՝ մինչ այդ գոյութիւն ունեցող փոքրաթիւ, լճացած գաղութին, հաստատուն հիմքերու վրայ դնելով զայն: Ցեղասպանութենէն վերապրողները, հաստատուելով այս երկրին մէջ, տարիներու ընթացքին, հիմնելով նորանոր եկեղեցիներ, վերանորոգելով հիմները, բանալով դպրոցներ - երկու հիմնաքարերը մեր գոյութեան, հասարակական տարաբնոյթ միութիւններ կազմե-

լով, անգամ մը եւս փաստեցին, որ հայուն անհետացնելը այս երկրագունդի վրայէն անհնար է, քանի որ գոյատեւելու և զարգանալու կամքը իր արեան մէջ ներծծուած է դեռեւս հազարաւոր տարիներ առաջ:

- Ցեղասպանութենէն ետք, երկրորդ սերունդը՝ իւրացուցած տեղական լեզուի բոլոր հմտութիւնները, և հոգեպէս ու ֆիզիքապէս զօրացած, արդէն մասնակիցը կը դառնայ և՛ հայկական, և՛ տեղական բոլոր գործունէութեանց՝ ինչպէս մշակութային, կրթական, մարզական և այլ ոլորտներուն մէջ:

- Վերջին տարիներուն Մերձաւոր Արեւելքի մէջ տեղի ունեցած զարգացումները աննախադէպ պայթիւնավտանգ իրավիճակ ստեղծեցին, որուն աղեցութիւնը անմիջականօրէն իրենց վրայ զգացին նաեւ այս տարածաշրջանի համայնքները: Ներկայիս, Իրաքի երբեմնի 25000-30000 միաւոր հաշուող կենսունակ հայ համայնքէն մնացած քանի մը հազար հայութիւնը, որոնց մեծամասնութիւնը ժառանգներն են 1915 թ. Վանի Յերոսամարտը կերտողներուն, կամքէ անկախ պատճառներով՝ յայտնուած է վտանգի առջեւ: Յետեւաբար, այս համայնքի հետագայ ճակատագիրը և գոյութեան հարցը վերածուած է համազգային գերխնդիրի, որու լուծման համար կենսական նշանակութիւն ունի հայրենի իշխանութիւններուն, համայնքի ղեկավարութեան, համայնքային և համահայկական կառոյցներու համատեղ աշխատանքը՝ հասնելու համար ցանկալի արդիւնքի:

- Մեր կողմէն առաջին անգամ ըլլալով շրջանառութեան մէջ դրուած փաստական նիւթերը, ինչպէս նաեւ արխիւային գրականութիւնը, հնարաւորութիւն կուտան աւելի օգտակար և կառուցողական առաջարկներով հանդէս գալ Իրաքի հայ համայնքի ապագային, համայնքային շահերու պաշտպանութեան, հայկական ժառանգութեան հետագայ ճակատագիրի վերաբերեալ քննարկումներու ընթացքին, ինչպէս նաեւ խթան հանդիսանալ Իրաքի հետ

Հայաստանի Հանրապետության երկկողմ և բազմակողմ համագործակցության օրակարգերու մեջ, Իրաքահայության հետ կապուած հարցերը եւս ընդգրկելու համար:

- Ընդհանրապէս, այսօր առաւել քան երբեւիցէ, անհրաժեշտ է հայ-արաբական բարեկամութեան, յատկապէս արաբական տարբեր երկիրներու պետականաշինութեան գործընթացին, հասարակական կեանքին մէջ հայերու ունեցած ներդրումի մասին, աշխատութիւններու հրատարակութիւնն ու տարածումը արաբերէն: Մեր աշխատութեան մէջ տեղ գտած նիւթերը և մեկնաբանութիւնները, յատկապէս անցեալ դարու սկիզբին Ֆէյսալ թագաւորի ուղերձը հայ ժողովուրդին, նաեւ Մեքայի շէրիֆ Յուսէյնի հրահանգը Եմիր Ֆէյսալին և միւս Եմիրներուն՝ Հայոց մեծ եղեռնի օրերուն հայ գաղթականներուն, որպէս «ըիւ էլ-դիմմա» ամէն գինով պատսպարելու և իրենց հովանաւորութեան տակ առնելու, կարելի է օգտագործել Մերձաւոր Արեւելքի հայ համայնքներուն՝ ներառեալ Իրաքի հայ համայնքին նուիրուած ուսումնասիրութիւններուն, որը միաժամանակ կարելի է հիմք հանդիսանալ նոր հետազօտութիւններու համար:

- Վերջին երեք տասնամեակներուն, Իրաքահայ համայնքին կը սպասէր լուրջ փորձութիւններ՝ Իրաք-Իրան ութամեայ դաժան պատերազմը, Իրաքի կողմէն Քուէյթ ներխուժումէն ետք՝ երկրի դէմ սկսուած պատերազմը, տնտեսական շրջափակումը, միջազգային պատժամիջոցները, և վերջապէս 2003 թ. ամերիկեան զօրքերու կողմէն չարդարացուած ներխուժումը Իրաք, երկրի բոլոր կենսական ենթակառոցներու անգործածելիութիւնը, և օրինական վարչակարգի տապալումը: Յատկապէս վերջին իրադարձութիւնները պատճառ պիտի հանդիսանային քաղաքական անկայունութեան, անիշխանութեան, միջէթնիկական և միջդաւանական բախումներու, որու հետեւանքով երկրէն մեծ թիւով քրիստոնեաներ՝ ներառեալ հայերը, կրկին ձեռք առին գաղթականի ցուպը: Ոմանք ալ տե-

ղափոխուեցան Իրաքի Քիւրտիստանի մէջ գտնուող տարբեր բնակավայրեր, ուր յարաբերական խաղաղութիւն և անդորր է: Այստեղ հաստատուած հայերը, ինչպէս միշտ, կառուցեցին եկեղեցիներ, դպրոցներ, հասարակական գործունէութեանց համար կեդրոններ: Սակայն, հակառակ ապահովութեան առկայութեան, այստեղ ալ հաստատուած հայորդիները մատնուած են անգործութեան՝ քրտերէն լեզուի չիմացութեան պատճառով, որը Քիւրտիստանի մէջ պարտադիր պայման է աշխատանքի անցնելու համար:

- Մինչեւ 2003 թ. չարաբաստիկ դէպքերը Իրաքի հայ գաղթօճախը կը դասուէր բարգաւաճ և բարեկեցիկ գաղութներուն շարքը: Սակայն վերջին տասը տարիներու ընթացքին քաղաքական անապահով և տնտեսական առկայ անպաստ պայմաններուն հետեւանքով Իրաքահայը կրկին կը գաղթէ, այս անգամ՝ օտար երկրէ, ուր անցեալ դարուն սկիզբը, հայրենագրկուած և բռնագաղթուած իր դարաւոր բնօրրանէն, հարկադրուած էր կայք հաստատել Իրաքի թէւ օտար, բայց հիւրընկալ երկնակամարին ներքոյ, և տարիներու ընթացքին, իր ցեղին յատուկ ձեռներէցութեամբ և ժրաջան գործունէութեամբ տիրացած էր տեղացի և՛ ժողովուրդի, և՛ իրարայաջորդ իշխանութիւններուն յարգանքին և համակրանքին:

- Բազմավաստակ պատմաբան՝ Արշակ Ալպոյաճեանը, նկարագրելով «տեղացի» հայերուն նիստուկացը, հագուստ-կապուստը, արաբներուն շատ նմանիլը կը նշէ, և շարունակելով գաղթականներու մասին իր պատկերացումները, հետեւեալը կ'եզրակացնէ. «...Իսկ 1915-էն վերջ հոն հաստատուած հայերը, որոնք կը պահեն իրենց ծննդավայրերուն սովորութիւնները, աւելորդ է ըսել, թէ դատապարտուած են օր մը իրենց ալ Պաղտատի հայ գաղութին վիճակակից ըլլալու, ընդելուզուելով արաբական զանգուածին մէջ և ընդգրկելով անոնց սովորութիւնները...»:<sup>319</sup> Բարեբախտա-

<sup>319</sup> Ալպոյաճեան Ա., Իրաքի Հայերը, Երեւան, 2003, էջ 180:

բար, կեանքի հոլովոյթները հակառակը ցոյց տուին, համայնքը օրէցօր զարգացաւ, և ի հակադրութիւն վերը նշուած եզրահանգումներուն՝ աւելի ու աւելի կառչած մնաց իր ազգային-պապենական սովորոյթներուն և հայկական աւանդոյթներուն: Եւ՝ անցեալին և՛ այսօր, համայնքը՝ թէև արդէն նօսրացած շարքերով, կը դասուի երկրի կրօնական փոքրամասնութեանց մէջ ամենայարգուած և գնահատուած համայնքներէն մին: Հայոց Ցեղասպանութեան 100ամեայ տարելիցին առթիւ Պաղտատի մէջ վերջերս (Մայիս 23, 2015 թ.) կազմակերպուած միջազգային գիտաժողովը,<sup>320</sup> որ նախադէպը չունեցող երեւոյթ մըն էր Իրաքահայ գաղութի պատմութեան մէջ, ոչ միայն ատոր վառ ապացոյցն էր, այլև անգամ մըն ալ եկաւ փաստելու համայնքի յարատեւ կենսունակութիւնը և ազգապահպան գործունէութիւնը գօտեպնդուած՝ նախ և առաջ իր Մայր եկեղեցիով և տարաբնոյթ հասարակական կազմակերպութիւններով:

- 1918 թուականէն ցայսօր, Իրաքի զանազան վարչակարգերու և իշխանութիւններու ժամանակաշրջաններուն, համայնքը՝ շնորհիւ իր ղեկավար կրօնական և ազգային իշխանութիւններուն հեռատես և խելամիտ քաղաքականութեան, կարողացեր է ոչ միայն զերծ մնալ անհարկի վտանգներէն, այլև իր աննկուն կամքով և յարատեւ ջանասիրութեամբ, միշտ վառ և մշտաբորբոք պա-

<sup>320</sup> Գիտաժողովը կազմակերպուած էր Իրաքահայ Թեմի Առաջնորդարանի հովանաւորութեամբ և մասնակցութեամբ ՀՀ դեսպանութեան: Հայաստանէն մասնակցեցան պատմական գիտութիւններու դոկտոր փրօֆ. ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանը, արեւելագէտ Նիկոլայ Յովհաննիսեանը, ինչպէս նաև Իրաքահայ ճարտարագէտ (հայրենադարձ) Արա Աշճեանը և տողերուս հեղինակը: Ձեկուցաբերները մեծամասնութեամբ Իրաքցի պետական պաշտօնեաներ և այլ արաբական երկիրներէն ժամանած հանրայայտ պատմաբաններ և ցեղասպանագէտներ էին, որոնց արտայայտած գաղափարները և դրական եզրայանգումները ուղղուած էին ի նպաստ հայ ժողովուրդին և իր արդար դատին: Գիտաժողովի աւարտին՝ մասնակիցները կոչով մը դիմեցին Իրաքի Խորհրդարանին՝ ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը և դատապարտելու զայն գործադրողները:

հած և զարգացուցած է ազգային ինքնագիտակցութիւնը, իր ստեղծած տարաբնոյթ համայնքային կառոյցներու գործունէութեանց ընդմէջէն:

## ՅԱԻԵԼՈՒԱԾ

### Միջազգետք հանգրուանած Հայ Գաղթականության վերաբերեալ ստորգ վիճակագրութիւններ՝ հիմնուած սոյն Կոմիտէի, Միջազգետքի Հայ Տարագրելոց Յանձնախումբի և ՀՀ Ազգային Արխիւի փաստաթուղթերուն վրայ

1918-ի Օգոստոս ամսուն, դժբախտ հանգամանքներու բերու-  
մով, Միջազգետքի անապատներուն մէջ ապաստան գտած արեւմ-  
տահայ գաղթականութիւնը, թեւ ֆիզիքական գոյութիւնը ապահո-  
վուած, սակայն և այնպէս երբեք չհրաժարեցաւ Հայրենի Օջախ  
վերադառնալու յոյսերը փայփայելէն: 1918-1930 թթ. մշտապէս կա-  
պի մէջ էր նախ Հայաստանի առաջին Անկախ Հանրապետութեան  
հոգեւոր և պաշտօնական անձանց, Ազգային Պատուիրակութեան,  
ապա Պարսկաստանի մէջ՝ Խորհրդային Հայաստանի Լիազօր  
Ներկայացուցիչի հետ: «Քէմփ»ը (ճամբարը) ցրուելու՝ Անգլիական  
կառավարութեան վերջնական որոշումը գաղթականութիւնը և իր  
ղեկավարութիւնը կը մատնէ անելանելի վիճակի, քանզի ժողո-  
վուրդը, որ օտար միջավայրի մէջ կը գտնուէր, վերջնական բնաջն-  
ջումէ փրկելու միակ ելքը, զիրենք ժամանակաւորապէս միատեղ  
պահելն էր, մինչեւ ներգաղթի կարգադրութիւնները իրենց երջա-  
նիկ աւարտին կը հասնէին: Անգլիական կառավարութիւնը այն-  
քան հեռու գնաց, որ «քէմփ»ին կից շուկայ մը շինելու յատակագի-  
ծը պատրաստելով՝ խանութպաններուն հրահանգ կուտար, որ այդ  
գետնի վրայ իր գծած յատակագծի համաձայն խանութներ շինեն,  
մինչդեռ ժողովուրդի ուշքն ու միտքը Հայրենիք վերադառնալն էր:  
Իսկ խանութ բանալ, միւթական շահեր ունենալ, կը նշանակէր  
աւելի հաստատուիլ օտար հողին վրայ: Հետեւաբար, այս հրա-  
հանգը կտրականապէս մերժուեցաւ ժողովուրդին կողմէ:

Իրաքի մէջ մեզ բախտ էր վիճակուած ուսումնասիրելու Գաղ-  
թականութեան Կոմիտէի նախագահ Լեւոն Շաղոյեանի արխիւը, որ

բազմաթիւ արժէքաւոր փաստաթուղթեր կը պարունակէ՝ հաշիւ-  
ներ, վիճակագրութիւններ Պաքուբա հանգրուանած, այնուհետեւ  
Նահր Օմար տեղափոխուած ժողովուրդի կենցաղային և այլ հար-  
ցերուն շուրջ: Պատմական արժէք ներկայացնող փաստաթուղթ է  
Վասպուրական աշխարհի իւրաքանչիւր քաղաքէն, գաւառէն և  
բազմաթիւ գիւղերէն գաղթած ժողովուրդի թուաքանակը ներկա-  
յացնող վիճակագրութիւնը: Նմանապէս Մերձաւոր Արեւելքի  
Նպաստամատոյցի կողմէն պատրաստուած տեղեկագիրը, որով  
ցոյց կը տրուի թէ մօտաւորապէս որքան հայութիւն մնացած էր  
Արեւմտեան Հայաստանի և Թիւրքիոյ հայաբնակ վայրերուն մէջ:

Հայաստանի Հանրապետութեան Ազգային Արխիւը ուսումնա-  
սիրելու ընթացքին մեր թեմային վերաբերեալ հանդիպեցանք  
պատմական արժէք ներկացացնող բազմաթիւ փաստաթուղթերու,  
նամակագրութեանց, յատկապէս Էջմիածնի Հոգեւոր Խորհուրդի  
Ֆօնտին մէջ գտնուող տեղեկագրերու և Իրաքահայ Թեմին վերա-  
բերեալ այլ նամակագրութիւններու:

Իր կարեւորութեան համար կը ներկայացնենք նաեւ Հնդկաս-  
տան՝ նպաստահաւքման առաքելութեամբ մեկնած, Տարագրելո-  
ցի ատենապետին տուած, անգլիացի Սիվիլ Քոմիշընըրի (քաղա-  
քացիական լիազօր) անգլերէն յանձնարարական նամակը, յա-  
մառօտ թարգմանութեամբ: Նոյնպէս՝ Ազգային Պատուիրակու-  
թեան նախագահ Պօղոս Նուպարի համաձայնագիրը, սոյն առաքե-  
լութեան ձեռնարկելու զոյգ նամակները:

Յաջորդիւ կը ներկայացնենք վերը յիշուած և ցարդ չհրատա-  
րակուած այդ նամակներէն, հեռագիրներէն և ուրիշ արխիւային  
փաստաթուղթերէն մի քանին ժամանակագրական կարգով:

### Յաւելուած թիւ 1

Արեւմտահայ երկրորդ համագումարի

կազմակերպիչ կոմիտէ

5 Յունուար 1919 No. 47

Բաղտատի Տարագիր Հայութեան՝

Արեւմտահայ երկրորդ Համագումարի կազմ. կոմիտէն գիտնալով հանդերձ, որ ոչ մի հնարաւորութիւն չունի ձեռք եւս հրաւիրելու և մասնակից անելու այս Համագումարին, որ մեր կազմաւորյոթ վիճակին ուզում է վերջ տալ, ձեւակերպել մեր քաղաքական ձգտումները և կազմակերպել ներգաղթը - այնուամենայնիւ, օգտւելով ներկայացող պատեհութիւնից, ուղարկում է ձեզ իր եղբայրական ողջոյնների հետ կազմ. կոմիտէիս հրատարակած «Շրջաբերական - հրահանգ»ից 10 օրինակ և «Կոչ»ից 100 օրինակ:

Կոմիտէս իր խորին ցաւն է յայտնում որ մինչեւ Համագումարը ոչ մի օժանդակութիւն չ'պիտի կարողանայ անել, բայց յոյս է յայտնում, որ մեզ զբաղեցնող հարցերը եթէ ձեզ էլ են զբաղեցնում, այն ժամանակ մեզ տանջող թշուառութեան վախճանը ձեր թշուառութեան էլ վախճանը պիտի լինի:

Ընդունեցէք մեր եղբայրական բարեւները:

Դիւան կազմակերպիչ կոմիտէի

Կնքուած վերոյիշեալ

Նախագահ

Կոմիտէի Կնիքով

Ատենապետ՝ Վ. Տէրոյեան

Քարտուղար՝ Արսէն Կիտուր

Լեւոն Շաղոյեանի արխիւէն (անտիպ):

### Յաւելուած թիւ 2

Հետեւեալ յանձնարարական-նամակը տրուած է Միջագետքի Գերագոյն կոմիսար Անգլիացի Ուիլսընէն ուղղուած Հնդկաստանի կառավարական շրջանակներուն, օժանդակելու Միջագետքի Հայ նպաստամատոյցի նախագահ Մարտիրոս Գուլումճեանին՝ վերոյիշեալ երկրի մէջ կատարելիք իր առաքելութեան: Ներկայացուած է նաեւ սոյն նամակի թարգմանութիւնը:

No. 303 - 119/47

Office of the Civil Commissioner,

Baghdad, the 4<sup>th</sup> January, 1920

From Bt. Lt.- A.T.Wilson, C.S.I., C.M.G., C.I.E., D.S.O.,

Acting Civil Commissioner in Mesopotamia.

Sir,

I have the honour to inform you that the bearer, Mr. Mardiross H. Kouyoumdjian, Chairman of the Armenian Relief Committee, Mesopotamia, accompanied by Mr. Dervichyan, O.B.E., Belgian Consul at Basrah, are proceeding with the full approval of this Administration to visit India in order to endeavour to obtain funds from Armenian Communities and elsewhere for the maintenance of the Armenian Orphanages and other philanthropic institutions connected with the Refugee Armenians at Baghdad.

I am glad to be able to place on record that the Armenian Committee in Baghdad have done more than any other for the maintenance of their unfortunate fellow-countrymen, and their generosity, enterprise and sound common sense in all matters connected with the administration of Funds and the management of its institutions are worthy of the higher praise.

Their accounts have been fully audited by an auditor appointed by this Administration and have been found to be in all respects satisfactory.

The activities of the Committee relief work and orphanage at Mosul and Dair-Az-Zor, orphanage at Baqubah in the Refugee camp there, administrative and occasional relief work in Baghdad and incidental expenses in connection with the Bagubah Refugee Camp.

I have the honour to be,  
Sir,

Your most obedient servant  
A.T. WILSON, Lieut. Col., I.A.,  
Acting Civil Commissioner in Mesopotamia

Addressed to/ The Secretary to Government, Bombay  
" " " " Calcutta  
" " " " Madras

Թարգմանություն<sup>321</sup>

Պարոն,

Պատիւը ունիմ ձեզ տեղեկացնելու որ գրամատոյցը, տիար Մարտիրոս Գույումճեանը, ատենապետ Միջագետքի Հայ Նպաստամատոյց յանձնախումբի, որուն կ'ընկերանայ Տիար Տերվիշեան, Պէլճիբական Հիւպատոս Պասրայի մէջ, կը մեկնին կատարեալ հաւանութեամբ վարչութեանս, այցելելու Հնդկաստան՝ նպաստահաւաքման նպատակով Հայ հասարակութենէ և ուրիշներէ, հոգալու համար հայ որբանոցները և ուրիշ բարեսիրական հաստատութիւնները, որոնք կապ ունին Պաղտատի տարագրեալ հայերու հետ:

Ուրախ եմ արձանագրելու, որ Պաղտատի հայ յանձնախումբը ամէն ինչ ըրած է հոգալու համար իր դժբախտ հայրենակիցները և իր ձեռնհասութիւնը ու ողջմտութիւնը բոլոր այն գործերուն մէջ, որ կը վերաբերին հասոյթներու տնտեսութեան և իր հաստատութիւններու մատակարարութեան, արժանի են ամենաբարձր գովեստի:

Իրենց հաշիւները լիովին քննուած են վարչութենէս նշանակուած քննիչի մը կողմէն և ըստ ամենայնի գոհացուցիչ գտնուած են:

Յանձնաժողովի գործունէութիւնները կը պարունակեն նպաստի գործ և Մուսուլի ու Տեր Ջօրի մէջ որբանոց, Պաքուպա տարագրեալներու քէմփին մէջ որբանոց, վարչական պատահական նպաստի գործ Պաղտատի մէջ և պատահական ծախքեր Պաքուպայի Տարագրելոց քէմփին մէջ:

Ստորագրութիւն  
A.T. Wilson

Ուղղուած՝ Պետական Քարտուղարութեան Պոմպէյ, Կալկաթա և Մադրաս  
(Լեւոն Շաղոյեանի Արխիւէն)

<sup>321</sup> Վարդանեան Ե., Անապատ անապատ, Վենետիկ, 1923, էջ 416-417:

### Յաւելուած թիւ 3<sup>322</sup>

No. 1194

19 Յուլիս 1921

Կեննաշուք՝ Պօղոս Նուպար Փաշա

Նախագահ՝ Հայ Ազգ. Պատուիրակութիւն ի Փարիզ

Նէիր Իւլ Էօմէրի Հայ Գաղթականութեան քեմիի իրադարձութիւններու մասին յաջորդաբար մեր նամակներով տեղեկացուցած ենք մեր Ազգ. բոլոր մարմիններուն և շարունակ խնդրում ենք շուտափոյթ կարգադրութիւն մը, աջակցելու համար Միջագետքի մէջ թափթփուած գաղթականութեան ֆիզիքական գոյութիւնը, սակայն հակառակ թափած ջանքերուն, դժբախտ ենք որ ցայժմ որոշ կարգադրութիւն մը չէ եղած:

Անգլիական կառավարութիւնը վերջապէս վճռած է, մինչեւ Օգոստոս 15-ին քեմիը փակել: Ըստ վերջին հրահանգին, Յուլիս 11-էն սկսեալ շաբաթական 1400 շունչ պէտք է հեռացուին քեմիէն: Հեռանալու պարագային, իւրաքանչիւր գաղթական պէտք է ստանայ միայն 13 ռուփի և 14 օրուայ ռաշըն (օրապարէն), անկէ յետոյ իրենց բաղդին պիտի ձգուին:

Գաղթականութիւնը, ցրումի այս հրահանգէն սարսափած – որը իր այլասերման և ֆիզիքական գոյութեան բնաջնջման վերջին և զօրաւոր ազդակը – որոշեց կառչիլ իր հաւաքականութեան՝ գաղթականական այս քեմիին մէջ, վերջին փրկութիւնը իր այս հաւաքականութեան մէջ գտնելով: Սակայն կառավարութիւնը իր որոշումը և վճիռը քեմիը ցրելու նկատմամբ - հանգիստ միջոցներով կը գործադրէ: Դադրեցնելով աշխատանքի ընդունակ բոլոր տղամարդկանց և անոնց ընտանիքներու 6-7000 շունչի նպաստը, պարտաւորեցնելու համար գաղթականութեան, ցրելու Միջագետքի զանազան անկիւններու մէջ: Գաղթականութիւնը իր հաւաքականութեան մէջ, հակառակ իրեն տրուած խնամքին և հիւանդանո-

ցային յարմարութեանց, շաբաթական 10-13 մահեր կունենայ, հիւանդանոցը միշտ լիքն է 300-է աւելի ծանր հիւանդներով, իսկ սէք-շըններու (բաժիններու) մէջ գտնուած հիւանդներու թիւը – որոնք ամէն օր դեղ կ'ընդունին դեղարանէն – 120-200ի կը հասնի:

Այն, որ երբ գաղթականները կը հեռացուին քեմիէն, կը գրկուին ապրելու բոլոր յարմարութիւններէն, ակնյայտ է: Կենդանի օրինակը մեր առջեւն է: Պասրա Մէքիմէի մէջ երկաթուղագծի վրայ այսօր 350-400 աշխատող երիտասարդներ, որոնք առանց ընտանիքի են, չը կարողանալով տոկալ Միջագետքի կլիմային և տօթին, մեծագոյն մասը հիւանդացած, թափթփուած են դէս ու դէն: Քաղաքային հիւանդանոցները այդպիսիներին չեն վերցնի, նրանց ռոճիկներէն ալ հիւանդանալու պարագային կը զեղչուին, որով ճարահատ, դժբախտները նորէն դէպի քեմիը կը դիմեն, բայց քեմիի մէջ ալ չեն ընդունուիր:

Ահա Միջագետքի մէջ ցրուելու փոքր օրինակ մը, որ անընտանիք տղամարդկանց վրայ կատարուած է, իսկ ընտանիքի և երախաների մասին լինելիքը պարզ է հայելիի պէս:

Կառավարութիւնը գաղթականութեան վրայէն իր պատասխանատուութիւնը կը վերցնէ բոլորովին, հազարաւորներու արեան գնով մազապուրծ հայ ազգի այս բեկորը, սովամահութեան և այլասերման սարսափի տակ կը ցրուէ արդէն: Ցրուումէն յետոյ փորձել կրկին անգամ ի մի հաւաքել այս դժբախտներին, անկարելութեանց անկարելին պիտի լինի:

Ըստ կառավարութեան հրահանգին, քեմիի մէջ մինչեւ Օգոստոս 15-ին պիտի մնան 5000 (հինգ հազար)-ի չափ անկարներ, որբեր և որբեւայրիներ, որոնց պահելու պատասխանատուութիւնը Օգոստոս 15-էն յետոյ առաջարկած է Պաղտատի Ազգային Մարմիններէն:

<sup>322</sup> Ուղղագրութիւնը հարազատ է իր բնագիրին:

Ինչպես վերը յիշեցինք, 2000 տղամարդ, իրենց ըն-տանիքներով 6-7000 շունչ, իրենց սեփական միջոցներով պետք է ապրին Միջագետքի մեջ: Կլիմային անվարժ լինել, աշխատանքի, բժշկական հոգատարութեանց և հիւանդանոցային յարմարութեանց բացարձակ չգոյութեան պատճառով, այս գաղթականները պիտի այլասերուին և բնաջնջուին:

Ահա ընդհանուր պատկերը գաղթականութեան ներկայ դրութեան, որի համար գաղթականութիւնը կուզէ պահել իր հաւաքականութիւնը, սակայն այս դրութիւնը չպիտի տեսէ.....

Գաղթականութեան ֆիզիքական գոյութիւնը ազատելու միակ պայմանը Կիլիկիա կամ Բաթուն փոխադրուիլն է: Այս պարագան Միջագետքի մեջ ցրուելէն չարեաց փոքրագոյնը համարելով, պիտի խնդրենք հնար եղած միջոցներ ի գործ դնէք օր առաջ գաղթականութիւնը այս հաւաքականութեան մեջ յիշած վայրերը փոխադրել, քանի ուշ չէ...

Ընդունեցէք մեր խորին յարգանաց հաւաստիքը:

Խորին յարգանքով՝ Լեւոն Շաղոյեան

Միջագետքի Հայ Փախստականներու Կոմիտէի

(ՀԱԱ, «Հայ Ազգային Պատուիրակութիւն Ֆոնդ», \$430, Ց.1, Գ.773)

Ծանօթ: Նամակը նոյնութեամբ արտատպած ենք վերոյիշեալ արխիւն: (Ս.Օ)

#### Յաւելուած թիւ 4

Հեռագիր ուղղուած Պողոս Նուպար Փաշային, Նահր Օմարի գաղթականութեան ցրումի հրահանգին առիթով:

Nahrumar 210 69 18 16H15 MLT

19.07.1921

Refugees expelled from Nahrumar Camp with 14 days ration 13 rupees each. No work, fear starvation or abandonment to Arab. Help quickly. 1400 expelled each week. Help us to leave Mesopotamia. Please reply urgent. Received telegram Patriarch Constantinople that London Government will keep Camp longer but Government Baghdad has not been informed. Please ask London Government to cable them urgent as dispersal continues...

Signed/ Tajirian and Kouyoumdjian

ՀԱԱ, Հայ Ազգ. Պատուիրակութեան Ֆոնդ, \$ 430, Ց1, Գ 773Կ

Վերոյիշեալ Ֆոնդի մեջ առկայ են նաեւ նմանատիպ նամակ Գաղթականութեան Կոմիտէին ( թիւ 1206, 28 Յուլիս 1921):

Նոյն իմաստով գրուած՝ նամակ No. 1258 – 19.08.1921, հեռագիր 20-08-1921 և ուրիշ այլ գրականութիւն:

#### Յաւելուած թիւ 5

Թեհրան, 7 Սեպտեմբեր 1922

Լիազօր Ներկայացուցչութիւն

Պարսկաստանում

R.S.S.d'Armenie

Mission Diplomatique en Pares

No.386

Նահր Օմարի Գաղթականութեան մարմնին,

Պարսից Կառավարութիւնը թոյլ է տուել որ Միջագետքի հայ գաղթականները անցնեն իր հողով Հայաստան: Մնում է որ այդ

ծանր գործը կազմակերպուի տեղումդ այնպես որ այդպիսի բազմութեան ելքը եւ նրա չուն կատարուի լաւ կազմակերուած ձեւով: Տեղական ուժերը ավելի հնարաւորութիւն ունեն իրենց մասնակցութեամբ տալ գործին յարմարագոյն կազմակերպութիւն: Անհրաժեշտ է որ գաղթականութիւնը բաժանուի 300 հոգինոց խմբերի, իւրաքանչիւր խմբի մեկնումը լինի 2-3 օր ընդմիջումով իրար յետեւից: Ամէն մի խումբ պետք է ունենայ ընտրուած վարչութիւն, տեղափոխութեան միջոցներ եւ պարեն: Սանրամասնութիւնը կը հաղորդէ քաղաքացի Բագրատ Չակոբեանը որ ուղարկուած է յատուկ առաքելութեամբ:

Խնդրեմ ընդունել յարգանացս կատարեալ հաւաստիքը:

Յ.Ս.Խ.Յ. Լիազօր ներկայացուցիչ Պարսկաստանում

Ս. Առաքելեան

(Լեւոն Շաղոյեանի արխիւէն)

### Յաւելուած թիւ 6

Պաղտատ, 01 Մայիս 1924

Գերապատիւ Տ.Խորեն արք. Սուրատբէկեան՝

Առաջնորդ Յայոց յերեւան

Սրբ. եղբայր

Իմ այս գրութեամբ ձեզի պիտի ներկայանայ Նահր օմարի Յայ Գաղթ. հոգեւոր հովիւ՝ Տ.Յովհաննէս վրդ. Յիւսեան, մեր և այդ գաղթականութեան հաւանութեամբ կուգայ Յայաստանի Խորհրդային կառավարութենէն արտօմութիւն ձեռք բերելու այս հայ գաղթականները իրենց մայր երկիրը փոխադրելու համար: Գիտէք որ ասոնք մասը կը կազմեն անոնց որ առաջ Անգլիական կառավարութեան նպաստով այդտեղ փոխադրուեցան: Մեծ մասամբ Վանայ գիւղերէն են, երկրագործ:

Չհաշուելով որ քանի մը տարիներէ ի վեր այս կողմերը կը բնակին, չեն կրցած սակայն ընտելանալ այս երկրի կլիմային ու

գիւղենք շրջապատող արաբ ժողովուրդի բարքերուն: Իրենց ուշքը միշտ Յայաստանի վրայ է, ուր կը յուսան և կը հաւատան թէ պիտի կրնան խաղաղ ապրիլ և ծառայել իրենց մայր երկրին:

Յատկապէս կը խնդրեմ որ ձեր եղբայրութիւնն ալ իր ջանքերը չխնայէ միջնորդելու ուր որ անկ է, որպէսզի շուտով իրենց փափաքին հասնին ու սիրեցեալ Յայրենիքի ծոցը դառնան, արդիւնաւոր ընելով յիշեալ վարդապետին առաքելութիւնը:

Սրտագին ողջոյններով ձեր սուրբ եղբայրութեանը՝

Մնամ աղօթակից

Զաւէն արք. Տէր եղիայեան

ԴԱԱ (Էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի Ֆոնդ)

Ֆ 409, 81, Գ 4375



من ان الامة العراقية النجيبة تشاركني في عواظي هذه وترحب بالمهاجرين اليها لا ليكونوا كمهاجرين فقط بل كاحد ابناء هذه البلاد يعملون لاعلاء شانها وترقية مواردها ولا بدع فان هذه البلاد عرفت باكرامها الضيف واعزازها اياه لهذا اقول من صميم فؤادي ان مهاجري الارمن سوف يجدون كل مساعدة من العراقيين.

### Թարգմանութիւն

#### Պարոնայք՝

Պիտի չխօսիմ երկար, վասնզի շատ խօսած են համայնքներու մէջ և կրկնութիւնը աղուոր չէ, եթէ յարգելի եղբայր ճամիլ Էֆէնտի Ալ Զահաուին<sup>323</sup> չէ խօսողը, քանի որ անոր խօսքերը գողտրիկ յակինքներ են, իսկ իմս նման չէ անոր: Այդ պատճառաւ, կը բաւարարուիմ քաղաքական հարցերով. ձեզ պարզ է արդէն ինչ որ երկու օր առաջ բացատրեցի պէտք եղածը կաթողիկէ համայնքներու հաւաքոյթին մէջ, ուրեմն հիմա կ'ուզեմ շնորհակալութիւն յայտնել հայերուդ այս հանդիսութեան համար և վստահաբար զիս ընտրելնուդ Իրաքի ազատ պետութիւնը գլխաւորելու:

Իմ հիացմունքս ձեր քաղաքական ու հասարակական զոհողութեանց մասին երկար պիտի չխօսիմ: Հայ ազգը առատ արիւն թափած է յանուն իր ազատութեան ու անկախութեան, և իսկայ գործեր կատարած գիտական ու տնտեսական մարզերու մէջ:

Հայերը եւրոպա և Ամերիկա գնահատուած են իրենց հաւատարիմ գործերու հետեւանքով ու դարձած գործօն անդամ այդ երկիրներու մէջ, զոր կը փափաքէի որ նոյնը ըլլային մեր երկրի մէջն ալ:

Այս երկիրը ապաստան գտած հայ գաղթականներու վերաբերեալ ձեր ներկայացուցիչի խօսքին առթիւ, սիրով կ'ընդառաջեմ ու կ'արտօնեն անոնց բնակիլ ուր որ փափաքին այս երկրի հողին վրայ և վստահ են որ ողջ Իրաքը մասնակից է այս զգացումներուս

<sup>323</sup> Իրաքի հանրայայտ բանաստեղծ:

և սիրով կ'ընդունի գաղթականներուն, ոչ թէ որպէս գաղթական այլ որպէս այս երկրի զաւակներ, որոնք կ'աշխատին անոր բարօրութեան և յառաջդիմութեան և այդ հիւրը պատուելն ու յարգելը մեր երկրի իւրայատկութիւններէն մէկն է: Այս պատճառաւ, սրտիս խորքէն կ'ըսեմ որ հայ գաղթականները պիտի գտնեն ամէն աջակցութիւն Իրաքիներու կողմէն:

## Յաւելուած թիւ 9

Ղազի թագաւորին պատասխան նամակը ուղղուած Ն.Ս.Օ.Տ.Տ. Խորէն արք. Մուրատբէկեանին:

بفضل الله توفيقه

غبطة البطريرك الاول للكرسي الرسولي في أراط

وكنيسة اجمياسين المقدسة خورين المحترم

تلقينا كتاب غبطتكم المرسل الينا بواسطة سيادة المطران روبين ماناسيان رئيس الطائفة الارمنية في بغداد المستهل بادعيتكم المباركة التي نزلت من نفسنا في الصميم:

لقد كان لتعزية غبطتكم الرقيقة ايانا ومشاركتم شعبنا في الامه الجسيمة التي حلت به بوفاة المغفور له جلاله والدنا المعظم الاثر الطيب في نفوسنا والوقع الحسن بين مختلف افراد شعبنا وهذا ما نسجلة لكم بالذكر الجميل والتقدير الفائق:

